ՊԱՏԳԱՄԱԲԵՐ

տարեգիրք

2019



ՊԱՏԳԱՄԱԲԵՐ

Տարեգիրք
2019թ.

Առաջնորդարան Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի,
Ուկրաինայի եւ Արեւելեան Եւրոպայի Կաթողիկէ Հայոց
Գիւմրի, 2020թ.

Գլխաւոր խմբագիր՝ Տէր Գրիգոր Աւագ Քհնյ. Մկրտչեան
Խմբագիր՝ Հայր Նարեկ Վրդ. Մնոյեան
Սրբագրիչ՝ Հայր Մաշտոց Վրդ. Ջահթերեան
Կազմեց՝ Լիլիթ Մկրտչեանը

Շապիկի դիմերեսի պատկերը՝ ըստ իտալացի քանդակագործ
եւ ճարտարապետ Ջանլորենցo Բերնինիի
Սուրբ Հոգու Աղաւնակերպ ապակենկար՝ զետեղուած Սուրբ Պետրոս
տաճարի աւագ խորանում, Սուրբ Աթոռ, Վատիկան (16-րդ դար)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. ԱՐՀԻ. Տ. ՌԱՓԱՅԷԼ ԱՐՔԵՊՍ. ՄԻՆԱՍԵԱՆ
ՏԻՏՂՈՍԱՒՈՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՊԱԴՈՎԿԵԱՆ ԿԵՍԱՐԻՈՅ ՀԱՅՈՑ
ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ,
ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ 7
2. ԱՐՀԻ. Տ. ՌԱՓԱՅԷԼ ԱՐՔԵՊՍ. ՄԻՆԱՍԵԱՆԸ ՀՈՎՈՒԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵՑ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ 9
3. ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ՄԻԱՑԱՆ ՊԱՆԱՄԱՅՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ
34-ՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՕՐԵՐԻՆ 11
4. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ 14
5. ՎԱՐՇԱՒԱՅՈՒՄ ՆՇԵԼ ԵՆ ԼԵՀԱՀԱՅ ՀՈԳԵՒՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ
ԹԷՈԴՈՐՈՎԻՉԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՔԱՐՈԶԻ 100-ԱՄԵԱԿԸ 15
6. ԿՈՎԿԱՍԻ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԸ ՀՐԱԺԵՇՏ ՏՈՒԵՑ
ՊԱՊԱԿԱՆ ՆՈՒԻՐԱԿԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ Հ. ՄԻՅԱՅՏԱՅ ԲԼԱԺԻՆ 17
7. «ԻՆՉ Է ՔԱՀԱՆԱՅՈՒԹԻՒՆԸ». ՀՈԳԵՒՈՐ ԿՐԹՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՂ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ 18
8. ԲԵԼՈՐԵՉԵՆՍԿՈՒՄ ՕԾՈՒԵՑ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻ՝
ԱՌԱՋԻՆԸ ՅԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ 20
9. ՋԱՒԱԽՔԻ ՍՈՒԽԼԻՍ ԳԻՒՂԻ ՆՈՐ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ Է ՆՇԱՆԱԿՈՒԵԼ
ԱՐԺ. Տ. ՍԱՀԱԿ ՔՀՆՅ. ԱՂԷԿԵԱՆԸ 21
10. ԱՐՀԻ. ՏԷՐ ՌԱՓԱՅԷԼ ԱՐՔԵՊՍ. ՄԻՆԱՍԵԱՆՆ ԸՆԴՈՒՆԵՑ
ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԺՈՂՈՎԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆԸ 22
11. ՇՈՒԵԴԻԱՅԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆՆ ԱՅՑԵԼԵՑ ԵՐԵՒԱՆԻ
ՍԲ. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԱՆՈՒԱՆ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ 23
12. ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ ՏՕՆԵՑԻՆ ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ 24
13. ՀՌՈՄԻ ՄԷՋ ՍԱՐԿԱՒԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՏԻՐԱՑՈՒ ԵՂԲ. ԱՐԱՄ ՍԱԱՏՈՅԻ 26
14. ՀՈԳԵՒՈՐ ԿՐԹՈՒԹԻՒՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԱՂԱՃԱՆԵԱՆ» ԿԵՆԴՐՈՆՈՒՄ 27
15. ԵՌՕՐԵԱՅ ՃԱՄԲԱՐ ԵՒ ԴԱՍԸՆԹԱՑ ՃԵՄԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ
ԵՒ ԽՈՐԱՆԻ ՍՊԱՍԱՒՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ 30
16. «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՕՐԵՐ - III» 33
17. ԲԱՑՈՒԵՑ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՕՐԵՐ - III»-Ը 34
18. ՈՒԽՏԱԳՆԱՑԻ ԱՂՕԹՔԸ՝ ՊԱՆԱՄԱ 2019 ԵՀՕ-Ի ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՂՕԹՔԸ 40
19. ԱՐՀԻ. Տ. ՌԱՓԱՅԷԼ ԱՐՔԵՊՍ. ՄԻՆԱՍԵԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ
«ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՕՐԵՐ - III»-Ի ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻՎ 41
20. ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԽՄԲԻ ՆԱԽԱԳԱՀ ԳԵՐՅ. Հ. ԳԱՌՆԻԿ Ծ. ՎՐԴ.
ՅՈՎՍԷՓԵԱՆԻ ԽՕՍՔԸ՝ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՕՐԵՐ-III»-Ի ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ 42
21. ՊԱՊԱԿԱՆ ՆՈՒԻՐԱԿ ԳԵՐԱՇՆՈՐՀ ԺՈՋԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՎԵԼԻՆՈ
ԲԵԹԵՆԿՈՒՐԻ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔԸ՝ ՈՒՂՂՈՒԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ 43
22. ԼԻԲԱՆԱՆԻ ԱՅՆՃԱՐ ԳԻՒՂԻ «ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՐԱՆԻ ՏԻՐԱՄԱՅՐ» ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ
ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒ ՀՈԳՇՆ. Հ. ՄԵՍՐՈՊ Ծ. ՎՐԴ. ԹՈՓԱԼԵԱՆԻ
ԽՕՍՔԸ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՕՐԵՐ-III»-Ի ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ 44
23. ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՈՂՈՍԵԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՄԵԾԱՎՈՐՈՒՀԻ
ԱՌԱՔԻՆԱՋԱՐԴ ՔՈՅՐ ՌԵԲԵԿԱ ԱԻՇԱՐԵԱՆԻ ԽՕՍՔԸ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՕՐԵՐ-III»-Ի ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ 45
24. ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ՍՐԲԱՋԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ 2019Թ.-Ի ԵՀՕ-ԻՆ .. 46

25. ԿԱՐԻՏԱՍ ՎՐԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԷՆ ԱՆԱՀԻՏ ՄԽՈՅԵԱՆԻ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ «ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹԻՒՆ» ԹԵՄԱՅՈՎ 48
26. ՄՈՍԿՈՒԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԳԵՐՅ. Հ. ՊԵՏՐՈՍ Ծ. ՎՐԴ. ԵՍԱՅԵԱՆԻ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ «ԱՊԱՇԽԱՐՀՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ» ԹԵՄԱՅՈՎ 49
27. ԼԻԲԱՆԱՆԻ ԱՅՆՃԱՐ ԳԻՒՂԻ «ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՐԱՆԻ ՏԻՐԱՄԱՅՐ» ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒ ՀՈԳՇՆ. Հ. ՄԵՍՐՈՊ Ծ. ՎՐԴ. ԹՈՓԱԼԵԱՆԻ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ «ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹԻՒՆԸ» ԹԵՄԱՅՈՎ 53
28. ԼԻԲԱՆԱՆԻ ԱՅՆՃԱՐ ԳԻՒՂԻ «ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՐԱՆԻ ՏԻՐԱՄԱՅՐ» ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒ ՀՈԳՇՆ. Հ. ՄԵՍՐՈՊ Ծ. ՎՐԴ. ԹՈՓԱԼԵԱՆԻ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՒՆ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹԵԱՆ ԱՄԷՆԷՆ ՑԱՅՏՈՒՆ ԵՒ ԳՈՐԾՕՆ ՑՈՒՑԱՆԻՇԵՐԷՆ ՄԻՆ՝ ՄԱՐԵՄԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ, ՄԱՐԵՄԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ 59
29. ԱՐԵՒԻԿ, ԱԶԱՏԱՆ, ԼԱՆՋԻԿ ԵՒ ՁԻԹՀԱՆՔՈՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ, ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒ ԱՐԺ. ՏԷՐ ՆԱՐԵԿ ՔՀՆՅ. ԹԱԴԵՒՈՍԵԱՆԻ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ «ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐ ԴԵՐԸ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԵԱՆՔՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ 66
30. ՊՈԼՍՈՅ ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՈՍԿԵԲԵՐԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԳԵՐՅ. ՀԱՅՐ ՎԱՐԴԱՆ Ծ. ՎՐԴ. ԳԱԶԱՆՃԵԱՆԻ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ 67
31. ՄԵԾ ՍԵՊԱՍԱՐ, ԲԱՒՐԱ, ՂԱԶԱՆՉԻ ԵՒ ՍԻԶԱՒԷՏ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԱՐԺ. ՏԷՐ ՅՈՎՍԷՓ ՔՀՆՅ. ԳԱԼՍՏԵԱՆԻ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ «ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ՊԱՏԿԱՆԵԼ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑՈՒՆ» ԹԵՄԱՅՈՎ 69
32. ՍՐԲՈՑ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ ՄԻԱՑԵԱԼ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՈՒՉ ԳԵՐՊ. ՀԱՅՐ ՄԱՇՏՈՑ ՎՐԴ. ՋԱՀԹԵՐԵԱՆԻ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ «ԿՈՉՈՒՄՆԵՐ» ԹԵՄԱՅՈՎ 75
33. ԳԵՐՊ. ՀԱՅՐ ԵՂԻԱ ՎՐԴ. ԴԵՐՁԱԿԵԱՆԻ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ «ՎԿԱՅՈՒԹԻՒՆ» ԹԵՄԱՅՈՎ 76
34. ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԽՄԲԻ ՆԱԽԱԳԱՀ ԳԵՐՅ. ՀԱՅՐ ԳԱՌՆԻԿ Ծ. ՎՐԴ. ՅՈՎՍԷՓԵԱՆԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԽՕՍՔԸ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՕՐԵՐ - III»-Ի ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ 79
35. ԱՅՍ ՏԱՐԻ ԼՐԱՑԱԻ «ԿԱՐԴԻՆԱԼ ԱՂԱՃԱՆԵԱՆ» ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐԻ 15-ԱՄԵԱԿԸ 80
36. ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ՍԻՒՆՀՈԴՈՍԻ ԱՄՓՈՓԻՉ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 85
37. ԶՄՄԱՌԱՎԱՆՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ ՄԻՒՌՈՆՕՐՀՆԷՔԻ ՍՐԲԱԶԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ 86
38. ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՏՕՆԸ ԵՒ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՄԱՏՌԱՆ ՕԾՈՒՄԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ 89
39. ՍԱՐԿԱՒԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՍԲ. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ 90
40. ՍԻԶԱՒԷՏՈՒՄ ԵՒ ՂԱԶԱՆՉԻՈՒՄ՝ ՍԲ. ՍԵՂԱՆԻ ՕԾՄԱՆ ԵՒ ԱՌԱՋԻՆ ՍԲ. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ 92
41. ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՆ ՆՈՐ ՔԱՅԼԵՐ Է ՁԵՌՆԱՐԿՈՒՄ՝ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱՄԻԶՈՑՆԵՐԸ 94
42. ՍՈՒՐԲ ԱԹՈՌԻ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐՔԵՊՍ. ՓՕԼ ԳԱԼԼԱԳԵՐԸ ՆԵՐԿԱՅ ԳՏՆՈՒԵՑ ԳԻՒՄՐԻՈՒՄ ԱՌԱՋՆՈՐԴ ՀՕՐ ՁԵՌԱՄԲ ՄԱՏՈՒՑՈՒԱԾ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻՆ 95
43. ԿԱՐԻՏԱՍ ՎՐԱՍՏԱՆԸ ՏՕՆԵՑ ԻՐ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 25-ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԸ 96
44. ԱՀԱԲԵԿԻՉՆԵՐԻ ՁԵՌՔՈՎ ՍՊԱՆՆՈՒԵՑ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ, ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒ ԱՐԺ Տ. ՅՈՎՍԷՓ ՔՀՆՅ. ՊԵՏՈՅԵԱՆԸ 99
45. ԱՐՀԻ. Տ. ՌԱՓԱՅԷԼ ԱՐՔԵՊՍ. ՄԻՆԱՍԵԱՆԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՐԱԳԵՑ ՊԱՊԱԿԱՆ ՆՈՒԻՐԱԿԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ 25-ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԻ ԱՌԹԻՒ 101
46. ԱՐՀԻ. ՏԷՐ ՌԱՓԱՅԷԼ ԱՐՔԵՊՍ. ՄԻՆԱՍԵԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ՏԻԱՐ ԱՐՍԷՆ ԱՒԱԿՈՎԻ ՀԵՏ 102
47. ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆՆ ԻՐ ՏԻԿՆՈՋ ՀԵՏ ԱՅՑԵԼԵՑ ՀՌՈՄԻ ՍԲ. ՆԻԿՈՂԱՅՈՍ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻ 103

48. ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ՝ ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ 106

2019 ԹՈՒԱԿԱՆԻ ՏԱՐԵՎԵՐՋԵԱՆ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ

49. ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ ԳԵՐՅ. ՀԱՅՐ ՊԵՏՐՈՍ Ծ. ՎՐԴ. ԵՍԱՅԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 109
50. ՓԱՆԻԿԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԳԵՐՅ. Հ. ԳԱՌՆԻԿ Ծ. ՎՐԴ. ՅՈՎՍԷՓԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 110
51. ՏՈՒՐՑԽԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԳԵՐՅ. ՀԱՅՐ ԱՆԴՐԷԱՍ Ծ. ՎՐԴ. ԻԱՆԻՑԿԻԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 112
52. ԿՐԱՍՆՈԴԱՐԻ ԵՒ ԲԵԼՈՐԵՉԵՆՍԿԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԳԵՐՅ. ՀԱՅՐ ՍԵՐԳԵՅ Ծ. ՎՐԴ. ԲԱԲԱՋԱՆԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 113
53. ՍՈՉԻԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԳԵՐՅ. ՀԱՅՐ ՌԱՖԱՅԵԼ Ծ. ՎՐԴ. ԿՐԱՒՉԻԿԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 114
54. ՏԱՇԻՐԻ ԵՒ ՀԱՐԱԿԻՑ ԳԻՒՂԵՐԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԳԵՐՊ. ՀԱՅՐ ՆԵՐՍԵՍ ՎՐԴ. ԳԱԼՍՏԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 115
55. ՀՈՎՏՈՒՆԻ, ԱՐՓԵՆԻԻ ԵՒ ԱՇՈՑՔԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԳԵՐՊ. ՀԱՅՐ ԵՂԻԱ ՎՐԴ. ԴԵՐՁԱԿԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ... 116
56. ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԳԵՐՊ. ՀԱՅՐ ՆԱՐԵԿ ՎՐԴ. ՄՆՈՅԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 119
57. ՏԵՍՈՒՉ՝ ՍՐԲՈՑ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ ՄԻԱՑԵԱԼ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ, ԵՐԵՒԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ Հ.Կ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԳԵՐՊ. ՀԱՅՐ ՄԱՇՏՈՑ ՎՐԴ. ՋԱՀԹԵՐԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 125
58. ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԳԵՐՊ. ՀԱՅՐ ՄԻՔԱՅԷԼ ՎՐԴ. ԽԱՉԿԱԼԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 126
59. ՎԵՆՅՈՎԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԳԵՐՊ. ՀԱՅՐ ՍԵԴՐԱԿ ՎՐԴ. ԽԻԹԱՐԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 128
60. ԳԻՒՄՐԻԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԱՐԺ. ՏԷՐ ԳՐԻԳՈՐ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՄԿՐՏՉԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 129
61. ԱԽԱԼՑԻԽԷԻ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԱՐԺ. ՏԷՐ ՊՈՂՈՍ ՔԱՀԱՆԱՅ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ 131
62. ԱՐԵՒԻԿ, ԱՋԱՏԱՆ, ԼԱՆՋԻԿ ԵՒ ՁԻԹՀԱՆՔՈՎ ՀԱՄԱՅՆՔԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԱՐԺ. ՏԷՐ ՆԱՐԵԿ ՔԱՀԱՆԱՅ ԹԱԴԵՒՈՍԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 132
63. ՀԵՇՏԻԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԱՐԺ. ՏԷՐ ԱՆՏՈՆ ՔԱՀԱՆԱՅ ԱՆՏՈՆԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 134
64. ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈԽԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԱՐԺ. ՏԷՐ ԿՈՄԻՏԱՍ ՔԱՀԱՆԱՅ ԴԱՒԻԵԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 135
65. ՍՈՒԽԼԻՍԻ, ԾԽԱԼԹԲԻԼԱՅԻ ԵՒ ՋՈՒԼՂԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԱՐԺ. ՏԷՐ ՍԱՀԱԿ ՔԱՀԱՆԱՅ ԱՂԵԿԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 136
66. ՄԵԾ ՍԵՊԱՍԱՐ, ԲԱՒՐԱ, ՂԱՋԱՆՉԻ ԵՒ ՍԻՋԱՎԷՏ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԱՐԺ. ՏԷՐ ՅՈՎՍԷՓ ՔԱՀԱՆԱՅ ԳԱԼՍՏԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 137
67. ԱՐԺ. ՏԷՐ ՄԱՇՏՈՑ ՔԱՀԱՆԱՅ ՂԱՋԱՐԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 140
68. ԱՐՀԻ. Տ. ՌԱՓԱՅԷԼ ԱՐՔԵՊՍ. ՄԻՆԱՍԵԱՆ ՏԻՏՂՈՍԱՒՈՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՊԱԴՈՎԿԵԱՆ ԿԵՍԱՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ, ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ 142

ԱՐՀԻ. Տ. ՌԱՓԱՅԷԼ ԱՐՔԵՊՍ. ՄԻՆԱՍԵԱՆ ՏԻՏՂՈՍԱՒՈՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՊԱԴՈՎԿԵԱՆ ԿԵՍԱՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ, ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ

Յոյժ սիրելի հոգեւոր դաս եւ աշխարհական քոյրեր եւ եղբայրներ,

Հայրական մեր օրհնութիւնն ենք բերում Պատգամաբեր 2019 թուականի տարեգրքի հրատարակութեան առթիւ սոյն հատորը կազմողներին եւ ընթերցողներին: Համացանցի եւ թուայնացման այս դարում կարեւոր ենք համարում տպագիր տարեգրքի հրատարակումը իբրեւ հակիրճ ամփոփում անցած տարուայ յիշարժան իրողութեանց մեր թեմում: Ունենալով մեր աչքի առաջ անցած տարուայ ամփոփումը այն իւրատեսակ հաշուետուութիւնն է կատարած մեր առաքելութեան եւ հաւաստի աղբիւր գալիք սերունդների համար՝ մեր հաւատքի վկայութեան, մեր ինքնութեան հաւաստման եւ պատկանելիութեան պահպանման: Չենք նկատում իբրեւ հերթական համար կամ թուաբանական գումար նախորդ տարեգրքերի: Սրանում ամփոփուածը մեր Հայ Կաթողիկէ համայնքի շունչն ու ապրումն է՝ միտուած ոգեւորելու ամենքիս այս նոր սկսուած 2020 թուականին բազմապատիկ աւելին ջանք ու եռանդ չխնայել ի սէր եւ ի սպասաւորութիւն հոգւոց փրկութեան: Շարունակել եւ աւելիով առատացնել այն բոլոր բարեբաստիկ եւ Աստուածահաճոյ գործերը, որ ունեցանք անցած 2019 թուականի ընթացքին:

Աստուծոյ ողորմութեամբ եւ շնորհով մեր լուսաբնակ նախնիք, բազում դարերի հերոսական մաքառումներով եւ ստեղծարար ճիգերով մեզ են թողել հոգեւոր, մշակոյթային եւ ազգային նուիրական ժառանգութիւն, որն անհնար կը լիներ պահպանել ու մեզ հասցնել առանց գրաւոր աշխատութիւնների: Արդ, մենք այսօրուաններս պարտական ենք ոչ միայն պահպանել, այլեւ մեր ամենօրեայ ազնիւ քրիստոնէական ապրելակերպով վերարտադրել ու փոխանցել յաջորդ սերունդներին:

Վստահելով Աստուծոյ անսահման սիրուն եւ ողորմածութեանը՝ մնում ենք լաւատես եւ այս ենք նկատում կորիզը գաղափարի, որով հրատարակուեց 2019 թուականի Պատգամաբեր տարեգիրքը:

Մինչ հայցում ենք Աստուածամօր բարեխօսութիւնը եւ յանձնում Ձեզ Սբ. Հոգու առաջնորդութեանը. ամէն:

ԱՐՀԻ. Տ. ՌԱՓԱՅԷԼ ԱՐՔԵՊՍ. ՄԻՆԱՍԵԱՆԸ ՀՈՎՈՒԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Մոսկուայի քաղաքային իշխանութիւնը հայ կաթողիկէ համայնքին հողատարածք է տրամադրել՝ եկեղեցի կառուցելու համար

2019թ. Աստուածայայտնութեան տօնին Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանն իր տօնական Սուրբ Պատարագը մատուցեց Մոսկուայի հայ կաթողիկէ համայնքի համար, Անարատ Յղութեան Կաթողիկէ Մայր Տաճարում համապատարագեցին Ռուսաստանում Առաջնորդական Փոխանորդ, Մոսկուայի հայ կաթողիկէների ժողովրդապետ Գերյ. Հ. Պետրոս Ծ. Վրդ. Եսայեանի եւ Ռուսաստանի լատինածէս կաթողիկէների թեմի Առաջնորդական Փոխանորդ Հ. Կիրիլ Վրդ. Գարբունովի:

Սրբազան Հայրը Մոսկուայի հայ կաթողիկէ հաւատացեալներին փոխանցեց իր Սուրբ Ծննդեան պատգամը, որի առանցքը Բարի Հովուի կերպարն է, Ում կոչուած ենք նմանուել բոլորս՝ թէ՛ հոգեւորականներ եւ թէ՛ աշխարհականներ: «Ամուսնացեալ հաւատացեալները քաջ հովիւներ պէտք է լինեն իրենց ընտանիքների համար, իսկ քահանաները՝ իրենց հոգեւոր հովուութեան յանձնուած հաւատացեալների համար՝ ոչ թէ տիրելու, այլ՝ անձնուիրաբար ծառայելու ոգով, առաքելական նուիրումով եւ խանդավառութեամբ»,– ասաց Սրբազան Հայրը:

Սուրբ Պատարագից յետոյ կատարուեց Ջրօրհնէքի սրբազան արարողութիւնը, որից յետոյ կազմակերպուեց հիւրասիրութիւն, Սրբազան Հայրը զրուցեց հայ հաւատացեալների հետ:

Յունուարի 6-ի երեկոյեան՝ կէսգիշերին, Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ Պատրիարք Նորին Սրբութիւն Կիրիլի հրաւէրով, Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանը, Ռուսաստանում Պապական նուիրակ Գերաշնորհ Զելեստինոյ Արքեպիսկոպոս Միլիորէի, Ռուսաստանի լատինածէս կաթողիկէների Առաջնորդ Գերաշնորհ Փաոլօ Արքեպիսկոպոս Պեցցիի եւ Գերյ. Հ. Պետրոս Ծ. Վրդ. Եսայեանի հետ միասին իր աղօթական ներկայութիւնն է բերել Մոսկուայի Քրիստոս Փրկչի Մայր Տաճարում տեղի ունեցած աղօթքին եւ ապա մասնակցել են միասնական ընթրիքի՝ Նորին Սրբութիւն Կիրիլ Պատրիարքի հետ:

Յունուարի 7-ին Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանը Հ. Պետրոս Ծ. Վրդ. Եսայեանի հետ մեկնեց Վենիով եւ այնտեղ Սուրբ Պատարագ մատուցեց տեղի հայ հաւատացեալների համար:

Յունուարի 9-ին Սրբազան Հայրը Սուրբ Պատարագ մատուցեց Սոչի քաղաքում եւ Ծայրագոյն Վարդապետի աստիճան շնորհեց Սոչիի հայ կաթողիկէների նորանշանակ ժողովրդապետ Հոգշն. Հ. Ռաֆայէլ Վրդ. Կրավչիկին: Սուրբ Պատարագից յետոյ Սրբազան Հայրը Սոչիի կաթողիկէ եկեղեցու բակում կատարեց խաչքարի օծման կարգ:

Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանը հովուական այցելութիւն կատարեց նաեւ Կրասնոդար եւ Դոնի Ռոստով, որտեղ եւս մատուցեց Սուրբ Պատարագ, որի ընթացքում վարդապետական գաւազան եւ լանջախաչ շնորհեց տեղի հայ կաթողիկէների ժողովրդապետ Հոգշն. Հ. Սերգեյ Վրդ. Բաբաջանեանին:

Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանի Ռուսաստան կատարած հովուական այցից յետոյ՝ յունուարի 11-ին, Մոսկուայի քաղաքային իշխանութիւնները հրապարակեցին տեղեկատուութիւն՝ այն մասին, որ Մոսկուայի քաղաքապետարանի Քաղաքաշինական-հողային հարցերի յանձնաժողովը հաւանութիւն է տուել Մոսկուայի հայ կաթողիկէ համայնքին յանձնելու հողատարածք՝ եկեղեցու կառուցման համար: Հողատարածքը Մոսկուայի Հարաւային Բուտով շրջանում է եւ կազմում է 0,7 հա: Յանձնաժողովի քարտուղար Անաստասիա Պյոտվան ասել է հետեւեալը. «0,7 հա հողատարածքը կը տրամադրուի Հայ Կաթողիկէ Եկեղեցու Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ ժողովրդապետութեանը՝ 9 տարի անհատոյց օգտագործման իրաւունքով՝ եկեղեցու եւ հոգեւոր-մշակոյթային կենդրոնի նախագծման եւ կառուցման համար»: Եկեղեցու ընդհանուր մակերեսը կարող է կազմել մինչեւ 1000 մ^2, իսկ հոգեւոր կենդրոնը՝ մօտ 850 մ^2: Նոր կառուցուելիք եկեղեցին կը լինի Մոսկուայի առաջին հայ կաթողիկէ եկեղեցին՝ ողջ պատմութեան ընթացքում:

Ըստ պաշտօնական տուեալների Մոսկուայում այժմ ապրում է մօտ 500 հայ կաթողիկէ ընտանիք, իսկ ամբողջ Ռուսաստանում հայ կաթողիկէների թիւը մօտ 100.000 է:

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ՄԻԱՑԱՆ ՊԱՆԱՄԱՅՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ 34-ՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՕՐԵՐԻՆ

«Երիտասարդաց Համաշխարհային Օրերը խիզախների համար են»:

34-րդ «Երիտասարդաց համաշխարհային օրեր»-ն այս տարի կազմակերպուեցին յունուարի 23-28-ը՝ Կենդրոնական Ամերիկայի երկրներից մէկում՝ Պանամայում, մի երկրում, որը Ֆրանցիսկոս Պապն անուանեց «Համախմբուածութեան եւ երազանքների երկիր, խորհրդանիշ կայուն զարգացման, որը բխում է կապեր եւ միութիւններ ստեղծելու կարողութիւնից: Սրբազան Պապն իր ելոյթներում ոգեւորում էր երիտասարդներին՝ լինել յոյսի առաջամարտիկներ:

«Այս օրերին Պանաման դառնալու է յոյսի իջեւանատուն՝ հանդիպման մի վայր, որտեղ հինգ աշխարհամասերից եկած երիտասարդներն՝ իրենց շողշողուն երազանքներով եւ յոյսերով, տօնելու են, հանդիպելու են միմեանց, աղօթելու են, արծարծելու են իրենց փափաքը եւ յանձնառութիւնը՝ կառուցելու աւելի մարդասիրական մի աշխարհ»,– շեշտեց Սրբազան Քահանայապետն իր առաջին ելոյթում:

Հինգ մայրցամաքներից մէկտեղուած կաթողիկէ երիտասարդների հետ իրենց միասնութիւնը ապրելու եւ արտայայտելու փափաքով հայ կաթողիկէ երիտասարդները, ովքեր այս տարի չկարողացան մեկնել Պանամա, մէկօրեայ հանդիպում կազմակերպեցին Գիւմրիի Սրբոց Նահատակաց կաթողիկէ Աթոռանիստ եկեղեցում: Հայաստանից եւ Վրաստանից հանդիպմանը մասնակցեցին մօտ 200 երիտասարդներ: Միասնական Սուրբ Պատարագից յետոյ նրանց ողջունեց Հայ կաթողիկէ երիտասարդաց խմբի նախագահ Գերյ. Հ. Գառնիկ Ծ. Վրդ. Յովսէփեանը.

«Լիայոյս ենք, որ այս հանդիպումը կարող է նպաստել, որպէսզի ձեր տեղական մշակոյթների հազարամեայ հարստութիւնն ի սպաս բերելով՝ եւս մէկ անգամ խորհրդածէք եւ զօրացնէք ձեր հաւատքը մեր Տէր Յիսուս Քրիստոսի նկատմամբ:

Ինչպէս իր խօսքում ասել է Նորին Սրբութիւն Ֆրանցիսկոս Սրբազան Քահանայապետը. «Երիտասարդաց Համաշխարհային Օրերը խիզախների համար են, եւ ո՛չ այն երիտասարդների, ովքեր յարմարաւէտութիւն են փնտռում եւ ընկրկում դժուարութիւնների առաջ: Դէ՛ ինչ, պատրա՞ստ էք ընդունել մարտահրաւէրը»:

Գերյարգելի Հայր Գառնիկը խօսեց Երիտասարդաց համաշխարհային օրերի նպատակի, անցած ճանապարհի հանգրուանների, ինչպէս նաեւ հայ երիտասարդների մշտական մասնակցութեան մասին: Յաջորդ բանախօսութեան համար հրաւիրուեց Սրբոց Նահատակաց մայր եկեղեցու ժողովրդապետ Տ. Գրիգոր Աւագ Քհնյ. Մկրտչեանը: Նա մանրամասն անդրադարձ կատարեց 34-րդ համաշխարհային օրերի բնաբանին, որ Աստուածամօր խօսքերն են՝ *«Ահաւասիկ ես մնում եմ Տիրոջ աղախինը. թող քո խօսքի համաձայն լինի ինձ»:* Տէր Գրիգորը խօսեց Աւետման դրուագի եւ Աստուածամօր վերաբերեալ Եկեղեցու աստուածաբանութեան շուրջ.

«Մարիամի Աւետումը կատարում է «Ժամանակների լրման» (Գաղ. 4, 4), այսինքն՝ խոստումների ու նախապատրաստութիւնների կատարման բացումը: Մարիամը կոչուած է յղանալու Նրան, Որի մէջ *«Աստուածութեան ամբողջ լիութիւնը պիտի բնակուի մարմնապէս»* (Կող. 2, 9): Մարիամի այն հարցմանը, թէ *«Ինչպէ՞ս պիտի լինի դա ինձ, քանի որ ես տղամարդ չեմ ճանաչում»* (Ղուկ. 1, 34), Հոգու զօրութեամբ տրուեց աստուածային պատասխանը. *«Սուրբ Հոգին պիտի գայ քո վրայ»* (Ղուկ 1, 35)»:

Երիտասարդներն արձագանքեցին Տէր Գրիգորի մեկնաբանութիւններին եւ խօսեցին իրենց անձնական ապրումների մասին:

Երկու բանախօսութիւններին հետեւեց Հրեշտակ Տեառն աղօթքը եւ Վարդարանը:

Տէր Նարեկ Քհնյ. Թադեւոսեանն անդրադարձ կատարեց Պանամայի հովանաւոր Անտիգուայի Սուրբ Կոյս Մարիամի պատմութեանը, նրա սրբապատկերի շուրջ հիւսուած աւանդազրոյցներին եւ Սուրբ Կոյսի միջամտութեամբ տեղի ունեցած հրաշքներին: «Մենք պիտի գիտակցենք, որ Աստուածամայրը ամբողջ Եկեղեցու Մայրն է եւ բարեխօսում է բոլորիս համար: Իւրաքանչիւր մէկը, ով դիմում է Սուրբ Կոյսի օգնութեանը, չի յուսալքուելու եւ գտնելու մայրական պաշտպանութիւն՝ Մարիամի գրկում»,-ասաց Տէր Նարեկը:

Տ. Յովսէփ Գալստեանը համառօտ խօսեց 34-րդ համաշխարհային օրերի հովանաւոր ութ սրբերից երեքի մասին՝ Խօսէ Սանչես դել Ռիոյի, Դօն Բոսկոյի եւ Սուրբ Յովհաննէս Պօղոս երկրորդի մասին:

Այնուհետեւ եկաւ այս հանդիպման ամենաառանձնայատուկ պահը, ինչը որ իր բնոյթով առաջին անգամ է երիտասարդական հանդիպումների ընթացքում: Երիտասարդներին հնարաւորութիւն տրուեց, որ իրե՛նք հանդէս գային սեփական բանախօսութիւններով՝ առաջարկուած թեմաների շուրջ: Եւ առաջին փորձը ստացուեց առաւել քան լաւ: Երիտասարդները խօսեցին իրենց սեփական հաւատքի փորձառութեան մասին՝ Աստուածամօր միջնորդութիւնն իրենց կեանքում, Աստծոյ հրաշքներն իրենց կեանքում, սրբութեան հասնելու սեփական ջանքերի մասին, երիտասարդական հանդիպումներին իրենց մասնակցութեան եւ համայնքային աշխատանքների մասին:

Հանդիպման վերջում Գերյ. Հայր Գառնիկ ծայրագոյն վարդապետը շնորհակալութիւն յայտնեց Արհի. Տէր Ռափայէլ Արքեպիսկոպոս Մինասեանին՝ մշտապէս երիտասարդներին իր հայրական ուշադրութեան եւ հովանու ներքոյ պահելու եւ այս շարունակական հանդիպումները առաւել զարգացնելու նպատակադրութեան համար:

Տ. Յովսէփ Քհնյ. Գալստեան

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ

Սփիւռքի փոքրաթիւ Հայ Կաթողիկէ համայնքները եւս հոգեւոր հովիւների ուշադրութեան կենդրոնում են:

Մոսկուայում հայ կաթողիկէների ժողովրդապետ, Առաջնորդական Փոխանորդ Գերյ. Հ. Պետրոս Ծ. Վրդ. Եսայեանը Սանկտ Պետերբուրգի Լուրդի Տիրամօր կաթողիկէ եկեղեցուն կից սրահում հանդէս եկաւ դասախօսութեամբ՝ Հայ Կաթողիկէ Եկեղեցու եւ հայ ծէսի վերաբերեալ: Դասախօսութիւնը նախաձեռնել էր Պետերբուրգի պատմական գիտութիւնների դոկտոր Անաստասիա Պալամարչուկը: Դասախօսութեանը ներկայ էին հայ կաթողիկէ համայնքի եւ լատինածէս ռուսական համայնքի հաւատացեալներ: Գերյ. Հ. Պետրոս Ծ. Վրդ. Եսայեանը դասախօսութիւնից յետոյ մատուցեց Սուրբ եւ Անմահ Պատարագ: Հայր Պետրոսը պարբերաբար հովուական այցելութիւն է կատարում Սանկտ Պետերբուրգի հայ կաթողիկէ փոքրաթիւ համայնքին եւ հոգ տանում համայնքի անդամների հոգեւոր կարիքների մասին:

ՎԱՐՇԱՒԱՅՈՒՄ ՆՇԵԼ ԵՆ ԼԵՀԱՀԱՅ ՀՈԳԵՒՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ ԹԷՈԴՈՐՈՎԻՉԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՔԱՐՈԶԻ 100-ԱՄԵԱԿԸ

«Սա է հայրենիքի սէրը...».
Լեհաստանի ղեկավարները
գնահատում են հայերի ներդրումը
իրենց երկրի պատմութեան մէջ

2019թ. փետրուարի 9-ին Վարշաւայի Սուրբ Յովհաննէս Մկրտիչ Մայր Տաճարում տեղի ունեցաւ հանդիսութիւն՝ նուիրուած Լուովի հայ կաթողիկէ Առաջնորդ Արհի. Տ. Ժոզէֆ Արքեպս. Թէոդորովիչի՝ Լեհաստանի 2-րդ անկախ հանրապետութեան հիմնադրմանը նուիրուած պատմական քարոզի 100-ամեակին: Լեհահայոց համար կարեւոր այս հանդիսութիւնը կազմակերպուել էր Վարշաւայի արքեպիսկոպոս Վսեմաշուք Կարդինալ Կազիմիեժ Նիչի եւ Լեհահայոց մշակոյթի եւ ժառանգութեան: Հանդիսութիւնը սկսուեց Սուրբ Պատարագով՝ նախագահութեամբ Կարդինալ Նիչի եւ համապատարագութեամբ տասներկու բարձրաստիճան հոգեւորականների, որոնց թուում էին Լեհաստանի կաթողիկէ եպիսկոպոսների խորհրդաժողովի քարտուղար Արքեպիսկոպոս Արթուր Միժինսկին, Վարշաւայի Սբ. Գրիգոր Նարեկացի հայ կաթողիկէ համայնքի ժողովրդապետ Գերյ. Հ. Ժոզեֆ Ծ. Վրդ. Նաումովիչը: Սուրբ Պատարագին ներկայ էին լեհական Սեյմի խօսնակ Մարեկ Կուխչինսկին, Սենատի խօսնակ Ստանիսլավ Կառչեվսկին, Սեյմի եւ Սենատի պատգամաւորներ եւ սենատորներ, Լեհաստանում ՀՀ լիազօր դեսպան Սամուէլ Մկրտչեանը





եւ այլ պաշտօնեաներ, ինչպէս նաեւ Վարշաւայում սովորող հայ ճեմարանականներ:

Սբ. Պատարագից առաջ ընթերցուեցին Սեյմի, Սենատի եւ Վարչապետի ուղերձները: Վսեմաշուք Կարդինալ Նիչն իր քարոզում ասաց, որ հանդիսութեան կազմակերպումը երկու նպատակ ունի՝ Լեհաստանի հանրապետութեան անկախութեան վերականգնման 100-ամեայ յոբելեանը եւ երկրորդը՝ 100 տարի առաջ՝ փետրուարի 9-ին, նորակազմ խորհրդարանի առաջին նիստին նախորդող պատմական Սուրբ Պատարագը, որի ընթացքում Լուովի հայ կաթողիկէ Առաջնորդ Արհի. Տ. Ժոզէֆ Արքեպս. Թէոդորովիչը տուեց իր հռչակաւոր քարոզը, որի ընթացքում նա գոհութիւն յայտնեց Տիրոջը՝ Լեհաստանի անկախութեան վերականգնման համար եւ յորդորեց նորակազմ խորհրդարանի անդամներին պատասխանատուութիւն ստանձնել հայրենիքի զարգացման համար: Որպէս ազդեցիկ հոգեւորական եւ հիանալի քարոզիչ, հէնց Թէոդորովիչը հրաւիրուեց քարոզելու այդ պատմական օրը:

Նրա քարոզը լի էր մեծ հոգատարութեամբ՝ Լեհաստանի ազատութեան եւ ապագայի նկատմամբ, դա միաժամանակ միութեան եւ երկիրը վերակառուցելու մասին կոչ էր: Կարդինալ Նիչը շեշտեց, որ միակ եպիսկոպոսը, որ միաժամանակ Սեյմի անդամ էր, Արհի. Ժոզէֆ Թէոդորովիչն էր: Նիչը փաստեց, որ Արքեպիսկոպոս Թէոդորովիչի քարոզը եւ Լեհաստանի 2-րդ հանրապետութեան մեկնարկը շատ կարեւոր են Լեհաստանի պատմութեան մէջ, որոնք պէտք է յիշել ներկայում եւ դասեր քաղել դրանցից: Նիչը խօսեց նաեւ լեհահայերի հսկայական դերի մասին՝ Լեհաստանի պատմութեան համար:

Սուրբ Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու պատին դրուել է նաեւ Արհի. Ժոզեֆ Արքեպս. Թէոդորովիչին նուիրուած յուշաքար, որի վրայ գրուած է հետեւեալը.

«Սա՛ է հայրենիքի սէրը, որից բարձր է, սկիզբ է առնում եւ ուղղորդւում միայն մէկ սէր՝ Աստծոյ հանդէպ սէրը:

Ի պատիւ Արքեպիսկոպոս Ժոզէֆ Թէոֆիլ Թէոդորովիչի՝
Լվովի Հայ Կաթողիկէ Մետրոպոլիտի,
Լեհաստանի մեծ հայրենասէրի»:

ԿՈՎԿԱՍԻ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԸ ՀՐԱԺԵՇՏ ՏՈՒԵՑ ՊԱՊԱԿԱՆ ՆՈՒԻՐԱԿԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ Հ. ՄԻՅԱՅՏԱՅ ԲԼԱԺԻՆ

Ի երախտագիտութիւն միասնականութեան եւ հաւատարմութեան Կաթողիկէ Եկեղեցու

2019թ. փետրուարի 13-ին Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Արեւելեան Եւրոպայի Առաջնորդ Արիհ. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանը հրաւիրուել էր Թբիլիսի՝ ներկայ գտնուելու հրաժեշտի հանդիսութեան՝ ի պատիւ Պապական նուիրակի խորհրդական Մոնսինեօր Հ. Միյայտայ Բլաժի: Կովկասում իր առաքելութեան ընթացքում (2016-2019թթ.) Մոնսինեօր Հայր Միյայտայ Բլաժն աշխատել է ի սպաս Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի կաթողիկէ համայնքների առաքելութեան եւ միասնութեան, պապական նուիրակի աշխատանքի կազմակերպման, նպաստել 2016թ. Ֆրանցիսկոս Սրբազան Քահանայապետի Հայաստան, Վրաստան եւ Ադրբեջան այցելութեան:

2017-2018թթ. Հայր Բլաժը ժամանակաւորապէս վարել է առաքելական նուիրակի գործերը՝ մինչեւ ներկայիս նուիրակի՝ Արիհ. Ժոզէ Արքեպս. Բեթենկուրի նշանակումը եւ ժամանումը:

Հայր Բլաժին իր կատարած աշխատանքի համար շնորհակալութիւն յայտնեցին դիւանագէտները, կաթողիկէ եւ ուղղափառ հոգեւորականները, միաբան քոյրերը, ընկերները: Արիհ. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանը Հայր Բլաժին նուիրեց լանջախաչ եւ իր երախտագիտութիւնը յայտնեց միասնական աշխատանքի համար:

Հայր Միյայտայ Բլաժը Վրաստանից մեկնեց 2019 թուականի փետրուարի 16-ին, եւ դիւանագիտական ծառայութեան է անցել Կենդրոնական Աֆրիկայի Հանրապետութիւնում՝ Պապական նուիրակի գրասենեակում, որը տեղակայուած է Չադում:

«Ի՞ՆՉ Է ՔԱՀԱՆԱՅՈՒԹԻՒՆԸ». ՀՈԳԵՒՈՐ ԿՐԹՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՂ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Քահանան կոչուած է իր կեանքով շահել մարդկանց սէրը ոչ թէ դէպի իր անձը, այլ՝ դէպի Քրիստոս:

2019թ. ապրիլի 11-ից 12-ը Երեւանի Սուրբ Գրիգոր Նարեկացի հայ կաթողիկէ ժողովրդապետութեան կենդրոնում կազմակերպուեց հոգեւոր կրթութիւն՝ Հայաստանի, Վրաստանի եւ Ռուսաստանի հայ կաթողիկէ համայնքներում ծառայող հոգեւորականների համար, առաջնորդութեամբ Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանի եւ առ ի պատրաստութիւն Սուրբ Յարութեան տօնին: Հոգեւոր կրթութեան թեման էր՝ «Ի՞նչ է քահանայութիւնը եւ ինչպէ՞ս ապրել այն»՝ բանախօսութեամբ՝ Արհի. Տ. Յովհաննէս Եպս. Թէյրուզեանի:

Հոգեւոր կրթութեան ընթացքում հոգեւորականները միասնաբար մատուցեցին Սուրբ Պատարագ, լսեցին չորս բանախօսութիւններ, ունեցան թեմայի շուրջ խորհրդածութեան ժամեր եւ միասնաբար աղօթեցին ժամերգութիւններ:

Առաջին բանախօսութեան թեման էր քահանայի ընկալումը՝ սեփական կոչման եւ առաքելութեան: Արհի. Թէյրուզեան Եպիսկոպոսը եղբայրակից հոգեւորականների հետ կիսեց իր երկարամեայ քահանայական կեանքի փորձառութիւնը եւ շեշտեց, յատկապէս, անհրաժեշտութիւնը, որ իւրաքանչիւր քահանայ մշտապէս ինքն իրեն յիշեցնի եւ առաւել խորապէս գիտակցի, որ իր առաքելութեան միակ աղբիւրը եւ առաջ մղող ուժը Տէր Յիսուս Քրիստոսն է, որ միայն Քրիստոսի հետ ամենօրեայ սերտ հաղորդութեան, Նրա հետ անքակտելի միութեան, ներքին երկխօսութեան, մտերմութեան պարագայում է իմաստաւորւում քահանայութիւնը, աւետարանացումը եւ քահանայական կոչման ճիշտ ընկալումը, քանի որ իւրաքանչիւր քահանայ իր ձեռնադրութեան վայրկեանից մասնակից է դառնում Քրիստոսի յաւիտենական քահանայութեանը եւ կիսում է Նրա փրկչագործական առաքելութիւնը, յանձն է առնում իր Տիրոջ նման հոգ տանել մարդկանց հոգիների փրկութեան մասին: Բանախօսը կոչ արեց քահանաներին հաւատարիմ մնալ Քրիստոսի Անձին, սովորել Նրանից, նմանուել Նրան, որպէսզի հնարաւոր լինի այս աշխարհում ճշմարտապէս արտացոլել Յիսուսի Անձի յատկանիշները, լինել «Քրիստոսի բուրմունքը», ինչպէս գրում է Սուրբ Պօղոսը, միշտ յիշել, որ քահանան կոչուած է իր քարոզութեամբ կամ սրբագործող խորհրդակատարութիւնների միջոցով մարդկանց մօտեցնել Քրիստոսին, ոչ թէ իր սեփական անձին, փառաւորել Յիսուսի՛ն, սիրել ու յարգել տալ Աստծո՛ւն, ոչ թէ իր սեփական անձը, լինել խոնարհ եւ միշտ Քրիստոսով սնուելու կարօտ:

Երկրորդ բանախօսութեան թեման էր հնազանդութիւնը: Թէյրուզեան եպիսկոպոսը խոնարհաբար եւ եղբայրաբար բացատրեց հնազանդութեան սկզբունքի անգնահատելի արժէքը՝ Եկեղեցու բարօրութեան, Քրիստոսի առաքելութեան շարունակականութիւնը ապահովելու համար: Իւրաքանչիւր քահանայ՝ ինքն իրեն ընկալելով որպէս իր հոգեւոր խնամարկութեանը յանձնուած ժողովրդի ծառայ եւ ոչ թէ տէր, պէտք է խոնարհաբար նմանուի Քրիստոսին, որ եկաւ ոչ թէ ծառայութիւն ընդունելու, այլ ծառայելու: Իւրաքանչիւր քահանայ պէտք է իր եպիսկոպոսի մէջ տեսնի Քրիստոսի ներկայացուցչին, Եկեղեցու առաջնորդութեան մարմնաւորողին, ում որոշումներին պէտք է հետեւի սիրով, բայց ոչ կոյր եւ անգիտակից ստրկութեամբ, այլ՝ իր հնազանդութիւնը ընկալելով որպէս մասնակցութիւն իր մեծաւորի իշխանութեանը կամ

առաջնորդութեանը, որը իրականում Քրիստոսի՛ առաջնորդութիւնն է՝ Իր Խորհրդաւոր Մարմնի անդամների նկատմամբ: Գիտակից հնազանդութիւնը ենթադրում է նաեւ արտայայտել սեփական նկատառումները, կարծիքները՝ մեծաւորի որոշումների վերաբերեալ՝ ոչ թէ խանգարելու, այլ նրան աջակցելու բարի նպատակով: Այսպիսի ազնիւ մօտեցումը նպաստում է Եկեղեցու կառավարման ժողովականութեան կամ կոլլեգիալութեան սկզբունքին, որը ոչ թէ բացառում է այլակարծութիւնը, այլ բաց է լսելու բոլորին, որպէսզի բոլորը բաժին ունենան աւետարանացման գործում:

Երրորդ թեման Եկեղեցու ճգնաժամերի յաղթահարման վերաբերեալ էր: Թէյրուզեան Եպիսկոպոսը, որպէս բազմաթիւ մարտահրաւէրներ, դժուարութիւններ, անկումներ տեսած փորձառու հոգեւորական, իր եղբայրակիցների ուշադրութիւնը հրաւիրեց Եկեղեցու ոչ թէ բացասական երեւոյթների, այլ՝ յաղթանակած ճանապարհի վրայ, որը Տիրոջ ողորմածութեան, Քրիստոսի անչափելի սիրոյ արդիւնքն է: Քրիստոս երբեք թոյլ չի տալիս, որ իր Եկեղեցին պարտուի. «Դժոխքի դռները երբեք չպիտի յաղթահարեն այն», ինչպէս Յիսուս ասաց Պետրոս առաքեալին: Քրիստոս միշտ Իր ձեռքը մեկնում է եւ խորտակուողին հանում է ծովի անդունդից, Նա երբեք թոյլ չի տայ, որ իր հետեւորդները մնան անկեալ վիճակում: Թէյրուզեանը յիշեցրեց վերնատան տեսարանը, երբ Յիսուս լուաց նոյնիսկ Յուդայի ոտքերը՝ քաջ իմանալով, որ նա դաւաճանելու է Իրեն: Յիսուս Իր կեանքը տուեց նաեւ իր թշնամիների, Իրեն ատողների համար: Հետեւաբար, այսօր Յիսուսին հետեւող քահանան պէտք է նոյնը անի՝ իր կեանքը, գործը նուիրի բոլորի համար՝ առանց խտրութիւն դնելու, նուիրուի անմնացորդ կերպով, սիրի եւ ների մշտապէս, ինչպէս իր Երկնային Վարդապետը:

Չորրորդ թեման Աստուածամօր կերպարն էր՝ որպէս բարեխօս եւ օրինակ քահանայի համար: Քահանան եւս իր կոչումը ընդունելիս՝ Սուրբ Կոյսի նման մի երկնային աւետիս է ընդունում: Քահանային եւս Աստուած առաջարկում է նուիրուել Աստծոյ փրկչագործ առաքելութեանը՝ վստահելով Իր աստուածային կամքին, եւ չիմանալով, թէ ինչ է սպասւում իրեն, այնուամենայնիւ, համարձակ ընդունել Աստծոյ կամքը եւ նետուել առաջ՝ կատարելու այն: Թէյրուզեան Սրբազանը կոչ արեց միշտ գոհանալ սեփական կեանքի պայմաններով, չդժգոհել դժուարութիւններից՝ յիշելով աղքատ ընտանիքները եւ միշտ գիտակցելով, որ ունենք Աստուածամօր բարեխօսութիւնը մեզ համար, որ Մայրն է ամբողջ Եկեղեցու եւ տեսնում է բոլորի կարիքները, ինչպէս տեսաւ Կանայի հարսանիքի ժամանակ եւ դիմեց իր Որդուն:

Հոգեւոր կրթութեան վերջում Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանը շնորհակալութիւն յայտնեց բոլոր հոգեւորականներին՝ հոգեւոր կրթութեանը մասնակցելու համար, որը ոչ միայն առիթ է հոգեւորապէս նորոգման, այլեւ միմեանց տեսնելու եւ միասին աղօթելու:

Տ. Յովսէփ Քինյ. Գալստեան

ԲԵԼՈՐԵՉԵՆՍԿՈՒՄ ՕԾՈՒԵՑ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻ՝ ԱՌԱՋԻՆԸ ՅԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Սուրբ եկեղեցեաւս աղաչեսցո՛ւք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց...

2019թ. ապրիլի 28-ին՝ Կարմիր կիրակի, աստուածային ողորմութեան տօնին, Ռուսաստանի Բելորեչենսկ քաղաքում օծուեց յետխորհրդային շրջանում Ռուսաստանում կառուցուած առաջին հայ կաթողիկէ եկեղեցին, որ անուանուած է ի պատիւ ծննդեան Սուրբ Կոյս Մարիամի: Եկեղեցու կառուցման աշխատանքները սկսուել են ութ տարի առաջ՝ տեղի ժողովրդապետ Գերյ. Հ. Սերգեյ Ծ. Վրդ. Բաբաջանեանի եւ տեղի համայնքի նուիրեալ զաւակներ Մկրտիչ եւ Վլադ Խաչատրեանների առատաձեռն ֆինանսական հովանաւորութեամբ:

Նորակառոյց եկեղեցին օծուեց ձեռամբ Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Արեւելեան Եւրոպայի հայ կաթողիկէների Առաջնորդ Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանի եւ առընթերակայութեամբ տեղի լատին համայնքի Առաջնորդ Եպիսկոպոս Կլեմենս Պիկելի (որ մեծապէս աջակցել է հայ կաթողիկէ եկեղեցու կառուցմանը), Ռուսաստանի հայ կաթողիկէ համայնքների Առաջնորդական Փոխանորդ Գերյ. Հ. Պետրոս Ծ. Վրդ. Եսայեանի, ինչպէս նաեւ մասնակցութեամբ Ռուսաստանի եւ Ուկրաինայի համայնքներում ծառայող հայ կաթողիկէ եւ լատին վարդապետների, Սուրբ Հաղորդութեան հայ եւ լատին միաբան քոյրերի, Ջավախքի Տուրցխ գիւղում ծառայող սալեզեան հայ քոյրերի եւ հարիւրաւոր տեղաբնակ հաւատացեալների:

Առաջնորդ հայրերը նախ կատարեցին նորակառոյց եկեղեցու դռնբացէքի հանդիսաւոր արարողութիւնը, ապա խաչերի, Սուրբ Սեղանի, եկեղեցու պատերի օծման արարողութիւնները եւ մատուցեցին առաջին Սուրբ Պատարագը:

Բելորեչենսկի հայ կաթողիկէ հաւատացեալները մեծ ցնծութեամբ եւ սրտի գոհունակութեամբ տօնեցին իրենց եկեղեցու օծումը: Աստուած օրհնեց նրանց հաւատքի եւ ջերմեռանդութեան երկար ճանապարհը, որ սկիզբ էր առել դեռեւս հայրենի Ջավախքից. Բելորեչենսկի հայ կաթողիկէ ընտանիքների մեծ մասը Ռուսաստան է արտագաղթել Ջավախքի Տուրցխ գիւղից, որը մշտապէս եղել է բարեպաշտ եւ հաւատքի աւանդութիւնները պահպանող, օրինակելի գիւղ, նոյնիսկ, խորհրդային հալածանքի տարիներին: Այդ նոյն եկեղեցաւանդ եւ հայրենաւանդ աղօթասիրութեամբ հայ կաթողիկէները կը շարունակեն իրենց պաշտամունքային կեանքը Բելորեչենսկի նորակառոյց եկեղեցում, որն իրենց աղօթքներով դարձաւ առաջնեկ հայ կաթողիկէ եկեղեցին՝ կառուցուած Ռուսաստանի տարածքում, վերջին հարիւրամեակում:

Տէր Յովսէփ Քինյ.
Գալստեան

ՋԱՒԱԽՔԻ ՍՈՒԽԼԻՍ ԳԻՒՂԻ ՆՈՐ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ Է ՆՇԱՆԱԿՈՒԵԼ ԱՐԺ. Տ. ՍԱՀԱԿ ՔՀՆՅ. ԱՂԷԿԵԱՆԸ

Զգործս ձեռաց մերոց յաջողեա՛ մեզ, Տէր...

2019թ. մայիսի 4-ին Ջաւախքի Սուխլիս հայ կաթողիկէ գիւղի Սուրբ Աստուածածին եկեղեցում մատուցուեց Սուրբ Պատարագ՝ ձեռամբ Գերյ. Հ. Գառնիկ Ծ. Վրդ. Յովսէփեանի, առընթերակայութեամբ Տ. Գրիգոր Աւագ Քհնյ. Մկրտչեանի, գիւղի նորանշանակ ժողովրդապետ Արժ. Տ. Սահակ Քհնյ. Աղէկեանի եւ նախկին ժողովրդապետ Արժ. Տ. Անտոն Քհնյ. Անտոնեանի: Յընթացս Սուրբ Պատարագի, Հ. Գառնիկը Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Արեւելեան Եւրոպայի Առաջնորդ Արհի. Տէր Ռափայէլ Արքեպս. Մինասեանի անունից ներկայացրեց նորանշանակ ժողովրդապետին եւ շնորհակալութիւն յայտնեց Տ. Անտոնին՝ գիւղի հոգեւոր պէտքերը ըստ արժանւոյն հոգալու համար:

Արժ. Տ. Սահակ Քհնյ. Աղէկեանի կենսագրականը

Արժ. Տ. Սահակ Քհնյ. Աղէկեանը ծնուել է 1982թ. օգոստոսի 24-ին, Գիւմրիում:

1989-1999թթ. սովորել է Անանիա Շիրակացու անուան միջնակարգ դպրոցը:

1999-2000թթ. սովորել է Գիւմրիի հայ կաթողիկէ Ներսիսեան դպրանոցում:

2000-2002թթ. ծառայել է ԼՂՀ Պաշտպանութեան բանակում:

2002-2004թթ. սովորել է Ուկրաինայի Լուով քաղաքի Յոյն-Կաթողիկէ համալսարանում:

2004-2010թթ. սովորել է Լեհաստանի Լիւբլին քաղաքի Սբ. Յովհաննէս Պողոս Բ-ի անուան կաթողիկէ համալսարանում եւ ստացել մագիստրոսի աստիճան:

2011-2016թթ. աշխատել է Հայկական Կարիտասի Փոքրիկ իշխան սոցիալական կենդրոնում, մասնագիտացել նաեւ սոցիալական աշխատանքի ոլորտում:

2015թ. ապրիլի 2-ին ձեռնադրուել է սարկաւագ, իսկ 2016թ. հոկտեմբերի 8-ին՝ քահանայ՝ ձեռամբ Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանի:

2017-2019թթ. եղել է ՀՀ Շիրակի մարզի Փանիկ գիւղի փոխժողովրդապետ՝ զուգահեռ հոգալով Սարագիւղ համայնքի հոգեւոր պէտքերը:

Ամուսնացած է, ունի մէկ զաւակ:

ԱՐՀԻ. ՏԷՐ ՌԱՓԱՅԷԼ ԱՐՔԵՊՍ. ՄԻՆԱՍԵԱՆՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԺՈՂՈՎԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆԸ

Պաշտօնական հանդիպում

2019թ. մայիսի 15-ին Արհի. Տէր Ռափայէլ Արքեպս. Մինասեանը Երեւանի Սուրբ Գրիգոր Նարեկացի Հայ Կաթողիկէ ժողովրդապետութեան մէջ ընդունեց Գերմանիայի Կաթողիկէ Եկեղեցու Եպիսկոպոսաց ժողովի պատուիրակութեան անդամներին՝ առաջնորդութեամբ Եպիսկոպոսաց ժողովի Միջեկեղեցական յանձնաժողովի նախագահ եւ Մագդեբուրգի առաջնորդ Գերշն. Եպիսկոպոս Ֆայգէի: Հանդիպմանը ներկայ էր նաեւ Գերյ. Հ. Գառնիկ Ծ. Վրդ. Յովսէփեանը:

Հանդիպման ընթացքում առաջնորդ հայրերը խօսեցին Եկեղեցու միութենական շարժման էութեան եւ համայնքների միջեւ եղբայրական յարաբերութիւնների առաւել խորացման եւ զարգացման հեռանկարների մասին: Յաւարտ զրոյցի առաջնորդ հայրերը, պատուիրակութեան անդամները միասին աղօթեցին Սուրբ Գրիգոր Նարեկացու մատրան մէջ եւ ապա ճաշեցին:

Եպիսկոպոս Ֆայգէն Սրբազան Հօրը փոխանցեց Գերմանիայի Կաթողիկէ Եկեղեցու Եպիսկոպոսաց ժողովի ատենապետ եւ Միւնխենի Արքեպիսկոպոս Ռայնհարդ Մարքսի ջերմ ողջոյններն ու բարեմաղթանքները:

ՇՈՒԵԴԻԱՅԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆՆ ԱՅՑԵԼԵՑ ԵՐԵՒԱՆԻ ՍԲ. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԱՆՈՒԱՆ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Մատուցուեց միասնական Սուրբ Պատարագ

2019թ. մայիսի 23-ին Երեւանի Սուրբ Գրիգոր Նարեկացի Հայ Կաթողիկէ ժողովրդապետութիւն այցելեց Շուեդիայի Վսեմաշուք Անդերս Ծիրանավոր Արբորելիուսը՝ Արեւելեան Կաթողիկէ եկեղեցիների առաջնորդ հայրերի մի պատուիրակութեան հետ միասին եւ ուղեկցութեամբ Շուեդիայի Հայ Կաթողիկէ համայնքի ժողովրդապետ Հոգշն. Հ. Յովսէփ Վրդ. Պահէի: Բարձրաստիճան հիւրերի մասնակցութեամբ Սուրբ Գրիգոր Նարեկացի մատրան մէջ մատուցուեց Սուրբ Պատարագ՝ ձեռամբ Գերյ. Հ. Գառնիկ Ծ. Վրդ. Յովսէփեանի եւ առընթերակայութեամբ Հոգշն. Հ. Եղիա Վրդ. Դերձակեանի եւ Հոգշն. Հ. Յովսէփ Վրդ. Պահէի: Ներկայ էր նաեւ Լեհաստանի հայ կաթողիկէների համար ծառայող Մալթայի միաբանութեան անդամ Հ. Հենրիկ Ծ. Վրդ. Բլաշչիկը:

Յընթացս՝ Սուրբ Պատարագի, Գերյ. Հ. Գառնիկը Շուեդիայի պատուիրակութեանը փոխանցեց Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Արեւելեան Եւրոպայի Առաջնորդ Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանի ջերմ ողջոյնները, պատմական տեղեկութիւններ յաղորդեց Հայ Կաթողիկէ Եկեղեցու մասին եւ ասաց, որ հայ կաթողիկէները միշտ պատրաստ են ջերմութեամբ հիւրընկալելու Շուեդիայի հոգեւորականներին:

Գերյ. Հայր Գառնիկը Պատարագից յետոյ խնդրեց Վսեմաշուք Ծիրանաւոր Արբորելիուսի օրհնութիւնը: Կարդինալը նշեց, որ նմանութիւններ է տեսնում հայ եւ շուեդ ժողովուրդների պատմութիւնների մէջ՝ փաստելով, որ շուեդները եւս ունեցել են զոհեր՝ պատերազմների պատճառով եւ նահատակներ՝ յանուն հաւատքի:

Պատարագի աւարտին Շուեդիայի պատուիրակութիւնը այցելեց նաեւ Սրբոց Հրեշտակապետաց միացեալ հոգեւոր ճեմարան եւ հայ հոգեւորականների հետ միասին աղօթեցին նորանոր քահանայական կոչումների համար:

ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ ՏՕՆԵՑԻՆ ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ, բարեխօսեա՛ վասն մեր

2019թ. յուլիսի 7-ին Մոսկուայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ հայ կաթողիկէ ժողովրդապետութեան տօնն էր՝ ի նշանաւորումն Լուսաւորիչի մասունքների՝ համայնքին նուիրաբերման, որը տեղի ունեցաւ 2016թ.: Տօնի առթիւ Ամենասուրբ Կոյս Մարիամի Անարատ Յղութեան Կաթողիկէ Մայր Տաճարում հանդիսաւորապէս մատուցուեց Սուրբ Պատարագ՝ ձեռամբ Մոսկուայի հայ կաթողիկէների ժողովրդապետ, Ռուսաստանի հայ կաթողիկէների Առաջորդական Փոխանորդ Գերյ. Հ. Պետրոս Ծ. Վրդ. Եսայեանի եւ համապատարագութեամբ Մոսկուայի բիւզանդածէս կաթողիկէների Սուրբ Նիկողայոս համայնքի ժողովրդապետ Վասիլի Վայդայի, Opus Dei համայնքի ներկայացուցիչ Հ. Կառլոսի, Բարի Հոյսի Աստուածամօր համայնքի ժողովրդապետ Հ. Մայքլ Ռայանի եւ Մոսկուայի հայ կաթողիկէների փոխժողովրդապետ Հ. Յովհաննէս Վրդ. Մելիքեանի:

Սուրբ Պատարագից յետոյ ներկաները հրաւիրուեցին դիտելու հայ կաթողիկէ համայնքի երեխաների միջոցառումը, որից յետոյ շնորհաւորական խօսքով հայ համայնքին դիմեց Մոսկուայի լատինածէս կաթողիկէ համայնքի ժողովրդապետ Հ. Կիրիլ Գարբունովը:

Սբ. Գրիգոր Լուսաւորչի մասունքը Հ. Պետրոս Ծ. Վրդ. Եսայեանի խնդրանքով Մոսկուայի ժողովրդապետութիւն է բերուել Նեապոլից, տեղի կարդինալ Կրեշենցիո Սեպպէյի նուիրատուութեամբ, 2016թ. յունիսի 12-ին: Ինչպէս յայտնի է, Սուրբ Գրիգոր Լուսաւորչի աջը միշտ գտնուել է Հայաստանում, իսկ գանգը եւ մարմնի մասունքները դեռեւս 5-րդ դարում Զենոն կայսեր հրամանով տեղափոխուել են Բիւզանդիա, ապա 8-րդ դարում հայ միանձնուհիների ձեռքով տեղափոխուել Իտալիայի Նեապոլ քաղաքը եւ պահուել Սբ. Գրիգոր Լուսաւորչին նուիրուած եկեղեցում եւ այնտեղ են մինչեւ այսօր:

ՀՌՈՄԻ ՄԷՋ ՍԱՐԿԱՒԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՏԻՐԱՑՈՒ ԵՂԲ. ԱՐԱՄ ՍԱԱՏՈՅԻ

Արարողութիւնը տեղի ունեցաւ նախագահութեամբ Արիի. Ռափայէլ Արքեպս. Մինասեանի:

2019 թուականի մայիսի 26-ին, Հռոմի Ս. Նիկողայոս եկեղեցւոյ մէջ կայացած Սուրբ եւ Անմահ Պատարագի ընթացքին, տեղի ունեցաւ Տիրացու Արամ Սաատոյի սարկաւագական ձեռնադրութիւնը, նախագահութեամբ՝ Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Արեւելեան Եւրոպայի Առաջնորդ Արիի. Տէր Ռափայէլ Արքեպս. Մինասեանի, առընթերակայութեամբ՝ Գերապատիւ Հ. Մաշտոց Վրդ. Զահթէրեանի եւ Գերապատիւ Հ. Անտոն Վրդ. Գրիգորեանի ու խարտաւիլակութեամբ՝ Հռոմի Քահանայապետական Լեւոնեան հայ վարժարանի Մեծաւոր՝ Գերյ. Հ. Նարեկ Ծ. Վրդ. Նաամոյեանի:

Արարողութեանը ներկայ էին՝ Գերյարգելի եւ գերապատիւ հայրեր, Հռոմի Անարատ Յղութեան քոյրերը, Սաատո ընտանիքը ու իրենց հարազատները, ինչպէս նաեւ հաւատացեալների կուռ բազմութիւն:

Քաղուած է Վատիկան Նիւզի հայկական բաժնից

ՀՈԳԵՒՈՐ ԿՐԹՈՒԹԻՒՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԱՂԱՃԱՆԵԱՆ» ԿԵՆԴՐՈՆՈՒՄ

Նազարեթի Սուրբ Ընտանիք,
Շնորհ արէք, որպէսզի մեր ընտանիքները եւս լինեն
Հաղորդութեան եւ աղօթքի վայրեր,
Աւետարանի իսկական դպրոցներ
Եւ փոքրիկ տնային եկեղեցիներ:

Յուլիսի 11-13-ը հայ կաթողիկէ Աղաճանեան կենդրոնում կազմակերպուեց հոգեւոր կրթութիւն՝ ընտանիքների համար՝ «Մեր ընտանիքը» խորագրով: Յատուկ ընտանիքների համար եւ ընտանիքների մասնակցութեամբ այսպիսի հոգեւոր կրթութիւն հայ կաթողիկէ առաջնորդութեան մէջ կազմակերպուեց առաջին անգամ: Հովուական խնամքի տեսանկիւնից այս յոյժ կարեւոր ձեռնարկը նախաձեռնեց կենդրոնի տնօրեն Տ. Գրիգոր Աւագ քահանայ Մկրտչեանը՝ համագործակցութեամբ այլ ժողովրդապետ քահանաների, ովքեր ուղեկցում էին իրենց համայնքների ընտանիքներին: Նպատակը ընտանիքների համար միասին աղօթելու, քահանաների եւ միմեանց հետ հաղորդակցուելու, ընտանիքի մասին Եկեղեցու ընկալումը աւելի լաւ հասկանալու, ընտանեկան կեանքը ըստ Աւետարանի կազմակերպելու վերաբերեալ գիտելիքների հարստացումն էր: Ընտանիքների մեծ մասը մասնակցում էին ամբողջական կազմով՝ հայր, մայր եւ զաւակներ՝ ընդհանուր թուով մօտ վաթսուն անձ:

Առաջին օրը սկսուեց Սուրբ Պատարագով, որը մատուցեց Տ. Նարեկ Քինյ. Թադեւոսեանը: Ապա ողջոյնի խօսքով ներկաներին դիմեց Տ. Գրիգոր Աւագ քահանայ Մկրտչեանը: Նա խօսեց եկեղեցական կեանքում ընտանիքների դերի կարեւորութեան եւ գործունեայ ներգրաւման մասին՝ շեշտելով, որ հասկանում է յատկապէս գիւղերում ընտանիքների խիստ զբաղուածութիւնը գիւղատնտեսական աշխատանքներով, բայց կոչ արեց չմոռանալ քրիստոնէական պարտականութիւնները եւ ընտանեկան սրբութեան համար եւս տքնաջան աշխատելու աստուածաւանդ պատուիրանը, սուրբ պահել Տիրոջ օրը եւ ներկայ լինել Սուրբ Պատարագներին, կազմաւորել նուիրեալ ընտանիքների միութիւններ եւ մասնակցել Եկեղեցու աւետարանացման առաքելութեանը, քարոզել գիւղերում: Ընտանիքների

փոքրիկ միութիւն է հիմնուել Գիւմրիի Սրբոց Նահատակաց Եկեղեցում՝ Տ. Գրիգորի եւ Տէր եւ Տիկին Վարդան եւ Գոհար Շախուլեանների նախաձեռնութեամբ: Սա կարող է լինել օրինակ միւս համայնքների համար:

Հոգեւոր կրթութեան մասնակիցներին իր հայրական այցելութիւնը բերեց նաեւ Առաջնորդ Հայրը՝ Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանը: Նա հրաւիրեց խորհրդածել Նազարեթի Սուրբ Ընտանիքի պատկերի մասին եւ նմանուել Մարիամին, Յովսէփին եւ Մանուկ Յիսուսին. «Նայեցէ՛ք, թէ ընտանիքը որքան սուրբ է, որ Աստուած անգամ ուզեց ծնուել ընտանիքում: Յիսուս մայր ունեցաւ մարդկային ընտանիքում, կրեց մարդկային կեանքի բոլոր դժուարութիւնները՝ աղքատութիւն, հալածանք, տարագրութիւն, աշխատանք, քննադատութիւն»: Սուրբ Ընտանիքը մարդկային ընտանիքի նախատիպն է, ասաց Սրբազան Հայրը եւ կոչ արեց մասնակիցներին Նազարեթի Սուրբ Ընտանիքի նման վկայել Աստծոյ հանդէպ սէրը՝ առաքելութիւն

կատարելով համայնքներում՝ օգնելով ուրիշ ընտանիքների, քաջալերելով յուսահատուածներին, յորդորել սխալ ընթացքով գնացողներին, լինել կարիքաւորների կողքին՝ համարձակ առաքելական խանդավառութեամբ:

Առաջին օրուայ բանախօսութիւններից մէկի թեման էր «Ընտանիքի ընկալումը եւ դերը Եկեղեցում», որը ներկայացրեց Տ. Յովսէփ Քինյ. Գալստեանը: Նա բացատրեց, թէ ինչպէս է Եկեղեցու սոցիալական ուսմունքը հասկանում մարդկային ընտանիքը՝ սկսելով մարդկային առաջին ընտանիքի արարչագործութեան աստուածաշնչեան համարների մեկնութիւնից՝ յղումներ անելով եւ հատուածներ ներկայացնելով նաեւ եկեղեցական մի քանի հիմնարար փաստաթղթերին՝ «Սիրոյ ուրախութիւնը (Amoris laetitia)», Familiaris consortio, Gratissimam sane, Կաթողիկէ Եկեղեցու սոցիալական ուսմունքը: Տ. Յովսէփը յատկապէս շեշտադրութիւն կատարեց այն դրոյթի վրայ, որ քրիստոնէական ընտանիքը կոչուած է լինելու սիրոյ համայնք, որի մէջ պէտք է արտացոլուի Սուրբ Երրորդութեան աստուածային անձերի միջեւ յաւիտենապէս գոյութիւն ունեցող յարաբերութիւնները: Բանախօսութիւնն աւարտուեց Նազարեթի Սուրբ Ընտանիքին ուղղուած աղօթքով, որը շարադրել է Ֆրանցիսկոս Քահանայապետը «Սիրոյ ուրախութիւնը» նամակի վերջում:

Բանախօսութեանը զուգահեռ ճեմարանական եղբայր Նարեկ Մկրտչեանը երեխաների հետ զրուցում էր 4-րդ պատուիրանի, ընտանիքում յարգանքի եւ սիրոյ մասին եւ խաղեր կազմակերպում:

Տ. Նարեկ Քինյ. Թադեւոսեանը խօսեց «Ամուսնական զոյգի միութեան բնոյթը եւ առաքելութիւնը» թեմայով՝ անդրադառնալով Սուրբ Պսակի խորհրդին, խօսելով պսակով հաստատուած միութեան անքակտելիութեան, զոյգերի անձնային յարաբերութիւնների մասին եւ պատասխանելով մասնակիցների հարցերին:

Հետաքրքիր զրոյց եւ ընտանեկան փորձառութեան կիսում կազմակերպեցին Տէր եւ Տիկին Վարդան եւ Գոհար Շախուլեանները՝ «Աստծոյ ներկայութիւնը իմ ընտանիքում» թեմայով: Զրոյցը համեմուեց հաւատքի ընդունման, ընտանեկան դժուարութիւնների, հոգեւոր արժէքների ժառանգութեան եւ այլ պատմութիւններով: Փորձառութեան կիսումը օգնում է հարստանալ

միմեանց արժէքներով, հաւատքի, տոկունութեան վկայութեամբ:

Բանախօսութիւններից յետոյ ընտանիքները միասին կազմակերպեցին խաղեր, զբօսանք Աղաճանեան կենդրոնի գողտրիկ տարածքում, ապա՝ ընթրիքից յետոյ, մատրան մէջ տեղի ունեցաւ Սուրբ Հաղորդութեան երկրպագութիւն, որի ընթացքում աղօթեցին նաեւ Աստուածամօր Վարդարանը՝ ընտանիքների սրբութեան դիտաւորութեամբ:

Երկրորդ օրուայ մեկնարկը տրուեց Սուրբ Պատարագով, ապա բանախօսութեամբ հանդէս եկաւ Հ. Եղիա Վրդ. Դերձակեանը՝ ներկայացնելով «Որդեծնութիւն, ընտանիքի պլանաւորում» թեման: Հ. Եղիան բացատրեց որդեծնութեան դերը ամուսնութեան մէջ եւ ընտանեկան կեանքում, խօսեց սիրոյ մասին, որի վրայ պէտք է հենուած լինի ընտանիքը եւ որդեծնութեան առաքելութիւնը՝ մշտապէս բաց լինելով նոր կեանքի առջեւ, Աստծոյ պարգեւների առջեւ եւ մերժելով այն ամէնը, ինչն առաջարկում է աշխարհը՝ մարդկային պտղաբերութիւնը սահմանափակելու կամ կառավարելու համար:

Աշոցքի «Տիրամայր Նարեկի» հիւանդանոցի բժիշկ գինեկոլոգ Անտոնինա Դադայեանը նոյն թեման շարունակեց բժշկական տեսանկիւնից եւ բացատրեց արհեստական վիժման ֆիզիոլոգիական եւ պաթոլոգիական հետեւանքները, բեղմնականխարգելիչ միջոցների օգտագործման հետեւանքները: Մասնակիցները ստացան իրենց հուզող շատ հարցերի պատասխաններ:

Օրուայ երկրորդ կէսին Տ. Յովսէփ Գալստեանը զրոյց վարեց «Արդեօ՞ք զրուցում ենք իրար հետ մեր ընտանիքներում» թեմայով, որի մէջ ակտիւօրէն ներգրաւուեցին նաեւ մասնակիցները:

Զրոյցից յետոյ ընտանիքներից մէկը խնդրեց մկրտել իրենց մանկանը: Մկրտութիւնից յետոյ կատարուեց նաեւ երկար ժամանակ առանց Պսակի ապրող երկու զոյգերի Սուրբ Պսակի խորհուրդը, որի ընթացքում պսակուած միւս զոյգերն էլ նորոգեցին իրենց ամուսնական խոստումները:

Երեկոյեան միասին աղօթեցին Վարդարան՝ դեռ չծնուած երեխաների կեանքի փրկութեան եւ առողջութեան դիտաւորութեամբ: Աղօթքի ընթացքում զոյգերից շատերը նաեւ ընդունեցին Ապաշխարութեան խորհուրդը:

Երկու օրերն էլ աւարտուեցին կենդրոնի հանդիսութիւնների սրահում կազմակերպուած ուրախ պարերով:

Ընտանիքների համար այս երկու օրերը նաեւ միմեանց հետ շփուելու, տարբեր խաղեր խաղալու հնարաւորութիւն էր:

Հոգեւոր կրթութիւնն աւարտուեց երրորդ օրուայ առաւօտեան՝ միասնական Սուրբ Պատարագով, որ մատուցեց Տ. Գրիգոր Աւագ քահանայ Մկրտչեանը՝ մասնակիցներին խոստանալով շատ չուշացնել ընտանիքների համար երկրորդ հոգեւոր կրթութեան կազմակերպումը:

Տ. Յովսէփ Քհնյ. Գալստեան

ԵՌՕՐԵԱՅ ՃԱՄԲԱՐ ԵՒ ԴԱՍԸՆԹԱՑ ՃԵՄԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՒ ԽՈՐԱՆԻ ՍՊԱՍԱՒՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Դէպի ապագայ, նոր հորիզոններ...

Յուլիսի 14-16-ը Աղաճանեան կենդրոնում տեղի ունեցաւ եռօրեայ կրթութիւն՝ ճեմարանականների եւ դասընթաց՝ Սուրբ Խորանի սպասաւորների համար՝ Սրբոց հրեշտակապետաց միացեալ հոգեւոր ճեմարանի տեսուչ Հոգշ. Հ. Մաշտոց Վրդ. Զահթերեանի եւ Փանիկի ժողովրդապետ Գերշ. Հ. Գառնիկ Ծ. Վրդ. Յովսէփեանի առաջնորդութեամբ: Մասնակցում էին նաեւ Հռոմի Լեւոնեան վարժարանի սաները եւ Զմմառու Վանքի կիսասարկաւագները: Այս միասնական ձեռնարկի նպատակը ճեմարանականներին իրենց կոչման, հոգեւոր կեանքի մասին խորհրդածելու հնարաւորութիւն ընձեռելն էր, իսկ Խորանի սպասաւորներին՝ դպիրների ծառայութեան, երգեցողութեան հմտութիւնները զարգացնելու հնարաւորութիւն ընձեռելը:

Եռօրեայ հոգեւոր կրթութիւնը ճեմարանականները սկսեցին Գիւմրիի Սրբոց Նահատակաց հայ կաթողիկէ մայր տաճարում Հոգշ. Հ. Մաշտոց Վրդ. Զահթերեանի ձեռամբ մատուցուած Սուրբ Պատարագով:

Սուրբ Պատարագից յետոյ ճեմարանականները ժամանեցին Աղաճանեան կենդրոն, որտեղ նրանց միացան Խորանի սպասաւորները տարբեր համայնքներից: Ճեմարանականների եւ սպասաւորների հետ քահանայական կոչման եւ հոգեւոր ծառայութեան մասին զրուցեց Աղաճանեան կենդրոնի տնօրեն Տ. Գրիգոր Աւագ Քհնյ. Մկրտչեանը, որից յետոյ միասնաբար աղօթեցին երեկոյեան ժամերգութիւն: Ընթրիքից յետոյ Խորանի սպասաւորները դիտեցին ֆիլմ, իսկ ճեմարանականների հետ 2018-2019թթ. ուսումնական տարեշրջանի արժեւորում արեց տեսուչ Հայր Մաշտոցը, ապա պատրաստուեցին Երանելի

Իգնատիոս Մալոյեանին նուիրուած հանդիսութեանը:

Երկրորդ օրը բոլորը միասին սկսեցին Սուրբ Պատարագով, ապա կատարուեց երգեցողութեան դաս, որից յետոյ Հ. Գառնիկ Ծ. Վրդ. Յովսէփեանը խօսեց Խորանի սպասաւորութեան մասին, տուեց անհրաժեշտ բացատրութիւններ, թէ ինչպէս պէտք է պատշաճ կերպով կատարել ծառայութիւնը Սուրբ Պատարագի ժամանակ: Ճաշից յետոյ Հ. Գառնիկը ճեմարանականների հետ զրուցեց ճեմարանականների եւ հոգեւորականների միասնական կեանքի կանոնների մասին: Հանգստից եւ խաղերից յետոյ երեկոյեան կատարուեց Վարդարանի աղօթք եւ Սուրբ Հաղորդութեան երկրպագութիւն, ապա կազմակերպուեց «Աւետարանական երեկոյ»՝ խորհրդածութիւն աւետարանական հատուածների շուրջ, իսկ սպասաւորները ֆիլմ դիտեցին:

Երրորդ օրը դարձեալ սկսուեց Սուրբ Պատարագով, որից յետոյ Տ. Գրիգոր Աւագ Քհնյ. Մկրտչեանը ճեմարանականների հետ զրուցեց «Դէպի ապագայ, նոր հորիզոններ» թեմայով: Զրոյցից յետոյ աղօթեցին ժամերգութիւն եւ այդպիսով աւարտեցին եռօրեայ հոգեւոր կրթութիւնը:

Տ. Յովսէփ Քհնյ. Գալստեան

«ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՕՐԵՐ – III»



ԲԱՑՈՒԵՑ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՕՐԵՐ – III»-Ը

«Ձեր այսօրուայ հաւաքը թող դառնայ հսկայ մի ոստիւն՝ դէպի կատարելութիւն, դէպի աղբիւրը լոյսի, դէպի մեր Փրկիչ Քրիստոսը»:

2019թ. յուլիսի 19-ին բացուեց Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի Ուկրաինայի եւ Արեւելեան Եւրոպայի առաջնորդութեան «Երիտասարդաց համայնքային օրեր-III» միջոցառումը: Այս տարի հանդիպմանը մասնակցում են 294 երիտասարդներ՝ Հայաստանից, Վրաստանից, Ռուսաստանից, Իտալիայից, Լիբանանից, Սիրիայից, Իրաքից եւ Թուրքիայից: Մէկ շաբաթուայ ընթացքում երիտասարդները լսեցին բանախօսութիւններ, քննարկեցին լսած թեմաները, աւելացրեցին իրենց գիտելիքները եւ միասին մտածեցին իրենց ինքնութեան, պատկանելիութեան եւ վկայութեան մասին՝ շարունակելով անցեալ տարուայ հանդիպման թեմատիկ շարքը: Առաջնորդ հայրը՝ Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանը, այս տարի հրաւիրեց առաւել ուշադրութիւն դարձնել վկայութեանը.

«Սիրելի հարազատներս, ահա՛ նպատակը ձեր այսօրուայ հաւաքի՝ ուսումնասիրել, ամրապնդել վկայութեան արժէքը ձեր հոգիների մէջ եւ չամաչել այն արտայայտելու ձեր շրջանակներում: Ձեր այսօրուայ հաւաքը թող դառնայ հսկայ մի ոստիւն՝ դէպի կատարելութիւն, դէպի աղբիւրը լոյսի, դէպի մեր Փրկիչ Քրիստոսը»:

Սրբազան Հայրը երիտասարդներին յիշեցրեց Պօղոս առաքեալի նամակը Տիմոթէոսին, որտեղ առաքեալը կոչ է անում վերարծարծել այն շնորհը, որ Տիմոթէոսն ընդունել է Աստծուց եւ վկայել առ Աստուած իր սիրոյ մասին: Նոյնը Քրիստոս հրաւիրում է անել երիտասարդներին այսօր: Ռափայէլ Սրբազանից յետոյ երիտասարդներին Ֆրանցիսկոս Սրբազան Քահանայապետի ողջոյնները փոխանցեց Հայաստանում եւ Վրաստանում պապական նուիրակ Ժոզէ արքեպիսկոպոս Բեթենկուրը.

«Շատ ուրախ եմ ձեզ հետ լինելու այս երիտասարդական երրորդ հաւաքին, որը կազմակերպուել է Սրբազան Հօր օրհնութեամբ: Սա մի եզակի առիթ է տօնակատարելու, արժեւորելու ձեր պատմութիւնը, ձեր աւանդոյթները»:

Երիտասարդներին դիմեց նաեւ հանդիպմանը ներկայ Շիրակի մարզպետ պրն. Տիգրան Պետրոսեանը, ով իր խօսքի սկզբում յիշեց, որ ժամանակին եղել է Հայկական Կարիտասի աշխատակից: Պարոն մարզպետը բարձր գնահատեց հոգեւոր այսպիսի միջոցառման կազմակերպումը Շիրակի մարզում.

«Շատ ուրախ եմ, որ այստեղ հաւաքուել են մեծ թուով երիտասարդներ ոչ միայն Հայաստանից, այլեւ՝ սփիւռքի շատ համայնքներից եւ հնարաւորութիւն ունեն որպէս հայեր խորհրդածելու քրիստոնէական արժէքների մասին, հայ լինելու ազգային առաքելութեան շուրջ»:

Հայ կաթողիկէ երիտասարդներին իր սրտի խօսքն ուղղեց նաեւ Գիւմրիի փոխքաղաքապետ պրն. Հայկ Սուլթանեանը.

«Նման հաւաքները ոչ միայն հոգեւոր արժէքներ են սերմանում, այլեւ նպաստում են սփիւռքի տարբեր համայնքների միջեւ կապերի ամրապնդմանը, հայ ժողովրդի միասնականութեան կայացմանը»:

Այս տարի երիտասարդների հետ էր եւ իր բարձր գիտութեամբ երիտասարդների հոգեւոր գիտելիքները հարստացրեց նաեւ Լիբանանի Այնճար գիւղի «Սուրբ Վարդարանի Տիրամայր» հայ կաթողիկէ ժողովրդապետութեան հոգեւոր հովիւ, բազմաթիւ գրքերի հեղինակ Հոգշն. Հ. Մեսրոպ Վրդ. Թոփալեանը (Հայունի): Հայր Մեսրոպը երիտասարդներին փոխանցեց Ամենապատիւ Տէր Գրիգոր Պետրոս 20-րդ Կաթողիկոս Պատրիարքի հայրական ողջոյնը, ապա ասաց իր սրտի խօսքը.

«Ի՜նչ գեղեցիկ է, ի՜նչ քաղցր է, երբ եղբայրները եւ քոյրերը միասին են: Սիրելի՛ երիտասարդներ, ձեզ ողջունում եմ Աստուածաշնչի խօսքերով: Դուք եղբայրներ եւ քոյրեր Յիսուսի, որ ասում է. «Երբ երկու, երեք հոգի հաւաքուած են իմ անունով, ես նրանց մէջն եմ»:

Անարատ Յղութեան հայ քոյրերի միաբանութեան մեծաւորուի Մայր Արուսեակ Սաճոնեանի անունից ողջոյնի խօսք ասաց նաեւ միաբանութեան Հայաստանի մեծաւորուհի Քոյր Ռեբեկա Աւշարեանը.

«Իմ աղօթքն ու շնորհակալութիւնն եմ բարձրացնում առ Աստուած՝ այս գեղեցիկ առիթի համար: Շատ գեղեցիկ առիթ է այս միութիւնը:

Յայտնի երգը ասում է, թէ քիչ ենք, բայց հայ ենք: Բաց ես պիտի ասեմ, որ քիչ չենք, շատ ենք, փաստ է այս ներկայութիւնը աշխարհի տարբեր ծայրերից»:

Այս տարի եւս երիտասարդական հանդիպմանը աջակցել է ՍՕՍ արեւելքի քրիստոնեաներ միաւորումը, որի կամաւորական ներկայացուցիչ Սեբաստիանը ողջունեց երիտասարդներին՝ իր ղեկաւար Ալեքսանդր Գուդարզիի անունից.

«Շատ ուրախ ենք՝ ձեր մէջ գտնուելու համար: Արդէն երկրորդ տարին է՝ ՍՕՍ Արեւելքի քրիստոնեաներ կազմակերպութիւնը իր աջակցութիւնն է բերում այս երիտասարդական օրեր միջոցառմանը»:

Ի վերջո, երիտասարդներին իր խօսքն ուղղեց Հայ կաթողիկէ երիտասարդաց խմբի նախագահ Գերյ. Հ. Գառնիկ Ծ. Վրդ. Յովսէփեանը.

«Եկէ՛ք այս ճանապարհն անցնենք յաւերժ երիտասարդ Յիսուսի ուղեկցութեամբ: Եւ թող որ իւրաքանչիւր երիտասարդի ականջներում հնչի Յորդանանում մկրտուած Յիսուսին ուղղուած Տիրոջ խօսքերը. «Դու իմ որդին ես»: Յիրաւի, ձեզանից իւրաքանչիւրը որդին է Աստծոյ: Յիշէ՛ք, որ դուք սոսկ Եկեղեցու ապագան չէք, այլ՝ ներկան, եւ այսպիսով պէտք է պատասխանատուութիւն ստանձնէք ինչպէս Եկեղեցում, այնպէս էլ հասարակութեան մէջ, քանզի ձեր ներկայութիւնը աստուածային կեանքի սերմ է:

Հայր Գառնիկն իր խոսքում շեշտեց, որ Եկեղեցին բոլոր երիտասարդների մայրն է եւ հոգ է տանում երիտասարդների խնդիրների լուծման ուղղութեամբ, միայն թէ պետք է միշտ լցուել այն յոյսով, որ տալիս է Յիսուս Ինքը: Բացման արարողութեան ընթացքում համերգային ելոյթներով հանդէս եկան Փանիկի եւ Թբիլիսիի երիտասարդները: Արարողութեան վերջում Առաջնորդ Հայրը մի հուշանուէր յանձնեց պապական նուիրակին, որ արդէն երկրորդ տարին է՝ իր այցելութիւնն է բերում երիտասարդական այս միջոցառմանը:

Տ. Յովսէփ Քհնյ. Գալստեան

Ordinariate Youth Day III

ARMENIA

ՈՒԽՏԱԳՆԱՑԻ ԱՂՕԹՔԸ

Պանամա 2019 ԵՀՕ-ի Պաշտօնական Աղօթքը

Ողորմա՛ծ Հայր,

Դու կանչեցիր մեզ՝ մեր կեանքն ապրելու որպէս փրկութեան ճանապարհ։
Օգնի՛ր մեզ երախտագիտութեամբ յիշել անցեալը, քաջութեամբ ընդունել ներկան
եւ յոյսով կառուցել ապագան։

Տէ՛ր Յիսուս, մեր բարեկամ եւ եղբայր, շնորհակալ ենք,
որ սիրով լի հայեացքով ես նայում մեզ։ Թոյլ տո՛ւր ականջալուր լինել քո ձայնին,
քանզի այն Սուրբ Հոգու ուժով եւ լոյսով հնչում է իւրաքանչիւրի սրտում։

Շնորհ արա՛ մեզ, որպէսզի լինենք մի Եկեղեցի, որն առաջ է ընթանում կենդանի հաւատքով
եւ երիտասարդ դէմքով՝ հաղորդելու Աւետարանի ցնծութիւնը։ Օգնի՛ր կառուցել
աւելի արդար եւ եղբայրական հասարակութիւն, որի մասին երազում ենք։

Աղօթում ենք Սրբազան Քահանայապետի եւ եպիսկոպոսների, երիտասարդների,
բոլոր նրանց համար, ովքեր Պանամայում մասնակցելու են Երիտասարդութեան
Համաշխարհային Օրերին եւ բոլոր նրանց, ովքեր պատրաստւում են հիւրընկալել
վերջիններին։

Պանամայի հովանաւոր Անբիծ Սուրբ Կոյս օգնի՛ր մեզ աղօթել եւ ապրել նոյն
ազնուութեամբ, ինչպէս դու. «Ահաւասիկ ես ճնում եմ Տիրոջ աղախինը. թող է՛ս խօսքի
համաձայն լինի ինձ»
(Ղուկ. 1, 38)։

Ամէն

Հայացուց՝
Հայ կաթողիկէ երիտասարդաց խմբի նախագահ
Գերյ. Հ. Գառնիկ Ծ. Վրդ. Յովսէփեանը

ԱՐՀԻ. Տ. ՌԱՓԱՅԷԼ ԱՐՔԵՊՍ. ՄԻՆԱՍԵԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՕՐԵՐ-III»-Ի ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻՎ



Մեծ հաճոյքով հանդէս կու գամ այսօր՝ մաս կազմելու Հայ Կաթողիկէ համաշխարհային Հաւաքին, ուր բազմաթիւ երկրներից Հայաստան ժամանած են հայ երիտասարդական խմբեր, ապրելու եւ ամբարելու քրիստոնէական արժէքները: Ուրախ եմ տեսնելու ձեր երիտասարդական խանդավառութիւնը վսեմանպատակ վեհանձնութեամբ:

Անցեալ տարուայ բնաբանը՝ «Ինքնութիւն», «Պատկանելիութիւն» եւ «Վկայութիւն», պարզ բառեր չէին այստեղ հաւաքուելու, ուսումնասիրելու, խորացնելու եւ առնելու ձեզ հետ այն արժէքները, ձեր երկրները տանելու եւ զանոնք ձեր եղբայրներուն ու քոյրերին հաղորդելու: Ընտրած մեր այս բնաբանը, մեզ համար կեանքի ջահ մըն էր՝ փոխանցելու Ձեզ, վարելու համար Ձեր մէջ ինքնութեան եւ Պատկանելիութեան ազնուութիւնը:

Հայ Կաթողիկէ երիտասարդը յատուկ կոչում ունի արտայայտելու եւ ոչ թէ թաքցնելու քրիստոնէական արժէքները:

Ինքնութիւն ու պատկանելիութիւնը բարոյական ազնիւ արժէքներ են, որ կը պահանջեն արտայայտութիւն, այսինքն՝ Վկայութիւն:

Այս տարի, զուգահեռ ինքնութեան եւ պատկանելիութեան, միասին պիտի խորացնենք Վկայութեան կարեւորութիւնը:

Սուրբ Պողոսն իր նամակներից մեկում՝ ուղղուած Տիմոթէոսի աշակերտին, ասում է. *«Վասն որոյ յիշեցուցանեմ քեզ արծարծել զշնորհսն Աստուծոյ, որ են ի քեզ ի ձեռնադրութենէ Իմմէ»,* ապա շարունակում է, ավելացնելով. *«Վասն որոյ եւ զայս չարչարանս կրեմ. այլ ոչինչ ամօթ համարիմ. քանզի գիտեմ յո հաւատացեալն եմ. եւ հաստատեալ եմ թէ կարող է զաւանդն իմ պահել յօրն յայն»* (Գլ. 1, 6-12):

Նոյնպէս Քրիստոս հաստատում է Վկայութեան կարեւորութիւնը զանազան աւետարանիչների մօտ, առ օրինակ, որտեղ պատմում է Քրիստոսի քարոզողներից մեկի մէջ՝ զայրացած պահին յայտնուած իր շուրջը հաւաքուած ժողովրդին ասում է.

«Չար եւ շնացող ազգը նշան է փնտրում. այլ նշան չի տրուի նրան, բայց միայն՝ Յովնան մարգարէի նշանը. որովհետեւ, ինչպէս Յովնանը երեք օր ու երեք գիշեր կէտի փորի մէջ էր, նոյնպէս եւ Մարդու Որդին երկրի ընդերքում՝ երեք օր ու երեք գիշեր» (Մարկ. 8,11-12 Ղուկ. 11,29-32):

Սիրելի՛ հարազատներ, ահա ձեր նպատակը այսօրվա հաւաքի՝ ուսումնասիրել, ամրապնդել Վկայութեան արժէքը ձեր հոգիների մէջ եւ չամաչել այն արտայայտելու ձեր շրջանակների մէջ:

Ձեր այսօրվա հաւաքը թո՛ղ դառնա հսկայ Ոստում՝ դէպի կատարելիութեան, դէպի աղբիւրը Լոյսի՝ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի, որի համար, մեր ապրելակերպով յայտնում ենք երախտագիտութեան զգացումն ու սէրը:

Կարեւոր չէ, թէ ինչի կ'հանդիպեմ իմ կեանքի ընթացքում, էականը քաջութիւն ունենալն է՝ ասելու համար, որ իմ կեանքը քո ձեռքերին կհանձնեմ, ո՛վ Տէր:

Մի՛ վախեցեք, ինչպէս Սուրբ Հովհաննես Պողոս Բ Պապը երիտասարդական համագումարին ասում է, քանզի Քրիստոսը ձեզ հետ է: Նոյնպէս հաջորդ Պապերը շարունակեցին քաջալերել եւ հրավիրվել աշխարհիս ողջ երիտասարդութեանը որդեգրելու այս եւ նման բնաբանները:

Այսօր նոյն խանդավառութեամբ Ձեզ հրավիրում եմ Քրիստոսի բարեկամութեան, մտերմութեան, որով կկարողանանք զգալ Ձեր ինքնութիւնն ու պատկանելիութիւնը եւ այս երկու արժէքներով տաք լոյսն ու ուժը վկայութեան: Աստուածամօր հովանաւորութեան Ձեզ կը յանձնեմ ու կ'աղօթեմ Ձեզ համար, հարստացած վերադառնանք ձեր տները: Աստուած օրհնէ Ձեր վեհանձնութիւնն ու նուիրումը:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԽՄԲԻ ՆԱԽԱԳԱՀ ԳԵՐՅ. Հ. ԳԱՌՆԻԿ Ծ. ՎՐԴ. ՅՈՎՍԷՓԵԱՆԻ ԽՕՍՔԸ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՕՐԵՐ-III»-Ի ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

«Բոլոր երիտասարդները Աստծոյ սրտի մէջ են, հետեւաբար՝ Եկեղեցու սրտում են»

Սիրելի՛ երիտասարդներ,

Ուզում եմ եւս մէկ անգամ իմ ուրախութիւնն ու գոհունակութիւնն արտայայտել բոլորիս ընձեռուած այս հնարաւորութեան համար եւ յոյս յայտնել, որ ձեզ հետ միասին իսկապէս կը վայելէք այս օրերը:

Եկէ՛ք այս ճանապարհին անցնենք յաւէրժ երիտասարդ Յիսուսի ուղեկցութեամբ եւ թո՛ղ որ իւրաքանչիւր երիտասարդի ականջներում հնչի Յորդանանում մկրտութեան ժամանակ Յիսուսին ուղղուած Տիրոջ խօսքերը. «Դու՛ ես իմ սիրելի որդին»: Այո՛, յիրաւի՛, ձեզանից իւրաքանչիւրը որդին է Աստծոյ: Յիշէ՛ք, որ դուք սոսկ Եկեղեցու ապագան չէք, այլ՝ ներկան, եւ այսպիսով, պէտք է պատասխանատուութիւն ստանձնէք ինչպէս Եկեղեցու ներսում, այնպէս էլ հասարակութեան մէջ, քանզի ձեր մէջ կրում էք աստուածային կեանքի սերմերը:

Դուք՝ երիտասարդներդ, հոգեւոր կեանքի մէջ պէտք է պատրաստ լինէք ձեռք մեկնելու ու դէպի Եկեղեցի հրաւիրելու բոլոր նրանց, ովքեր Եկեղեցուց դուրս են: Իսկ նրանք, ովքեր արդէն իսկ գտնուում են Եկեղեցու ներսում պէտք է աւելի խորապէս ապրեն սէրը քրիստոնէական կեանքի մէջ եւ էլ աւելի խորանան քրիստոնէական վարդապետութեան ու բարոյախօսութեան մէջ:

Ամենակարեւոր բանը, որ պէտք է միշտ մեր աչքի առջեւ լինի, դա այն է, որ բոլոր երիտասարդները Աստծոյ սրտի մէջ են, հետեւաբար՝ Եկեղեցու սրտում են:

Եկեղեցին չի կարող անտարբեր լինել երիտասարդների խնդիրների նկատմամբ: Որպէս մայր՝ նա պէտք է աջակցի այս խնդիրների լուծմանը՝ իր ողորմածութեամբ եւ կարեկցանքով: Ուստի, սիրելի՛ երիտասարդներ, կոչ ենք անում ձեզ նորոգուելու այն յոյսով, որ Յիսուսն է մեզ տալիս եւ փորձել դիմակայել արդի մարտահրաւէրներին որպէս մէկ միասնական ուժ եւ չմոռանալ, որ մարդիկ ամբողջութիւն են, եւ որ միասնութեան մէջ ենք մենք տակաւին հզօր:

Տէրն ուղարկեց իր Որդուն՝ հիմնելու Իր Եկեղեցին, որպէս ողջ մարդկութեան միասնութեան խորհուրդ:

Մեր ինքնութիւնը մեր պատկանելութիւնն է: Երբ ասում ենք «Ես քրիստոնեայ եմ», նշանակում է «Ես պատկանում եմ Եկեղեցուն: Ես պատկանում եմ այն Ժողովրդին, ում հետ Աստուած վաղեմի դաշինք է հաստատել եւ որին միշտ հաւատարիմ է»:

Մեզանից իւրաքանչիւրը կոչուած է լինելու այս «մեծ ընտանիքի», այսինքն՝ Աստծոյ ժողովրդի մի մասնիկը: Եկէ՛ք մեր երախտագիտութիւնը յայտնենք մեր մեծերին, ծնողներին, քահանաներին, հոգեւորականներին եւ ուսուցիչներին, ովքեր բերում են մեզ դէպի Եկեղեցի:

Եկեղեցին այն մեծ ընտանիքն է, որն իր հարկի տակ հիւրընկալում է մեզ եւ սովորեցնում ապրել որպէս Տիրոջ հաւատացեալներ եւ հետեւորդներ:

Եկեղեցու մէջ այս ճանապարհին անցնելը միշտ չէ, որ դիւրին է, քանի որ երբեմն մենք բախւում ենք մարդկային թուլութիւններին ու թերութիւններին եւ նոյնիսկ՝ Եկեղեցու կեանքում հանդիպող սկանդալներին:

Ձեզանից իւրաքանչիւրը կոչուած է լինելու Քրիստոսի լոյսը, որը կը լուսաւորի աշխարհի խաւարը:

ՊԱՊԱԿԱՆ ՆՈՒԻՐԱԿ ԳԵՐԱՇՆՈՐՀ ԺՈՋԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՎԵԼԻՆՈ ԲԵԹԵՆԿՈՒՐԻ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔԸ՝ ՈՒՂՂՈՒԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ

Գերաշնորհ Սրբազան Հայր Ռափայէլ Մինասեան, յարգելի հիւրեր, հոգեշնորհ հայրեր, սիրելի երիտասարդներ շատ ուրախ եմ ձեզ հետ լինելու այս երիտասարդական երրորդ հաւաքին, որը կազմակերպուել է Սրբազան Հօր օրհնութեամբ: Սա մի եզակի առիթ է տօնակատարելու, արժեւորելու ձեր պատմութիւնն ու աւանդոյթները:

Շնորհակալութիւն հրաւէրի համար:

Մի քանի շաբաթ առաջ Հռոմի Ֆրանցիսկոս Քանահայապետի հետ հանդիպում ունեցայ Վատիկանում: Ֆրանցիսկոս Պապը մեծ ուրախութեամբ ու սիրով յիշում էր 2016 թուականի իր այցելութիւնը Հայաստան, որին ինքը կոչել էր նաեւ ուխտագնացութիւն:

Սրբազան Քահանայապետը յիշում էր տարբեր իր հանդիպումները, որոնց մէջ նաեւ դուք էք եղել:

Սիրելի՛ երիտասարդներ, Ֆրանցիսկոս Պապը խնդրեց փոխանցել իր օրհնութիւնը եւ ողջոյնները ձեզ:

Ողջունում եմ Հայաստանից, Վրաստանից, Ռուսաստանից, Ուկրաինայից, Իտալիայից, Ֆրանսիայից, Շվեդիայից, Սիրիայից, Լիբանանից, Թուրքիայից եւ այլ երկրներից հաւաքուած բոլոր երիտասարդներին:

Այս երիտասարդական հաւաքը հիմքն է մեր հայ լինելու ինքութեան ինչպէս նաեւ Եկեղեցու անդամ լինելու համար:

Այս վերջին տարին պիտի ասեմ, որ ամբողջ երիտասարդների համար կարեւոր տարի է եղել:

2019 թուականի յունուարի 23-28-ը՝ Կենդրոնական Ամերիկայի երկրներից մէկում՝ Պանամայում, տեղի ունեցաւ 34-րդ «Երիտասարդաց համաշխարհային օրեր» միջոցառումները՝ Սրբազան Քահանայապետի օրհնութեամբ:

Հռոմում երիտասարդների համար Սինհոդոս գումարուեց, որի արդիւնքում յատուկ գրութիւն գրուեց Սինհոդոսի հայրերի կողմից՝ ուղղուած երիտասարդներին եւ հէնց այս առումով էլ կարող ենք ասել, որն այս տարին տօնական է երիտասարդների համար: «Քրիստոսը յաղթող է, Քրիստոսը ապրում է»: Այս կարեւոր խօսքերը, որ եկել է Քահանայապետից, յատուկ շեշտադրուած է մեզ համար՝ երիտասարդների համար:

Սրբազան Քահանայապետի խօսքը յատուկ ուղղուած մեզ՝ ուժ է տալիս, որպէսզի մենք մեր կեանքը կարողանանք ապրել ամբողջութեամբ: Այսօրուայ մեր հանդիպումը՝ միասնական այս օրը տօնելու, էլ աւելի զարդարելու եւ գեղեցկացնելու համար է: Սա մի առիթ է, որ մենք կարողանանք միասին տօնախմբենք, կրկին վերյիշենք եւ հասկանանք, թէ ի՞նչն է կարեւոր մեր կեանքում եւ աշխարհում: Համաձայն Սրբազան Քահանայապետի՝ դո՛ւք երիտասարդներդ, ներկան էք եւ հէնց դրա համար էլ, որ մենք այս հանդիպումը պէտք է ապրենք ամբողջական եւ թերի բան չպէտք է թողնենք մեր կեանքի մէջ:

Շատ գեղեցիկ առիթ է, որ մենք կարողանանք մեր բոլոր ընկերներին հանդիպենք այստեղ, ովքեր, որ գալիս են ամբողջ աշխարհից: Սա միակ առիթն է, որ մենք բոլորս միասին կարողանանք տօնախմբելու, ուրախանալու՝ մե՛ր ինքնութիւնով, մե՛ր էութիւնով, մե՛ր աւանդութիւններով եւ մե՛ր ով լինելով:

Մեզ ժառանգուած է մեր հայրերից, որ մենք կարողանանք մեր ինքնութիւնը ցոյց տալ, որ է՝ մեր հաւատքը Յարուցեալ Քրիստոսի մէջ:

Ձեզ մաղթում եմ շատ գեղեցիկ հանդիպում: Խորհուրդ եմ ձեզ տալիս, որ այս երրորդ համայնքային երիտասարդական հաւաքը ամբողջական կերպով կատարուի: Եւ ես ձեզ խօսք եմ տալիս, որ միշտ ձեզ յիշելու եմ իմ աղօթքներում եւ ձեզ մաղթում եմ գեղեցիկ օրեր:

Շնորհակալութիւն:

Աստուած օրհնի Ձեզ...

ԼԻԲԱՆԱՆԻ ԱՅՆՃԱՐ ԳԻՒՂԻ «ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆԱՆԻ ՏԻՐԱՄԱՅՐ» ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒ ՀՈԳՇՆ. Հ. ՄԵՍՐՈՊ Ճ. ՎՐԴ. ԹՈՓԱԼԵԱՆԻ ԽՕՍՔԸ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՕՐԵՐ–III»–Ի ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

«Ի՞ՆՉ ԳԵՂԵՑԻԿ Է, Ի՞ՆՉ ՔԱՂՑՐ Է, ԵՐԲ ԵՂԲԱՅՐՆԵՐՆ ՈՒ ՔՈՅՐԵՐԸ ՄԻԱՍԻՆ ԵՆ...»

Աստուածաշունչի այս խօսքով կ'ողջունեմ ձեզ,
եղբայրնե՛ր եւ քոյրե՛ր Յիսուսի, որ կ'ըսէ, թէ երբ երկու կամ երեք հոգիներ իմ Անունովս հաւաքուած են, ես անոնց մէջ եմ եւ ես անոնց հետ եմ:

Այս ողջոյնէն ետք, Քրիստոսի Սրտէն եկած ողջոյնէն ետք, ձեզի կ'ուզեմ փոխանցել մեր Հայ Կաթողիկէ Եկեղեցիին Ամենապատիւ եւ Գերերջանիկ Հոգեւոր Տիրոջ՝ Տ. Տ. Գրիգոր-Պետրոս Ի. Կաթողիկոս-Պատրիարքին հայրական ողջոյնն ու օրհնութիւնը՝ ձեզի մաղթելով հոգեւոր ապրումներ եւ հոգեմտաւոր օրեր այս ճամբարին մէջ: Նոյնպէս, Պէյրութի Հայ Կաթողիկէ Թեմին եւ յատկապէս Այնճարի Հայ Կաթողիկէ Ժողովրդապետութեան ձեր եղբայրներուն եւ քոյրերուն անունով կ'ողջունեմ ձեզ:

Մենք հաւաքուած ենք Յիսուսի Անունով: Մենք Քրիստոսի եղբայրները եւ քոյրերն ենք:

Սակայն, կը խնդրեմ, եւ բոլորին ուշադրութիւնը կը խնդրեմ:

Յիսուս ունէր իր Մայրը: Մենք Յիսուսի եղբայրները եւ քոյրերն ըլլալով՝ զաւակներն ենք Աստուածամօր, զոր ես կը սիրեմ անուանել «հայոց խնկելի Աստուածածին», «Հայամայր»: Եւ դեռ աւելի, իբրեւ որդեգիրն այս երկնային Մօր՝ Զինքը կը սիրեմ անուանել «Սիրամայր»: *«Աստուած Սէր է»* (1 Յովհ. 4,8): Աստուած Սէ՛րն է:

Ուրեմն, Մարիամ Ս. Կոյսը Աստուածամա՛յրն է: Կը նշանակէ, Մայրը Աստուած-Սիրոյն:

Սիրամայրը մի՛շտ մեզի հետ ըլլայ, յա՛ր մեզ պահպանէ, մանաւանդ ձեզ, հայ կաթողիկէ երիտասարդ-երիտասարդուհինե՛ր: Ամէն:

Հայաստան, Գիւմրի, Թորոսգիւղ,
19 Յուլիս 2019
«Համայնքային երիտասարդական օրեր – Գ»,
19-26 Յուլիս 2019

ԲՈԼՈՐԻՆ ՎԱՐՁՔԸ ԿԱՏԱ՛Ր

Գերպծ. Արհիեպատիւ Առաջնորդին:
Պատասխանատու Գերյ. Վարդապետին:
Անոնց հոգեւորական եւ աշխարհական օգնականներուն:
Բարերար անհատներուն ու հաստատութիւններուն:
Կամաւորներուն, պաշտօնեաներուն եւ ծառայողներուն:
Բանախօսներուն, լուսանկարիչներուն ու լրատուողներուն:
Զմմառեան կղերիկոսներուն եւ երեւանեան ճեմարանականներուն:
Գործօն մասնակիցներուն ու ներկայ պարման-պարմանուհիներուն:

Բայց մանաւանդ բիւրի՛ցս շնորհակալութիւն Յիսուս Քրիստոսին՝ մեզ անհունապէս սիրող մեր Տիրոջ ու Փրկիչին, որ իր սրբազնասուրբ Անունով համախմբեց մեզ «Համայնքային երիտասարդական օրեր – Գ» հանդիպումին (Թորոսգիւղ, 19-26 Յուլիս 2019) եւ իր օրհնաբաշխ ու

շնորհատու ներկայութեամբ՝ իրենց հայկակա՛ն ինքնութեան եւ կաթողիկէ՛ պատկանելիութեան մէջ ամրապնդեց երիտասարդ զաւակները մեր Հայ Կաթողիկէ Եկեղեցիին: Նոյնպէս, հազարի՛ցս երախտագիտութիւն Մարիամին՝ Նազարէթի անարատ յղացեալ Կոյսին, որուն ոչ միայն մարդկութեան փրկութիւնը նախասկսած, ժամանակն ու պատմութիւնը յեղաշրջած, այլ նաեւ արքայութեան մէջ նորութիւնը բերած խօսքը, թէ «Ահաւասիկ, ես Տիրոջ Աղախինն եմ. Ինծի թող ըլլայ ամէն ինչ քու խօսքիդ համաձայն», դարձաւ մեր ինքնութեան ու պատկանելիութեան նպաստող սուրբգրային բնաբանը այս տարուան մեր հաւաքին: Ստուգիւ, սիրահաւատօրէն ապրելով՝ մտաբերեցի այն մէկտեղումը, զոր Ս. Ղուկաս կը նկարագրէ այս հոգեպարար վկայութեամբ. «Ասոնք՝ բոլո՛րը, միասիրտ, յարատեւօրէն աղօթքի մէջ էին Յիսուսի Մօր՝ Մարիամին հետ»: Այո՛, Մարիամ՝ Յիսուսամայրը մեզ Համախմբողն է, որովհետեւ մեզի համար անյետսկոչելիօրէն Ի՛նքն է հայոց խնկելի Աստուածածինը, Հայամայրը, իսկ մեզմէ իւրաքանչիւրիս՝ հրաշագո՛րծ Սիրամայրը, որուն հետ կը վերադառնանք մեր տունը, գիւղը, քաղաքն ու երկիրը դեռ աւելի հարստացած եւ զօրացած՝ համոզուօրէ՛ն ապրելու համար մեր հայկական ինքնութիւնն ու գիտակցօրէ՛ն վկայելու՝ մեր հայ կաթողիկէ պատկանելիութեան:

Հ. Մեսրոպ Ծ. Վ. Թոփալեան

ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՈՂՈՍԵԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՄԵԾԱՎՈՐՈՒՀԻ ԱՌԱՔԻՆԱՋԱՐԴ ՔՈՅՐ ՌԵԲԵԿԱ ԱՒՇԱՐԵԱՆԻ ԽՕՍՔԸ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՕՐԵՐ-III»-Ի ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Արիի. Սրբազան Հայր Ռափայէլ արք. Մինասեան, հոգեւոր հայրեր եւ շատ սիրելի երիտասարդներ ու երիտասարդուհիներ, ես՝ որպէս Անարատ Յղութեան հայ քոյրերի եւ ընդհանուր Մեծաւորուհի Քոյր Արուսեակ Սաճոնեանի կողմից ներկայացուցիչ, իմ աղօթքն ու շնորհակալութիւնն եմ բարձրացնում առ Աստուած՝ այս գեղեցիկ առիթի համար: Շատ գեղեցիկ առիթ է այս միութիւնը: Յայտնի երգը ասում է, թէ քիչ ենք, բայց հայ ենք: Բաց ես պիտի ասեմ, որ քիչ չենք, շատ ենք, փաստ է այս ներկայութիւնը աշխարհի տարբեր ծայրերից:

Որքան, որ տարիքս բարձրանայ՝ ես միշտ կը մնամ երիտասարդ: Այնպէս, որ շատ ուրախ եմ, այսօր այստեղ լինելու եւ ձեզ միանալու սիրելի՛ երիտասարդներ ու երիտասարդուհիներ:

Կրկին շնորհակալութիւն ձեզ այս այցի համար, կազմակերպիչներին, ինչպէս նաեւ հրաւէրքի համար: Ձեզ մաղթում եմ լաւ ժամանց, եւ լաւ օգտուէք այն գիտելիքներից, որոնք դուք ձեզ հետ տանելու էք, իսկ դրսից եկած երիտասարդներին ցանկանում եմ առողջ ու յաջող ճամփորդութիւն:

Շնորհակալութիւն:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ 2019 Թ.-Ի ԵՀՕ-ԻՆ

«Ահաւասիկ ես մնում եմ տիրոջ աղախինը. Թող քո խօսքի համաձայն լինի ինձ»
(Ղկ. 1, 38)

Փանամայի մէջ կայանալիք երիտասարդներուն համաշխարհային 34-րդ օրուան ի պատրաստութիւն, Ֆրանչիսկոս Պապ, չորեքշաբթի, 21 նոյեմբերին, Տիրամօր տաճար ընծայման տօնին օրը, պատկերասփռուած պատգամ մը յղեց երիտասարդներուն որուն բնաբանը հանդիսացաւ Տիրամօր՝ Գաբրիէլ հրեշտակապետին տուած պատասխանը *«Ես Տիրոջ աղախինն եմ, թող ամէն բան ըլլայ ինծի քու խօսքիդ համաձայն»* (Ղուկաս 1, 38):

Սուրբ Աթոռի մամլոյ գրասենեակը հրապարակելով հաղորդագրութիւն մը նշեց, թէ Նորին Սրբութեան,յիշեալպատկերասփռուածպատգամը եզրափակումն է, նախորդ տարիներուն՝ 2016թ., 2017թ.՝ երիտասարդներուն համաշխարհային հաւաքին նուիրուած Մարեմեան երեք պարբերական պատգամներուն:

Հաղորդագրութեան մէջ նշուած է, որ այս առաջին անգամն է, որ Ֆրանչիսկոս Պապ երիտասարդներուն կ՛ուղղէ լսատեսողական պատգամ մը, (անցեալ տարիներուն Ան միայն գրաւոր պատգամ հրատարակած է), որպէսզի կարելիին չափ հասանելի ըլլայ երիտասարդներուն ինչպէս նաեւ ընդառաջելու, վերջերս երիտասարդներուն նուիրուած եպիսկոպոսական սինհոդոէն բխած երիտասարդներուն խնդրանքին՝ օգտագործել երիտասարդներուն ծանօթ լեզուային ոճ մը:

Ֆրանչիսկոս Պապ, 2019 թ. Փանամայի երիտասարդներուն համաշխարհային հաւաքի ի պատրաստութիւն պատկերասփռուած պատգամին մէջ ըսաւ.

«Կը մօտենանք, յունուար ամիս՝ Փանամային մէջ կայանալիք երիտասարդներուն համաշխարհային հաւաքին, որ ունի որպէս նիւթ Սուրբ Կոյս Մարիամին՝ Աստուծոյ կոչին տուած պատասխանը. Ես Տիրոջ աղախինն եմ, թող ամէն բան ըլլայ ինծի քու խօսքիդ համաձայն»:

Անոր խօսքը քաջարի եւ վեհանձն «այո» է: Այո-ն, անոր որ կոչումին գաղտնիքը հասկցաւ, որ է իր անձէն դուրս ելլել եւ ուրիշներուն ծառայել: Մեր կեանքը իր իմաստը կը գտնէ Աստուծոյ եւ մերձաւորին ծառայութիւն մատուցանելու մէջ:

Բարի Սամարացու առակը.

Յիսուս պատասխանեց եւ ասաց. «Մի մարդ Երուսաղէմից Երիքով էր իջնում եւ ընկաւ աւազակների ձեռքը, որոնք նրան մերկացրին, վիրաւորեցին եւ կիսամեռ թողեցին ու գնացին: Պատահեց, որ մի քահանայ նոյն ճանապարհով իջաւ. նրան տեսաւ եւ թողեց անցաւ. նոյնպէս եւ մի ղեւտացի նոյն տեղով անցնելիս տեսաւ եւ թողեց անցաւ: Մի սամարացի, որ ճանապարհորդում էր, եկաւ նոյն տեղով նրա մօտ եւ տեսնելով նրան՝ գթաց: Եւ մօտենալով կապեց նրա վէրքերը, վրան ձէթ ու գինի լցրեց եւ դնելով նրան իր գրաստի վրայ՝ տարաւ մի իջեւան եւ խնամեց նրան: Եւ յաջորդ օրը, երբ դուրս էր գալիս այնտեղից, իջեւանատիրոջը երկու դահեկան հանեց տուեց եւ ասաց. *«Խնամիր նրան, եւ ինչ որ ծախսես նրա վրայ, իմ միւս անգամ գալուն կը հատուցեմ քեզ»:* Արդ, ըստ քեզ՝ այդ երեքից ո՞րը մերձաւորի պէս վերաբերուեց նրան, ով աւազակների ձեռքն էր ընկել»: Եւ սա ասաց. *«Նա, ով նրան բարիք արեց»:* Յիսուս նրան ասաց. *«Գնա եւ դու նոյն ձեւով արա»* (Ղուկ. 10,30-37):

Կան բազմաթիւ երիտասարդներ, հաւատացեալներ եւ ոչ հաւատացեալներ, որոնք իրենց ուսումնական շրջանի աւարտին, փափաք կը յայտնեն ուրիշները օգնելու, բոլոր տառապողներուն բան մը ընել: Սա է երիտասարդներուն ուժը, բոլորին ուժը, այն բանը, որ աշխարհը կը փոխէ: Սա է յեղափոխութիւնը, որ կը յաղթահարէ այս երկրագունդի հզօրներու զօրութիւնը, ծառայութեան յեղափոխութիւնը:

Մերձաւորին հանդէպ ծառայասէր գտնուիլ չի նշանակեր լոկ՝ գործարարքի մը պատրաստ ըլլալ, պէտք է Աստուծոյ հետ երկխօսութեան մէջ մտնել՝ ունկնդրութեան միջոցաւ, ինչպէս Մարիամ կատարեց:

Սրտի լռութեան մէջ կայացած, Աստուծոյ հետ յարաբերութեան մէջ կը բացայայտենք մեր ինքնութիւնը, մեր կոչումը, որուն միջոցաւ Տէրը մեզի կը կանչէ եւ զոր կարելի է արտայայտել տարբեր ձեւերով, ամուսնական, քահանայական, կրօնաւորական կեանքի ձեւերով:

Սա բոլորը ձեւեր են Յիսուսին հետեւելու: Կարեւորը բացայայտելն է այն, ինչ որ Տէրը մեզմէ կ'ակնկալէ եւ ունենալ քաջութիւնը «այո» ըսելու:

Մարիամ երջանիկ կին է, որովհետեւ վեհանձն ու պատրաստակամ գտնուեցաւ Աստուծոյ ծրագիրին:

Աստուծոյ մեզի կատարած առաջարկները նման են Մարիամի կատարած առաջարկին, անոնք չեն եղած երազները մարելու, այլ փափաքները արթնցնելու՝ այնպէս մը ընելու համար, որ մեր կեանքը պտղաբեր դառնայ ու լիանայ ժպիտներով ու ուրախացնէ սիրտերը: Աստուծոյ, դրականօրէն պատասխանելը, առաջին քայլն է երջանիկ դառնալու եւ բազմաթիւ անձեր երջանկացնելու:

Սիրելի երիտասարդներ, քաջութիւն ունեցէք՝ մտերմութեան մէջ մտնելու եւ Աստուծոյ հարց տալու՝ ի՞նչ կ'ուզես ինծմէ: Թոյ տուէք, որ Տէրը խօսի ձեզի եւ պիտի տեսնէք որ ձեր կեանքը պիտի կերպարանափոխուի ու ուրախութեամբ պիտի լեցուի:

Ուզեցի մի բառ ասել ձեզ, եւ այդ բառը ուրախութիւնն է:

Նուիրման գեղեցկութիւնը սա է՝ ուրախութիւն, ուրախութիւն: Տխրութեան մէջ սրբութիւն չկայ:

Աշխարհում յաճախ ուրախութեան պակաս կայ: Մենք կոչուած չենք հերոսական նուաճումների, ոչ էլ կարեւոր ելոյթներ ունենալու, այլ՝ վկայելու ուրախութիւնը, որը բխում է սիրուած լինելու եւ փրկուած լինելու գիտակցութեան վստահութիւնից: Մեզ կանչելով՝ Աստուած ասում է. «Դու կարեւոր ես ինձ համար, ես սիրում եմ քեզ, եւ ես վստահում եմ քեզ»: Յիսուս ասում է սա մեզանից իւրաքանչիւրին:

Երբ Քրիստոսին մեր կեանքի կենդրոնում ենք դնում, մենք մեզ հանում ենք կենդրոնից: Որքան աւելի շատ ենք միաւորւում Քրիստոսի հետ, այնքան աւելի բաց ենք դառնում ուրիշների հանդէպ: Ամէն ոք, ով հանդիպել է Տիրոջը եւ հաւատարմութեամբ հետեւում է Նրան, ուրախութեան պատգամաբեր է:

Ամէնուրեք, ուր կան նուիրեալ անձինք, այնտեղ միշտ ուրախութիւն կայ:

Երիտասարդներուն համաշխարհային հաւաքին նախօրեակին, ձեզ կը հրաւիրեմ պատրաստուելու ու մասնակցելու բոլոր իրականացուելիք ծրագիրներուն: Ձեզի պիտի օգնեմ այն նպատակին առաջնորդող ուղեւորութեան:

Թող Սուրբ Կոյս Մարիամը ձեզ առաջնորդէ այս ուխտագնացութեան մէջ եւ Անոր օրինակը թող քաջութեան եւ վեհանձնօրէն պատասխանելու մղիչ ուժը հանդիսանայ:

Բարի ուղեւորութիւն դէպի Փանամայ: Հաճեցէք մի մոռնաք աղօթել ինծի համար: Ցտեսութիւն»:

ԿԱՐԻՏԱՍ ՎՐԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԷՆ ԱՆԱՀԻՏ ՄԽՈՅԵԱՆԻ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ «ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹԻՒՆ» ԹԵՄԱՅՈՎ

Ի՞նչ է նշանակում բառը ինքնին: Իւրաքանչիւր բառ ինքնատիպ է: Մենք շատ անգամ փորձում ենք բառը բացատրելու համար այլ բառեր եւ արտայայտութիւններ ընտրել, բայց եթէ բառը առանձին գոյութիւն ունի, դա նշանակում է, որ այն կրում է այնպիսի զգացական նշանակութիւն, որը հնարաւոր չէ վերաձեւակերպել մի քանի ուրիշ բառերով: Այսինքն, եթէ պատկանելութիւնը գոյութիւն ունի որպէս առանձին բառ, դա արդէն աւելին է, քան ամբողջապէս ունենալը, սեփականը հանդիսանալը, ինչ-որ բանի մաս կազմելը եւ այլն:

Պատկանելիութեան մէջ զետեղուած առաջին զգացումը դա՝ պատասխանատուութիւնն է: Այսինքն, եթէ ես պատկանում եմ ինչ-որ մէկին, կամ ինչ-որ բանի, ես վերցնում եմ պատասխանատուութիւն այդ անձի, կամ երեւոյթի, կամ իրի նկատմամբ: Եթէ պատկանելութիւնը փոխադարձութիւն ունի, այսինքն պատկանողը անձ է կամ խումբ, ուրեմն պատկանելիութիւնն էլ փոխադարձութիւն պէտք է ունենայ: Այսինքն ես պատասխանատու եմ քո նկատմամբ, իսկ դու՝ ինձ: Այս պարագայում միակողմանիութիւնը կարող է քանդող բնոյթ ունենալ, որովհետեւ շահագործում կարող է տեղի ունենալ: Կը խախտուի՝ տալ ստանալու բալանսը:

Երկրորդ զգացումը, դա արդէն կարեւորութիւնն է: Մենք ծնւում ենք պատկանելիութեամբ արդէն, եւ այն կազմում է մեր ինքնութեան հիմնական մասը: Այսինքն՝ բնական ազդակ է՝ բնազդ: Մենք դեռ չծնուած, արդէն պատկանում ենք Աստծուն, ծնողներին, իսկ ծնուելուց յետոյ ընտանիքին, համայնքին, մեր երկրին, աշխարհին եւ նրանց, ում մենք ընտրում ենք: Կարեւորութեան զգացումը, որը մեր երջանիկ զգալու համար

ամենակարեւոր զգացումն է, պատկանելութեան հիմնական մասն է կազմում: Սա նոյնպէս պէտք է փոխարդարձութիւն պարունակի, որ իրական երջանկութիւն ստեղծի:

Երրորդ զգացումը դա սէրն է, որը պատկանելիութեան պարտադիր պայման է: Եթէ պատկանելիութեան մէջ սէրը ներկայ չէ, այն կարող է վերածուել չարաշահման, սեփականութեան: Եթէ սէրը ներկայ չէ, պատկանելիութիւնը ձեւափոխւում է սեփականութեան, եւ տիրելու զգացումի:

Հիմա, այսինքն մենք արդէն գալիս ենք որոշակի պատկանելիութեամբ, եւ կեանքի ընթացքում ընտրում ու աւելացնում ենք մեր պատկանելիութիւնները: Սա նշանակում է, որ ինչքան մեծ է շրջանակը, այնքան մեծ պէտք է լինի պատասխանատուութիւնը, սէրը եւ համապատասխանաբար կարեւորութիւնը:

Իսկ մենք պատրա՞ստ ենք ընդունել մեր ընտրած մաշտաբը:

Այստեղ մենք պէտք է վերադառնանք մեր ինքնութեանը, այսինքն մեր տեսակին եւ կարողութիւններին, այսինքն ո՞վ ենք մենք, ինչո՞ւ կանք, ի՞նչ ենք ուզում անել, ի՞նչ կարողութիւն ունենք, ու ի՞նչ ունենք արդէն ի բնէ տրուած: Մեր ընտրութիւնը, թէ մենք ում եւ ինչի պէտք է պատկանենք, եւ մեզ ով եւ ինչը պէտք է պատկանի, պէտք է բխի մեր ինքնութիւնից: Կայ պարտադիր, ի բնէ եկող պատկանելութիւն եւ կայ ընտրովի: Ընտրովին նոր ձեռքբերում է, որը մենք ըստ մեր ինքնութեան կարող ենք ընտրել, իսկ ի վերուստ տրուածը աւելի հիմքային մակարդակի վրայ է եւ եթէ ուզում ենք այն փոխել, աւելի շատ ջանք կը պահանջուի:

Եւ կայ Աստծոյ կողմից մեզ շնորհուած կարողութիւնները, որը Նա աւելացնում է, երբ մենք Իր հետ ենք քայլում: Եթէ Աստուած մեզ տուել է բարձր կարողութիւններ, նրա ակնկալիքն էլ մեզանից բարձր կը լինի:

Վկայութիւնը, պատկանելիութեան եւ ինքնութեան փոխներգործութեան արդիւնքում տեղի ունեցածի վրայ պէտք է հիմնուած լինի: Մենք չենք կարող վկայութիւն տալ այն բանի մասին, ինչը տեղի չի ունեցել: Բայց այն լաւը, կարեւորը, որ տեղի է ունեցել մենք չենք կարող չվկայել, որովհետեւ իրենք կը դառնան ինքնանպատակ, իսկ աշխարհում ամէն ինչ գոյութիւն ունի փոխներգործութեան հիմքում:

ՄՈՍԿՈՒԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԳԵՐՅ. Հ. ՊԵՏՐՈՍ Ճ. ՎՐԴ. ԵՍԱՅԵԱՆԻ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ «ԱՊԱՇԽԱՐՀՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ» ԹԵՄԱՅՈՎ

Սիրելինե՛րս, ուրախ եմ, որ կարող եմ ձեզ հետ կիսել իմ հաւատքը՝ սուրբ խոստովանանքի նկատմամբ, նաեւ գործնականում: Միգուցէ, ինչ-որ բանով կարողանամ ձեզ օգտակար դառնալ: Նախքան խօսելը խոստովանանքի մասին, պէտք է խօսենք եօթը խորհուրդների մասին: Եկեղեցում կան եօթը խորհուրդներ, որոնց միջոցով Աստուած խօսում է մեզ հետ, մտնում է մեզ հետ յարաբերութեան մէջ եւ հաղորդում է մեզ Իր Աստուածային շնորհները:

Այս խորհուրդներն Աստծոյ շնորհի զուլալ աղբիւրներն են: Գիտէ՞ք՝ Հին Կտակարանում կայ այդպիսի մի պատմութիւն, Նեէմանի մասին, որ մեծ զօրավարն էր Ասորեստանի, իսկ Ասորեստանը այդ ժամանակ հսկայ պետութիւն էր, ինչպէս այսօր Ամերիկան է կամ Ռուսաստանը: Պատկերացրէք, որ հիմա Ռուսաստանի Պաշտպանութեան նախարարը այսօր գայ Հայաստան եւ լսի ոեւէ քահանայի մասին, ով ունի այսինչ շնորհը եւ նա գնայ այդ քահանայի մօտ, իսկ քահանան դուրս չգայ իրեն դիմաւորելու, պատկերացնում էք ինչ արձագանք կը լինի նրա կողմից: Հիմա այս մարդը՝ Նեէման ասորին, բորոտ էր: Բորոտութիւնը՝ դա հիւանդութիւն է, որը ժամանակին չէր բուժւում: Մարդու մարմինը կամաց-կամաց, մաս առ մաս չորանում ընկնում էր, եւ այս մարդը ընկնում է ճանապարհից դուրս: Մարդիկ իրաւունք չունէին իր հետ շփուելու: Ինքը նոյնիսկ զանգակ պիտի կախէր իր առջեւ, որ մարդիկ տեսնէին իրեն եւ գոռային բորո՜տ, բորո՜տ: Եւ սա համարւում էր սոցիալական մահ:

Այս մարդը լսելով, որ Հրէաստանում կայ բուժուելու հնարաւորութիւն, որովհետեւ Հրէաստանում բոլորը Աստծուն հաւատում են, գալիս է թագաւորի մօտ եւ խնդրում նրան, որպէսզի թագաւորը իրեն բուժի: Թագաւորը պատռում է այդ մարդու զգեստը, ինչը նշանակում էր՝ ընդվզում: Այսինքն թագաւորը ուզում էր ասել, որ նա Աստուած չէ, որ կարողանայ նրան բուժել: Թագաւորը ասում է, որ Հրէաստանում մի մարգարէ կայ եւ նրան ուղարկում է նրա մօտ: Այդ մարգարէի անունը՝ Եղիսէ էր: Երբ այս զօրավարը գալիս է մարգարէի մօտ, Եղիսէ մարգարէն

անգամ դուրս չի գալիս նրան տեսնելու եւ միայն իր սպասաւորներից մէկին ուղարկում է այդ զօրաւորին տեսնելու: Եւ սպասաւորի միջոցով այդ մարդուն ասում է. «Գնա՛ եօթը անգամ լողացիր Յորդանան գետում»:

Յորդանան գետը, եթէ ինչ-որ մէկը տեսել է, ապա այն չափազանց կեղտոտ, փոքր գետակ է: Նեէմարը ընդվզելով՝ ասում է, որ նա Ասորեստանից այստեղ է հասել, որպէսզի Յորդանանի մէջ լողանա՞յ եւ շարունակելով ասում է, որ արդեո՞ք Հրէաստանում ուրիշ աւելի լաւ գետեր չկան եւ բարկանալով ուզում է հեռանալ, երբ մէկն իրեն խորհուրդ է տալիս՝ ասելով. «Բայց նա քեզ ի՞նչ վատ բան ասաց, դժուա՞ր է եօթը անգամ լողանալ»:

Զօրավարը լսելով այդ մարդու խորհուրդը՝ լողանում է եւ առողջանում:

Տեսէ՛ք, ասաց եօթը անգամ լողացիր, այսինքն՝ պայմանական մի բան, որը եթէ կատարես՝ կը ստանաս այդ շնորհը:

Եկեղեցու եօթը խորհուրդներն, ինչպէս ասացի, զուլալ աղբիւրներ են աստուածային շնորհի:

Խորհուրդը տեսանելի նշանն է անտեսանելի աստուածային շնորհի: Շատ պարզ բաներ են տեսանելի նշանները, բայց շնորհը, որ ստանում ենք դրանց միջոցով, անճառելի աստուածային ճշմարտութիւն է: Սուրբ Հաղորդութիւնը ի՞նչ է: Մենք տեսնում ենք հացն ու գինին, բայց դրանց միջոցով մեր մէջ ենք ընդունում Տէր Յիսուս Քրիստոսի Մարմինն ու Արիւնը:

Մկրտութիւնը: Երեխաները կամ մեծահասակը գալիս են, ջուրը լցնում են նրանց վրայ, խօսք են ասում. «Ես քեզ մկրտում եմ անուամբ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»: Եւ փոխւում է էութիւնը այս մարդու, որովհետեւ ինքը եղել է ընդամէնը Աստծոյ արարածը՝ ուրիշների նման, իսկ Մկրտութեամբ դառնում է Աստծոյ զաւակ, մաքրւում է բոլոր մեղքերից եւ դառնում Եկեղեցու անդամ: Եւ փոխւում է մարդու էութիւնը, բայց՝ աննկատ կերպով:

Մենք բոլորս սովոր ենք, երբ որ լսում ենք ինչ-որ սենսացիոն բաներ, այսինքն՝ եթէ մենք լսենք, որ ինչ-որ մէկը տեսնում է տեսիլքներ, ինչպէս օրինակ Վանգան կամ մէկ այլ ուրիշ մարդ, մենք անմիջապէս վազում ենք նրա մօտ: Բայց ո՞ւր ենք վազում, երբ մեր առջեւ ունենք մնայուն ներկայութիւնը Յիսուս Քրիստոսի՝ Սուրբ Հաղորդութեան մէջ:

Խոստովանանքը բուժում է հոգին: Իսկ ինչու՞ չենք օգտւում, որովհետեւ այն սենսացիոն բան չէ, եւ մենք մտածում ենք, որ սա սովորական բան է, ի՞նչ պէտք է փոխուի: Շատերը նոյնիսկ, մանաւանդ հոգեբոյժները, հոգեբաններն ասում են… ես ինքս հանդիպեցի մի հոգեբանի հետ, ով ասում էր, որ մենք ձեզ հետ նոյն գործն ենք անում: Բայց ո՛չ, մենք նոյն գործը չենք անում: Այստեղ սարերի տարբերութիւն կայ, քանի որ վարդապետը կամ քահանան՝ հոգեբան, հոգեբոյժ չէ: Կարող է քահանան լինել հոգեբան, բայց դա իր կոչումը չէ: Շատ տարբեր բաներ են սրանք, որովհետեւ Յիսուս Քրիստոսը խոստովանանքը հաստատեց՝ մեր հոգին բուժելու, մեր հոգում Իր շնորհը եւ ողորմութիւնը հասցնելու համար:

Մկրտութեան խորհրդի մէջ մենք դարձանք Աստծոյ զաւակները եւ Յիսուս Քրիստոսի հետեւորդները: Մաքրուեցինք մեղքից, ստացանք սպիտակ զգեստը, որը խորհրդանշում է մեր հոգիների սպիտակութիւնը, մաքրութիւնը: Ամբողջութեամբ Յիսուս Քրիստոսին ենք նուիրւում: Աստծոյ զաւակ լինելը մեծագոյն պատիւ է: Զաւակն ենք Աստծոյ, սիրուած ենք Աստծոյ կողմից, ոչ թէ որեւէ մէկն ենք, այլ՝ իր կողմից ընտրուած ու ընդունուած զաւակներ ենք, բայց մեղքի միջոցով մենք հեռանում ենք Աստծուց:

Այսպիսի մի պատմութիւն պատմեմ ձեզ:

Մի շիկահեր աղջիկ գալիս է վարսավիրանոց, ականջակալները դնում է ականջներին եւ ասում, որ վարսայարդարը չդիպչի իր ականջակալներին: Մարդը փորձում էր լաւ կտրել, բայց պատահական դիպչում է ականջակալներին, եւ ականջակալները ընկնում են: Այդ ականջակալների հետ ընկնում է նաեւ այդ աղջիկը: Այս մարդը փորձում է այդ աղջկան ուշքի բերել, բայց աղջիկը ուշքի չի գալիս: Վարսայարդարը վերցնում է ականջակալները եւ դնում ականջին եւ լսում. «Շնչի՛ր, արտաշնչի՛ր»:

Սիրելի երիտասարդնե՛ր, այս պատմութիւնը ձեզ պատմեցի՝ իրողութիւնը ցոյց տալու համար: Մենք պատուաստուել ենք Յիսուս Քրիստոսով, մեր մէջ կայ Յիսուս Քրիստոսի կեանքը: Երբ մենք շնչում ու արտաշնչում ենք, դուք նկատու՞մ էք, թէ ինչպէս ենք շնչում ու արտաշնչում: Իհարկէ ո՛չ, բայց դուք դրա միջոցով ապրում էք: Եթէ չշնչենք ու չարտաշնչենք, ապա մենք չենք լինի: Դա բնական է մեզ համար, բայց դա կեանք է: Երբ մարդը պատուաստուած է Աստծով եւ նրա մէջ գոյութիւն ունի Աստծոյ շնորհը, ապա նրա մէջ կայ աստուածային կեանք, այսինքն՝ նա ողջ է հոգեպէս, որովհետեւ մարդը լոկ մարմին չէ, այլ նաեւ հոգի ունի, որը շնչում է Աստծոյ շնորհով: Մենք ազատ կամքով, հասկանալով, թէ ինչ ենք անում, ընտրում ենք մեղքը՝ գիտենալով, որ դա Աստծուն հակառակ է եւ վատ բան է, բայց մենք դա անում ենք: Սրանով, մենք մեր կամքով կտրում ենք մեր կապը՝ Աստծոյ հետ եւ դրա համար սա կոչւում է մահացու մեղք, որովհետեւ դա հոգեւոր մահ է մեզ համար: Միակ տարբերութիւնն այն է, որ անմիջապէս, ֆիզիկապէս չենք մահանում եւ դրա համար էլ ուշադրութիւն չենք դարձնում, սակայն սա արդէն հոգեւոր մահ է համարւում: Եւ երբ քեզ տալիս են հիւթ, բայց այդ հիւթի մէջ կայ թոյն, դու խմում ես եւ հնարաւոր է, որ չզգաս, բայց մէկ, երկու, երեք, չորս եւ դու այլեւս չկաս… Ուրեմն, իւրաքանչիւր մեղքի մէջ կայ թոյն, որը վերցնում է մեր կեանքը: Իսկ ինչպէ՞ս կարող ենք վերականգնել մեր կապը, որպէսզի նորից կարողանանք շնչել:

Երբ մարդը շնչահեղձ է լինում, իրեն միացնում են արհեստական շնչառութիւն, որպէսզի կարողանայ թթուածին շնչել, ուրեմն այդ թթուածինը մեզ համար այդ աստուածային շնորհն է, կեանքն է, որ մենք ստանում ենք մկրտութեան շնորհիւ. այն նորից վերակենդանացնում է մեզ եւ

վերականգնում է սերտ յարաբերութիւնները Աստծոյ եւ Նրա Որդու՝ Յիսուս Քրիստոսի հետ՝ խոստովանանքի միջոցով:

Յիսուս Քրիստոսը, իմանալով մեր տկարկամքի մասին եւ գիտենալով, որ մենք պիտի մեղանչենք, մեզ տուեց խոստովանանքի խորհուրդը, որպէսզի մենք կարողանանք վերակենդանանալ, եւ Ինքը մեզ նորից նոր կեանք տայ:

Այսպիսով, առաջինը, որ ուզում եմ յիշէք.

Խոստովանանքի խորհուրդը վերակենդանացնում է Աստծոյ կեանքը մեր մէջ, մեր հոգու մէջ, որը Աստծուց հեռացել է, եւ նորից սկսում ենք շնչել Քրիստոսի շնորհով, որը տրւում է մեզ ձրիաբար:

Երկրորդ, ստանում ենք ոչ միայն մեղքերի թողութիւն, այլ ստանում ենք նաեւ նոր շնորհ, որպէսզի կարողանանք դիմակայել եւ մեր մեղքերի դէմ պայքարել, որովհետեւ մարդու էութիւնը սկզբնական մեղքից յետոյ հակուած է մեղքին: Մեզ աւելի դիւրին է, աւելի հեշտ է մեղք գործել, քան թէ բարիք գործել: Ուրեմն Աստուած պէտք է բուժի մեր հոգին, իսկ բուժումը տեղի է ունենում խոստովանանքի միջոցով: Խոստովանանքի խորհուրդը, ինչպէս նաեւ հիւանդաց օծումը կոչւում են հոգու «բժշկութեան խորհուրդներ»:

Ինչո՞ւ պէտք է խոստովանանքը քահանայի առջեւ լինի, եւ որտեղի՞ց գիտենք, որ դա Յիսուս Քրիստոսը հիմնեց: Ե՞րբ Յիսուս Քրիստոսը հիմնեց խոստովանանքի խորհուրդը:

Սիրելինե՛րս, առաջին պարգեւը Յարուցեալ Քրիստոսի՝ եղել է մեղքերի թողութիւնը: Ուրեմն այնքան թանկագին նուէր է Յիսուս Քրիստոսը մեզ տուել Իր Յարութեան օրը: Երբ Ինքը Յարութեան առաւ, երեկոյեան եկաւ աշակերտների մօտ, եւ այդ աշակերտներից էր Պետրոսը, ով ուրացել էր Քրիստոսին եւ նաեւ միւս աշակերտները. բացի Յովհաննէս առաքեալից բոլորը ուրացան Յիսուս Քրիստոսին եւ փախան: Ոչ ոք չմնաց Յիսուս Քրիստոսի մօտ՝ խաչի տակ եւ միայն Յովհաննէս առաքեալն էր, ով հաւատարիմ մնաց, իսկ մնացածը նոյնիսկ չթաղեցին: Պատկերացրէ՛ք, նոյնիսկ այսօր, դու քո հարազատին չթաղես, փախչես, ուշադրութիւն չդարձնես նրան: Դու յետոյ ինքդ քեզ մարդ կը զգա՞ս: Իսկ այս աշակերտները, որոնք Յիսուս Քրիստոսի հետ էին, սիրուած էին Իր կողմից, Իր հետ կեանք էին կիսում եւ Իրեն ասում էին, որ միշտ լինելու են Յիսուս Քրիստոսի հետ, նոյնիսկ Պետրոս առաքեալը, որ ասում էր, որ ով էլ որ ուրանայ, ինքը երբեք չի ուրանայ Յիսուս Քրիստոսին եւ Իր հետ կը մնայ մինչեւ մահ, բայց յետոյ նոյն Պետրոսը ուրացաւ Յիսուս Քրիստոսին:

Դրանից յետոյ այս առաքեալները ինչպէ՞ս կարող էին ապրել: Իրենք իրենց ինչպէ՞ս էին զգում, ի՞նչ էր իրենց հոգին. անշուշտ վրդովուած էր, իրենց հոգին խռովուած էր, իրենց հոգին մեղքի զգացման մէջ մեռնում էր: Յիսուս Քրիստոսը այդ մասին գիտէր: Եւ երբ Քրիստոսը Յարութիւն է առնում, գալիս է Իր աշակերտների մօտ, որպէսզի նրանց սփոփի եւ ի՞նչ է ասում.

«Խաղաղութի՛ւն ձեզ»:

Տէր Յիսուս Քրիստոսը գիտի, որ մարդն այդ խաղաղութիւնը կարող է վայելել, եթէ կարողանայ իր մէջ երջանկութիւն գտնել: Մարդը, որպէսզի խաղաղութիւն գտնի իր սրտի մէջ, պէտք է հաշտ լինի Աստծոյ եւ իր հետ: Եւ Քրիստոս գալով իրենց մօտ՝ ասում է. «Խաղաղութի՛ւն ձեզ, ինչպէս Հայրն ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում»:

Եւ ի՞նչ է անում Յիսուս Քրիստոսը՝ փչում է նրանց վրայ եւ ասում.

«Առէք Սուրբ Հոգին եւ ում մեղքերը ներէք՝ ներուած կը լինեն»:

Ուրեմն, աստուածային իշխանութիւնը՝ մեղքերը ներելու եւ սրանով մարդու հոգին բուժելու եւ խաղաղութիւն շնորհելու միջոցը, շնորհը եւ իշխանութիւնը տալիս է Իր առաքեալներին: Ինքը, շատ լաւ գիտի, որ առանց մեղքերի թողութեան մենք չենք կարողանայ ապրել, որովհետեւ մարդու մեղքի զգացումը մարդուն ուղղակի սպաննում է:

Որպէսզի Յիսուս Քրիստոսը բուժի, պէտք է բուժի վէրքը, պէտք է նոր կեանք տայ, պէտք է այդ մեղքերին շնորհի թողութիւն: Այդ հնարաւորութիւնը, շնորհը Յիսուս Քրիստոսը տալիս է Իր աշակերտներին: Առաքեալներն ամէն անգամ ձեռնադրութեամբ փոխանցում են այդ շնորհը իրենց յաջորդներին եւ այդ յաջորդներն էլ՝ յետոյ իրենց յաջորդներին, մինչեւ այսօր: Մեր ձեռնադրութեան ընթացակարգի մէջ, ծէսի մէջ կայ մի պահ, երբ Սրբազանը փչում է քահանայի վրայ եւ ասում է.

«Ա՛ռ Սուրբ Հոգին, ում մեղքերը ներես՝ ներուած կը լինեն»:

Այդ շնորհը մեզանից չէ, քահանայի սրբութիւնից չէ, քահանան լաւն է կամ վատն է՝ դա իր պատասխանատուութիւնն է Աստծոյ առջեւ, բայց այդ շնորհը մի միջոց է, որ Աստուած քահանայի միջոցով մարդուն տալիս է մեղքերի թողութեան, խաղաղութեան եւ բժշկութեան շնորհը, իսկ սա փաստ է:

Իւրաքանչիւր ձեռնադրուած քահանայ ունի այդ իշխանութիւնը: Կարող է՝ եպիսկոպոսը

իրաւունք ունի վերցնելու կամ չթոյլատրելու, որպէսզի քահանան խոստովանանք լսի, բայց այդ շնորհը քահանայի մէջ կայ, պարզապէս այդ շնորհը չի թոյլատրւում գործածել:

Մենք ինքներս մեզ խոստովանեցնել չենք կարող: Նոյնիսկ Սրբազան Քահանայապետը գնում է ուրիշ քահանայի մօտ: Տարբերութիւն չկայ, թէ ինչ աստիճանի է այս քահանան՝ կարդինալ, եպիսկոպոս, թէ պատրիարք, կարեւոր չէ: Իւրաքանչիւր քահանայ այդ իրաւունքն ունի: Իւրաքանչիւրի մօտ կարող ենք խոստովանուել, իմանալով, որ քահանան անօթ է, որի միջոցով մենք կարող ենք մեր մեղքերի համար թողութիւն ընդունել: Եւ ինձ համար կեանքում երբեք կարեւոր չի եղել, թէ իմ դիմացի քահանան լաւն է, ինձնից հոգեւոր է կամ ոչ: Ինձ համար կարեւորը այն է, որ երբ ես կարիքն ունեմ խոստովանուելու, գտնում եմ հոգեւորական, ում մօտ կարող եմ խոստովանուել, քանի որ ինձ պէտք է, որ ես բուժուեմ: Ինչպէս օրինակ, երբ հիւանդ ես, անմիջապէս վազում ես բժշկի մօտ, որպէսզի նա քեզ անհրաժեշտ դեղորայքը տայ, որովհետեւ դեղը քեզ պէտք է, որպէսզի բուժուես: Եւ նոյնը հոգեւոր աշխարհի մէջ է:

Ուրիշ բան է խորհուրդ հարցնել, սա արդէն ուրիշ բան է, բայց մեղքերի թողութիւն իւրաքանչիւր քահանայի մօտ կարող ենք ստանալ:

Որքա՞ն յաճախ կարող ենք խոստովանել:

Պատասխանը հետեւեալն է՝ երբ որ զգում ես, որ հոգիդ պղտորուեց: Պէտք չէ մտածել, որ տարին կամ ամիսը մէկ անգամ խոստովանանքի գնալ, այսինքն՝ երբ որ հոգիդ պղտորուեց, երբ որ հոգիդ կարիք ունեցաւ մաքրուելու, ազատուելու մեղքից՝ պէտք է վազես խոստովանանքի, նոյնիսկ եթէ երեկ ես խոստովանել:

Մի բան ձեզ կարող եմ ասել՝ որպէս անձնական վկայութիւն:

Աստուած ինձ շնորհ է տուել, որ մեղքի մէջ ապրելու ցանկութիւն չունենամ: Եւ եթէ մեղանչում եմ, անմիջապէս փնտռում եմ քահանային, երբէք չեմ սպասում նոյնիսկ վաղուան, եթէ այսօր պէտք է, ապա այսօր էլ կը գտնեմ:

Երբ Երեւանում ժողովրդապետ էի, այնտեղ ինձանից բացի, ուրիշ քահանայ չկար, ես միակ կաթողիկէ ժողովրդապետն էի Երեւանում: Նստում էի մեքենան եւ վարում դէպի Սպիտակ, որովհետեւ այն ամենամօտն էր ինձ Երեւանից: Այնտեղ ունէի իմ խոստովանահայրը: Երբեք չէի թողնում վաղուան:

Սա նոյնպէս շատ կարեւոր բան է, որովհետեւ ինչպէս Սուրբ Օգոստինոսն է ասում.

«Մեղանչելը մարդկային է, բայց մեղքի մէջ թաթախուելը, մնալը սատանայական է: Եթէ մեղքի մէջ ընկար, պէտք է անմիջապէս դուրս գաս»:

Անընդհատ սատանայի կողմից ներգործութիւնները կան: Մենք նաեւ մեր մէջ ունենք որոշ սխալներ, արմատացած սովորութիւններ եւ այլն, որոնք մեղքի բոյնն են եւ մեղքի առիթ են դառնում մեզ համար: Եւ երբ մենք ընկնում ենք մեղքի մէջ, դա մարդկային է, բայց յանձնուելը մեղքին եւ ասելը կը մնամ այնտեղ, դա մեծ վտանգ է իր մէջ պարունակում:

Ուստի, իմ խորհուրդը սա է.

«Անմիջապէս խոստովանէ՛ք»:

Ինչպէ՞ս հասկանանք՝ արդեօ՞ք ծանր մեղք գործեցինք:

Ծանր մեղքը, որպէսզի մահացու մեղք լինի, պէտք է երեք պայմաններ լինեն: Այսինքն պէտք է ծանր նիւթ լինի՝ Աստծոյ պատուիրանին ուղղակի դէմ:

- *Մի՛ գողացիր* (Գողութիւնը ծանր մեղք է):
- *Մի՛ շնացիր* (Բոլոր սեռական յարաբերութիւնները, ում հետ էլ լինի պսակից դուրս, ծանր մեղք է համարւում):
- *Մի՛ սպանիր* (Սպաննել կարող են նաեւ խօսքով, ուրիշին վնաս հասցնելով, մարդու անուան հետ խաղալով):

Այս երեք մեղքերն էլ ծանր մեղքեր են եւ ծանր նիւթ պարունակող մեղքեր են: Երբ որ ես գիտակցում եմ, որ դա մեղք է, ազատ կամքով, առանց որեւէ մէկի ճնշման անում եմ, ապա ծանր մեղքով մեղանչում եմ:

Ի դէպ կիրակի օրը Սուրբ Պատարագի չգալը եւս ծանր մեղք է, քանի որ դա առաջին պատուիրանին դէմ է: *«Ես եմ քո Տէր Աստուածը…»:*

Եթէ շնորհակալութիւն չես յայտնում Աստծուն, դա նոյնպէս ծանր մեղք է:

Սիրելի՛ երիտասարդներ, եթէ երբեւիցէ չէք մտածել այդ մասին, այս կերպ կամ այս ուղղութեամբ, ապա մտածէք: Աստծոյ դէմ անարդարութիւնը եւ անշնորհակալութիւնը անընդունելի են:

Մեր կեանքը ռինգ է, եթէ ընկար, վե՛ր կաց եւ նորից շարունակի՛ր:

Կը ստանաս հարուած, նորից վե՛ր կաց, շարունակի՛ր: Աստուած տեսնելով ցանկութիւնդ, քո կամքը՝ իր մօտ եւ իր հետ միասին լինելու՝ կ՚օգնի քեզ, քո շնորհը պիտի շատացնի, իսկ երբ որ դու յանձնւում ես մեղքին, ապա այդ ժամանակ ինչպէ՞ս կարող ես յուսալ, որ Աստուած քեզ շնորհ կը տայ:

Պայքարէ՛ք, որպէսզի կարողանաք յաղթել, եթէ անգամ շարունակւում են անկումները: Դրա համար պէտք է յաճախակի խոստովանել:

Հիմա ուզում եմ անդրադառնալ խոստովանանքի հինգ պայմաններին:

- Երբ որ պատրաստւում էք խոստովանանքի գնալու, պէտք է յիշէք մեղքերը: Դա կոչւում է խղճի քննութիւն: Առհասարակ, երբ գալիս ենք խոստովանանքի, մենք ինքներս պէտք է վերյիշենք մեր կոնկրետ մեղքերը եւ խոստովանենք:
- Ամենակարեւոր պայմանը՝ պէտք է զղջալ: Եթէ զղջում չունեմ կատարածս մեղքի համար, խոստովանանքը վաւեր չէ:
- Պէտք է գնամ եւ անկեղծորէն խոստովանեմ:
- Որոշում ունենալ՝ այլեւս չմեղանչելու:
- Ապաշխարութիւն կամ հատուցում (քահանան, որպէս դեղամիջոց, նշանակում է աղօթքը կամ ինչ-որ մի բարեգործութիւն՝ կախուած մեղքի աստիճանից):

Սիրելինե՛րս, այս են հինգ պայմանները:

Յիսուսի սիրտը միշտ լայնօրէն բաց է մեր առջեւ, Յիսուս Քրիստոսը երբեք չի յոգնում մեզ ներել, բայց մենք պէտք է միշտ գնանք իր մօտ: Ամէն անգամ, երբ որ գնում ենք եւ մեր մէջ կայ մի փոքրիկ կամք՝ ազատուելու եւ մեղքի մէջ չմնալու, բաւ է, որ Աստուած մեզ ընդունի, ների քահանայի միջոցով եւ վերակենդանացնի մեր մէջ Իր շնորհը եւ մեզ նաեւ միացնի Եկեղեցու խորհրդին: Սրանք պարզ բաներ են, բայց Քրիստոսը պարզութեամբ գործում է մեր հոգում՝ մեր փրկութեան համար:

Ամէն:

ԼԻԲԱՆԱՆԻ ԱՅՆՃԱՐ ԳԻՒՂԻ «ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՐԱՆԻ ՏԻՐԱՄԱՅՐ» ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒ ՀՈԳՇՆ. Հ. ՄԵՍՐՈՊ Ճ. ՎՐԴ. ԹՈՓԱԼԵԱՆԻ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ «ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹԻՒՆԸ» ԹԵՄԱՅՈՎ

Շնորհակալութիւնս եւ աղօթքը

Շնորհակալութի՛ւնս հրաւէրին՝ խօսելու ձեզի:

Երախտագիտութի՛ւնս հրաւիրողին, որ կրնամ ըլլալ ձեզի հետ:

Ինծմէ խնդրուած խօսքիս վերտառութիւնն է. «Հայ կաթողիկէ պատկանելիութիւնը»:

Նիւթը ոչ միայն շատ այժմէական է, այլ նաեւ յոյժ հրատապ ու տարածիմաստ է: Ուստի, պիտի փորձեմ ըլլալ պարզ ու յստակ, գործնական եւ թելադրական: Բայց նախ աղօթե՛նք:

«Եկո՛ւր, Աստուած Ս. Հոգի,

լեցո՛ւր մեզ Քու լոյսովդ:

Քու ներկայութեամբդ համակէ՛ մեր միտքը, մեր սիրտը, մեր հոգին ու մեր կամքը:

Աստուած Ս. Հոգի, թափանցէ՛ մեր մտքին մէջ եւ յեղաշրջէ՛ զայն:

Մտի՛ր մեր սրտին մէջ եւ ձեւակերպէ զայն:

Իջի՛ր մեր հոգիին խորը եւ սրբակերտէ՛ զայն:

Տիրէ՛ մեր կամքին վրայ եւ բարեփոխէ՛ զայն:

Աստուած Ս. Հոգի, մեր մտածումներուն Լոյսը Դուն եղի՛ր:

Մեր տրոփումներուն Շարժիչը Դուն եղի՛ր:

Մեր յոյզերուն Կենդրոնը Դուն եղի՛ր:

Մեր արարքներուն Ուղղիչը Դուն եղի՛ր:

– *Մարիամ, «Մայր սուրբ» եւ «Կոյս իմաստուն»,*

մեզի խելք տո՛ւր՝ անսալու Ս. Հոգիին:

Մեզի հասկցո՛ւր ըսածը Ս. Հոգիին:

Մեզի անդրադարձո՛ւր մեր անմտութիւնը:

Մեզի կատարել տո՛ւր մեր սրբակերտումը:– Ամէն»:

Աղօթելով, Աստուած Ս. Հոգիին լոյսը խնդրելով ու Մարիամ Հայամօր դիմելով՝ աւելի լաւ պիտի հասկնանք, եւ աւելի լաւ հասկնալով՝ պիտի ջանանք գործադրել յաջորդ ըսուածները:

Բառաքննական

Շատ սովորական, ստէպ եւ երբեմն տեղիանտեղի գործածուած երեք բառերն են, որոնց ուղիղ իմացութիւնը յաճախ կը վրիպի մեր հասկացողութենէն եւ ապրումէն: Ուրեմն, եկէ՛ք, նախ ծանօթանանք այս երեք բառերուն լեզուական նշանակութեան ու իմաստային բովանդակութեան, որպէս զի ապա կարենանք սկսիլ եւ շարունակել մեր

վերլուծական ներկայացումը: Բացատրութիւնը կը սկսիմ երրորդէն:

«Պատկանելիութիւն» նոր բառ է բոլորովին, ուստի, ոսկեդարեան գրաբար չէ եւ դասական մատենագիրներուն ալ անծանօթ է: Անոր արմատը՝ «պատկան», որ կը նշանակէ «պատշաճ, յարմար, դիպող», սկսած է կիրարկուիլ միջնադարեան հեղինակներէն: Իսկ Աստուածաշունչին մէջ միայն մէկ անգամ կը գործածուի անոր բայը՝ «պատկանիլ» (Ժղ. 11,6), որ կը նշանակէ «պատշաճիլ, վերաբերիլ, յարմարիլ»:

«Կաթողիկէ» հայացուած բառը, որ ծանօթ է եւ յունարէնէ անցած է բոլոր լեզուներուն, կը նշանակէ «ընդհանրական, տիեզերական», ոսկեդարեան ու դասական հեղինակներէն սկսեալ ցայսօր ունի իր կիրառումը, զոր, սակայն, չենք գտներ Ս. Գրքին մէջ:

Հիմա պիտի զարմանաք, երբ ձեզի իմացնեմ, թէ «հայ» բառին ստուգաբանութիւնը յստակ չէ մինչեւ այսօր, որովհետեւ անոր «ծագումն անյայտ» է: Ընդունուած է, որ այս բառը իբր յորջորջում կու գայ անունէն «Հայկ» հսկային, որ որդին էր մեր Թորգոմ նահապետին: Մեր մատենագիրները գիտէին, ինչպէս Մովսէս Խորենացի, թէ «*Հայկ* է անուն դիւցազինն, քաջի՝ որդւոյ Թորգոմայ յաբեթեանց, յորմէ ազգ մեր արամեան կոչի ազգ Հայկայ, եւ աշխարհս մեր *Հայք*», այսինքն՝ *Հայաստան*:

«Հայ» ոսկեդարեանէն սկսեալ ունի իր գործածութիւնը թէ՛ իբր ածական եւ թէ՛ իբր անուն, ինչպէս ալ զայն երեք անգամ կիրառուած կը գտնենք Աստուածաշունչին մէջ (Տվ. 1,24, Ես. 37,38 եւ Յյտ. 9,11), որ ունի երկիցս «Հայկ» անունը (Յբ. 38,31 եւ Ես. 13,10):

«Հայ կաթողիկէ պատկանելիութիւնը»

«Հա՛յ», «կաթողիկէ՛» եւ «պատկանելիութի՛ւն» բառերուն լեզուական նշանակութեան ու իմաստային բովանդակութեան ծանօթացումէն ետք, կ'անցնիմ անոնց համառօտ վերլուծումին թէպէտ, որ սակայն եւ այնպէս կրնայ ընդլայնել մեր տեսադաշտն ու խորացնել մեր համոզումը անոնց նկատմամբ:

«Հայ կաթողիկէ պատկանելիութիւն» ուղիղ հասկացողութիւնը անհրաժեշտօրէն կ'ենթադրէ զինքը ներկայացնող, այո՛, շալկող-կրող անհատներ, որոնք միասնաբար կը կազմեն կրօնական-եկեղեցական հասարակութիւն մը:

Այդ անհատները մենք ենք, որ թէ՛ անդամ-անդամուհիները եւ թէ՛ զաւակներն ենք մեր կազմած հոգեւոր-դաւանական հասարակութեան, այսինքն՝ Հայ Կաթողիկէ Եկեղեցիին:

Մեր Եկեղեցին հա՛յ է ու հայկակա՛ն է 301 թուականէն սկսեալ ցայսօր:

Մեր Եկեղեցին կաթողիկէ՛ է նոյն տարեթիւէն ի վեր մինչեւ այսօր:

Մենք, անդամ-անդամուհիներն ու զաւակները մեր Ս. Եկեղեցիին, միաժամանակ թէ՛ հայ ենք եւ թէ՛ կաթողիկէ ենք՝ գիտակցելով ու ապրելով այս երկու իմացութիւնները իբր ամբողջութիւն եւ հարազատութիւն:

Այո՛ եւ ստուգապէ՛ս կը պատկանինք ամբողջութեամբ ու հարազատութեամբ թէ՛ մեր Ազգին եւ թէ՛ մեր Եկեղեցիին:

Հայ Ազգին մեր պատկանելիութիւնը, որ հայարիւն ծնունդով մեր ինքնութիւնն է աստուածաստեղծ, այսինքն՝ յերկնուստ շնորհուած մեզի ու նախասահմանուած մեզի համար, անբռնաբարելի եւ անյափշտակելի է:

Հոս, անգամ մը ընդմիշտ կը փափաքիմ ըսել բացայայտօրէն ու վճռականօրէն, թէ ոչ մէկ արարածէն տրուած մենաշնորհն է հայ Ազգին մեր

ինքնածին պատկանելիութիւնը, ուստի, զայն ոչ մէկը կրնայ առնել-խլել մեզմէ:

Հայ Կաթողիկէ Եկեղեցիին մեր պատկանելիութիւնը թէ՛ հայարիւն ծնունդով եւ թէ՛ կրօնական համոզումով մեր ինքնութիւնն է երկնատուր, որուն համար միշտ երախտապարտ ենք ու յար շնորհակալ ըլլալու ենք Աստուածային Նախախնամութեան:

Արդ, կրկնութեան շեշտաւորումով՝ մենք մեզի հարցնենք, թէ ի՞նչ կը հասկնանք ըսելով՝ «հայ կաթողիկէ պատկանելիութիւնը»...:

– Որ մենք հայերն ենք ամէնէն հարազատ կաթողիկէութեամբ:
– Որ մենք կաթողիկէներն ենք ամէնէն զտարիւն հայկականութեամբ:
– Որ մենք կը պատկանինք լուսաւորչաւանդ Եկեղեցիին, որ իւրայատուկ ու սրբազնասուրբ է մեզի համար իր Գրիգորներով, Արիստակէսներով, Ներսէսներով, Սահակներով, Մեսրոպներով, Կոմիտասներով, Մխիթարներով եւ Իգնատիոսներով, Խոսրովիդուխտներով, Սահականոյշներով, Շուշաններով, Վարդաններով ու Վահաններով, ինչպէս ալ Ձիրաւի (371), Աւարայրի (451), Նուարսակի (484), Հալիձորի (1727) եւ Սարդարապատի (1918) հերոսներով:
- Որ մենք, հայերս ու կաթողիկէներս, կը պատկանինք իրարու եւ իրարու հետ՝ այս մեր ինքնուրոյն Եկեղեցիին մէջ կը վերաբերինք «Մի, Սուրբ, Կաթողիկէ եւ Առաքելական» չորս ստորոգելիներով միակ օժտուած Եկեղեցիին, որուն տեսանելի Գլուխն է Սրբազան Պապը՝ Քրիստոսի Փոխանորդն ու Ս. Պետրոս Առաքելապետին Յաջորդը:

Հայ կաթողիկէ փոքրամասնութեան ուժականութիւնը

Ճիշդ է, որ իբր կաթողիկէ հայեր՝ թէպէտ մենք կը կազմենք փոքրամասնութիւնը նկատմամբ հայ առաքելականներուն, բայց եւ այնպէս իբր անդամ ընդհանրական ու տիեզերատարած Կաթողիկէ Եկեղեցիին՝ մեր Ս. Եկեղեցիին զաւակներս բռնուելու չենք ստորակայութեան բարդոյթէն, այլ ընդհակառակն՝ մեծաթիւ քանակի, բարձր որակի եւ համաշխարհային մակարդակի տուեալներով օժտուած ենք, քանի քոյրերը եւ եղբայրներն ենք ամէն ազգէ ու ցեղէ մէկ միլիառ եւ երեք հարիւր միլիոնէ աւելի հաւատացեալ ունեցող Եկեղեցիին անդամ-անդամուհիներուն:

Այս իրողութիւնը կշիռ է, զօրութիւն է, տարողութիւն է, հոգեկանութիւն է, որ անցեալին մէջ ունեցաւ եւ ներկային մէջ ունի իր բազմատեսակ արդիւնաւէտութիւնը մեր Ազգին, Հայրենիքին ու Սփիւռքին, ինչպէս նաեւ Հայ Առաքելական Եկեղեցիին: Իբր ապացոյց՝ կու տամ ձեզի դէպքեր ու թուականներ մեր ներկայէն:

Ստուգիւ, աշխարհացրիւ իր զաւակներուն ինքնութեան նուիրագործումին եւ պատկանելիութեան հզօրացումին համար տարած իր մշտատեւ աշխատանքներուն մէջ՝ Հայ Կաթողիկէ Եկեղեցին, 2001-2018 տարիներուն, կատարեց եօթ այնպիսի նուաճումներ, որոնք, մէկ կողմէ, հայերս համակեցին սրտազեղ յուզումով ու արդար հպարտանքով, եւ, միւս կողմէ, ունեցան այն աշխարհացունց արձագանգը, որուն շնորհիւ պատմական ճշմարտութեան եւ իրողութեան դէմ ի զուր զայրացան ու բողոքեցին Թուրքիայի իշխանութիւնները:

Առաջին՝ իր երանաշնորհ նախորդին՝ Յովհաննէս-Պետրոս ԺԸ. Գասպարեան Կաթողիկոս-Պատրիարքին (1982-1999) տարիներով սկսած աշխատանքը շարունակեց երջանկայիշատակ Ներսէս-Պետրոս ԺԹ. Թարմունի (1999-2015) Հոգեւոր Տէրը: Հռոմ, 7 Հոկտեմբեր 2001-ին, Հայաստանի քրիստոնէացման 1700-ամեայ յոբելեանին առիթով, «Սուրբ Պետրոս» տաճարին հրապարակին վրայ, Ս. Յովհաննէս-Պօղոս Բ. Քահանայապետը (1978-2005) «Երանելի» հռչակեց 1915-ի Հայասպանութեան ընթացքին իր ինքնութեան ու պատկանելիութեան համար նահատակուած Իգնատիոս Արքեպիսկոպոս Մալոյեանը՝ այսպէս զայն դարձնելով միջազգային մակարդակին վրայ ամենածանօթ դէմքն Ապրիլեան Նահատակներուն՝ Վատիկանի մէջ մօտ 150 գրանցուած լրատուական գործակալութիւններուն եւ անդամագրուած լրագրողներուն շնորհիւ:

Երկրորդ՝ Վատիկան, 19 Յունուար 2005-ին, Ս. Յովհաննէս-Պօղոս Բ. Պապը օրհնեց Հայ Եկեղեցիին հիմնադիր ու մեր հաւատքին Հօր՝ Ս. Գրիգոր Լուսաւորչին նորակառոյց մեծղի արձանը՝ զետեղուած «Սուրբ Պետրոս» պալիզիքայի արտաքին պատին վրայ, որ միջազգային ճանաչում-համբաւ ունեցող սուրբերուն եւ միաբանութիւններու հիմնադիրներուն համար վերապահուած պատուանդաններէն մին է: Հայ պատմութեան ու հոգեկանութեան մշտայուշ կոթողն է ամէն տարի Հռոմ հասած միլիոնաւոր ուխտաւորներուն եւ ամենազգի զբօսաշրջիկներուն համար:

Երրորդ՝ Վատիկան, 22 Փետրուար 2008-ին, Բենեդիկտոս ԺԶ. Սրբազան Պապը (2005-2013) մեծ հանդիսութեամբ օրհնութիւնն ու բացումը կատարեց Ս. Գրիգոր Լուսաւորչին անունով կոչուած եւ անոր արձանը շրջապատող անցք-հրապարակին՝ եկեղեցական, քաղաքական հայ եւ օտար բարձրաստիճան անձնաւորութիւններու, կղերականներու, մայրապետներու, Հռոմէն ու տարբեր երկիրներէն ժամանած հայ ուխտաւորներու ներկայութեան:

Չորրորդ՝ Զմմառի, Հ. Կ. Եկեղեցիին օրրանին մէջ, 15 Սեպտեմբեր 2012-ին, հայատառ առաջին տպուած մատեանին հրատարակութեան 500-ամեայ յոբելեանին (Վենետիկ, 1512) առիթով՝ զայն լոյսընծայած Յակոբ Մեղապարտի նորակերտ արձանին պաշտօնական օրհնութիւնն ու քօղազերծումը կատարեց Ն. Ս. Բենեդիկտոս ԺԶ. Քահանայապետը՝ Հայ Կաթողիկէ Վերանորոգ Պատրիարքութեան Կաթողիկոսական Աթոռին տուած պատմական այցելութեան ընթացքին, որուն աննախընթաց եւ գուցէ անկրկնելի պատահումով՝ իրաւացիօրէն «Պապը աշխարհին ծանօթացուց Զմմառու հայկական վանքը եւ Յակոբ Մեղապարտը»:

Հինգերորդ՝ Վատիկան, 12 Ապրիլ 2015-ին, «Ս. Պետրոս» պազիլիքային մէջ, Հայաստանեայց Եկեղեցիին Վեհափառներուն, Հայաստանի Նախագահին եւ անոնց ընտրանի պատուիրակութիւններուն, ինչպէս ալ մօտ 16 հազար օտարազգի ու հայ ուխտաւորներուն ներկայութեան, Փրանկիսկոս Սրբազան Պապը, Հայասպանութեան 100-րդ տարելիցին առիթով, ոգեկոչման Ս. Պատարագ մատուցանեց՝ համապատարագիչ ունենալով Ներսէս-Պետրոս ԺԹ. Կաթողիկոս-Պատրիարքը, կարտինալներ, արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ եւ Հ. Կ. Եկեղեցիին վիճակաւորները, առաջնորդները, վարդապետներ ու քահանաներ: Անոր ընթացքին իր խօսած քարոզին մէջ, Քահանայապետը կիրառեց «Հայոց Ցեղասպանութիւն» եզրը՝ զայն ճիշդ որակելով իբր առաջինը 20-րդ դարուն:

Երկրագունդին ամէնէն սիրուած ու յարգուած անձնաւորութենէն, ինչպէս ալ ամէնէն նուիրական, հեղինակաւոր եւ ազդեցիկ խորանէն արտասանուած «Ցեղասպանութիւն» եզրը դարձաւ աշխարհադղորդ՝ հիմնովին խլրտելով ոչ միայն ցեղասպան օսմանցին ու ջարդադրուժ թուրքը, այլ նաեւ բազմաթիւ երկիրներ, ժողովուրդներ, միջազգային մարմիններ, քաղաքապետական խորհուրդներ, դիւանագիտական ու քաղաքական դէմքեր, ամէն մարզի եւ մակարդակի անձնաւորութիւններ ու գործիչներ:

Վեցերորդ՝ վերի նոյն թուականին եւ նոյն սրբավայրին մէջ, Ն. Ս. Փրանկիսկոս Քահանայապետը հռչակեց հայադրոշմ ինքնութեան ու պատկանելիութեան «դպրոց» հանդիսացող Ս. Գրիգոր Նարեկացին (940/45-1003/4) «Վարդապետ Տիեզերական Եկեղեցւոյ»: Հռչակում մը, որ արդիւնքն է տարիներու յարատեւ հետապնդումին ու նպատակասլաց համոզումին: Հռչակում մը, որ հպարտախինդ պարծանքն է հայութեան: Հռչակում մը, որ պիտի գրաւէ արար աշխարհին, բայց մասնաւորապէս օտարազգի աստուածաբաններուն ուշադրութիւնն ու հայրախօսագէտներուն հետաքրքրութիւնը ոչ միայն նորանշանակ Վարդապետին, այլ նաեւ հայ աստուածաբանական մտածողութեան եւ հայրախօսական ժառանգութեան հանդէպ:

Համամարդկայնակա՛ն, համաքրիստոնէակա՛ն ու համամիութենակա՛ն հռչակում մը համա-

հայկական ոգիէն թելադրուած, որուն իրականացումին համար նիւթական, դրամական, հոգեկան, եկեղեցական, ուղեւորական եւ թղթակցական ոչ մէկ ճիգ խնայած մեր Ներսէս-Պետրոս ԺԹ. Հոգեւոր Տիրոջ այժմէական համոզումն ա՛յս է. «Լիայոյս եմ, որ Ս. Գրիգոր Նարեկացիին հռչակումը իբր *Եկեղեցւոյ Վարդապետ*, պիտի հանդիսանայ եղելութիւն մը, որ առաւել եւս պիտի արծարծէ ջերմեռանդութիւնը անոր հանդէպ, եւ այսպէսով պիտի օգնէ հայ ժողովուրդին յաղթահարելու դժբախտութիւնները, որ դար մը առաջ հարուածեցին զայն, ինպէս նաեւ բոլոր քրիստոնեայ ժողովուրդներուն, մանաւանդ Միջին Արեւելքի մէջ, որոնք ներկայիս կը կրեն նմանօրինակ դժբախտութիւններ» (Վատիկան, 12 Ապրիլ 2015):

Եօթներորդ՝ Փրանկիսկոս Սրբազան Պապը 5 Ապրիլ 2018-ին կատարեց Վատիկանի պարտէզներուն մէջ կանգնուած Ս. Գրիգոր Նարեկացիին երկու մեթր բարձր պրոնզէ արձանին (քանդակագործ՝ Դաւիթ Երեւանցի, ճարտարապետ՝ Միքայէլ Հասրաթեան, ձուլում՝ Չեխիա) օրհնութիւնը, որուն ներկայ եղան հայութեան երեք Կաթողիկոսներն ու Հայաստանի նախագահը՝ իրենց ուղեկիցներով, ինչպէս նաեւ կարտինալներ ու բարձրաստիճան եկեղեցական, պետական եւ դիւանագիտական անձնաւորութիւններ:

Հայ Կաթողիկէ եկեղեցիին ուժականութեան արդիւնագործութիւնը

Յոյժ փորձառու լրագրողը՝ Ս. Նաճարեան կը պատմէ առլցուն ու արդար հպարտանքով.«Ոչ միայն հայաստանաբնակ եւ աշխարհասփիւռ հայութիւնը հետեւեցաւ... Գրիգոր Նարեկացիի արձանի բացման արարողութեան, այլ համայն քրիստոնեայ աշխարհը, եւ ոչ միայն: Արդարեւ, Ապրիլ 5-ին, միջազգային լրատուամիջոցներուն լուսարձակները անգամ մը եւս կենդրոնացած էին Վատիկանի վրայ, ուր այդ օրը հայկակակութեամբ դրոշմուած մթնոլորտ կը տիրէր:

Բազմամիլիոն մարդիկ դիտեցին: Ուրախութեամբ եւ արդար հպարտութեամբ դիտեցին մանաւանդ հայեր, բայց քանինե՞ր հասկցան այդ իրադարձութեան պատմական խորհուրդը, անոր նշանակութիւնն ու կարեւորութիւնը գէթ հայութեան համար:

Արդարեւ, ինչքա՜ն խորհուրդ կար այդ պատմական իրադարձութեան մէջ: Կը բաւէր հոգեւոր ու մտաւոր աչքերով տեսնել փորձել պարզունակ, բայց մեծախորհուրդ արարողութենէն եւ տպաւորիչ պատկերներէն անդին՝ հասկնալու համար, որ անգամ մը եւս աշխարհին ուշադրութիւնը հրաւիրելով առաջին քրիստոնեայ երկրին վրայ եւ յիշեցնելով, որ Հայաստան կոչուած այս փոքր երկիրը օճախն է աշխարհին Տիեզերական Եկեղեցւոյ Վարդապետի մը նման աստուածաշնորհ մեծ արժէքներու ծնունդ տուած Մեծ Ազգի մը, Փրանկիսկոս Պապը կը հրաւիրէր իւրաքանչիւր հայ գիտակցելու, թէ իրաւամբ փոքր երկրի, բայց Մեծ Ազգի զաւակ է եւ կոչուած է արդարացնելու իր այդ հանգամանքը»:

Որակին տարողութիւնն է անհրաժեշտը, մակարդակին խորքն է կենսականը

Այս մատնանշուած դէպքերուն եւ թուականներուն դիմաց՝ կը տեսնէք, թէ թիւի ու քանակի հարց չէ, այլ՝ որակն տարողութիւնն է եւ մակարդակին խորքն է, որոնցմով օժտուած է մեր Հայ Կաթողիկէ Եկեղեցին իր անցելափառ գործօններով ու պատմապանծ տուեալներով, ինչպէս նաեւ ներկային մէջ հզօր է իր անխախտելի դաւանանքով ու արդիւնաբեր է իր անկորնչելի անդամակցութեամբ Տիեզերական Եկեղեցիին, որ միշտ կը քաջալերէ մեր հայկական ինքնութիւնն ու յարաճուն պտղաբերութեամբ կը հարստացնէ մեր կաթողիկէ պատկանելիութիւնը:

Շեշտելով կը կրկնեմ, թէ ազգային մեր պատկանելիութիւնը հայարիւն ծնունդով մեր ինքնութիւնն է երկնատուր, ինչպէս ալ կաթողիկէ դաւանանքին մեր պատկանելիութիւնը հայարիւն ծնունդով եւ կրօնական համոզումով մեր ինքնութիւնն է աստուածաշնորհ:

Այս հաւաստիացումս իրողութիւն է, ճշմարտութիւն է:

Հայ կաթողիկէ գիտակցութենէն՝ հայ կաթողիկէ վկայութեան

Այս իրողութեան ու ճշմարտութեան գիտակցութիւնը պէտք է ունենաք եւ ունենան բոլոր կաթողիկէ հայերը: Պիտի համոզուիք ու պիտի համոզուին նաեւ ոչ-կաթողիկէները, որ մենք թէ՛ ամբողջական հայեր ենք եւ թէ՛ ամբողջական կաթողիկէներ ենք՝ իմաստին ամենահարազատ առումով:

Սակայն, այս գիտակցութիւնը որքան ալ անհրաժեշտ է եւ այս համոզումը որքան ալ խոր է եւ զօրաւոր, չեն բաւեր, քանի ձեր գիտակցութիւնն ամրապնդելու ու ձեր համոզումն արդիւնաբերելու համար՝ շատ կենսական է, որ դուք ունենաք գիտութիւնը հայկական կաթողիկէութեան կամ կաթողիկէ հայկականութեան:

Առաջին՝ այս օգտաշատ գիտութիւնը կը շահիք կարդալով Հայ Կաթողիկէ Եկեղեցիին, մեր սուրբերուն, հայրապետներուն, մեր հոգեւորական եւ աշխարհական գործիչներուն, ինչպէս ալ անցեալի ու ներկայի մէջ մեր հաստատութիւններուն մասին:

Երկրորդ՝ գիտելիքներու այս լայն հմտութիւնը ունենալու էք, երբ դուք իբր նախանձախնդիրներ ձեր ինքնութեան հզօրացումին ու պատկանելիութեան պտղաբերումին՝ պահանջելով կը խնդրէք կամ՝ խնդրելով կը պահանջէք ձեր եկեղեցական եւ աշխարհական պատասխանատուներէն, որ ձեզի խօսին ու գրեն հայ կաթողիկէ պատմութեան, հոգեկանութեան, դաստիարակութեան ու մամուլին մասին:

Ուշադրութի՛ւն: Գիտակցութիւնը, համոզումը, գիտութիւնը եւ հմտութիւնն ունենալով՝ առաջնահերթօրէն եւ անհրաժեշտօրէն ունենալու էք ապրումը, այսինքն՝ զանոնք ապրելու յարատեւ կամքն ու սիրահաւատ ջանքը:

Ուշադրութի՛ւն: Գիտակցութեամբ, համոզումով, գիտութեամբ ու հմտութեամբ ունեցած ձեր վառ ապրումը ձեզ կ'օժտէ իմաստութեամբ եւ քաջութեամբ՝ տալու ջերմ վկայութիւնը ձեր հայ կաթողիկէ պատկանելիութեան:

Ուշադրութի՛ւն: Հայ կաթողիկէ պատկանելիութեան ձեր տուած եւ տալիք ջերմ վկայութեան, անշուշտ, ձեր ապրած հաւատքին, սիրոյն ու բարոյականին վկայութենէն ետք, առաջնահերթօրէն կան երկու այս նիւթերը, գործօնները՝ մարեմականութիւնն ու ազգասիրութիւնը: Առաջինը պիտի կազմէ սիրանիւթը առանձին բանախօսութեանս, իսկ երկրորդին մասին միայն քանի մը խոհեր կը յանձնեմ ձեր ուշադրութեան եւ գործադրութեան:

Շանթահարող հարցադրումին պատասխանը

«Ո՞վ է ազգասէրը...» հարցումին կը պատասխանեմ յստակ ու պարզ բառերով:

Ազգասէրը եղբայրասէրն է, աստուածասէրն է:

Այսինքն՝ իր եղբայրը չսիրող հայը նաեւ չի սիրեր իր Աստուածը, ուստի, նաեւ չի սիրեր իր ազգը, որ կը բաղկանայ հայածին քոյեյրէն ու եղբայրներէն՝ մեզի եւ իրարու համար տրուած Աստուծմէ:

Այսպէս, ազգասիրութիւնը կը դառնայ նաեւ այն առաքինութիւնը, զոր պահանջեց մեր Աստուածային Վարդապետը, երբ սահմանեց «մեծագոյն պատուիրանը» (Մտթ. 22,34-40, Մրկ. 12,28-31 եւ Ղկ. 10,25-28), որուն գործադրութիւնը չձգեց մեր քմահաճոյքին կամ տրամադրութեան...:

Այսպէս, որքան աստուածամերձ ու առաքինի ըլլայ հայ մարդը եւ մանաւանդ հայ կաթողիկէն, այնքան աւելի եղբայրասէր, ազգասէր ու հայրենանուէր է ան:

Այսպէս, կաթողիկէ հայուն համար ազգասիրութիւնը միայն բնական զգացում չէ եւ հայրենասիրութիւնը բնազդ չէ լոկ, այլ՝ նաեւ ու մանաւանդ անանձնակա՛ն ապրումն է, մշտատե՛ւ աշխատանքն է, յարանո՛ր ջանքն է, անսակա՛րկ նուիրումն է եւ օգտաշա՛տ պտղաբերումն է:

Դեռ աւելի, անձնական պատիւէն, ծանօթացումէն, ապահովութենէն ու բարօրութենէն առաջ՝ ազգին եւ հայրենիքին ապահովութեան, բարօրութեան, փառքին ու հռչակումին գիտակցութիւնն է եւ անկէ՝ կաթողիկէ հայուն յարատեւօրէն տարած աշխատանքն է:

Այսպէս, կաթողիկէ հայուն համար, կաթողիկէ հայուն ապրելակերպին մէջ եւ կաթողիկէ հայուն վկայութեամբ՝ ազգասիրութիւնը առաքինութիւնն է ու հայրենասիրութիւնը բարոյական բարեմասնութիւնն է, քանի որ եղբայրսիրութիւնը առաքինութիւնն է եւ մարդասիրութիւնը առաւել հողասիրութեան՝ բարոյական արարքն է:

Հետեւաբար, ազգասիրութիւնը Աստուծմէ կը շնորհուի առաքինի մարդուն եւ հայրենասիրութիւնը Աստուծմէ կը բխի բարոյական հայուն: Այլ խօսքով՝ ազգասէրը, հարազա՛տը, ըլլալու է աստուածասէ՛ր, ու հայրենասէրը ըլլալու է աստուածամե՛րձ, այլապէս՝ եսական է, շահադիտական է, աթոռապաշտ է, փառամոլ է եւ գրպանասէր է...:

Համադրում

Մինչեւ հիմա ըսածներս կը համադրեմ երեք յայտարար կէտերուն մէջ:

- Աստուածային Նախախնամութեան համաձայն՝ ծնունդով հա՛յ ենք մենք:
  Անբռնաբարելի՛:
- Աստուծոյ կարգադրութեան համաձայն՝ դաւանանքով կաթողիկէ՛ ենք մենք:
  Անյետսկոչելի՛:
- Հայ Կաթողիկէ Եկեղեցին «նորամուտ» ու «միացեալ» Եկեղեցի չէ, քանի 301 թուականէն սկսեալ միշտ էր, է եւ պիտի ըլլայ կաթողիկէ, այսինքն՝ ընդհանրական, որ կը նշանակէ անդամ Տիեզերական Եկեղեցիին՝ հաստատուած «ի վերայ Վիմին հաւատոյ»:
  Անկորնչելի՛:

Եզրակացութիւն

Ելոյթիս աւարտին՝ կը յանգիմ չորս եզրակացուցուցիչ կէտերուն:

- Հայ կաթողիկէն ազգասէր անհատն է գերազանցով, այլապէս եղբայրասէր չէ:
- Հայ կաթողիկէն հայրենասէր անհատն է գերազանցով, այլապէս աստուածահաճոյ չէ:
- Հայ կաթողիկէն տոհմային հողապաշտ անհատն է գերազանցով, այլապէս պատիւ չի բերեր իր դաւանանքին եւ Եկեղեցիին:
- Իբր հայ կաթողիկէներ պիտի ապրինք, պիտի գործենք եւ պիտի արդիւնաբերենք մեր Ընտանիքին, մեր Հասարակութեան, մեր Եկեղեցիին, մեր Ազգին ու մեր Հայրենիքին համար՝ անշուշտ առանց մոռնալու մեր անվերապահ պարտաւորութիւնները նկատմամբ մեզ հիւրընկալող երկիրներուն:

Քաջալերական հրաւէրս

Այս է քահանայական կոչս եւ հայրական հրաւէրս ձեզի: Ոգեպնդող բառերը փոխաբերական իմաստով կ'առնեմ Մ. Խորանեցի Պատմահօրէն:

«Թեպետ եւ եմք ածու փոքր եւ թուով յոյժ փոքու սահմանեալ, եւ զօրութեամբ տկար..., սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ ի մերում աշխարհիս ու արժանի գրոյ յիշատակի...»:

Ստուգիւ, թէպէտ շատ փոքր ածու ենք եւ սահմանափակ քանակով, բայց եւ այնպէս հաւատքով, կորովով եւ որակով՝ մեր Եկեղեցիին ու մեր Հասարակութեան մէջ պատմելու, գրելու եւ յիշատակելու արժանի բազմատեսակ սխրագործութիւններ կան՝ ըլլալով արտադրանքը հայ կաթողիկէ հոգիին, մտքին, դաստակին ու բազուկին:

Ուստի, նոր համոզումով եղէք եւ նոր գիտակցութեամբ մնացէք հա՛յ կաթողիկէներ, կաթողիկէ՛ հայեր, որոնցմէ իւրաքանչիւրը թող յայտարարէ, ինչպէս ատենին յայտարարեց դարերու մէջ մեծագոյն հայերէն ու կաթողիկէներէն մին՝ Սեբաստացի Մխիթար Աբբահայրը. «Իմ Ազգս՝ Կրօնիս համար, եւ իմ Կրօնս՝ Ազգիս համար»:

Երբեք չմոռնաք, թէ այս երկու նուիրականութիւններով զրահուած եւ այս երկու նուիրականութիւններուն համար՝ կաթողիկէ հայերս պիտի ապրինք, պիտի վաստակինք, պիտի արդիւնաբերենք եւ պիտի յաւերժանանք:

Եւ որպէս զի կարենաք գործադրել այս վսեմ ու վսեմացուցիչ իտէալ-գաղափարականը, ձեզի կը յանձնարարեմ, որ Ս. Վարդարանով ամէն օր դիմէք «հայոց խնկելի Աստուածածին»-ին, զոր սրտանց կը սիրեմ անուանել, յարգել ու հռչակել «Հայամայր», բայց յատկապէս՝ «իմ հրաշագործ Սիրամայրս»:

Շնորհակալութի՛ւն:

Հայաստան, Գիւմրի,
Թորոսգիւղ, 22 Յուլիս 2019
Մեսրոպ Հայունի

ԼԻԲԱՆԱՆԻ ԱՅՆՃԱՐ ԳԻՒՂԻ «ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՐԱՆԻ ՏԻՐԱՄԱՅՐ» ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒ ՀՈԳՇՆ. Հ. ՄԵՍՐՈՊ Ե. ՎՐԴ. ԹՈՓԱԼԵԱՆԻ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՒՆ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹԵԱՆ ԱՄԷՆԷՆ ՑԱՅՏՈՒՆ ԵՒ ԳՈՐԾՕՆ ՑՈՒՑԱՆԻՇԵՐԷՆ ՄԻՆ՝ ՄԱՐԵՄԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ, ՄԱՐԵՄԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Յիշեցումս եւ աղօթքը

Չմոռնաք այս «Համայնքային երիտասարդական օրեր – Գ» հանդիպումին ընտրուած բնաբանը, զոր Փրանկիսկոս Սրբազան Պապը որոշեց Փանամայի մէջ 22-27 Յունուար 2019-ին տեղի ունեցած «Համաշխարհային Երիտասարդական Օր»-ին համար. *«Ահաւասիկ, Ես Տիրոջ Աղախինն եմ: Ինծի թող ըլլայ ամէն ինչ քու խօսքիդ համաձայն»* (Ղկ. 1,38):

«Հայ կաթողիկէ պատկանելիութիւնը» ելոյթիս մէջ քանի մը տեղ յիշեցի «իւրայատուկ» եւ «ինքնուրոյն» որակական ածականները

նկատմամբ մեր Եկեղեցիին, որուն հայ կաթողիկէ հոգեկանութեան մէկ իւրայատուկ եւ ինքնուրոյն ցուցանիշներէն գուցէ գլխաւորագոյնը կը տենչամ յանձնել ձեր ուշադրութեան ու գործադրութեան, քանի խօսուն ապացոյցն է թէ՛ մեր ինքնութեան ու թէ՛ մեր պատկանելիութեան:

Բայց նախ աղօթե՛նք, որ հանդիսանանք ու մնանք հայ կաթողիկէ մարեմականները:

«Եկո՛ւր, Աստուած Ս. Հոգի,
լեցո՛ւր մեզ Քու լոյսովդ:
Քու ներկայութեամբդ համակէ՛ մեր միտքը, մեր սիրտը, մեր հոգին ու մեր կամքը:
Աստուած Ս. Հոգի,
Դուն լաւագոյնս գիտես մեր անտարբերութիւնը:
Կը հայցեմ, մեզի գործադրել տո՛ւր
Յիսուսի «արթուն կեցէ՛ք եւ աղօթեցէ՛ք» հրահանգը:
Աստուած Ս. Հոգի,
Դուն լաւագոյնս կը ճանչնաս մեր գաղջութիւնը:
Կ՚աղաչեմ, մեզի հասկնալ տո՛ւր
Քրիստոսի «զգոյշ եղէ՛ք, որ ձեր սրտերը չթմրին» խօսքը:
Ինքը, Տէ՛ր, մեզի սորվեցուց խնդրել եւ ընդունիլ, որով լիովին ապահով եմ իմ խնդրանքիս ստացումին:
Աստուած Ս. Հոգի,
Այս երիտասարդական հանդիպումը իրապէս ըլլայ մեզի համար «Տիրոջ շնորհքի առիթը» հոգեկան վերազարթնումին, հոգեմտաւոր գիտակցութեան եւ արթնամտութեան:

- Մարիամ, «Աստուածածին՝ Մայր Հայաստանի», մեր սուրբերուն եւ մարտիրոսներուն Դշխոնն ես, ջերմ մարեմասիրութեան շնորհիւ՝ նորախա՛նդ մեր հայ կաթողիկէ պատկանելիութեան պարգեւը կը խնդրեմ Քեզմէ, ո՛վ Շնորհամայր Մարիամ: - Ամէն»:

Հայուն մարեմականութիւնը

Բուն նիւթիս անցնելէն առաջ՝ կը փափաքիմ շատ ընդհանուր ակնարկ մը նետել հայուն մարեմականութեան վրայ, զոր նկատելու էք իբր ներածական այս բանախօսութեանս:

Ստուգիւ, հայուն մարեմականութիւնը հայկական ինքնութեան բաղկացուցիչ տարրերէն մին է, ընդհանրապէս, եւ հայ կաթողիկէ պատկանելիութեան ազդակներուն ու բացայայտիչներուն գլխաւորագոյններէն մէկը, մասնաւորապէս:

Այս իմաստով՝ սահմանումս շատ պարզ ու շատ յստակ է. «Չես եւ չես կրնար ըլլալ հայ-քրիստոնեայ հաւատացեալ, եթէ չես մարեմասէր: Չես

եւ չես կրնար ըլլալ յիսուսական, հարազա՛տը, եթէ չես մարեմական»:

Իմ սահմանումիս ճշդութիւնն ու ճշմարտութիւնը կ՚ապացուցանեն հայադրոշմ դարերը՝ 301 թուականէն ցայսօր, ինչպէս նաեւ պիտի ապացուցանեն հայակնիք ժամանակները՝ մեր թուականէն սկսեալ մինչեւ կատարածն աշխարհին:

Ս. Մկրտութեամբ կնքուեցանք Ամենասուրբ Երրորդութեան Անունով եւ դարձանք հայ քրիստոնեաներ, որոնք ջուրին մէջ ու մեռոնին օծումով ստացած կնունքին պահուն դարձան նաեւ հայ մարեմականներ՝ այսպէս վերջնականապէս ամրապնդելով հայու մեր ազգային ինքնութիւնն ու դրսեւորելով հայու մեր նոր կրօնական պատկանելիութիւնը:

Հետեւաբար, ազգային ինքնութեամբ՝ հա՛յ ենք: Կրօնական պատկանելիութեամբ՝ քրիստոնեա՛յ ենք: Ինչպէս որ ինքնութիւնն ու պատկանելիութիւնը անբաժանելի են իրարմէ, նոյնպէս հայութիւնը եւ քրիստոնէութիւնն անզատելի՝ 301 թուականէն ի վեր:

Այս անբաժանելիութեան կամ անզատելիութեան Ելակէտը, Միջնակէտն ու Վերջակէտը, «Ա»-ը եւ «Ք»-ն է Յիսուս Քրիստոս՝ Աստուածամարդը, որուն իսկական Մայրն է Մարիամ «Կոյսը» (Ղկ. 1,27):

Այսպէս ոչ միայն հաւատաց եւ վարդապետեց մեր հաւատքին Հայրը՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ, այլեւ

ապրեցաւ իր հաւատքն ու կիրառարեց իր վարդապետութիւնը, երբ նորադարձ իր ժողովուրդին համար կառուցած առաջին հայկական եկեղեցին անուանեց «Մարիամ Ս. Աստուածածին», որ ապագային վերանուանուեցաւ «Ս. Էջմիածին»:

Ս. Գրիգորի մարեմական հաւատքն ու մարեմաշեշտ վարդապետութիւնը միաժամանակ դրսեւորող այս անուանումին մարեմագով նշանակութիւնը, տարողութիւնն ոչ միայն լաւագոյնս հասկցան Լուսաւորիչին յաջորդները, այլ նաեւ խորապէս ըմբռնելով ու հաստատապէս համոզուելով՝ դեռ աւելի ընդլայնեցին մարեմականութիւնը Հայ Եկեղեցիին եւ դեռ աւելի ամրապնդեցին մարեմասիրութիւնը Հայ Ժողովուրդին՝ Տիրամայրը, անշուշտ, Յիսուս Որդիէն ետք, դարձնելով ու հռչակելով երկրորդ Անձնաւորութիւնը մեր ազգային ինքնութեան ու կրօնական պատկանելիութեան:

Այս պատմաբուխ ու ճշմարտասաց տեսութիւնս կը վաւերացնեն մեր Եկեղեցիին Ս. Հայրերն ու հայրապետները, վարդապետներն ու մատենագիրները, մեր ժողովուրդին աշխարհական բանաստեղծներն ու տոհմային սովորութիւնները, ինչպէս նաեւ մեր հայաշխարհին եկեղեցիներն ու վանքերը:

Հայ Ս. Հայրերուն, հայրապետներուն, վարդապետներուն եւ մատենագիրներուն գրած շարականները, աղօթքները, քարոզները, ճառերը, ներբողները, տաղերը, գանձերը, մեծացուսցէներն ու ժամամուտները խօսուն եւ մնայուն բացայայտիչներն են մեր Եկեղեցիին մարեմաբանութեան՝ միշտ արծարծելով անոր հաւատացեալ զաւակներուն մէջ իրենց ինքնութիւնն ու սնուցանելով իրենց պատկանելիութիւնը:

Հայ աշխարհական բանաստեղծներուն քերթուածները, գեղօններն ու փառերգերը եւ տոհմային սովորութիւններուն մէջ առկայ մարեմապատկան աւանդութիւններն ու բարքերը պարզապէս պերճախօս են մեր ժողովուրդին մշտակայ մարեմասիրութեան՝ անոր զաւակները յարաճուն ընթացքին ոչ միայն մղելով Ս. Սիրամօր յարգանքին եւ վստահութեան, այլ նաեւ անոնց ներշնչելով անձնական սիրոյն պտղաբերութիւնն ու յուշելով ջերմեռանդութեան անհրաժեշտութիւնը «հայոց խնկելի Աստուածածին»-ին հանդէպ:

Մեծաթիւ եկեղեցիներուն մարեմայուշ անուններն ու բազմաթիւ վանքերուն մարեմագով կոչումները, ինչպէս նաեւ անոնց՝ բոլորին խորաններէն կախուած քրիստոսակիր Կուսամօր սրբանկարները յա՜ր կը պատգամեն մարեմականութիւնը մեր հայ աշխարհին, որուն հաւատաւոր զաւակները այդ հայակերտներէն շատերը դարձուցած են լիցքաւորումի, խանդաւորումի եւ հզօրացումի ուխտավայրերն իրենց ինքնութեան ու պատկանելիութեան:

Դեռ աւելցուցէք հայկական մանրանկարչութեան, ճարտարապետութեան, քանդակագործութեան, երաժշտութեան, նկարչութեան եւ այլ գեղարուեստներու մէջ բազմաթիւ մասնագէտներու անթիւ ստեղծագործութիւնները, որոնք մարեմասէր հայուն ինքնութեան ու պատկանելիութեան արգասիքը բացի ըլլալէն՝ գերազանցօրէն ունին դիտաւորութիւնն ըլլալու մարեմահռչակ եւ առաքելութիւնը մնալու մարեմաներբող:

Կաթողիկէ հայուն մարեմականութիւնը

Արդ, մասնաւորելով եւ կարեւորելով հայաւա՛նդ մարեմականութիւնը կաթողիկէ հայուն համար՝ անվարան պիտի ընդունինք նաեւ, նախ՝ թէ նախորդ ենթաբաժինին մէջ բոլոր ըսուածներն ամբողջապէս ու լիովին կ՚արժեն կաթողիկէ հայերուս համար:

Երկրորդ՝ անվարան պիտի ընդունինք նաեւ, թէ մենք՝ կաթողիկէ հայերս ունինք իւրայատուկ մարեմեան աղօթքներ, երգեր, բարեպաշտութիւններ ու հաւատալիքներ, որոնք ոչ միայն մեզ իբր այսպիսիներ յստակօրէն կը բնորոշեն ու դրականօրէն կը զատորոշեն մեր ազգակիցներէն, այլ նաեւ մեր մէջ կը սնուցանեն լուսաւորչաւա՛նդ մարեմահաւատ սէրն ու մարեմագով յարգանքը՝ մեզ դեռ աւելի դարձնելով անհատները մեր անկորնչելի եւ անփոխարինելի հայկական ինքնութեան՝ մեզի շնորհուած յերկնուստ: Եւ ի վերուստ մեզի պարգեւատրուածն ոչ մէկը կրնայ առնել, խլել կամ վերցնել մեզմէ:

Մեզի եւ բոլորին համար պարզ ու յստակ ըլլայ, թէ մեր մարեմականութեամբ պահելով, պաշտպանելով, զարգացնելով եւ ապրելով մեր կրօնական պատկանելիութիւնը՝ կաթողիկէ հայերս դեռ աւելի կը հանդիսանանք համոզուած պահողները, պաշտպանները, զարգացնողներն ու ապրողները մեր հայկական ինքնութեան, իսկ եթէ ո՛չ, այն ատեն,– այս եզրայանգումս ալ մեզի եւ բոլորին համար պարզ ու յստակ թող ըլլայ –, մենք արժանի չենք ըլլալու եւ մնալու հայ կաթողիկէներ:

Ստուգիւ, մենք համոզուած ենք, թէ շեշտաւորելով եւ ջանալով ապրիլ մեր մարեմական հոգեկանութիւնն իբր յատկանիշը մեր պատկանելիութեան հայ կաթողիկէ հաւատքին՝ միայն հետեւած կ՚ըլլանք սուրբ Գրիգորներուն,

Սահակներուն, Մաշտոցներուն, Ներսէսներուն, Նարեկացիներուն, Շնորհալիներուն, Լամբրոնացիներուն, Մխիթարներուն, Մալոյեաններուն, Աղաճանեաններուն եւ Կոգեաններուն, ինչպէս ալ սրբակեաց Սահականոյշներուն, Վարդաններուն, Շուշաններուն, Վահաններուն, Խոսրովիդուխտներուն, ծանօթ եւ անծանօթ մարտիրոսներուն, աշխարհական ու հոգեւորական վկաներուն:

Այս մարեմասէր աստղահոյլին լուսաշող առկայութեան՝ յանգելու եմ այս ուղիղ ու կենսափորձառական եզրակացութեան, որ եթէ մեր հայկական ինքնութիւնն արժանապատուութեան հիմնահարցն է ամէն մէկ հայուն համար, ապա, անկասկած, հայ կաթողիկէ մարեմականութիւնը վարկի ու համբաւի հիմնախնդիրն է մեզմէ իւրաքանչիւրիս համար, որ կը ջանայ հետեւիլ Յիսուս Խաչեալին, այո՛, կ'ուզէ ըլլալ քոյրը, եղբայրը Քրիստոս Աստուածամարդուն, որուն հարազատ Մայրն է Մարիամ, եւ այս աստուածընտիր հանգամանքով՝ նաեւ մեր Մայրը, զոր շատ կը սիրեմ յորջորջել «Հայամայր»:

Հոս, «հայոց խնկելի Աստուածածին»-ին ու «Հայամայր»-ին կապակցութեամբ, կը փափաքիմ վերհանել մեր մարեմասիրութեան, այո՛, մեր մարեմական պատկանելիութեան ամենացայտուն ցուցանիշը, որ մեզ անքակտելիօրէն կը շղթայէ մեր հայկական ինքնութեան հետ, եւ այն՝ յատկապէս վերջին 500 տարիներուն հոլովոյթով:

Այդ ամենացայտուն ցուցանիշը Ս. Վարդարանն է, որ ըլլալու եւ մնալու է մեզմէ իւրաքանչիւրիս, այսինքն՝ ամէն մէկ կաթողիկէ հայուն անձնական վարկանիշը, մանաւանդ երբ կ'իմացնեմ ձեզի այս պատմական իրողութիւնը, թէ մենք եղանք վարդարանն առաջին աղօթողները քրիստոնեայ արեւելքին մէջ:

Ասիկա ալ յայտնեմ ձեզի, թէ Ս. Վարդարանին միջազգային պատմութեան ամէնէն գեղեցիկ ու երկար գլխակարգութիւններէն մին է «Հայոց պատմութիւնը Ս. Վարդարանին», որուն անգերազանցելի հայ առաքեալը հանդիսացաւ Սեբաստացի Մխիթար Աբբահայրը (1676-1749), անգերազանցելի գլխատառ Հա՛յը, հայաշխարհին մեծագոյն մարեմասէ՛րը:

Պատմաբանասիրական իմ պրպտումներուս հիման վրայ՝ Մխիթարը բնորոշեցի «հայ առաքեալը Ս. Վարդարանին»: Այս որակումը հաստատեցին 1987-ին Վիեննայի Համալսարանին Կաթողիկէ Աստուածաբանական Կաճառին ներկայացուցած դոկտորական աւարտաճառս ու 2007-ին լոյսընծայած «Սեբաստացի Մխիթար Աբբահօր մարեմականութիւնը» ուսումնասիրութիւնս:

Մխիթար՝ «հայ առաքեալը Ս. Վարդարանին» բնորոշումը փաստելու համար կան բազմաթիւ վարդարանեան իրողութիւններ, որոնցմէ ձեզի կ'իմացնեմ յաջորդ վեցը լոկ:

Առաջին՝ Մխիթար Աբբան 1735-ին հրատարակեց վարդարանին առաջին հայերէն նկարազարդ գիրքը՝ «Տետրակ Ամենասուրբ Ռոզարի, այսինքն՝ Վարդարանի», որ ապագային ունեցաւ յաւելեալ եօթ տպագրութիւններ՝ այսպէս դառնալով Ս. Գիրքէն, Նարեկէն եւ «Պատերազմ հոգեւոր» ետք հայ տպագրական աշխարհին ամէնէն աւելի լոյսընծայուած ու սպառած երկը:

Երկրորդ՝ վարդարանեան այս մատեանին մէջ՝ Աբբահայրն էր, որ առաջին անգամ ըլլալով՝ տուաւ նաեւ բացատրութիւններ Ուրախութեան, Տրտմութեան ու Փառաւորութեան խորհուրդներուն մասին:

Երրորդ՝ աղօթագրքին սկիզբը տպագրած «Ս. Վարդարանի Տիրամայր»-ին սրբանկարին տակ գրած է այս քառեակը, որ թէ՛ օրհնատաղ է եւ թէ՛ հայցերգ է սրտաբուխ.

«*Մայր գըթութեանց, յայ՛ց ել շնորհիւ*
Այնց, որք յարգեն զՔեզ Ողջունիւ.
Զի ըզներումն առցեն սրտուգիւ,
Մինչ ըզՊսակդ հիւսեն վարդիւ»:

Չորրորդ՝ 1718-ին լոյսընծայած «Կրթութիւն աղօթից» աղօթամատեանին մէջ՝ Մխիթար Աբբահայրը տպեց վարդարանեան շատ իմաստագեղ սրբանկար մը, որ կը ներկայացնէ քրիստոսակիր Աստուածածինը լուսաճաճանչ ամպերու մէջ՝ բոլորուած հրեշտակներէն: Անոնց ստորեւ ծնրադիր ընտանիքին անդամ-անդամուհիներ կան, որոնք վարդարաններն իրենց ձեռքը բռնած՝ վերամբարձ աչքերով կ'աղօթեն: Յիսուս Մանուկը, իր ձախով, եւ Մարիամ Մայրը, իր աջով, մէկական վարդարան կ'երկարեն աղօթողներուն:

Սրբապատկերին տակ գրուած երկտողը կ'արտայայտէ Մխիթարի ջերմ մարեմականութիւնն ու յուսատու վարդարանասիրութիւնը.
«*Մայր Աստուծոյ է միշտ Պաշտպան այնմիկ տոհմի,*
Որ աղօթել առ Նա կրթէ զիւր ընտանի»:

Հինգերորդ՝ դեռ իմացնելու եմ, թէ պատկերին մէջ կան երկու հրեշտակներ, որոնք, Տիրամօր եւ ընտանիքին անդամ-անդամուհիներուն միջեւ, կ'իջնեն դէպի վար. իւրաքանչիւրը բռնած է դափնի մը վարդարանասաց աղօթողներուն համար:

Յստակ են միտքը հեղինակին եւ պատգամը սրբանկարին: Վարդարանն ըսող անձը հզօր կը դառնայ եւ ինքզինքը կը զգայ երջանիկ: Ինչպէս բոլոր ընտանիքներուն, որոնք կը կատարեն այս մարեմեան բարեպաշտութիւնը, կը տրուին առատաձեռն շնորհքները:

Նոյնպէս, ամէն ժողովուրդ, որուն զաւակները ջերմեռանդ են վարդարանին եւ զայն յարատեւօրէն կ'աղօթեն, արժանի կ'ըլլան Մարիամ Սիրամօր մայրենի պաշտպանութեան:

Վերջապէս, յաղթական է այն երկիրը, որուն բնակիչները չեն մոռնար ըսելու վարդարանը. անոր շնորհիւ՝ միշտ եւ յարաճուն ընթացքով պիտի մնայ բարգաւաճ:

Այսպէս, Ս. Վարդարանը, մէկ կողմէ, եղաւ անձնական խորհրդանիշը Մխիթարի մարեմասիրութեան, միւս կողմէ, Հիմնադրին պաշտօնական փաստանիշն իր պատկանելիութեան Աստուածածնին, եւ այլ կողմէ, Աբբահօր հովուական դրսեւորումն իր առաքելագործ մարեմականութեան:

Վեցերորդ՝ Մխիթար Աբբահօր մարեմախանդ սէրն ու սեպհականութիւնը չկրցաւ եղծանել մահն իսկ իր «խայթոց»-ով: 27 Ապրիլ 1749-ին վախճանած Հիմնադրին վանական վարդարանին հատիկները գտնուեցան «Աստուծոյ Ծառայ»-ին դագաղին մէջ՝ բացուած 4 Դեկտեմբեր 1899-ին:

Դեռ աւելի չերկարելու համար՝ ժամանակին ընդմէջէն կատարենք հոգեմտաւոր ոստում մը եւ դիտենք լուսապայծառ դէմքն անոր, որուն անունին ձօնագրուած է այս կենդրոնը: Ան, Ծիրանաւոր Աղաճանեան Կաթողիկոս-Պատրիարքը (1895-1971), որ Մխիթարեան Միաբանութեան սրբաշնորհ Հիմնադրին հետեւողը եւ հիացողն ըլլալով՝ մէկ կողմէ, հայկական ինքնութեան անգերազանցելի ջատագովն էր, միւս կողմէ, հայ կաթողիկէ պատկանելիութեան անպարտելի քաջամարտիկն էր, եւ, այլ կողմէ, հայադրոշմ մարեմականութեան քարոզիչն էր:

Աղաճանեան Հոգեւոր Տէրը Ֆաթիմա այցելած է, ինչպէս կ'իմանանք Պէյրութ, 1 Յունուար 1955-ին տուած խրատէն. «Մենք ալ, Ֆաթիմայի Տիրամօր աշխարհածանօթ սրբավայրին մէջ, աղօթեցինք ձեզի, ձեր հոգեկան ու նիւթական երջանկութեան համար»:

Աղաճանեան Հոգեւոր Տէրը, Ֆաթիմայի Տիրամօր խնդրանքին ընդառաջելով՝ Կիրակի, 31 Մայիս 1953-ին, Զմմառի մէջ, կատարեց մեր Եկեղեցիին, Ազգին եւ Հայրենիքին նուիրումը Մարիամի Անարատ Սրտին:

Աղաճանեան Հոգեւոր Տէրը, որ կ'ընդունի մարեմեան երեւումները եւ անոնց բերած «աւետարանական պատգամները», անոնց գլխաւորները կը նկարագրէ պարզ բառերով ու վարդարանին նշանակութիւնը բացայայտելով. «Լուրտի քարայրին մէջ երեւցաւ ամենասուրբ Կոյսը, վարդարան ի ձեռին, հրաւիրելով... Բեռնատէթը, եւ յանձին անոր՝ բոլոր հաւատացեալները, հաւատարիմ ըլլալու այս հրահանգին»:

«Նոյնպէս, վարդարան ի ձեռին, երեւցաւ երեք անմեղունակ մանուկներուն ի Ֆաթիմա, ուր յայտնապէս ալ ըսաւ, թէ Ինքն էր Թագուհի վարդարանի, հրամայեց կրկին ու կրկին, որ այս ջերմեռանդութիւնը հաւատարմօրէն կատարուի, ամենուրեք կատարուի»:

Այո՛, Աղաճանեան Հոգեւոր Տէրը, որ իր կեանքին մէջ ամէն օր կ'աղօթէր վարդարանը, լաւագոյնս գիտէր, թէ Տիրամօր երեւումներուն եւ ուխտատեղիներուն շնորհիւ՝ արդէն ժողովրդական դարձած վարդարանն աւելի տարածուեցաւ ու սիրուեցաւ:

Այս համոզումէն թելադրուելով՝ ճիշդ կ'ըսէր, թէ մարեմեան բոլոր աղօթքներուն եւ ջերմեռանդութիւններուն մէջ «ի պատիւ Ս. Աստուածամօր, առաջին տեղը, անտարակոյս, կը գրաւէ Ս. Վարդարանը, որ ունի իր ետեւը ... դարերու պատմութիւնը փառազարդուած սրբութեամբ, անհամար շնորհքներով, հրաշքներով եւ Ս. Եկեղեցւոյ թշնամիներու դէմ տարուած յաղթանակներով»:

Վարդարանին առաջնահերթութիւնը, դարաւոր տեւողութիւնը, բարձրութիւնը, հզօրութիւնն ու յաղթութիւնը կը տեսնէր Աղաճանեան Հոգեւոր Տէրը վարդարանին աղօթքներուն եւ խորհուրդներուն գեղեցկութեան ու լաւագոյն կատարումին մէջ:

Լսե՛նք մարեմասէր եւ վարդարանասաց աղօթողին համոզումները, որոնք թէեւ գրուած են 2 Փետրուար 1954-ին, բայց եւ այնպէս տակաւին այժմէական, ճշմարտապատում ու առինքնող. «Ամէն մէկ Հայր Մեր, ամէն մէկ Ողջոյն Քեզ՝ սիրոյ, երախտագիտութեան բաբախում է սրտի՝ ուղղուած առ Աստուած եւ Աստուածամայրը:

Թող ուշադրութեամբ, ամփոփումով, խորհուրդներու մտածութեամբ ըսուի Ս. Վարդարանը եւ ահա, ան կը դառնայ ներգործութիւն հաւատքի, յուսոյ, սիրոյ, համակամութեան, արիութեան»:

Մտիկ ընե՛նք մեր սրբակեաց Ծիրանաւոր Կաթողիկոս Պատրիարքին ու գործադրե՛նք թելադրանքները ի նպաստ մեր «հոգեկան եւ նիւթական երջանկութեան», քանի ի վերջոյ, «վարդարանը

երգ մըն է սիրոյ, փառաբանութեան համերգ մըն է, որ սուրբ ըլլայ Աստուծոյ անունը, հասնի Անոր թագաւորութիւնը» Տիրամօր գործակցութեամբ եւ վարդարանասացներուն աղօթքով (*Այնճար, 28 Մայիս 2019*):

«Ս. Վարդարանը՝ կտակը մեր նահատակներուն»

Այս վերտառութեամբ՝ Այնճար, 16 Մայիս 2003-ին խօսած մայիսեան քարոզս կը փափաքիմ մէջբերել, որով կ'ուզեմ ձեզի պատմել մարեմասէր Աղաճանեան Հոգեւոր Տիրոջ վարդարանասիրութեան մասին:

Մեր Ծիրանաւորին համար՝ վարդարանը տիեզերական եւ ընդհանրական աղօթքն է, որ կ'ըսուի աշխարհի ամէն կողմ, ամէն երկիր եւ ամէն լեզուով:

Ի պաշտօնէ՝ արար աշխարհ գացած եւ ճամբորդած Աղաճանեան Կարտինալը տեսած է, ապրած է եւ զմայլած է, թէ վարդարանը ի՛նչպիսի ջերմեռանդութեամբ, ի՛նչպիսի տարողութեամբ եւ ի՛նչպիսի ընդհանրականութեամբ գրաւած է հարազատ յիսուսականներուն սրտերն ու մտքերը:

Եւ բնական էր, որ իր վարդարանեան ապրումներն ու փորձառութիւնները Աղաճանեան Հոգեւոր Տէրը փոխանցէր իր Եկեղեցիին զաւակներուն:

Ստուգիւ, օրինակով, խօսքով եւ գործով՝ Հոգեւոր Տէրը փաստեց իր անհուն սէրը վարդարանին հանդէպ, քանի նոյն սիրով Տիրամօր նկատմամբ համակուած էր:

Եւ այս անշէջ սէրը ապացուցուց եւ բացայայտեց Այնճարի մեր այս եկեղեցիին անուանադրութեամբ ու շինութեամբ:

Գիտնալու էք նախ եւ առաջ, թէ այս ժողովրդապետութեան պաշտօնական անունն է «Ս. Վարդարանի Տիրամայր», եւ այն՝ առաջին տարիէն արդէն, ինչպէս կրնանք կարդալ «Պսակելոց Տոմար»-ին մէջ (26 Դեկտեմբեր 1939):

Երկրորդ՝ Հոգեւոր Տէրը, որ մեր ժողովրդապետութեան անունն որոշած եւ դրած էր «Ս. Վարդարանի Տիրամայր», վերահաստատեց այս անուանակոչումը, երբ 25 Օգոստոս 1952-ին սկսան այս եկեղեցիին շինութեան աշխատանքները:

Ապա, Աղաճանեան Հոգեւոր Տէրը, որ Ժունիի նախկին զմմառեան ընծայարանին աղօթարանը նուիրած էր «Աստուածամօր Անարատ Սրտին» եւ Զահլէի մեր ժողովրդա-պետական եկեղեցին ձօնագրած էր «Ֆաթիմայի Տիրամայր», Այնճարի նորակերտ տաճարին աւագ խորանին վերեւ սկիզբը կախել տուաւ Պոմպէի «Վարդարանի Տիրամայր» հրաշագործ սրբանկարը, ապա Երուսաղէմի մէջ պատրաստուած «22-3-1956» թուակիր շնորհագեղ իւղանկարը մեր «Ս. Վարդարանի Տիրամայր»-ին:

Մարեմեան այս տաճարին մէջ եւ Վարդարանի Թագուհիին ներկայութեամբ՝ լուսահոգի Աղաճանեան Հոգեւոր Տիրոջ խօսքերն ու թելադրանքները լսե՛նք եւ գործադրե՛նք:

Ս. Վարդարանը այն աղօթքն է, որ բարիքներ կը բաժնէ եւ շնորհքներ կը սփռէ բոլոր անոնց, որոնք զայն կ'ըսեն:

«Սէրը Ս. Վարդարանի, կտակը մեր Հայրերուն», կը սահմանէ Ծիրանաւոր Հոգեւոր Տէրը: Ի՞նչու...:

Որովհետեւ 1911-ին գումարուած մեր Ազգային Սինհոդոսին Հայրերը շեշտելով Աստուածամօր ջերմեռանդութիւնը՝ յանձնարարեցին իրենց ժողովուրդին աղօթել Ս. Վարդարանը:

Դեռ աւելի, անոնք յորդորեցին իրենց հաւատացեալները, որ վարդարանը կրեն «իրենց վրայ, գործածեն զայն յաճախակի եւ պիտի տեսնեն անտարակոյս անոր ազդեցութեամբ ամէն տեսակ շնորհքներու ստացումը» (Կանոն 827):

Այդ Սինհոդոսական Հայրերէն քանիներ նահատակուեցան 1915-ի Հայոց Ցեղասպանութեան ամիսներուն: Անոնք՝ «ի սէր Քրիստոսի եւ իրենց աստուածապաշտ Ազգին» վկայեալ մարտիրոսները «իբր կտակ ձգած են գալիք սերունդներուն՝ սէրը Ս. Վարդարանին»:

Ապրիլեան մեր նահատակներէն մին էր Երանելի Իգնատիոս Արքեպիսկոպոս Մալոյեան, որ ամէն օր կ'աղօթէր վարդարանը, իսկ արգելափակուելէ յետոյ, իր բանտակիցներուն հետ կ'ըսէր վարդարանը, ինչպէս կը տեղեկագրէ անոնց այցելութեան գացած օտարազգի կրօնաւոր մը, որ հիացած էր բանտարկեալներուն ջերմ մարեմասիրութեան եւ աղօթասէր քաջութեան վրայ:

Այո՛, մեր նախնիքներէն ու նահատակներէն մեզի ձգուած կտակը՝ վարդարանեան ջերմեռանդութիւնը ժառանգե՛նք ու յարգե՛նք:

Եւ հիմա լսե՛նք Աղաճանեան Հոգեւոր Տիրոջ յորդորն ու խնդրանքը. «Մերինը կ'ընենք նահատակ մեր այս Հայրապետներուն կտակը եւ ամենաջերմ կերպով կը յորդորենք մեր բոլոր զաւակները, ամէնքը եւ իւրաքանչիւրը, կրելու եւ

գործածելու սիրոյ այս ոսկեղէն Պսակը, որ կը զօդէ զմեզ մեր ամենասուրբ Մօր հետ»:

Անկասկած, երանաշնորհ Կաթողիկոս-Պատրիարքին սրտաբուխ խրատը գործադրեցի՛ն եւ կը գործադրեն շատ շատեր: Անոնցմէ էր անուս հայրս, որ աւելի թրքախօս, գիտակցապէս հպարտ էր իր հայ ինքնութեամբ ու հայկական ապրումով, եւ ասոր համար կը յարգուէր լիբանանեան ու արաբական շրջանակներէն:

Ատանածին հայրս նաեւ գոհունակութեամբ ու հպարտանքով լեցուն էր խորապէս իր հայ կաթողիկէութեամբ կամ կաթողիկէ հայութեամբ, զոր կը փաստէր վարդարանն աղօթելով:

Նոյնպէս մայրս, մօր կողմէն հայ կաթողիկէ, ամէն օր կ'աղօթէր վարդարանը եւ ասով կը խօսակցէր իր Քրոջ՝ Մարիամ Ս. Կոյսին հետ:

Հոս յստակ կերպով կը ներկայացնեմ սրբաշնորհ Հոգեւոր Տիրոջ գործնական չորս թելադրանքները:

ա) Ամէն մէկը վարդարանը կրէ վրայ կամ ունենայ գրպանին մէջ:

բ) Ամէն մէկը աղօթէ վարդարանը ամէն օր, եթէ ոչ ամբողջը, բայց «գոնէ մէկ երրորդը»:

գ) Բոլորը միասին, ընտանիքով, աղօթեն ամէն օր Ս. Վարդարանը:

դ) Ընտանիքին մէջ ըսուած վարդարանով՝ անդամ-անդամուհիները կ'աղօթեն իրարու համար, բայց նաեւ ննջեցեալներուն, մերձեւորներուն եւ հեռաւորներուն համար:

Ես պիտի աւելցնեմ, ընտանիքին մէջ ըսուած վարդարանով՝ բոլորս կ'աղօթենք մասնաւորապէս Հոգեւոր Կոչումներուն համար:

Այս թելադրանքներուն գործադրումին դիմաց՝ Հոգեւոր Տէրը կը բացականչէ. «Ի՜նչ սքանչելի տեսարան, երեկոյին երբ ընտանիքին բոլոր անդամները տուն վերադարձած են իրենց գործերէն, տեսնել ամէնքը հաւաքուած Ս. Տիրամօր պատկերի մը առջեւ, թերեւս յիշատակ նախնեաց, պատուելու Ս. Վարդարանով Ամենասուրբ Կոյսը, որ քրիստոնեայ ընտանիքներու իսկական Մայրն է ու Թագուհին»:

Քոյրերս-Եղբայրներս, այսպիսի տուներ կը դառնան եկեղեցիներ: Այսպիսի տուներու մէջ առաքինութիւններ կը ծաղկին:

Այսպիսի տուներու մէջ խաղաղութիւնն եւ ուրախութիւնը կը տիրեն:

Այսպիսի տուներու մէջ յարգանքն ու սէրը կ'իշխեն:

Այսպիսի տուներու մէջ համերաշխութիւնն ու հասկացողութիւնը կը խօսին:

Այսպիսի տուներէն կ'ելլեն վարդապետներ ու մայրապետներ, ինչպէս ալ աստուածահաւատ կուսակցականներ, հարազատ ազգասէրներ եւ անխարդախ հայրենասէրներ...:

Այսպիսի տուներ կան, զորոնք կը ճանչնամ:

Ա՛յս տուները դարձուցէ՛ք ձեր ընտանիքները:

Ա՛յս է իմ սրտաբուխ աղօթքս Սիրամօր, որ Ս. Վարդարանին Թագուհին է, ինչպէս Ինքզինքը յայտնապէս ներկայացուց 13 Հոկտեմբեր 1917-ին, Ֆաթիմայի մէջ, եւ այն՝ յաւերժութեան տեւողութեամբ, որմէ թանխանձօրէն կը հայցեմ. «Բարեխօսէ՛ եւ աղօթէ՛ մեզի համար»: Ամէն:

- Շնորհակալութի՛ւն:

Հայաստան, Գիւմրի,
Թորոսգիւղ, 22 Յուլիս 2019
Մեսրոպ Հայունի

ԱՐԵՒԻԿ, ԱՋԱՏԱՆ, ԼԱՆՋԻԿ ԵՒ ՁԻԹՀԱՆՔՈՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ, ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒ ԱՐԺ. ՏԷՐ ՆԱՐԵԿ ՔՀՆՅ. ԹԱԴԵՒՈՍԵԱՆԻ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ «ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐ ԴԵՐԸ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԵԱՆՔՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ

Անտիգուայի Սուրբ Կոյս Մարիամը

Անտիգուայի Սուրբ Կոյս Մարիամը Պանամայի հովանաւոր սուրբն է: Սուրբ Կոյսի տօնը նշւում է իւրաքանչիւր տարի՝ յունուար ամսի երրորդ կիրակի օրը: 2019թ.-ին տօնը նշուեց յունուարի 20-ին՝ Պանամայում Երիտասարդաց Համաշխարհային Օրերի մեկնարկից ընդամէնը երկու օր առաջ:

13-րդ դարում, երբ Կաստիլիայի թագաւոր Ֆերդինանդ III-ը, ում նաեւ անուանել են սուրբ, Գրանադայի թագաւորութեան օգնութեամբ 1248թ.-ին ետ նուաճեց Սեւիլեան, մի որմնանկար յայտնուեց այդ քաղաքի մզկիթում, որը յետագայում վերածուեց քրիստոնէական տաճարի (որմնանկարը տեղակայուած է ներկայիս Սեւիլեայի տաճարի աջակողմեան միջանցքում):

Լեգենդի համաձայն, մի գիշեր՝ Սեւիլեայի պաշարման ժամանակ, Կաստիլիայի թագաւոր Ֆերդինանդ III-ը, ով ճամբարում էր, ծնկի է գալիս եւ սկսում աղօթել՝ հայցելով Ռեյեսի Սուրբ Կոյսի օգնութիւնը: Ապա լսում է Սուրբ Կոյսի ձայնը, ով ասում է. «Քեզ մշտապէս պաշտպանում է Սեւիլեայում գտնուող այն հին որմնանկարը, որ իմ պատկերն է կրում եւ, որը երկար ժամանակ է, ինչ ուզում ես ստանալ: Այն քեզ յաղթանակ կը պարգեւի»: Այնուհետեւ մի հրեշտակ նրան ուղղորդում է դէպի քաղաքի գլխաւոր մզկիթ, որտեղ թագաւորին երեւում է թաքցուած պատը, որ հայելու նման թափանցիկ է դառնում, ու Ֆերդինանդ III-ը կարողանում է տեսնել Սուրբ Կոյսին այնպիսին, ինչպիսին նրան պատկերել էին դարեր առաջ:

Ապա նոյն հրեշտակը թագաւորին վերստին ուղեկցում է ճամբար, ուր վերջինս հասնում է առանց որեւէ կասկած յարուցելու եւ լիովին անվնաս:

Քաղաքի յանձնումից օրեր անց՝ 1248թ.-ի նոյեմբերի 23-ին, Կաստիլիայի թագաւոր Ֆերդինանդ III-ը Սուրբ Կղեմէսի (San Clemente) տօնի օրը գրաւեց Սեւիլեան:

Ասում են, որ աւանդոյթի համաձայն, 1519թ.-ին՝ Մագելլանի արշաւանքից առաջ, եւս աղօթք է բարձրացուել Սուրբ Կոյսին: Խուան Սեբաստիան Էլկանոյի գլխաւորած շուրջերկրեայ արշաւանքն աւարտուեց 1522թ.-ին: Էլկանոն վերադառնալով Սեւիլեա, ողջ մնացած զինուորների հետ միասին կրկին աղօթքի կանգնեց Սուրբ Կոյսի առջեւ:

ՊՈԼՍՈՅ ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՈՍԿԵԲԵՐԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԳԵՐՅ. ՀԱՅՐ ՎԱՐԴԱՆ Ծ. ՎՐԴ. ԳԱՋԱՆՃԵԱՆԻ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Սիրելի՛ երիտասարդներ, ինչպէս գիտէք, անցեալ տարի՝ 2018 թ., Հռոմում երիտասարդների համար Սինհոդոս գումարուեց: Ձեզանից որեւէ մէկը այդ մասին կարդացե՞լ է կամ ինտերնետում փնտռել, հետաքրքրուե՞լ է, թէ ինչ է խօսուել այնտեղ:

Ես հետաքրքրուեցի եւ տեսայ, թէ այդ Սինհոդոսը, որը նուիրուած էր երիտասարդներին, ունեցաւ երկու վաւերաթուղթ:

Առաջինը՝ անմիջական վաւերաթուղթն էր, որից դուրս եկաւ Սինհոդոսի ընդհանուր արդիւնքները եւ որտեղ խօսւում է կոչումների, ինչպէս նաեւ երիտասարդների մասին:

Երկրորդ վաւերաթուղթը, որը հրատարակուեց մի քանի ամիս յետոյ, եւ Քահանայապետն՝ ինքը ստորագրեց այդ վաւերաթուղթը, հովուական մէկ յորդոր է իր մէջ ներառում եւ մի պատգամ՝ ուղղուած երիտասարդներին:

Հիմա ես Ձեզ համար կը կարդամ այդ վաւերաթղթի հարիւր քառասուներեքերորդ կէտը, որը անչափ հետաքրքիր է:

Խօսքում ասւում է. «Երիտասարդնե՛ր, դո՛ւք ձեր երիտասարդութիւնից մի՛ հեռացէք», այսինքն՝ մի անտեսէք եւ լքէք ձեր երիտասարդութիւնը:

Քահանայապետն ասում է. «Ձեր կեանքը պատշգամբից մի՛ դիտէք, հասկացէք երջանկութեան եւ անկողնու վրայ հանգիստ անելու միջեւ եղած տարբերութիւնը: Ձեր ժամանակը էկրանի առջեւ մի՛ վատնէք: Տարիներով արեւի տակ մնացած ինքնաշարժի մի՛ նմանուէք, որի անիւներն արդէն իջել են, եւ փոշու տակ է մնացել, եւ կարծես թէ ինչ-որ մէկը մոռացել է այն»:

Քահանայապետի յաջորդ խօսքն է. «Արկածախնդրութեան մէջ մտէք, նոյնիսկ եթէ անգամ սխալուէք»: Այսինքն, եթէ ես հայ կաթողիկէ երիտասարդ եմ, Քահանայապետը նաեւ ինձ ասում է՝ եթէ նոյնիսկ սխալուէք, ապա չպէտք է աւտոպարկի մէջ մտնէք ու վերջ: Նոյնիսկ եթէ պիտի սխալուէք, ապա չպիտի լինի, որ ինչպէս անիւները պայթած ինքնաշարժի մը նմանէք: Եթէ անգամ պիտի սխալուէք, ձեր կեանքը պէտք է շարունակէք ապրել եւ խաղաք ձեր կեանքը աշխարհում:

Սիրելի՛ քոյրեր եւ եղբայրներ, եթէ ես հիմա այս բարձրախօսի առջեւ մեր կազմակերպած այս ձեռնարկին իմ ձայնս եմ լսեցնելու ձեզ, մտածէք այս խանդավառութեան մասին, որ ես ունեմ իմ մէջ, եւ դուք էլ ձեր մասը արէք: Պայման չէ, որ քրիստոնեայ մեծ քարոզիչներ լինէք, որպէսզի ձեր սիրելի Եկեղեցին յառաջ տանիք: Եթէ դուք ձեր մտքինը դուրս չհանէք, ապա դուք կը լինէք վանդակների մէջ պահուած, այսինքն՝ երիտասարդներ, որոնք երիտասարդութեան մէջ տեղ չունեն, եւ նրանք փոշու տակ, աւտոկանգառների մէջ, անկողինների վրայ եւ պաստառների դիմաց մումիֆիկացած երիտասարդներ կը դառնան, ովքեր կարող չեն եկեղեցին առաջ տանելու:

Քահանայապետը իր պարբերութիւնը եզրափակում է հետեւեալ խօսքերով. «Ձեր կեանքի համար լաւագոյնը տուէք, ապրեցէ՛ք եւ մի՛ վախեցէք ապրելուց»:

«Դռները բացէ՛ք սիրելի՛ երիտասարդներ»: Այս խօսքերը ինձ յիշեցնում են երիտասարդների շատ մօտ ու սիրելի Յովհաննէս Պօղոս Երկրորդ Պապը՝ Սուրբ Քահանայապետը:

Նա ասում էր. «Դռները բացէ՛ք»: Սակայն ի՞նչ է նշանակում «դռները բացէ՛ք»: Առաջինը, որ նշանակում է, այն է, որ դռները փակ մի՛ պահէք, այսինքն՝ ոչ միայն ենթադրաբար մեր սրտի, մտքի, հոգու, այլ ամենապարզը՝ սենեակի դռները փակ մի պահէ՛ք: Սա նշանակում է աւտոկանգառից դուրս գալ: Դուռը մի խորհրդանշան է, եւ եթէ մտածենք՝ ո՞վ է դուռը, ապա կը հասկանանք, որ Դուռը Յիսուս Քրիստոսն է:

Եւ եթէ ես իմ սենեակի դուռը բաց թողեցի, ապա ես Յիսուս Քրիստոսին առջեւ եւ նրա համար բաց թողեցի:

Եթէ ես հաւատացեալ եմ, թէկուզ քիչ հաւատացեալ եմ, կամ եթէ ես ընդհանրապէս հաւատացեալ չեմ, ապա ես հիմա ասում եմ ռոմանտիկ ձեւով սրտիդ դռները, կամ աւելի տրամաբանական ձեւով, մտքիդ դռները բացի՛ր:

Գիտէ՞ք արդեօք՝ Աստուած մեզ ամենամեծ շնորհը ինչ է տուել, վստահ, հիմա կ՚ասենք կեանքը, բայց այն մի՛տքն է, եւ եթէ միտքը չունենանք, ապա մենք մեր այս կեանքը աւտոկանգառի մէջ պայթած անիւներով մի ինքնաշարժի կը նմանենք:

Ինքը՝ միտքը, արդէն Աստուծոյ մէկ խորհրդանիշն է մեր մէջ: Պատկերացրէք՝ ինչեր կարող ենք մենք մտածել եւ երեւակայեցէք՝ ինչեր կարող ենք սովորել: Եւ գիտութիւնն էլ ասում է, որ մենք մեր մտքի մի դոյզն տոկոսն ենք օգտագործում: Ոմանք իրենց միտքը դրել են մի սենեակի մէջ, դուռը փակել են, եւ էկրանի առջեւ կամ փոշու տակ են եւ մտածում են՝ իրենց ի՞նչ պէտք է միտքը: Սրանք փոշիներն են, որոնք կը գան եւ մեզ մումիֆիկացեայի կը տանեն: Եւ, այսինքն՝ եթէ միլիոններ տարիներ յետոյ մումեայ տեսնենք, ինչպէս օրինակ Վենետիկ՝ Սուրբ Ղազար կղզում կայ, այդ մումեան ինձ համար խորհրդանշան չէ, ոչ մի բան չի ներշնչում, ոչ մի բան չի ասում: Յովհաննէս Պօղոս Երկրորդ Սուրբ Քահանայապետն ասաց. «Դռները բացէ՛ք», իսկ Ֆրանցիսկոս Քահանայապետը աւելացրեց. «Վանդակի դռները բացէք»:

Եկէ՛ք մտածենք՝ չի՞ եղել արդեօք մի օր, որ մենք մեզ վանդակի մէջ զգացած լինենք: Թող ինչ-որ մէկը քաջութիւն ունենայ հէնց հիմա ու ասի անկեղծ: Այս վանդակը կարող է լինել ընկերային կամ էլ քաղաքական: Դուք երեւակայեցէք, որ վանդակն էլ կարող է խորհրդանիշ լինել:

Եւ Քահանայապետը մեզ ասում է, որ եթէ չշարժուէք եւ եթէ փոշիի տակ մնաք, ապա վանդակից դուրս գալ չէք կարողանայ: Սա խրատ չէ, պարզապէս Քահանայապետը իր կարծիքն է յայտնում, իր փափաքն է արտայայտում: Դա առաջարկ է ամէն մի երիտասարդին:

Քահանայապետն ասում է՝ ոչ միայն վանդակի դռները բացէք, այլ նաեւ դուրս թռչէք վանդակից: Քահանայապետը չի ասում ուր, այլ ասում է՝ պարզապէս դո՛ւրս թռչիր:

Սիրելի՛ երիտասարդներ, 2019 թ. համարւում է շարժման տարի: Եթէ մենք մեզ անդրադառնանք, ապա մենք նոյնպէս շարժումի սերունդ կարող ենք լինել:

Սրբազան Քահանայապետը ասում է. «Ժամանակից առաջ թոշակի մի անցէ՛ք»:

Յաճախ ամէն մէկիս համար ժամանակը մի բան է նշանակում, բայց կայ հիմնական քրիստոնէական ժամանակի տեսութիւնը: Այսինքն՝ քրիստոնեայի համար ի՞նչ է ժամանակի տեսութիւնը: Շատերը կարծում են, թէ ժամանակը կամ պատմութիւնը կրկնւում է: Իսկ շատերը կարծում են, թէ այլ ժամանակներ կան ուրիշ մոլորակների վրայ:

Հիմա հաւատքի սկզբունքներով, հաւատքի հիման վրայ ստեղծագործ Արարիչ Աստուծոյ հաւատքի սկզբունքի դիմաց ժամանակը սկիզբ եւ հորիզոնական ընթացք ունի, ուր երբէք նոյնը չի կրկնում: Սա շատ կարեւոր է, եթէ խորհուրդները, քրիստոնէական կեանքն ու հաւատքը պիտի հասկանանք:

Սիրելի՛ երիտասարդներ, եթէ սա մենք սխալ ըմբռնենք ու հասկանանք, ապա երիտասարդութիւնից ի վեր սխալ ընթացքի մէջ ենք: Պէտք է սկսենք կասկածել, թէ արդեօ՞ք մենք երկրորդ անգամ կարող ենք ծնուել: Եթէ այդ է մենք կը սկսենք կասկածել, ապա արդէն շատ բաների վրայ կը սկսենք կասկածել:

Երբ մենք ծնւում ենք մեր հօրից ու մօրից, այդ վայրկեանից սկսած մեր ժամանակը սկսւում է: Աստուած ասում է. «Ժամանակը քեզ նուէր է», յետոյ աւելի կարեւոր բան է աւելացնում. «Այդ ժամանակը անվերջ է, հաւատա՛»: Սա ամէնից դժուար կէտերից մէկն է: Սա չպիտի վերջանայ: Մեր էութեան գեղեցկութիւնը հէնց սա է:

Եկէ՛ք ուրեմն, սիրելի՛ երիտասարդներ, Սրբազան Քահանայապետի խօսքերը մեզ որպէս ուղեցոյց առնենք եւ շարժենք մեր եկեղեցիներուն մէջ՝ դարձնելու համար եկեղեցին, մեր ընտանիքները եւ մեր բարեկամական միջավայրերը կենդանի եւ աշխոյժ վայրեր, ուր կարող ենք ստեղծագործելով նախ մեզ համար լսել Աստուծոյ խօսքը եւ ի գործ դնել, ապա նաեւ մեր շրջանակին համար:

ՄԵԾ ՍԵՊԱՍԱՐ, ԲԱՒՐԱ, ՂԱՋԱՆՉԻ ԵՒ ՍԻՋԱՒԷՏ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԱՐԺ. ՏԷՐ ՅՈՎՍԷՓ ՔՀՆՅ. ԳԱԼՍՏԵԱՆԻ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ «Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ՊԱՏԿԱՆԵԼ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑՈՒՆ» ԹԵՄԱՅՈՎ

Սիրելի՛ երիտասարդներ, «պատկանելիութիւն, ինքնութիւն, վկայութիւն» թեմատիկ շարքի մէջ, որոնց նուիրուած է նաեւ մեր այս երրորդ երիտասարդական հանդիպումը, ուզում եմ անդրադառնալ մի շատ կարեւոր թեմայի, որը մեր՝ որպէս հայ կաթողիկէների, հոգեւոր եւ ազգային ինքնութեան առանցքային բաղադրիչն է. ի՞նչ է նշանակում պատկանել Կաթողիկէ Եկեղեցուն: Կաթողիկէ հայ քրիստոնեայ լինելը մեզ համար չի նշանակում պարզապէս տարբերիչ մի անուն կրել կամ *պարզապէս* ընդունել Հռոմի Սրբազան Քահանայապետի գլխաւորութիւնը, այսինքն՝ սա զուտ վարչական ենթակայութեան հարց չէ, եւ առաւել եւս՝ *ոչ* զատուելու կամ զատելու հարց: Քաւ լիցի, որովհետեւ լինել կաթողիկէ՝ նշանակում է.

1. *մշտապէս ձգտել միութեան՝ հաւատարմօրէն հետեւելով Տէր Յիսուս Քրիստոսի՝ մէկ, անբաժանելի Եկեղեցի ունենալու սկզբունքին եւ*
2. *լինել բաց եւ ընդունող Տիրոջ բոլոր զաւակների, մեր բոլոր եղբայրների ու քոյրերի հանդէպ:*

Որպէս բացատրութիւն, սկսենք նախ քննել, թէ ինչ է Եկեղեցին, եւ ինչ է նշանակում, թէ Եկեղեցին մէկ է եւ կաթողիկէ:

Ի՞նչ է եկեղեցին

Եկեղեցին, իրականում, քարէ տաճարները չեն, մատուռները չեն, որոնց մենք սովոր ենք «եկեղեցի» անուանել. դրանք կոչւում են «եկեղեցիներ»՝ մեր ուշադրութիւնը հրաւիրելու ճշմարիտ Եկեղեցու խորհրդի վրայ, մեզ յիշեցնելու, որ մենք բոլորս եւ ամբողջ մարդկութիւնը Աստծոյ կողմից հրաւիրուած ենք կազմելու եւ լինելու այն ճշմարիտ *Եկեղեցին*, որը Տէր Յիսուս Քրիստոսին հաւատացողների միութիւնն է կամ հաւաքականութիւնը՝ յուն.՝ ἐκκλησία, ecclesia: Ուրեմն, յիշե՛նք այս ճշմարտութիւնը. Եկեղեցին Քրիստոսին հաւատացողների խումբն է, ովքեր կազմում են անբաժանելի, խորհրդաւոր միութիւն՝ հիմնուած առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս հաւատքի եւ Նրա հետ միութեան վրայ:

Բայց Եկեղեցին՝ որպէս Աստծուն հաւատացողների համախումբ, Աստծոյ ընտանիք, գոյութիւն ուներ դեռեւս աշխարհի արարչագործութեան սկզբից, աստուածային նախախնամութեան մէջ[1], Աստծոյ յաւիտենական ծրագրում՝ որպէս մարդկանց համար հնարաւորութիւն՝ Աստծոյ հետ մտերմութեան, որդիական յարաբերութեան: Եկեղեցին Աստծոյ հրաւէրն է մարդկութեանը՝ Իր հետ միութեան, իր աստուածային կեանքի մէջ ապրելու, կիսելու Իր յաւիտենական երջանկութիւնն ու սրբութիւնը: Ադամի եւ Եւայի մեղսագործութիւնից յետոյ, երբ մարդկութիւնը իր փառասիրութեան, հպարտութեան պատճառով ինքն իրեն հեռացրեց Աստծոյ հետ մտերմութիւնից եւ Եդեմի պարտէզից վտարուեց դէպի անապատ, Աստուած չլքեց մարդկութեանը, այլ պահեց իր անսահման հայրական սիրոյ եւ գուրգուրանքի մէջ. իր մարգարէների միջոցով հրաւիրում էր

[1] Տէ՛ս՝ Քրիստոնէական Կաթողիկէ Եկեղեցւոյ, 759

վերականգնել Իր հետ կորսուած մտերմութիւնը, վերադառնալ Իր ընտանիքը, Իր հայրական գիրկը: Հրեաները ընտրուեցին Աստծոյ կողմից, որպէսզի առաջինը վերադառնան Աստծոյ ընտանիք եւ ապա լինեն միջոց՝ միւս ժողովուրդներին եւս հրաւիրելու Աստծոյ ընտանիքի մէջ: Աստուած հրեաների հետ մի քանի անգամ ուխտ կնքեց, որպէսզի հրեաները պարտաւորուած զգային հաւատարիմ մնալու Տիրոջը: Բայց չնայեած Աստծոյ ողորմածութեան բազում արտայայտութիւններին, հրեայ ժողովուրդը դարերի ընթացքում բազմիցս դաւաճանեց Աստծուն. մարգարէները դատապարտում էին իրենց ժողովրդի պահուածքը եւ դա համարում շնութիւն, իսկ հրեաները լռեցնում էին նրանց՝ սպաննելով ու հալածելով: Ի վերջո, ժամանակների լրումին Աստուած ուղարկեց իր միածին Որդուն, որպէսզի Նա ի մի հաւաքի Իր ցրուած ժողովրդին՝ նոր ուխտ կնքելով նրանց հետ՝ Իր կեանքի գնով, Իր Սուրբ Արիւնով, որ հեղեց խաչի վրայ՝ իւրաքանչիւր մարդ արարածի փրկութեան եւ մեղքերի ներման համար: Աստծոյ Որդին՝ Յիսուս Քրիստոս, ի կատար ածեց Հայր Աստծոյ նախայաւիտենական ծրագիրը՝ հաստատելու Աստծոյ մտերիմների ընտանիքը կամ Աստծոյ արքայութիւնը, որի մասին քարոզում էր Յիսուս եւ դարձնում իրականութիւն: «Յիսուս քարոզում էր Աստծոյ Աւետարանը եւ ասում. «Ժամանակը հասել է, եւ մօտեցել է Աստծոյ արքայութիւնը, ապաշխարեցէ՛ք եւ հաւատացէ՛ք Աւետարանին»[1]: «Աստծոյ Արքայութիւնը մարդկանց առջեւ սկսում է շողշողալ Քրիստոսի խօսքի, գործերի եւ ներկայութեան մէջ»[2]: Աստծոյ Արքայութիւնն այն իրականութիւնն է, որն աւելի վսեմ է եւ սուրբ, քան ժամանակաւոր, մեղքով ծանրացած այս աշխարհի իրականութիւնը, դա մի իրականութիւն է, որտեղ Աստուած իշխում է բացարձակ կերպով, որտեղ մեղքը ամբողջովին պարտուած է, որտեղ մարդու համար կեանքի միակ առաջնորդը եւ տէրն Աստուած է, որտեղ մարդ, Աստծոյ շնորհով, այնքան զօրեղ է, որ միշտ յաղթում է չարին, միշտ յաղթում է աշխարհին՝ բնակուելով Աստծոյ ներկայութեան մէջ, զօրացած եւ քաջալերուած Աստծոյ ներկայութեամբ: Աստծուն հաւատացողների համար Աստծոյ Արքայութիւնը արդէն իսկ սկսում է իրականութիւն դառնալ կամ արդէ՛ն իսկ իրականութիւն է՝ դեռեւս անկատար, ոչ լիարժէք կերպով՝ Քրիստոսի Եկեղեցու մէջ: Ուրեմն, Եկեղեցին դէպի Աստծոյ Արքայութեան լիակատար հաստատում տանող մի ճանապարհ է, մի հնարաւորութիւն, որ ստեղծեց Տէր Յիսուս Քրիստոս: «Տէր Յիսուս Իր Եկեղեցին հիմնադրեց՝ քարոզելով Բարի Լուրը, այսինքն՝ Աստծոյ Արքայութեան գալուստը՝ դարեր ի վեր խոստացուած սուրբ գրերի մէջ»[3]:

Այսպիսով, Քրիստոսի հիմնած Եկեղեցին ունի յստակ առաքելութիւն՝ մարդկութեանը առաջնորդել դէպի փրկութիւն եւ Աստծոյ Արքայութեան լիակատար հաստատում, մինչեւ «ժամանակների կատարածը»: Եկեղեցին նման է նաւի, որը մարդկութեանը պէտք է տանի-հասցնի դէպի երանելի նաւահանգիստը, որ կոչւում է «Աստծոյ Արքայութիւն» կամ «Նոր Երկինք եւ Նոր Երկիր»: Նոյան տապանը, որ փրկեց Նոյին եւ նրա ընտանիքին, եղաւ Եկեղեցու նախատիպը:

Քրիստոս Իր Եկեղեցին հիմնեց տասներկու աշակերտների վրայ, ըստ Իսրայէլի տասներկու ցեղերի թուի: Նրանց առաջնային առաքելութիւնը եղաւ Տէր Յիսուս Քրիստոսին օգնելը, Նրա երկրային առաքելութիւնը կիսելը՝ ապաշխարութիւն քարոզելը, բուժումներ անելը, Աստծոյ Արքայութիւնը կառուցելը: Նրանց միացան եւս եօթանասուներկու աշակերտներ, ձեւաւորուեց մի փոքրիկ համայնք, մի ընտանիք, ովքեր հաւատացին Յիսուսին եւ նրա մէջ տեսան Կենդանի Աստծոյ Որդու ներկայութիւնը, ինչպէս առաջինը դա խոստովանեց Սիմոնը, որի համար էլ Յիսուսի կողմից կոչուեց «Պետրոս», որ նշանակում է վէմ: Երբ Յիսուս Իր աշակերտներին հարցրեց, թէ իրենք ինչ են մտածում Իր մասին՝ ո՞վ է ինքը, Սիմոն Պետրոսը պատասխանեց. «Դու ես Քրիստոսը՝ Կենդանի Աստծոյ Որդին»: Յիսուս պատասխանեց… «Երանի՜ է քեզ, Սիմո՛ն, Յովնանի որդի, որովհետեւ մարմինն եւ արիւնը չէ, որ յայտնեց քեզ, այլ՝ իմ Հայրը, որ Երկնքում է: Եւ ես քեզ ասում եմ, որ դու վէմ ես, եւ այդ վէմի վրայ պիտի շինեմ իմ Եկեղեցին, ու դժոխքի դռներն այն չպիտի յաղթահարեն»[4]:

Ուրեմն, Սիմոնի խոստովանութիւնը, որ հնարաւոր եղաւ միայն Աստծոյ շնորհի կամ յայտնութեան միջոցով, նրան դարձրեց Պետրոս՝ վէմ, որի վրայ շինուեց եւ շինւում է Տիրոջ Եկեղեցին, այսինքն՝ միայն Կենդանի Աստծոյ Որդու հանդէպ վէմի պէս ամուր հաւատքի վրայ է հիմնւում եւ կայանում Տիրոջ Եկեղեցին:

[1] Մրկ. 1, 15
[2] «Լոյս հեթանոսաց» (Lumen Gentium), 5
[3] Lumen Gentium, 5
[4] Մտթ. 16, 17-18

Հաւատքի այդ խոստովանութեան հիման վրայ Յիսուս կազմաւորեց իր հոգեւոր ընտանիքը, ստեղծեց նոր՝ հոգեւոր հարազատութիւն կամ արիւնակցութիւն, որի շաղախը Իր Արիւնն է, Իր հանդէպ հաւատքն է եւ Հայր Աստծոյ կամքը կատարելու պատրաստակամութիւնը: Երբ Յիսուսին մի անգամ ասացին, թէ նրա մայրը եւ եղբայրները եկել են իրեն տեսնելու, Նա, ցոյց տալով Իր աշակերտներին, ասաց. «Ահա՛ իմ մայրը եւ իմ եղբայրները, որովհետեւ ով կատարում է կամքը իմ Հօր, որ երկնքում է, նա՛ է ինձ եղբայր եւ քոյր եւ մայր»[1]:

Այս նոր ընտանիքի կամ Եկեղեցու հիմնադրումը Քրիստոս իր լրումին հասցրեց՝ Ինքն Իրեն ազատօրէն եւ ի սպառ ընծայաբերելով կամ զոհաբերելով՝ յանուն Իրեն հաւատացող մարդկութեան փրկութեան. «Սիրեց իւրայիններին, ի սպառ սիրեց նրանց»[2]: Քրիստոսի ի սպառ սիրոյ ամենակատարեալ արտայայտութիւնը եղաւ նախ Սուրբ Հաղորդութեան հաստատումը՝ խորհրդաւոր ընթրիքի սեղանի շուրջ, որը առաջին Սուրբ Պատարագն է, որ մատուցեց Ինքը Տէրը: Վերջին ընթրիքն Իր առաքելաների հետ իրականում առաջինն է այն բազում ընթրիքների, որոնք կատարւում են Սուրբ Պատարագի ժամանակ եւ որոնցից իւրաքանչիւրի ժամանակ Սուրբ Սեղանին Յիսուս Քրիստոս շարունակում է Ինքն Իրեն մատուցել՝ որպէս Զոհ՝ շատերի մեղքերի քաւութեան եւ թողութեան համար՝ Իր Մարմինն ու Արիւնը տալով մեզ որպէս կերակուր, ճիշտ ինչպէս տուեց աշակերտներին վերջին ընթրիքի ժամանակ: Տէր Յիսուս Քրիստոս կամեցաւ, որ Սուրբ Հաղորդութիւնը լինի Իր հետ այս երկրային կեանքում միանալու ամենավսեմ եւ խորհրդաւոր հնարաւորութիւնը, կամեցաւ, որ Սուրբ Հաղորդութիւնը լինի Խաչի վրայ Իր զոհաբերութիւնը մեզ համար *այսօր ներկայ դարձնելու*, այն վերապրելու եւ հասկանալու ամենակատարեալ հնարաւորութիւնը, որ Սուրբ Հաղորդութիւնը լինի ոչ միայն Իր հետ, այլեւ միմեանց հետ միանալու եւ Քրիստոսի հետ միասին մէկ անբաժանելի հոգեւոր մարմին դառնալու աստուածատուր, եզակի հնարաւորութիւն, շաղախ, Իր Արեամբ հաստատուած եւ սնուող հոգեւոր արիւնակցութիւն, որո՛վ միայն կարելի է կայացնել եւ ամրացնել Իր Սուրբ Եկեղեցին: Այլ խօսքով, միասնական Սուրբ Հաղորդութիւնն է՝ Քրիստոսի հաստատած մէկ անբաժանելի Եկեղեցու միութեան հիմքը եւ սկզբունքը:

Սուրբ Հաղորդութիւնը կամ Քրիստոսի ինքնանուիրումը, սպառումը՝ յանուն մարդկութեան փրկութեան, իր լրումին հասաւ Խաչի վրայ Իր մահով, որտեղից, ըստ էութեան, ծնունդ առաւ Իր Եկեղեցին. Նա եղաւ այն ցորենի հատիկը, որն իր կեանքը տալիս է, որպէսզի նոր ցորենի հասկ բուսնի, նոր կեանք լինի: Քրիստոս Իր մահով խաչին գամեց Իրեն հաւատացողների մեղքերի պարտամուրհակը, դարձաւ փրկագին՝ վճարուած մեր մեղքերի դիմաց, Աստծուց հեռացած մեղաւոր մարդկային բնութիւնը լիովին սրբեց այն ու դարձեալ ընծայեց Աստծուն՝ որպէս անուշահոտ մի նուէր, մեզ դարձեալ դարձրեց Աստծոյ մէկ ընտանիքի անդամներ: *«Եկեղեցու սկիզբն ու աճումը նշանաւորուած են այն արեամբ եւ ջրով, որ հոսեցին Խաչեալ Յիսուսի ծակուած կողից»*[3]*: «Ինչպէս Եւան արարուեց քնած Ադամի կողից, այնպէս էլ Եկեղեցին ծնուեց Քրիստոսի խոցուած սրտից, որ մեռաւ խաչի վրայ»* (Սբ. Ամբրոզիուս):

Ի՞նչ է նշանակում՝ եկեղեցին «կաթողիկէ» է եւ «մէկ» է

Քրիստոս Իր Եկեղեցին հիմնեց ոչ միայն իսրայէլացիների, այլեւ բոլոր ժողովուրդների համար: Աստուած ի սկզբանէ իսրայէլացիներին ընտրեց որպէս իր խօսքն աշխարհին փոխանցող ժողովուրդ՝ ոչ թէ նրանց ցեղային որակների, առանձնայատկութիւնների համար, այլ *Աբրահամի հաւատքի համար*, Աստծոյ ընտրութիւնը եւ ուխտը միշտ հիմնուած են հաւատքի եւ հաւատարմութեան վրայ: Փրկութեան լուրը համընդհանրական է, բոլոր ազգերի համար է, Եկեղեցին բոլոր ժողովուրդների փրկութեան եւ նրանց Քրիստոսի շուրջ համախմբելու համար է: Իր համբարձումից առաջ Յարուցեալ Քրիստոսն իր աշակերտներին պատուիրեց գնալ եւ մկրտել բոլոր ազգերին Սուրբ Երրորդութեան անունով եւ նրանց սովորեցնել պահել Իր բոլոր պատուիրանները (Տէ՛ս՝ Մտթ. 28, 19): Առաքեալները Հոգեգալստեան օրը, Սուրբ Հոգով լցուած, սկսեցին խօսել տարբեր ժողովուրդների լեզուներով, որպէսզի կարողանային քարոզել բոլոր ժողովուրդներին եւ վերականգնել ազգերի միասնութիւնը Եկեղեցու հովանու ներքոյ՝ Քրիստոսի առաջնորդութեամբ: Այդ պատճառով էլ Քրիստոսի հիմնած Եկեղեցին

[1] Մտթ. 12, 49-50
[2] Յվի. 13, 1
[3] LG, 3

կոչւում է «կաթողիկէ»՝ յունարէն καθόλου (katholou) «ընդհանուր, ընդհանուրի համար» բառից: Աստուած Քրիստոսի եւ Նրա Սուրբ Եկեղեցու միջոցով ամբողջ մարդկութեանը հրաւիրում է վերականգնել Իր հետ մտերմութիւնը, հոգեւոր հարազատութիւնը, վերականգնել մարդկային այն ճշմարիտ արժանապատուութիւնը, որը հիմնուած է Աստծոյ զաւակ լինելու անջնջելի փաստի վրայ, որը, սակայն, աղտոտուել է մարդային մեղքի եւ դաւաճանութեան, անտարբերութեան, անհաւատութեան պատճառով: Աստծո փրկութեան խոստումը ուղղուած է աշխարհի բոլոր ժողովուրդներին՝ հարգելով եւ սիրելով նրանց ազգային, մշակոյթային, գենային առանձնայատկութիւնները, բնորոշ գծերը: Հետեւաբար, Քրիստոսի Կաթողիկէ Եկեղեցին չի կարող լինել միայն մէկ ազգինը, այլ *վերազգային է*: Եկեղեցին կոչուած է բոլոր ազգերին միաւորելու իր մայրական գրկում, որովհետեւ բոլոր ազգերի հոգեւոր մայրն է: Պատահական չէ, որ Սուրբ Մարիամ Աստուածածինը կատարեալ Եկեղեցու կերպարն է՝ իր անարատութեամբ եւ Աստծոյ հաւատարիմ աղախինը լինելու փաստով: Մարիամն իր հնազանդութեամբ ծնեց Յիսուսին եւ բացեց փրկութեան դուռը, Քրիստոսի կողմից հռչակուեց Մայր Եկեղեցու եւ միշտ շարունակում է իր մայրական պաշտպանութեամբ եւ բարեխօսութեամբ ծնել նոր հաւատացեալ զաւակներ եւ բոլորին միաւորել մէկ կաթողիկէ Եկեղեցու մէջ:

Աստուած Եկեղեցու միջոցով բոլոր ժողովուրդներին հրաւիրում է, խոստանում է եւ շնորհում է բոլոր միջոցները՝ հասնելու լիակատար ազատութեան մեղքի գերութիւնից, հասնելու Իր հետ յաւիտենական երջանկութեան՝ նոր՝ առաւել արդար եւ բարի մարդկային հասարակարգ կառուցելու միջոցով, Աստծոյ Արքայութիւնը լրումին հասցնելու միջոցով, ստեղծելու մի նոր իրականութիւն, որտեղ մարդ անհատի եւ իւրաքաչիւր ազգի արժանապատուութիւնը անսահման մէծ արժէք ունեն եւ գնահատուած են, բոլորը սիրուած են անսահմանօրէն, բոլորն ազատ են եւ կոչուած են լիարժէքօրէն դրսեւորելու իրենց աստուածատուր տաղանդները, հոգեւոր, բարոյական ներուժը, սրբութիւնը, սէրը ուրիշ ազգերի հանդէպ, բոլորը կոչուած են խաղաղութիւն կառուցելու: Ինչպէս Աստուած սիրում եւ յարգում է իւրաքանչիւր մարդ արարածի՝ որպէս իր զաւակի եւ եզակի ստեղծագործութեան, այնպէս էլ Քրիստոսի Կաթողիկէ Եկեղեցին կոչուած է սիրելու եւ յարգելու իր իւրաքանչիւր անդամին՝ որպէս Աստծոյ եզակի եւ անսահմանօրէն արժէքաւոր ստեղծագործութեան: Ուստի, Կաթողիկէ Եկեղեցու մէջ մտնող իւրաքանչիւր ազգ կոչուած է պահելու եւ զարգացնելու իր ազգային ինքնութիւնը, դէմքը, ծէսը, աւանդոյթները, լեզուն, մշակոյթը, հոգեւոր երաժշտութիւնը, արուեստը՝ բայց որպէս հիմք ունենալով նոյն միասնական հաւատքը, դաւանանքը, որն ունի Կաթողիկէ կամ Ընդհանրական Եկեղեցին՝ հիմնուած Տիրոջ Աւետարանի վրայ, որովհետեւ միայն Տէր Յիսուս Քրիստոս մէկ Ընդհանրական Եկեղեցու մէ՛ջ եւ Ընդհանրական Եկեղեցու հետ միութիւնը պահելո՛վ է, որ իւրաքանչիւր ազգ կարող է լաւագոյնս զարգացնել եւ դրսեւորել իր ներուժը եւ ինքնութիւնը:

Կաթողիկէութեան կամ ընդհանրականութեան նպատակը բոլորին *միեւնոյն բարի լուրը աւետելն է հաւասարապէս*՝ անկախ ազգութիւնից, սոցիալական դիրքից, բոլորին դէպի Աստուած առաջնորդելն է, բոլորին ի մի հաւաքելն է, որպէսզի, ըստ Քրիստոսի խօսքի, «լինի մէկ հօտ եւ մէկ հովիւ»[1]:

Այլ խօսքով՝ Եկեղեցում ընդհանրականութիւնը գեղեցիկ է միասնականութեան մէջ, բազմազանութիւնը՝ միութեան մէջ, շատը՝ մէկի մէջ: Քրիստոսի Ընդհանրական Եկեղեցում չի կարող միութիւն չլինել, որովհետեւ Եկեղեցու միութեան սկզբունքը կամ գլուխը մէկ է՝ Տէր Յիսուս Քրիստոս. «Որովհետեւ մարդացեալ Որդին Իր Խաչով բոլոր մարդկանց հաշտեցրեց Աստծոյ հետ՝ վերականգնելով բոլորի միութիւնը՝ մէկ ժողովրդի մէջ եւ մէկ մարմնի մէջ»[2]: Եկեղեցին մէկ է իրեն առաջնորդող Սուրբ Հոգով, որ բխում է Հօրից եւ Որդուց. «Սուրբ Հոգին, որ բնակւում է հաւատացեալների մէջ եւ լիուլի լցնում է եւ առաջնորդում է ամբողջ Եկեղեցին, իրականացնում է հաւատացեալների այդ զարմանալի հաղորդակցութիւնը եւ այնքան սերտօրէն է նրանց միացնում Քրիստոսի մէջ, որ հէնց Ինքն է Եկեղեցու միութեան հիմքը»[3]: Ուրեմն՝ մէկ լինելը Եկեղեցու ճշմարիտ էութիւնն է՝ լինել մէկ Քրիստոսի հետ եւ լինել մէկ միմեանց հետ:

Եկեղեցու մէջ ազգերի, մշակոյթների, լեզուների, մարդկային անհատականութիւնների, շնորհների, տաղանդների, Աստծոյ պարգեւների բազմազանութիւնը ոչ թէ խոչընդոտում, այլ գեղեցկացնում եւ առաւել *հարստացնում է* միութիւնը՝ պայմանով, որ Եկեղեցու բոլոր անդամների միջեւ լինի նոյն հաւատքը, նոյն յոյսը, կենդանի հաղորդութիւն, կենդանի կապ, յարաբերութիւն, եղբայրասիրութիւն, ընդհանուր առաքելութիւն

[1] Յվի, 10, 16
[2] Gaudium et Spes, 78, 3, Քրիստոնէական Կաթողիկէ Եկեղեցու, 813
[3] Unitatis redintegratio, 2, Քրիստոնէական Կաթողիկէ Եկեղեցու, 813

կատարելու պատրաստակամութիւն, գերիշխեն սէրը եւ փոխըմբռնումը, ոչ թէ ատելութիւնը, վէճերը, նախանձը, գաղափարական կամ դաւանական շեղումները, փոխադարձ մեղադրանքները, դատապարտութիւնները, հայհոյախօսութիւնները, ինքնամեկուսացումը, հպարտութիւնը, որոնք քանդում են ամէն տեսակ միութիւն եւ ընտանիք: Ցանկացած գժտութիւն Եկեղեցում վիրաւորում է ընտանիքի գլխին՝ Յիսուս Քրիստոսին, եւ վիրաւորում է մեր բոլորի Սուրբ Մօրը՝ Մարիամ Աստուածածնին:

Ուզում եմ յատկապէս շեշտել Սուրբ Պատարագի միասնական կատարումը՝ որպէս միութեան ամենայստակ ցուցիչ, երբ նոյն Սուրբ սեղանի շուրջ Տիրոջ Սուրբ Մարմնին միասնաբար հաղորդւում են տարբեր ազգերի ներկայացուցիչներ՝ հայը եւ ֆրանսիացին, ռուսը, ամերիկացին, աֆրիկացին, սպիտակամորթը եւ սեւամորթը. որքա՜ն խորհրդաւոր ու գեղեցիկ է այդ տեսարանը եւ զգացողութիւնը, դա՛ է նշանակում լինել մէկ սիրտ եւ մէկ հոգի, ճիշտ ինչպէս առաջին եկեղեցին, որի մասին վկայում է Գործք Առաքելոցը:

Եկեղեցու միութեան պահպանութեան եւ ամրացման իւրայատուկ գրաւական է Հռոմի Սրբազան Քահանայապետը, ով յաջորդն է Պետրոս առաքեալի, ում Տէր Յիսուս Քրիստոս կարգեց «վէմ» Եկեղեցու, աւագը առաքեալների՝ նրան ասելով. «…քեզ պիտի տամ երկնքի արքայութեան բանալիները, եւ ինչ որ մի անգամ կապես երկրի վրայ, կապուած պիտի լինի երկնքում: Եւ ինչ որ արձակես երկրի վրայ, արձակուած պիտի լինի երկնքում»[1]: Իսկ Ղուկասի աւետարանում Յիսուս ասում է Պետրոսին. «Սիմո՛ն, Սիմո՛ն, ահա սատանան ուզեց ձեզ ցորենի նման մաղել: Բայց ես աղօթեցի քեզ համար, որպէսզի քո հաւատը չպակասի, եւ դու, երբ վերադառնաս ինձ, հաստատես քո եղբայրներին»[2]: Այսօր էլ սատանան *«առիւծի պէս մռնչալով փնտրում է, թէ ում կուլ տայ»*՝ ըստ Պօղոսի խօսքի, եւ ուզում է մեզ ցորենի նման մաղել, թուլացնել մեր հաւատը, միութիւնը, հոգեւոր ինքնութեան գիտակցութիւնը, բայց Յիսուս միշտ աղօթում է Պետրոսի հաջորդի՝ այսօրուայ Սրբազան Քահանայապետի համար, որ երկրի վրայ կարողանայ պահպանել Իր Սուրբ Կաթողիկէ Եկեղեցու միութիւնը, հաստատի մեզ բոլորիս հաւատքի, յոյսի եւ սիրոյ մէջ, որպէսզի կարողանանք վկայել մեր միութիւնը, մեր միասնականութիւնը ամբողջ Ընդհանրական Եկեղեցու հետ եւ փոխադարձ սիրով հարստանանք միմեանցով, մեր ունեցած հոգեւոր եւ բարոյական ընդհանրական գանձարանի արժէքներով: Ուրեմն, Յիսուսի աւետարանական այդ պատգամի վրայ է հիմնուած մեր որդիական հնազանդութիւնը Հռոմի Սրբազան Քահանայապետին եւ Սուրբ Աթոռին, եւ մեր աղօթքը՝ նրա համար:

5-րդ դարի հայ պատմիչ Եղիշէն գրում է.

«Ինչպէս Պետրոսն իր անձը շինեց Քրիստոսի վրայ՝ իր մահուան վկայութեամբ, նոյնպէս էլ Եկեղեցին շինուեց Պետրոսի հաւատքի վրայ ոչ միայն Հռոմում, այլեւ՝ բոլոր քաղաքներում եւ գիւղերում, մեծերից մինչեւ փոքրերը. նոյն հաւատքը, նոյն հիմքը եւ նոյն հաստատութիւնը»[3]:

Հայ Կաթողիկէ Եկեղեցին մէկ անբաժանելի մասն է կազմում Ընդհանրական Կաթողիկէ Եկեղեցու՝ դեռեւս Սուրբ Գրիգոր Լուսաւորչի ժամանակներից հաւատարիմ մնալով Եկեղեցու միութեան եւ կաթողիկէութեան տէրունաւանդ անխախտելի սկզբունքին: Այդ միութեան շնորհիւ հայ ժողովուրդը կարողացել է հարստացնել իր հոգեւոր-ազգային ինքնութիւնը, մշակոյթը, կայանալ որպէս ազգ եւ լինել մրցունակ աշխարհում՝ իր հերթին հարստացնելով ուրիշ ազգերի մշակոյթը եւ ամբողջ քրիստոնէական քաղաքակրթութիւնը: Ահա թէ ինչ է գրում Հայ Կաթողիկէ Եկեղեցու 15-րդ Կաթողիկոս Պատրիարք Կարդինալ Գրիգոր Պետրոս Աղաճանեանը՝ իր 1950թ. «Մխիթար եւ Աբրահամ Արծիւեան» ուղերձում.

«Պատմութիւնը վկայ է, թէ Հայ Եկեղեցին ապրած է իր ամենափայլուն շրջանները, երբ եղած է յարաբերութեան եւ միութեան մէջ Կաթողիկէ Եկեղեցւոյ հետ: Մեր Ոսկեդարը-հինգերորդ դարուն-փթթեցաւ եւ ուռճեցաւ, երբ գոյութիւն ունէր այդ միութիւնը, երբ հայ հայրապետները կը մասնակցէին տիեզերական ժողովներուն, երբ մեր թարգմանիչները կը յաճախէին յունական կեդրոններ՝ միացած իրենց կարգին Հռոմի Սուրբ Աթոռին, հմտանալու սուրբգրային, աստուածաբանական եւ այլ գիտութեանց մէջ, եւ ատով կը հայթայթէին հայ ժողովուրդին հոգեւոր առողջ սնունդ եւ ուղղափառ վարդապետութիւն, եւ կը յօրինէին մատեաններ՝ լի կաթողիկէ հոգւով, որոնք ցայսօր մեր պարծանքն են եւ միանգամայն մեր գոյատեւման անխորտակելի կռուաններ»[4]:

Կաթողիկէ Եկեղեցու մէկ մասը լինելու շնորհիւ աշխարհն աւելի լաւ ճանաչեց մեր հոգեւոր, գրական արժէքները: Մէկ վառ օրինակ. հայ կաթողիկէ

[1] Մտթ. 16,16-19
[2] Ղկ. 22,31
[3] Եղիշէ, մատենագրութիւն
[4] Գրիգոր Պետրոս ԺԵ Աղաճանեան, «Հովուական թուղթեր»

եպիսկոպոսների նախապատրաստական աշխատանքների շնորհիւ 2015թ. ապրիլի 12-ին Ն. Ս. Ֆրանցիսկոս Սրբազան Քահանայապետը Սուրբ Գրիգոր Նարեկացուն հռչակեց Կաթողիկէ Եկեղեցու «Տիեզերական Վարդապետ», իսկ 2016թ. հունիսի 25-ին Երեւանում միութենական աղօթքի ժամանակ մեջբերումներ արեց «Մատեան ողբերգութեան» աղօթագրքից՝ այն անուանելով «հայ ժողովրդի հոգեւոր սահմանադրութիւն»: Նոյն օրը՝ մի քանի ժամ առաջ, Ֆրանցիսկոս Սրբազան Քահանայապետը Սուրբ Պատարագ մատուցեց Գիւմրիում: Իր քարոզում Քահանայապետը ասաց հետեւեալը. «Կոչուած ենք միշտ կառուցելու եւ վերակառուցելու հաղորդութիւնը՝ առանց երբեք հոգնելու, կամուրջներ սարքելու, ոչ թէ պարիսպներ կամ բաժանարար պատնէշներ: Հայ ժողովուրդը միշտ աւելի միացած թող լինի հաւատի եւ սիրոյ մէջ, եւ հաւատացեալները պէտք է կարողանան լաւագոյն օրինակը տալ՝ համագործակցելով միմեանց հետ, փոխադարձ յարգանքով եւ երկխօսութեամբ՝ իմանալով, որ «*միակ մրցոյթը, որ հնարաւոր է Տիրոջ աշակերտների միջեւ՝ ստուգելն է, թե ո՛վ է ի վիճակի՝ առաւել մեծ սէր նուիրելու*» (Յովհաննէս Պօղոս Բ)»:

Սա՛ է կաթողիկէ լինելու տրամաբանութիւնը՝ սնուել Կաթողիկէ Եկեղեցու ընդհանրական գանձարանից՝ *առաւել մեծ սէր նուիրելու համար*:

Ուստի, սիրելի՛ երիտասարդներ, կաթողիկէ հայ լինելը մեզ համար ուրախութեան, հպարտութեան, ցնծութեան մի առիթ է, որովհետեւ դա մեզ համար նշանակում է լինել հաւատարիմ Տէր Յիսուս Քրիստոսի կաթողիկէ, մէկ Եկեղեցուն, նշանակում է ձգտել դարմանել տարաձայնութիւնները, բաժանումները, լինել եղբայրասէր, խաղաղասէր ու բաց՝ մեր համայնակիցների, մեր ազգի բոլոր քոյրերի եւ եղբայրների առջեւ, նմանուել Քրիստոսին՝ մեր կեանքով եւ առաքելական խանդավառութեամբ:

Ինչպէ՞ս կոնկրետ վկայել կաթողիկէ պատկանելութիւնը

Այս եւ երիտասարդական այլ միասնական նախաձեռնութիւնները մեր կաթողիկէ պատկանելութիւնը վկայելու լաւագոյն հնարաւորութիւնն են: Այս ձեռնարկները, կանոնաւոր օրակարգով գործող *երիտասարդական միութիւնների, շարժումների* ձեւաւորումը կ՚օգնեն զարգացնել մեր միասնականութիւնը, կայանալ որպէս համայնք, եկեղեցի, միասին խորհրդածել մեր առջեւ ծառացած հոգեւոր, բարոյական, սոցիալական խնդիրների մասին, միասին մտածել դրանց լուծումները գտնելու ուղիների մասին, որոնք առաւել ճիշտ եւ Աւետարանին համապատասխան ձեւով գտնել մեզ օգնում է Կաթողիկէ Եկեղեցին՝ իր վիթխարի գանձարանով, յատկապէս, կաթողիկէ սոցիալական ուսմունքի ժամանակակից փաստաթղթերով. դրանք տալիս են շատ հարցերի պատասխաններ եւ ուղենշում են ճիշտ լուծումները: Հարկաւոր է այդ միութիւնների միջոցով նաեւ *սկսել համագործակցութիւն*՝ այլ երկրներում գործող կաթողիկէ երիտասարդական կառոյցների հետ, կատարել փորձի փոխանակում, արժէքների փոխանակում, զարգացնել յարաբերութիւններ եւ միասնական նախաձեռնութիւններ՝ համայնքներում առաքելութիւններ կատարելու համար՝ կամաւորական աշխատանքի, բարեգործութեան, հոգեւոր կրթութեան, ուխտագնացութիւնների կազմակերպման միջոցով իրականացնել եղբայրասիրական, կարիքաւորներին խնամելու բարեգործական ծրագրեր բոլորի համար՝ *անկախ դաւանական կամ այլ պատկանելիութիւնից*՝ անվերապահ սէր ցուցաբերելով բոլորի հանդէպ, ովքեր օգնութեան կարիք ունեն: Այս ամէնը սկսելու համար հարկաւոր է, նախեւառաջ, սկսել առաւել լայնացնել մեր հոգեւոր, մտաւոր հետաքրքրութիւնների շրջանակը, լայն մտածել, մեծ բաներ երազել, խանդավառուել հոգեւոր-հասարակական առաքելութիւն կատարելու իտէալներով, Յիսուսի հետքերով քայլելու երազանքով, խաչ կրելու պատրաստակամութեամբ, սեփական փոքր համայնքի մէջ մեծ երազանքներ իրականութիւն դարձնելու վճռակամութեամբ: Մեզ հարկաւոր է կամք ունենալ՝ առաւել լաւ ճանաչելու Տէր Յիսուս Քրիստոսի Անձը եւ *ինքներս մեզ*, որովհետեւ դա կը լինի մեր մարդկային ազատութեան լիակատար ապրումի սկիզբը.

«Եւ կը ճանաչէք ճշմարտութիւնը, եւ ճշմարտութիւնը ձեզ կ՚ազատի»,
Յվհ. 8, 32:

Տ. Յովսէփ Քինյ. Գալստեան
«Համայնքային երիտասարդաց օրեր-III»-ի համար, 2019թ.

ՍՐԲՈՅ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՅ ՄԻԱՅԵԱԼ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՈՒՉ ԳԵՐՊ. ՀԱՅՐ ՄԱՇՏՈՅ ՎՐԴ. ՋԱՀԹԵՐԵԱՆԻ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ «ԿՈՉՈՒՄՆԵՐ» ԹԵՄԱՅՈՎ

Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ԿՈՉՈՒՄ

Եկեղեցական կոչումը

Կոչումը Աստծոյ կողմից մարդ արարածին տրուած շնորհ է: Կոչումները տարբեր են լինում, ինչպէս օրինակ՝ քահանայ լինելու կոչում, բժիշկ լինելու կոչում, զինուոր լինելու կոչում եւ այլն: Սակայն, բոլոր կոչումներից գերագոյնը քահանայական կոչումն է, որի համար մարդ արարածը որքան էլ որ շնորհակալութիւն յայտնի Աստծուն, այնուամենայնիւ, ինքն իրեն անարժան է զգում: Հետեւապէս, պէտք է ընդառաջ գնալ այդ սուրբ կանչին ամբողջ էութեամբ եւ հետեւել Քրիստոսին:

Աւետարանի մէջ, երբ Քրիստոսն իր մօտ է կանչում անհատների, որոնք յետագայում դառնում են Իր առաքեալները, ասում է. «Ոչ թէ դուք ինձ ընտրեցիք, այլ ես ձեզ ընտրեցի...» (Յովհ. 15, 16):

Ուրեմն՝ իւրաքանչիւր ճշմարիտ կոչի սկիզբը Տէրն է, ով ընտրում եւ հրաւիրում է իրեն հետեւելու:

Եկեղեցին գոյատեւում է զանազան եւ բազմաթիւ կոչումներով, որոնք Սուրբ Հոգու նուիրած պարգեւներն են իւրաքանչիւր անհատի՝ ըստ Աստուածային ծրագրի:

Հետեւաբար, Քահանայական կոչումը պատասխան է Աստծոյ կոչին: Սա Աստծուց տրուած սքանչելի մի շնորհ է՝ դառնալու «այլ ոմն Քրիստոս»:

Սա է կոչում բառի խորը իմաստը, որ նշանակում է նաեւ կոչ, կանչել:

Եկեղեցու կողմից կոչուածները ընտրեալներն են նոյն ինքն Քրիստոսի:

Ի՞նչ է նորընծայարանը

Փոքր նորընծայարանը ծառայում է օգնելու պատանիների եւ երիտասարդների մարդկային եւ քրիստոնէական աճին: Այնտեղ թեկնածուները քահանայական կեանքի կոչման սերմերը ցոյց կը տան:

ԳԵՐՊ. ՀԱՅՐ ԵՂԻԱ ՎՐԴ. ԴԵՐՁԱԿԵԱՆԻ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ «ՎԿԱՅՈՒԹԻՒՆ» ԹԵՄԱՅՈՎ

Նախաբան

Μάρτυς յունական բառ է, որը նշանակում է Վկայ, իսկ վկայութիւնը՝ Μαρτηρια: Քրիստոնէական ըմբռնումով, Վկան նա է, ով ամբողջ էութեամբ հաւատում է Քրիստոսին: Քրիստոս եւ Հայրը մէկ են, Տէրը սիրում եւ յոյսը դնում է Նրա վրա: Նա մտածումով, խօսքով ու գործով խոստովանում է, թէ Քրիստոս է Տէրն ու Աստուածը:

Կատարեալ վկայութիւնը Քրիստոսի նուիրումն է արեան հեղումով:

Քրիստոս օրինակ է վկաներին

Սուրբ Գիրքը բազմաթիւ վկաներ է յիշում. Սամսոնը, Մարգարէները, Ստեփանոսը, Քրիստոսի 12 Առաքեալները... Իսկ լաւագոյնը՝ Քրիստոսն է: Ամէնքս գիտենք, թէ ինչպէս Քրիստոս վկայեց ճշմարտութիւնը: Նա համարձակութեամբ ասաց Պիղատոսին, թէ «եկած է վկայելու ճշմարտութիւնը»:

Քրիստոսի Վկայութիւնը

Պիղատոսը կամենում էր Յիսուսին արձակել, քանի որ նրա մէջ յանցանք չէր գտնում, սակայն վախեցել էր հրեաներից: Սրա համար էլ նա անմեղին դատեց, իսկ յանցաւորին արձակեց: Յիսուս կարող էր պաշտպանուել. Երկնային զօրքերը կանչել մահուանից ազատուելու համար, բայց չարեց, որպէսզի ժողովուրդը չմեռնէր մեղքի մէջ: Արդ, այս էր Հօր կամքն ու փրկչական ծրագիրը, որի դրդապատճառը սէրն էր: Յիսուս այս նպատակի համար կատարելապէս Վկայութիւնը տուեց Աստծուն:

Քրիստոս ճանապարհ, ճշմարտութիւն եւ կեանք է

Աստծուն ոչ մէկը չի տեսել, բացի Քրիստոսից, որը մէկ է Աստուծոյ հետ: Հետեւաբար, ճշմարտութիւնը Քրիստոսն է: Ավելին՝ մեր շնորհի վիճակն իսկ պարտում է Քրիստոսին: Մենք Քրիստոսով ազատուել ենք չարի ու մահու գերութիւնից եւ ունեցել յաւիտենական կեանքը: Քրիստոս է հաստատողը դէպի Աստուած տանող ճանապարհի եւ Ճանապարհը նոյն ինքը Քրիստոս է: Քրիստոս է Սկիզբը եւ Վերջը: Ամէն էակ նրանով եղել է եւ նրան տենչում է: Սա է Ճշմարտութիւնը, որ ճանաչենք ու հաւատանք Նրան, ում ուղարկեց Աստուած: Արդ, մենք Քրիստոսին երբեք չենք տեսել, իսկ նրանք, ովքեր տեսել ու ճանաչել են՝

խօսքով, գործով ու արիւնահեղումով վկայել են Նրան: *Ի՜նչ խորհրդաւոր բան է. որպէս անձ չենք տեսել, սակայն Նա միշտ մեզ հետ է, միշտ Նրան ճաշակում ենք հացի բեկանութեան ժամանակ եւ Նա միանում է մեզ, ինչպէս միացած է Հօրը:*

Վկայութիւնը առաքինութիւններով զարդարանք է: Վկան առաքինութիւններով զարդարում է միւսներին, տենչում է հասնել եւ միւսներին հասցնել երանելիութեան, այսինքն՝ կատարեալ երջանկութեան, որը Աստծուն մօտ լինելն է:

Առաքինութիւնների տեսակները

Գլխաւորները երկուսն են.
ա. մարդկային,
բ. աստուածային:

ա. Մարդկայինները ծնւում են մարդու հետ:

Սրանք չորսն են.

1 **Խոհեմութիւնը.** սրանով զանազանում ենք բարին չարից:
2 **Հաւասարակշռութիւնը.** ինքն իրեն լաւ կառավարել՝ միւսներին լաւ կառավարելու համար:
3 **Զօրութիւնը.** բարիքի ճանապարհով ընթանալու համար է:
4 **Արդարութիւնը.** տալ ամէն մէկին իր իրաւունքը:

բ. Աստուածայինները հոգու պարգեւներն են:

Սրանք երեքն են.

1. **Հաւատը**. հաւատալ նշանակում է Աստուածը ճանաչել ու Նրան պաշտել որպէս միակ Տէր:
2. **Յոյսը.** յուսալ նշանակում է վստահել Աստծուն եւ յոյսը Նրա վրայ դնել:
3. **Սէրը.** Աստուծոյ ու ընկերոջ սիրութիւն է:

Քրիստոսի վկան առաքինի մարդ լինելն է

Քրիստոս մեզ պատուիրել է լինել աշխարհի լոյսն ու երկրի աղը: Լոյս լինել նշանակում է շողշողուն լինել, բարձր տեղերում դրուել անցորդներին լուսաւորելու համար, այսինքն՝ միւսներին լինել օրինակ: Աղ լինել նշանակում է համեղ լինել Քրիստոսի պէս. Քրիստոս մի հլու եւ քաղցր անձնաւորութիւն է: Արդ, մենք բարին գործելով ու չարից հեռանալով այդպէս ենք լինելու: Ուստի, մենք պարտաւոր ենք ընթանալ բարութեան ճանապարհով՝ հակառակ կեանքի խաչերին:

Վկայութիւնը Աստուծոյ պատուիրանները կատարելն է

Եւ որքա՜ն շատ են մեր օրերում հրապուրիչ չաստուածները, որոնք ընտրեալներին իսկ մոլորեցնում են:

Պատուիրել է Աստուծոյ Անունն ու Օրը սուրբ պահել: Մեր օրերում որքա՜ն շատ են արտասանած հայհոյանքներն ընդդէմ Աստուծոյ: Աւա՜ղ, Նրա անունը յաճախակի պղծւում է Քրիստոնեաների կողմից: Որքա՜ն անձեր մեր մէջ անգիտակից են Պատարագի իմաստին, արժէքին ու վսեմութեանը: Սոյն անտեսանելի Աստուածը՝ մի կտոր հացի եւ մի ումպ գինու տեսք ունեցող հրաշալի էութիւնը, մեր մէջ է, մեզ հետ է: Մենք պատարագի ընթացքում Աստծուն ենք հանդիպում:

Ներքին ու արտաքին մաքուր, առանց ոխի, առանց քէնի ու առանց նախանձութեան. որքա՜ն գեղեցիկ և որքա՜ն վայելուչ է, երբ եղբայրներն ու քոյրերն իրար հանդիպեն պարզ զարդով, գեղեցիկ, մաքուր, պարկեշտ եւ ոչ պատռուած զգեստներով:

Աստուած պատուիրել է մեզ պատուել մեր հայրերին ու մայրերին: Այսօր, ափսոս, որքան որդիներ անպատւում են իրենց ծնողներին, եւ որքան ծնողներ վատ օրինակ են եղել իրենց զաւակների համար:

Աստուած պատուիրել է մեզ **չսպաննել, չշնանալ, չգողանալ, սուտ վկայութիւն չտալ, չցանկանալ ուրիշի կանանց:**

Աւա՜ղ, մեր օրերում սպանութիւնը խաբող վերնագրերով կատարւում է: Վրէժը անխտիր քաջալերւում է եւ յորդորւում է ընկերային ու հաղորդակցական միջոցներում: Շնութիւնը դարձել է առաքինութիւն, գողութիւնը՝ ճարպկութիւն, սուտ վկայութիւնը՝ քաջագործութիւն եւ ուրիշի իրը ցանկանալը՝ հպարտութեան պատճառ:

Վկայութիւնը մեր օրերում

Վկայութեան տարբերակները շատ են. դրանք գալիս են Վկայութեան նպատակների զանազանութիւնից: Վկայութիւնը ընդհանրապէս արեան հեղումով պսակումն է: Որոշ անձեր նահատակւում են կրօնի համար, ուրիշները ազգի համար, միւսները՝ մի այլ հարցի:

Աշխարհիկութեան սարսափելի հետեւանքներ

Չեմ չափազանցնի, եթէ ասեմ, թէ աշխարհիկութեան հետեւանքները սարսափելի են: Այսպէս,

նա ընկնում է ծայրայեղ կամ մոլորուած խմբակներ, որոնք գործում են Աստուծոյ անունով կամ մարդու երջանկութեան վերնագրի տակ: Եւ, զի նրանց մօտ գոհացուցիչ պատասխաններ չի գտնում, ապաստանում է թմրեցուցիչի ու սպիրտի աշխարհում: Մեր օրերում որքան շատացել են ծայրայեղ խմբակները, որոնք գերազանցում են մէկը միւսին... Բոլոր կրօնները հաւասար են: Կորած... Հետեւաբար, Քոնֆուցիոս, Պուտա, Աբրահամ, Դաւիթ, Մովսէս, Մոհամետ, Նիցշէ, Լենին եւ այլք Քրիստոսին հաւասար են եղել: Ի՜նչ խառնաշփոթութիւն է սա: Ի՜նչ հակասութիւն: Ոչ մի բան միւսին նմանում է:

Քրիստոս աշխարհի լոյսն է

Մարդկութիւնը խաւարների մէջ լողանում էր, քանի դեռ այս լոյսը չէր ծագել: Աստծուց հեռացած հրեաները հեռացումի հետեւանքները կրում էին ամենօրեայ կեանքում:

Բռնութիւն անարդար ու մոլորուած թագաւորների կողմից, բռնութիւն հռոմէացիների կողմից, որոնք ջանացել են միշտ իրենց կրօնը պարտադրել տիրացած ժողովուրդների վրայ: Հեթանոսները հրեաներից լաւ չէին ապրում, սրանք էլ բռնութեան լուծին տակ կքում էին: Ես եմ աշխարհի լոյսը... Հրեայ, թէ հեթանոս անտանելի վիճակում էին ապրում, անարդարութիւնից եւ խտրականութիւնից տառապում էին: Հրեաները սպասում էին գալուստը Փրկչի, որի մասին օրէնքն ու մարգարէները խօսել են: Հեթանոսներն էլ սպասման մէջ էին. ի սպաս նոր փիլիսոփայի կողմից մի նոր աշխարհի հաստատման: Եւ ահա, այդ սպասումներն իրագործւում են Քրիստոսի գալուստով: Քրիստոս եկաւ եւ իր գալուստով հեղաշրջումներ արեց: Այլեւս Աստուածային սէրը բոլորին ընդգրկում է, իսկ ողորմութիւնը՝ տարածւում բոլորի վրայ:

Ցնծացէ՛ք, խաւարի մէջ կորած ժողովուրդներ, ահա՛ շողշողուն լոյսը ձեզ էլ հասաւ:

Ահա Պետրոսներ, Պօղոսներ, այլ եւ այլ Առաքեալներ Ս. Հոգուց օծուած՝ ամէն տեղ շրջում են աղքատների մօտ փրկութեան աւետարանը քարոզելու, գերիներին ու բանտարկեալներին՝ ազատութեան աւետարանը, կոյրերին ու կուրացածներին սփռելու աստուածային լոյսը, նեղացածներին, ճնշուածներին եւ բռնուածներին բերելու հանգստութիւն եւ անդորրութիւն: Իսկ ես ի՞նչ եմ անում:

Վերջաբան

Արդեօք ջահը հասե՞լ է ինձ: Ես, որ Հայկի թոռներից մի թոռն եմ, Քրիստոսի ժառանգութիւնից մի ժառանգ, որի նախահայրերը Լուսաւորչի կանթեղով լուսաւորուեցին, արդեօք լոյսը հասել է ինձ: Նա է անդորրութիւնը, որով ես հպարտանում եմ: Ես հպարտ եմ, որ իմ պետութիւնը առաջին քրիստոնեայ պետութիւնն է եղել աշխարհում: Իմ պետութիւնը տարիներ շարունակ անհաւատ է եղել: Ուստի, վկայութեան մասին խօսելուց առաջ մի՞թէ ես մկրտուել եմ ու դրոշմուել: Քրիստոսի Մարմնով եւ Արեամբ սնուե՞լ եմ: Սիրելինե՛րս, սրանք իմ պահապաններն են, յատկապէս, երբ ես ճակատ եմ գնում: Հոն, որտեղ ատելութիւն ու թշնամութիւն կայ, սրանց շնորհիւ կարող եմ խաղաղութեան սերմեր սերմանել: Սրանցից մի լոյս կարող է ծագել: Թո՛ղ շողշողայ այս լոյսը իմ եւ իմ թշնամիների վրայ՝ մօտ եւ հեռաւոր:

Սրանց շնորհիւ կարող եմ ողորմել իմ ձեռքերում ընկած թշնամուն, ինչպէս որ Տէրը ողորմում է ինձ՝ մեղաւորիս: Արդ, սա է թշնամու սիրութիւնը, որ Քրիստոս ինձ պատուիրեց Նրան յարգելով:

Ամուսնացած եմ կամ պատրաստւում եմ ամուսնութեան, Քրիստոսի փառքով պսակուե՞լ եմ արդեօք: Իմ ամուսնու կամ կնոջ հետ միացե՞լ եմ ինչպէս Քրիստոսը եւ Եկեղեցին, եթէ ոչ՝ հաւատացէք ինձ, մենք մեր անձերը զրկած կը լինենք իսկական սիրուց, որի վկան կանչուել ենք լինելու:

Անդրադառնալով տանն ու հողին, մենք ազատ կամքով անում ենք այն, ինչ որ ստիպողաբար նրանք արեցին: Մնանք այստեղ, աւելիով շփուենք մեր հողի հետ: Այսպէս անելով աւելի լաւ ենք ըմբռնում, թէ ինչ է նշանակում լինել երկրի աղը, որի համար մենք վկաներ կարգուեցինք Քրիստոսի կողմից: Երկրի աղ լինելը տանումն է դէպի ուրիշ եղելութեան, դէպի աշխարհի լոյսը: Մենք ենք աշխարհի լոյսը: Մեզ հասել է ջահը եւ արդ, ի՞նչ է նշանակում այդ: Նշանակում է, որ այդ ջահը, որ հասել է մեզ վառ, վառուած պահենք, աշտանակի վրայ դնենք լուսաւորելու համար բոլոր անցորդներին անխտիր, ինչպէս որ արեւը շողշողում է ե՛ւ բարիների, ե՛ւ չարերի վրայ: Սա նշանակում է, թէ մենք լինելու ենք լուսաւորուածները, ինչպես լաւ թթխմորը՝ մնացած զանգուածին: Եւ ինչպէ՞ս: Միասնաբար գործելով, ամէն մէկը իր մարզում, ըստ իւրաքանչիւրի կոչումի, շնորհի, կարգի ու վիճակի: Քրիստոսով եւ Քրիստոսի համար գործելով, չարից հեռանալով ու գործելով բարին, ուրախի հետ ուրախանալով, տխուրի հետ տխրելով, կիսելով իրար հետ վիշտն ու բերկրութիւնը:

Շնորհակալութիւն:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԽՄԲԻ ՆԱԽԱԳԱՀ ԳԵՐՅ. ՀԱՅՐ ԳԱՌՆԻԿ Ե. ՎՐԴ. ՅՈՎՍԷՓԵԱՆԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԽՕՍՔԸ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՕՐԵՐ – III»-Ի ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

«Յոյսով ենք, որ կարողացանք ձեզ հետ միասին կիսել Քրիստոսի Եկեղեցու նկատմամբ ունեցուած մեր հաւատքը»:

Յարգելի՛ ներկաներ, նախ եւ առաջ, թո՛յլ տուէք առանձնայատուկ շնորհակալութիւն յայտնել Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանին, ում անմիջական նախաձեռնութեամբ ու փափաքով կազմակերպուեց «Համայնքային երիտասարդական օրեր – III» հանդիպումը: Մեր յատուկ շնորհակալութիւնն ենք յայտնում հոգեւոր դասին, աշխատակազմին, կամաւորներին, լրատուամիջոցներին եւ ձեզ, շա՛տ սիրելի երիտասարդներ: Շնորհակալութի՛ւն:

Այս ողջ շաբաթուայ ընթացքում փորձեցինք մեծ սրտով ու գրկաբաց ընդունել բոլորիդ, եւ յոյսով ենք, որ կարողացանք ձեզ հետ միասին կիսել Քրիստոսի Եկեղեցու նկատմամբ ունեցած մեր հաւատքը:

Սիրելի՛ երիտասարդներ, թոյլ տուէք նաեւ ձեզ հետ կիսել որոշ խորհրդածութիւններ.

Աստուած մեզանից իւրաքանչիւրի համար ունի առանձնայատուկ ծրագիր, եւ բոլորս կոչուած ենք սրբութեան: Տէրը բարեկամութեան կոչ է անում, եւ Յիսուս բարեկամն է իւրաքանչիւր երիտասարդի:

Կոչումը կանչ է վերեւից, հետեւապէս, կեանքում սեփական կոչման բացայայտման գործում մեծ է ընկալման դերը, եւ այս համատեքստում ընկալում առաւելապէս նշանակում է բաց լինել Նրա առջեւ, ով կանչում է: Ուստի՝ անհրաժեշտ է աղօթքի լռութիւնը, որպէսզի կարողանանք լսել Աստծոյ ձայնը, որը հնչում է մեր խղճի խորքում եւ հետեւել մեր կոչմանը:

Ձեզանից շատերն իրենց կոչումը կը գտնեն ընտանիք կազմելու մէջ, քանի որ ամուսնութեան խորհուրդն իր մէջ ներառում է սէրը, որը շնորհ է տրուած Աստծոյ կողմից: Ոմանք իրենց

կոչումը կը գտնեն որեւէ մասնագիտութեան մէջ: Սակայն, բացի ընտանիքից եւ աշխատանքից, երիտասարդները կոչուած են նաեւ քահանայութեան եւ հոգեւոր ծառայութեան, եւ շատ կարեւոր է, որ նրանք, ովքեր կանչուած են Աստծոյ կողմից, կարողանան հաւատարիմ մնալ այս վսեմ կոչմանը՝ իրենց կեանքը վստահելով Տիրոջը:

Լինել երիտասարդ նշանակում է չվախենալ ապրել կեանքը մի գեղեցիկ արկածի մէջ: Սիրելինե՛ր, Երիտասարդութիւնը երազելու եւ որոշումներ կայացնելու ժամանակաշրջան է: Ժամանակաշրջան, երբ երիտասարդները կոչուած են առաջ շարժուելու՝ միեւնոյն ժամանակ չհեռանալով իրենց արմատներից: Հետեւաբար, եղէ՛ք համբերատար, մի՛ վախեցէք որեւէ նոր բան փորձելուց, անգամ՝ սխալուելուց: Վայելէ՛ք ամէն օրուայ օրհնութիւնը եւ Յիսուսին իբրեւ մնայուն բարեկա՛մ ունեցէք ու միշտ յիշէ՛ք, որ այս բարեկամութիւնը պահպանելու միջոցը աղօթքն է, ուստի անհրաժեշտ է «մշտական կապի մէջ» լինել Քրիստոսի հետ: Եւ, ինչպէս Նորին Սրբութիւն Ֆրանցիսկոս Սրբազան Քահանայապետն է ասում. *«Մի՛ եղէք ինչ-որ մէկի կրկնօրինակը, եղէ՛ք այնպիսին, ինչպիսին կաք՝ դառնալով այն մէկը, ում Տէրը ցանկացաւ երազել եւ ստեղծել»:*

Սիրելի՛ երիտասարդներ, մի՛ կորցրէք երազելու եւ խաղաղութիւն սերմանելու ունակութիւնը, քանզի մեր ծեր ու յոգնած աշխարհին երազելու համար պակասում է յոյսը: Եւ, ինչպէս Նորին Սրբութիւնն է յորդորում, հետեւէ՛ք Տիրոջ խօսքին. *«Երանի՜ խաղաղարարներին, որովհետեւ նրանք Աստծոյ որդիներ պիտի կոչուեն»* (Մատթ. 5,9):

Երբեք մի՛ դադարէք երազել: Ժամանակակից աշխարհի եւ արդի երիտասարդութեան հիմնական խնդիրներից մէկը երազելու ունակութեան կորուստն է. ո՛չ աւելի, ո՛չ պակաս՝ պարզապէս չեն երազում: Երբ մարդը չի երազում, եւ յատկապէս, երբ երիտասարդը չի երազում, ապա երազանքն իր տեղը զիջում է դժգոհութեանը եւ անտարբերութեանը: Յիշէ՛ք, որ երազելը քիչ կամ շատ չի լինում: Երազներն օգնում են մեզ կենդանի պահելու այն վստահութիւնը, որ հնարաւոր է մէկ այլ աշխարհ, եւ մենք կոչուած ենք մեր աշխատանքով, մեր նուիրուածութեամբ եւ գործունէութեամբ լինելու այդ աշխարհի մի մասնիկը: Մեզ է տրուած ողջ աշխարհը, եւ պէտք է փորձենք այն աւելի լաւը դարձնել մեր միջոցներով ու գաղափարներով: Ուստի, եկէ՛ք Սուրբ Հոգու շնորհով փորձենք կառուցել աւելի լաւ աշխարհ:

Երիտասարդներին ուղղուած հիմնական պատգամներ են.

1. Աստուած սիրում է քեզ:

2. Քրիստոսն է քո Փրկիչը:

3. Քրիստոս կենդանի է մեր մէջ:

4. Սուրբ Հոգին կեանք է շնորհում եւ միակն է, որ կարող է կենդանի պահել փրկութեան յոյսը:

Եզրափակելով միտքս՝ կը ցանկանամ յորդորել ձեզ երբեք չհեռանալ ձեր մշակոյթից, ծագումից եւ մայր հայրենիքից: Հայաստանը իւրայատուկ երկիր է՝ եզակի մշակոյթով, մարտահրաւէրներով ու դերակատարութեամբ: Մեր հայրենիքն ունի շատ ուժեղ կողմեր, որոնցից ամենավառը հայ մարդն է՝ իր մտաւոր ներուժով եւ արարելու անսպառ էներգիայով: Դարձէ՛ք այն ամուր օղակը, որը յարատեւ կը պահի Հայրենիք – Սփիւռք կապը:

ԱՅՍ ՏԱՐԻ ԼՐԱՑԱՒ «ԿԱՐԴԻՆԱԼ ԱՂԱՃԱՆԵԱՆ» ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐԻ 15-ԱՄԵԱԿԸ

«Ով այս փոքրիկներից մէկին թէկուզ մի բաժակ սառը ջուր տայ խմելու՝ իբրեւ աշակերտի, ճշմարիտ եմ ասում ձեզ՝ իր վարձը չի կորցնի» (Մտթ. 10, 42):

«Կարդինալ Աղաճանեան» կենդրոնում 2019թ. յունիսից մինչեւ օգոստոս ամիսներին անցկացուեց ամառային ճամբար 833 մասնակիցների համար Հայաստանի եւ Վրաստանի հայ կաթողիկէ համայնքների 10-15 տարեկան պատանիների համար:

Ճամբարի նախապատրաստական աշխատանքները սկսուել էին մայիս ամսից՝ օրհնութեամբ Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանի եւ գլխաւորութեամբ ճամբարի տնօրէն Արժ. Տ. Գրիգոր Աւագ Քհնյ. Մկրտչեանի: Երեխաների ընտրութիւնը կատարել են համայնքների ժողովրդապետերը: Երեխաների ծնողները նախապէս լրացրել են ուղեգրերը, դրանից յետոյ երեխաները ցուցակագրուել եւ բաժանուել են ըստ տարիքային խմբերի: Խրախուսելով ներառական կրթութեան գաղափարը՝ ճամբարականների շարքերը համալրուել էին նաեւ հաշմանդամութիւն ունեցող երեխաներով:

Ջոկատավարների ընտրութիւնը կատարուել է հարցազրոյցի միջոցով: Նրանք հիմնականում հայ կաթողիկէ համայնքների երիտասարդներն են: Երիտասարդների մասնակցութիւնը ամառային ճամբարներում միշտ խրախուսւում է՝ բացայայտելու համար նրանց կարողութիւնները երեխաների հետ աշխատանքում: Ընտրում են ուրախ, ստեղծարար, հոգատար եւ պատասխանատու անձինք, ովքեր դառնում են ճամբարի ընտանիքի անդամներ:



Ջոկատավարների ընտրութիւնից յետոյ՝ յունիսին, անցկացուեց երկօրեայ դասընթաց, որի ժամանակ խմբային աշխատանքները եւ առաջադրանքները, ճամբարի կազմակերպիչների առաջնորդութիւնը օգնեցին ջոկատավարներին հեշտացնել իրենց յետագայ աշխատանքը միմեանց եւ երեխաների հետ: Ներկայացուեցին նաեւ ճամբարային կարգ

ու կանոնը եւ երեխաների հետ վարուեցողութեան կանոնները: Դասընթացի արդիւնաւէտութիւնը տեսանելի էր ճամբարի ընթացքում, երեխաների հետ աշխատանքն աւելի հեշտ էր, հետաքրքիր եւ արդիւնաւէտ: Ջոկատավարների օգնութեամբ մշակուեցին ճամբարային հետաքրքիր եւ գունեղ խաղեր՝ երեխաների տարիքային առանձնայատկութիւններին եւ հետաքրքրութիւններին համապատասխան:

Կարեւորելով բռնութիւնից երեխայի պաշտպանութեան իրաւունքը՝ այս տարի առաջին անգամ ջոկատավարների համար դասընթացի ընթացքում հրաւիրուել էր հոգեբան-հոգեւերլուծող, ով ներկայացրեց երեխաների դէմ բռնութեան դրսեւորումները եւ դրանց կանխարգելումը: Մեր նպատակն էր բարձրացնել ջոկատավարների իրազեկուածութիւնը երեխաների դէմ բռնութեան պայքարի մեխանիզմների եւ միջոցների մասին:

Այս տարի ճամբարը մեկնարկեց յունիս ամսին: Այդ երեք ամիսների ընթացքում ընդունել եւ ճանապարհել ենք շուրջ 833 մասնակիցների՝ ներառեալ երեխաներ, աշխատակազմ, հոգեւորականներ եւ կամաւորներ, ովքեր նախընտրել էին իրենց ամառային հանգիստը անցկացնել մեր ճամբարում:

Ճամբարի օրակարգը հնարաւորինս յարմարեցուած էր երեխաների նախասիրութիւններին, որպէսզի այն լինի իրենց առօրեայից տարբերուող եւ հետաքրքիր:

Առաւօտեան մարմնամարզութիւնը կարեւոր բաղադրիչ է երեխաների կեանքում: Դրանով մենք փորձում էինք բարձրացնել երեխաների ֆիզիկական ակտիւութիւնը՝ նրանց մէջ սերմանելով այն գաղափարը, որ ֆիզիկական ակտիւութիւնը կարեւոր է երջանիկ, առողջ եւ ակտիւ լինելու համար:

Երեխաներն ամէն օր մասնակցում էին առաւօտեան Սուրբ Պատարագի, ապա՝ քրիստոնէական վարդապետութեան դասերի, որոնք երեխաներին տալիս են ամուր հոգեւոր եւ բարոյական հիմք արժէքների եւ բարքերի արագ փոփոխուող աշխարհում: Դասերի ընթացքում երեխաները հասան այն գիտակցութեանը, որ այն շնորհներն ու տաղանդները, որ իրենք ունեն, նուէր է Աստծոյ կողմից եւ իրենց քրիստոնէական կեանքի շնորհիւ պիտի պահպանեն եւ ձգտեն լինել Աստծոյ արժանի զաւակներ:

Պարի, ձեռքի աշխատանքի, բնապահպանութեան եւ օտար լեզուի դասերը երեխաներին հնարաւորութիւն էին տալիս բացայայտել իրենց տաղանդները, զարգանալ, սովորել եւ սովորեցնել իրենց ընտանիքի անդամներին եւ ընկերներին. սա նպաստում է բարձր ինքնագնահատականի եւ ինքնավստահութեան զարգացմանը:

Փորձը ցոյց է տալիս, որ ամենամեայ ամառային ճամբարների ընթացքում երեխաների ամենասպասուած պահը եղել եւ մնում են ճամբարային խաղերը: Խաղերը, որոնք անցկացւում էին ճամբարի բոլոր երեխաների համար, բաժանուած էին երեք խմբի՝ արկածային, մրցակցային եւ ինտելեկտուալ: Խաղերը հնարաւորութիւն են տալիս երեխաներին լինել խմբի առաջնորդներ, լինել թիմի մասնակից, անհրաժեշտութեան դէպքում բերել փաստարկներ, լինել կարեկից ընկերների նկատմամբ, զգալ յաղթանակի բերկրանքը եւ յաղթահարել պարտութեան ցաւը: Խաղն օգնում է կառուցել առաջնորդական հմտութիւններ, ձեռք բերել անկախութիւն եւ ինքնավստահութիւն:

Ճամբարային օրակարգից անբաժան էին նաեւ մշակոյթային միջոցառումները, որոնք բացայայտում են երեխաների թաքնուած տաղանդները, փոքրիկ ներկայացումները խթանում են երեխաների գեղագիտական ճաշակի զարգացումը, ազգային աւանդոյթների եւ արժէքների պահպանում եւ փոխանցումը: Մշակոթային միջոցառումների շրջանակում երեխաները այցելում էին թանգարաններ, կինոթատրոն, թատրոն եւ տիկնիկային թատրոն:

Արդէն մի քանի տարի «Աղաճանեան ամառային ճամբար» եկած երեխաներն ասում են, որ ճամբարային տարածքում իրենք իրենց զգում են ինչպէս տանը՝ շրջապատուած սիրով եւ հոգատարութեամբ հոգեւորականների, ծրագրի աշխատակիցների եւ կամաւորականների կողմից:

Այս տարի «Կարդինալ Աղաճանեան» կենդրոնում նշուեց Հայ Կաթողիկէ Առաջնորդարանի կողմից կազմակերպուող ամառային ճամբարների տասնհինգամեակը:

Ճամբարականները ներշնչում են մեզ, որ մենք երբեք չկորցնենք մեր տեսլականը եւ աշխատենք խաղաղութեան եւ սիրոյ համար:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ՍԻՒՆՀՈԴՈՍԻ ԱՄՓՈՓԻՉ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Սիւնհոդոսական հայրերը ողջունեցին ի սփիւռս աշխարհի հայ կաթողիկէ հաւատացեալներին՝ հայցելով նրանց աղօթքները

2019թ. սեպտեմբերի 3-ից 13-ը Զմմառի Կաթողիկոսական Աթոռում տեղի ունեցաւ Հայ Կաթողիկէ Եկեղեցու Եպիսկոպոսաց տարեկան Սիւնհոդոսը՝ Ամենապատիւ եւ Գերերջանիկ Տ.Տ. Գրիգոր Պետրոս Ի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Պատրիարքի նախագահութեամբ, որին մասնակցում էին Լիբանանի, Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի եւ Արեւելեան Եւրոպայի, Սիրիայի, Եգիպտոսի, Իրանի, Թուրքիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի Միացեալ Նահանգների, Կանադայի եւ Հարաւային Ամերիկայի հայ կաթողիկէ թեմերի առաջնորդները, Յունաստանի եւ Իրաքի առաքելական կառավարիչները, Յորդանանի եւ Սուրբ Երկրի պատրիարքական էքզարքը ու Զմմառու Պատրիարքական կղերի Միաբանութեան պատրիարքական փոխանորդը:

Եկեղեցու վերաբերեալ հոգեւոր, հովուական, կանոնական, հասարակական հարցերին առընթեր՝ ժողովական հայրերը քննարկեցին նաեւ հետեւեալ հրատապ հարցերը.

ա. Միջին Արեւելքի եւ յատկապէս Սիրիայի ու Իրաքի տագնապալի կացութեան խնդիրները, ինչպէս նաեւ Լիբանանը յուզող քաղաքական ու տնտեսական զարգացումների հետեւանքով առաջացած անապահով ու մտահոգիչ իրավիճակը: Քննարկուեցին նաեւ այն միջոցները, որոնք անհրաժեշտ են թեթեւացնելու հայ ժողովրդի նիւթաբարոյական տառապանքն ու կասեցնելու վերջին տարիներին սկիզբ առած ընտանիքների արտագաղթը:

բ. Նրանք բարձր գնահատեցին կարեւոր հրատարակութիւնների կարգը, ինչպիսիք են ժամերգութիւնների աշխարհաբար թարգմանութիւնը, Սաղմոսարանի նոր թարգմանութիւնն ու Նոր Կտակարանի աշխարհաբար թարգմանութիւնը:

գ. Նրանք հետեւողական լինելու կոչ արեցին երջանկայիշատակ Գրիգոր Պետրոս ԺԷ Աղաճանեանի սրբադասման դատի նախապատրաստական աշխատանքներին: Ծիրանաւորի (կարդինալի) սրբակենցաղ կեանքը,

մարդասիրական ու եկեղեցանուէր արժանիքները նրան դարձնում են սրբադասման արժանի: Այս նպատակով Հայ Կաթողիկէ Պատրիարքութիւնը արդէն հրատարակել է բազմալեզու թռուցիկներ, որոնք պատմում են նրա վարքի ու հոգեւոր կտակի մասին, այնտեղ կայ նաեւ գրուած աղօթք՝ նրա երանացման համար:

դ. Սիւնհոդոսական հայրերը քննարկեցին նաեւ պատրիարքական յանձնախմբերի տարած գործունէութիւնները կանոնական, ծիսական ու համամիութենական ոլորտներում:

է. Նրանք անդրադարձան պատրիարքական եւ այլ թեմերի վարչական, հովուական ու նիւթաբարոյական հարցերին, որպէսզի համապատասխան միջոցներով բարենպաստ լուծում տրուի դրանց:

զ. Սիւնհոդոսական Հայրերը ընդգծեցին հաղորդակցութեան միջոցների առաւելագոյն կերպով օգտագործման անհրաժեշտութիւնը՝ յատկապէս արդիական լսատեսողական միջոցներն ու մամուլը, որպէսզի քրիստոնէական հաւատքն առաւել մատչելի դառնայ յատկապէս երիտասարդների համար:

է. Ժողովական հայրերը քննարկեցին ու վաւերացրին Հայ Կաթողիկէ Կանոնագրքի վերատեսութիւնը:

ը. Սիւնհոդոսը յատուկ ուշադրութեամբ անդրադարձաւ Հայաստանում Հայ Կաթողիկէ Եկեղեցու առաքելութեանն ու Հայ Կաթողիկէ թեմերի ու հաստատութիւնների գոյավիճակին եւ վերահաստատեց իր զօրակցութիւնը Մայր Հայրենիքի մէջ մարդու իրաւունքների պահպանմանը, խօսքի եւ խղճի ազատութեանը, հայրենաբնակ ժողովրդի բարեկեցութեանը, ինչպէս նաեւ ժողովրդավարական կառոյցների ուղղութեամբ ստանձնած քայլերին, հայկական պետականութեան հզօրացմանը եւ, վերջապէս, Արցախի Հանրապետութեան միջազգային ճանաչման պահանջին:

Նիստի աւարտին Սիւնհոդոսական հայրերը ողջունեցին ի սփիւռ աշխարհի հայ կաթողիկէ հաւատացեալներին՝ հայցելով նրանց աղօթքները, որպէսզի ամենաբարին Աստուած Աստուածամօր բարեխօսութեամբ յաջողութեամբ պսակի նրանց բոլոր ծրագրերը:

ԶՄՄԱՌԱՎԱՆՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ ՄԻՒՌՈՆՕՐՀՆԷՔԻ ՍՐԲԱԶԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

«Այսօր մենք մեր հայրերուն հաւատքով եւ ջերմեռանդութեամբ մասնակից կը դառնանք այս սրբալոյս միւռոնօրհնէքի արարողութեան»

Աստուածամօր ծննդեան տօնին՝ 2019թ. սեպտեմբերի 8-ին, Պէյրութի Զմմառի հայ կաթողիկէ դարաւոր վանքում Սուրբ Պատարագի ընթացքում կատարուեց Միւռոնօրհնէքի սրբազան արարողութիւնը՝ ձեռամբ Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Կաթողիկոս Պատրիարք Ամեն. Տ. Գրիգոր Պետրոս 20-րդի: Այս պատմական եւ շնորհաշատ սրբազան արարողութեանն իրենց մասնակցութիւնը բերեցին Հայ Կաթողիկէ Եկեղեցու սիւնհոդոսական հայրերը՝ թեմերի առաջնորդ արքեպիսկոպոսները եւ եպիսկոպոսները, Զմմառի Պատրիարքական կղերի միաբանութեան անդամները, աշխարհի տարբեր հայ կաթողիկէ համայնքներում ծառայող ծայրագոյն վարդապետներ, վարդապետներ եւ քահանաներ, Անարատ Յղութեան հայ քոյրերը, բարձրագոյն պաշտօնատար անձինք, Լիբանանի խորհրդարանի պատգամաւորներ, դիւանագէտներ, ուխտաւոր հայ հաւատացեալներ տարբեր համայնքներից:

Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի եւ Արեւելեան Եւրոպայի հայ կաթողիկէների առաջնորդութիւնից Միւռոնօրնհէքի արարողութեանը, Առաջնորդ Արիհ. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանի գլխաւորութեամբ, մասնակցում էին Գերյ. Հ. Պետրոս Ծ. Վրդ. Եսայեանը, Գերյ. Հ. Գառնիկ Ծ. Վրդ. Յովսէփեանը, Արժ. Տ. Նարեկ Քինյ. Թադեւոսեանը, Հայաստանի առաջնորդարանի աշխատակիցները, Գիւմրիի Սրբոց Նահատակաց Մայր Տաճարի երգչախմբի

ղեկավար Գոհար Շախուլեանը եւ երգչախմբի անդամներ, Հայկական Կարիտասի աշխատակիցներ, երիտասարդներ, ովքեր մշտապէս կամաւոր աշխատանք են կատարում «Աղաճանեան ամառային ճամբարում», ընդհանուր թուով՝ երեսուն ուխտաւորներ:

Հայ եկեղեցական աւանդութեան մէջ Միւռոնի պատրաստութիւնը երկար ժամանակ է պահանջում. այն պատրաստում են ձիթաիւղից, քառասունուեց տեսակի բոյսերից եւ ծաղիկներից, որոնք խորհրդանշում են աստուածային ձրիաբար բաշխուող շնորհների առատութիւնը, որ Աստծոյ ժողովրդի վրայ հեղւում են Սուրբ Միւռոնի եւ խորհրդակատար աղօթքի միջոցով: Սրբալոյս Միւռոնը պատրաստուել էր դպրեվանքի սաների կողմից՝ աղօթքներով եւ սաղմոսներով՝ ըստ Հայրապետի յանձնարարութեան: Միւռոնը յատուկ կաթսաների մէջ դրուած էր սեղանին:

Արարողութիւնը սկսուեց «Հրաշափառ Աստուած» շարականով, որի հոգեպարար հնչիւնների ներքոյ Կաթողիկոս Պատրիարքը բարձրացաւ Սուրբ Սեղանի մօտ՝ հոգեւոր դասի ուղեկցութեամբ: «Սուրբ Աստուած» շարականից յետոյ սկսուեց Միւռոնի օրհնութեան բուն արարողութիւնը: Եպիսկոպոսները, քահանաները, ճեմարանականները հերթով ընթերցեցին աստուածաշնչեան հատուածներ, որից յետոյ Հոգեւոր Տէրը յատուկ աղօթքով խնդրեց Սուրբ Հոգու էջքը եւ Միւռոնի սրբագործումը, որպէսզի Միւռոնով օծութեամբ հաւատացեալներն ընդունեն աստուածային շնորհներ, իսկ եկեղեցիները, սուրբ սեղանները՝ աստուածային օրհնութիւն: Ընթերցուեցին յատուկ աղօթքներ, երգուեցին հոգեպարար շարականներ: Հոգեւոր Տէրը, ըստ կարգի, երեք անգամ օրհնութիւն եւ սրբագործում հայցեց Միւռոնի համար՝ «Օրհնեսցի՛ եւ սրբեսցի՛ միւռոնս

այս՝ նշանաւ Սուրբ Խաչիւս եւ Սուրբ Աւետարանաւս եւ Սուրբ Աղանիաւս», ապա կաթսայի մէջ լցրեց հին Միւռոնը:

Աւետարանի ընթերցումից յետոյ Հոգեւոր Տէրն իր հայրապետական խօսքն ուղղեց ներկաներին՝ ասելով.

– Սիրելի՛ Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Սինհոդոսական Հայրեր եւ Զմմառու վանքի Միաբան հայրեր, առաքինազա՛րդ Քոյրեր եւ սիրելի՛ հաւատացեալներ, Օրհնեալ ըլլայ սուրբ միւռոնով օծուած այս սուրբ օրը: Այս օրը, սիրելինե՛ր, մեր Եկեղեցւոյ եւ ազգին համար մեծ իմաստ եւ խորհուրդ ունի: Մեզ համար սրտի անհուն ուրախութիւն է ձեզ բոլորդ միատեղ հաւաքուած տեսնել Զմմառու Տիրամօր հովանիին ներքոյ, ուր այսօր կը կատարենք սրբալոյս միւռոնօրհնէքը: Սիրելինե՛ր, Սուրբ Միւռոնին իւղը խորհրդանիշն է Սուրբ Հոգւոյն եւ անոր աստուածային պարգեւներուն: Զայն կը գործածենք Մկրտութեան, Դրոշմի եւ Քահանայութեան Սուրբ Խորհուրդներուն տուչութեան ժամանակ: Մեր Եկեղեցւոյ տասնեակ հազարաւոր մանուկներ պիտի օծուին այս Սուրբ Միւռոնով, նորանոր քահանաներ եւ եպիսկոպոսներ նաեւ: Ս. Միւռոնը, որպէս գերագոյն սրբութիւն, կը ներգործէ իւրաքանչիւր քրիստոնեայի հոգիին մէջ: Օծումը, զոր ի Քրիստոս հաւատացեալք կը ստանան, մասնաւոր կերպով կը փոխանցէ հոգւոյն սրբոյ զօրութիւնը՝ առաջնորդելու համար զանոնք դէպի ճշմարտութիւն եւ սրբութիւն: Ան միանգամայն եկեղեցին եւ եկեղեցւոյ հիմնական սպասները նուիրագործող իւղն է: Աւելի՛ն, Միւռոնը կը սպառազինէ քահանայական ձեռնադրութեամբ եկեղեցւոյ սպասարկութեան կոչուող նուիրեալները: Արդարեւ, Միւռոնի օծում կը ստանան եկեղեցիները, եկեղեցւոյ սիւները, սեմը, Ս. Սեղանը, մկրտութեան աւազանը, եկեղեցական սպասքը, սրբոց պատկերները, խաչը եւ խաչքարերը: Այսօր մենք մեր հայրերուն հաւատքով եւ ջերմեռանդութեամբ մասնակից կը դառնանք այս սրբալոյս միւռոնօրհնէքի արարողութեան: Սիրելինե՛ր, մեր մաղթանքն է, որ Սուրբ Միւռոնի զօրութեամբ ամէն հայ դառնայ հարազատ քրիստոնեայ եւ Ս. Գրիգոր Լուսաւորչի հարազատ զաւակ: Պատմական այս օրուայ աւարտին աղօթք կը բարձրացնեմ առ Աստուած, որ առատաձեռն շնորհներ պարգեւէ ձեզ բոլորիդ, ձեր հեռաւոր թէ մօտակայ հարազատներուն եւ

հոգեկան եւ մարմնական բժշկութիւն շնորհէ անոնց, որոնք կը ստանան զայն:

Սուրբ Միւռոնի օրհնութիւնից եւ Սուրբ Պատարագի աւարտից յետոյ Ամենապատիւ Հոգեւոր Տէրը, հոգեւոր դասի ուղեկցութեամբ, օրհնուած Միւռոնը եւ իւղերը թափօրով փոխադրեց Զմմառի վանքի Նահատակաց դահլիճը, որից յետոյ սեղանատան մէջ տեղի ունեցաւ եղբայրական սիրոյ ճաշ:

Հայաստանի ուխտաւորները Միւռոնօրհնէքի սրբազան արարողութիւնից բացի այս մի քանի օրերի ընթացքում ուխտագնացութիւններ կատարեցին նաեւ Սուրբ Շարբել սրբավայր, «Թռչնոց բոյն» Հայոց ցեղասպանութեան թանգարան Ջիբէյլ (Բիբլոս) քաղաքում, Հարիսայի Տիրամօր սրբավայրը, Սուրբ Եղիա-Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ հայ կաթողիկէ եկեղեցի, Հայ Կաթողիկէ Պատրիարքարան, Սուրբ Աւետման եկեղեցի, Սուրբ Խաչ եկեղեցի, Պուրճ Համուտ հայկական թաղամաս, Այնճար հայկական գիւղ, Այնճարի Սուրբ Վարդարանի Տիրամայր հայ կաթողիկէ եկեղեցի, Բշուեթի Տիրամայր եկեղեցի եւ ուխտավայր:

ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՏՕՆԸ ԵՒ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՄԱՏՌԱՆ ՕԾՈՒՄԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ

Խաչվերացի տօնին զուգահեռ տեղի ունեցաւ Սուրբ Գրիգոր Նարեկացուն ընծայուած նորակառոյց մատուռի բացումն ու պատկերների օծումը:

Հայ Եկեղեցին ծիսական տարուայ ընթացքում տարբեր թուականներով է նշում Սուրբ Խաչին նուիրուած տօները: Սեպտեմբերի 14-ի ամենամօտ Կիրակին Խաչվերացն է, որը յիշատակւում է նաեւ որպէս Եկեղեցու աւագ տօներից մէկը: Ամէն անգամ հաւատացեալը եկեղեցական խորիմաստ շարականներով ու աղօթքներով յիշատակում է Քրիստոսի խաչելութեան Փրկչագործ խորհուրդը՝ իր կեանքի ուղին առաջնորդելով դէպի արդարութեան եւ սիրոյ ճանապարհ:

2019թ. սեպտեմբերի 15-ը Երեւանի Սուրբ Գրիգոր Նարեկացի Եկեղեցու հաւատացեալների համար իւրայատուկ օր էր: Տօնին զուգահեռ տեղի ունեցաւ համանուն Սրբին ընծայուած նորակառոյց մատուռի բացումն ու պատկերների օծումը: Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Արեւելեան Եւրոպայի Հայ Կաթողիկէ առաջնորդ Արհի. Ռափայէլ Արք. Մինասեանի հրամանով օրուայ Սուրբ եւ Անմահ Պատարագը մատուցեց ժողովրդապետ Հոգշն. Հ. Մաշտոց Վրդ. Զահթերեանը՝ առընթերականութեամբ Հոգշն. Հ. Նարեկ Վրդ. Մնոյեանի եւ Հոգշն. Հ. Գէորգ Վրդ. Սարգսեանի, մասնակցութեամբ Գերյ. Հ. Գառնիկ Ծ. Վրդ. Յովսէփեանի: Խորանի սպասաւորութիւնը կատարեցին Սրբոց Հրեշտակապետաց Միացեալ Հոգեւոր Ճեմարանի ժառանգաւորները՝ մասնակցութեամբ երաժիշտ Պրն. Արամ Կապաղջուրեանի եւ երգչախմբի ու դպրաց դասի անդամների:

Պատարագիչ հայր սուրբը փոխանցեց օրուայ խորհուրդը: Նա հաւատացեալի կեանքում կարեւորեց սուրբ Խաչի դրոշմած յաղթական

իմաստը, որի շնորհիւ կը կարողանանք հասնել փրկութեան եւ արժանի կը դառնանք երկնաւոր օթեւանին: Նա յուզմունքով անդրադարձաւ հայի ուսերին յայտնուած տարբեր փորձութիւններին ու դժուարութիւններին, սակայն կոչ ուղղելով հաւատացեալներին՝ նրանց խրախուսեց պաշտպանուել Սուրբ Խաչի զօրութեամբ: Ապա շնորհակալական խօսքեր բարձրացրեց իւրաքանչիւր անձի՝ հաւատացեալի համար, որոնք իրենց ներդրումը ունեցան մատուռի շինարարական աշխատանքներում ու բացման հանդիսութիւնը հասցրեցին իր յաջող աւարտին:

Սուրբ Պատարագի աւարտին խորանի դիմաց տեղի ունեցաւ Մատաղի օրհնութիւնը, ապա թափօրը ընթացաւ դէպի մատուռ, որտեղ Գերյ. Հ. Գառնիկ Ծ. Վրդ. Յովսէփեանը կատարեց մատրան դռան օրհնութիւնն ու օծումը: Բացման ժապաւէնը հատեց հաւատացեալների մի խումբ: Ապա քահանայից դասը, մատուռ մուտք գործելով, օծեց տեղադրուած սրբապատկերները: Հ. Մաշտոց Վրդ. Զահթերեանը օրհնեց եւ օծեց կենդրոնում տեղադրուած Սուրբ Գրիգոր Նարեկացու պատկերը, Հ. Նարեկ Վրդ. Մնոյեանը՝ աջին տեղադրուած Զմմառի Ցաւագին Տիրամօր պատկերը, իսկ Հ. Գէորգ Սարգսեանը՝ ձախ կողմի Սրբուհի Ռիթայի պատկերը: Յաջորդեց սրտաբուխ շնորհակալական խօսք, ապա՝ «Պահպանիչ» աղօթքն ու Յիսուսի խաչափայտի մասունքով վերջին օրհնութիւնը:

Աւարտին ներկայ հաւատացեալների հոծ բազմութիւնը իր շնորհաւորանքները փոխանցեց ժողովրդապետ հայր սուրբին, հոգեւոր դասին ու ստացաւ մասունքի օրհնութիւնն ու մատաղը:

ՍԱՐԿԱՒԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՍԲ. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ամենապատիւ եւ Գերերջանիկ Տէր Գրիգոր Պետրոս Ի Հոգեւոր Տէրը նոր ձեռնադրեալ սարկաւագներին յորդորեց լինել բարի օրինակ իրենց հօտին

2019 թուականը յոբելեաններով յատկանշուած տարի է Զմմառի Պատրիարքական Կղերի Միաբանութեան համար. նախ Միաբանութեան հիմնադրութեան (1749թ.) 270-ամեակն է, ապա հայոց ցեղասպանութեան օրերին նահատակուած միաբան Երանելի Արհի. Տ. Իգնատիոս Արքեպս. Մալոյեանի ծննդեան (1869թ.) 150-ամեակն է:

Այս տօնական մթնոլորտի լոյսի ներքոյ սեպտեմբերի 14-ին Պուրճ Համուտի Սբ. Փրկիչ եկեղեցում միաբանների թիւն աւելացաւ եւս չորս սարկաւագներով:

Սարկաւագական ձեռնադրութիւն ստացան կիսասարկաւագներ Կարապետ Գլընճեանը, Պետրոս Մարաշլեանը, Վարդան Ճալլուֆը եւ Լեւոն Ստեփանը, որոնք համալրեցին Զմմառի Պատրիարքական Կղերի Միաբանութեան շարքերը:

Սրտառուչ ձեռնադրութիւնը շնորհուեց ձեռամբ Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Կաթողիկոս Պատրիարք Ամենապատիւ եւ Գերերջանիկ Տ. Տ. Գրիգոր Պետրոս Ի.ի:

Ձեռնադրութեան ընթացքում Ամեն. եւ Գեր. Հոգեւոր Տէրը իր հայրապետական պատգամում նախանդրադարձաւ Սուրբ Խաչի օրուայ խորհրդին, ապա նոր ձեռնադրեալ սարկաւագներին յորդորեց լինել բարի օրինակ իրենց հօտին, սիրել միմեանց, օգնել կարիքաւորներին, եկեղեցական սուրբ խորհուրդները մատուցել ըստ արժանւոյն, սրբանալով սրբացնել իրենց ժողովրդին Ստեփանոս Նախավկայի նման, ով իր կեանքով եւ նահատակութեամբ վկայեց Յիսուս Քրիստոսի հանդէպ հաւատը:

Հոգեւոր Տէրը խօսքը եզրափակեց՝ շնորհաւորելով նոր ձեռնադրեալ սարկաւագներին, նրանց ծնողներին եւ Զմմառու Պատրիարքական Կղերի Միաբանութեան անդամներին, որոնք ունեցան չորս նոր միաբաններ:

Հայրապետի կողմից իրենց շնորհուած լիազօրութեամբ՝ նոր ձեռնադրուած սարկաւագները Յիսուս Քրիստոսի Մարմինն ու Արիւնը բաշխեցին հաւատացեալներին խոր յուզական մթնոլորտում:

Սուրբ եւ Անմահ Պատարագի աւարտին Հոգեւոր Տիրոջ, եօթ սինհոդոսական եպիսկոպոսների եւ քահանաների ձեռնադրութիւնը ստացած սարկաւագները Հոգեւոր Տիրոջ, Մեծաւոր Հօր հետ միասին ընդունեցին ներկաների շնորհաւորանքները Ս. Փրկիչ եկեղեցու դահլիճում:

Զմմառի Պատրիարքական միաբանութեան
ֆեյսբուքեան էջ
Վարիկան Նիւզ հայերէն բաժին
Արեւելահայերենի վերածեց՝
Նաիրա Բաղդասարեան

ՍԻԶԱՒԷՏՈՒՄ ԵՒ ՂԱԶԱՆՉԻՈՒՄ՝ ՍԲ. ՍԵՂԱՆԻ ՕԾՄԱՆ ԵՒ ԱՌԱՋԻՆ ՍԲ. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Փոքր թուով, բայց մեծ հաւատքով

2019թ. սեպտեմբերի 28-ին Աշոցքի տարածաշրջանի Սիզաւէտ եւ Ղազանչի հայ կաթողիկէ գիւղերում տեղի ունեցան Սուրբ Սեղանի օծման եւ առաջին Սուրբ Հաղորդութեան արարողութիւններ, որոնք կատարուեցին հայրապետական Սուրբ Պատարագների ընթացքում՝ մատուցուած Արիի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանի ձեռամբ:

Առաւօտեան՝ ժամը 11:00-ին, Սրբազան Հայրը ժամանեց Սիզաւէտ փոքրիկ գիւղը, որտեղ Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու բակում նրան դիմաւորեցին առաջին Սուրբ Հաղորդութեան պատրաստուող հինգ մանուկները՝ հրեշտակների մասին մի գեղեցիկ երգով եւ աղ ու հացով: Ապա Սրբազան Հայրը մէկ առ մէկ ձեռքով ողջունելով բակում հաւաքուած հաւատացեալներին, մտաւ եկեղեցի՝ ծանօթանալու Խորանի նորակառոյց քարէ Սուրբ Սեղանին: Այն կառուցուել է ամիսներ առաջ՝ Հայկական Կարիտասի «Ծխական հասարակական խորհուրդներ» ծրագրի շրջանակներում, ինչպէս նաեւ Աշոցքի գիւղապետարանի եւ Սիզաւէտի հաւատացեալների միասնական նուիրատուութիւններով եւ ծնունդով Սիզաւէտից՝ վարպետ Արամ Թովմասեանի կամաւորապէս կատարած անգնահատելի, աստուածահաճոյ աշխատանքի շնորհիւ: Սուրբ Խորանի կառուցմանը զուգահեռ նաեւ նորոգուել է եկեղեցու հին պարիսպը, տեղադրուել է նոր դարպաս եւ նստարաններ՝ բակում: Սուրբ Սեղանը պատրաստուած է ֆերզիտ քարից, ունի տապանակ եւ ստորին հատուածում զարդարուած է Սուրբ Խաչի եւ երկու հրեշտակների քանդակներով:

Սուրբ Սեղանը օծուեց Սրբալոյս Միւռոնով, այնուհետեւ Սուրբ Պատարագը մատուցուեց՝ ձեռամբ Արիի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանի, առընթերակայութեամբ Ուկրաինայի հայ կաթողիկէների ժողովրդապետ Հոգշն. Հ. Նարեկ Վրդ. Մնոյեանի եւ Սիզաւէտի, Ղազանչիի, Մեծ Սեպասարի եւ Բաւրայի ժողովրդապետ Տ. Յովսէփ Քհնյ. Գալստեանի, սպասաւորութեամբ ճեմարանական եղբայրների: Սուրբ Պատարագի ընթացքում առաջին Սուրբ Հաղորդութեան պատրաստուած սպիտակազգեստ մանուկները արտասանեցին յուզիչ եւ խորհրդաւոր աղօթքներ, մատուցեցին խորհրդանշական ընծաները եւ առաջին անգամ ճաշակեցին Տէր Յիսուս Քրիստոսի Սուրբ Մարմինն ու Արիւնը՝ երախտագիտութեան խօսքերով:

Սրբազան Հայրն իր քարոզում իր մեծ ուրախութիւնը յայտնեց Սուրբ Սեղանի օծման եւ հինգ մանուկների առաջին հաղորդութեան առթիւ՝ մանուկներին հրաւիրելով մտածել այն մասին, որ առաջին Սուրբ Հաղորդութիւնը Տէր Յիսուսի հետ առաջին միութիւնն է, երկար սպասուած եւ երանելի մի հանդիպում, ինչպիսին ծնողից երկար ժամանակով բաժանուած երեխայի եւ ծնողի հանդիպումն է՝ մեծ եւ բնական մի երջանկութիւն, որը ոչ մի բանով չես կարող փոխարինել: Իւրաքանչիւր երեխայ Տէր Յիսուս Քրիստոսին պէտք է ընդունի որպէս իր հոգեւոր ծնողը, իր հոգեւոր կեանքի աղբիւրը եւ աճման, սրբութեան միակ գրաւականը եւ հիմքը:

Սուրբ Պատարագից յետոյ Տ. Յովսէփ Քհնյ. Գալստեանը երախտագիտութիւն յայտնեց Սրբազան Հօրը՝ հայրական ներկայութեամբ փոքրիկ համայնքի հաւատացեալների մեծ հաւատքը ամրապնդելու, նրանց զօրակցելու համար: Քահանան շնորհակալութիւն յայտնեց նաեւ Հայկական Կարիտասին, գիւղապետարանին, վարպետին եւ բոլոր գիւղացիներին, ովքեր օգնել են Սուրբ Սեղանի կառուցմանը: Իրենց սրտի խօսքերն ասացին նաեւ հաւատացեալները՝ Տկն. Կարինէ Յակոբեանը, ով նաեւ շատ յուզիչ առոգանութեամբ արտասանեց Վահան Թէքէեանի «Եկեղեցին հայկական» բանաստեղծութիւնը, երիտասարդների անունից խօսք ասաց Մելիք Միքայէլեանը, ով նաեւ պատմեց երիտասարդների մասնակցութեան մասին՝ հայ կաթողիկէ երիտասարդական միջոցառումներին եւ հոգեւոր ձեռնարկներին: Վերջում Սրբազան Հայրը հիւրընկալուեց գիւղի վարչական ղեկավար Հենրիկ Պօղոսեանի տանը, որտեղ մտերմիկ զրոյց տեղի ունեցաւ սեղանի շուրջ:

Ռափայէլ Սրբազանը Սիզաւէտից մեկնեց հարեւան Ղազանչի գիւղը, որտեղ եւս մատուցեց Սուրբ Պատարագ մատրան մէջ, որ գտնուում է երիտասարդական կրթական կենդրոնում: Այստեղ Սուրբ Պատարագի ընթացքում առաջին Սուրբ Հաղորդութիւնը Սրբազան Հօր ձեռքերից

ընդունեցին տասը երեխաներ, ովքեր եւս, ինչպէս Սիզաւէտի երեխաները, նախապէս պատրաստուել էին Տէր Յովսէփի առաջնորդութեամբ՝ քրիստոնէական վարդապետութեան դասընթացի ընթացքում: Սրբազան Հայրը, երեխաներին դիմելով, ասաց, թէ այս մատրան մէջ պատարագելը իրեն յիշեցրեց 1970-ականներին իր ծառայութիւնը փոքրիկ հայ կաթողիկէ համայնքներում, որտեղ կար պարզութիւն, շքեղութեան բացակայութիւն, բաց այնքա՜ն բաց եւ հաւատքի մէջ ջերմ սրտեր, այնքան ամուր հաւատք, որ մեծ եւ անփոխարինելի հոգեւոր արժէք է: Սրբազանը ներկայ ընտանիքներին հրաւիրեց միշտ ամուր լինել հաւատքի մէջ, երեխաներին՝ լինել հաւատքի եւ սիրոյ առաջամարտիկները, անպտուղ չթողնել Յիսուսի հետ այս առաջին եւ յետագայ բոլոր շնորհառատ միութիւնները, ընդունել Յիսուսին՝ որպէս սեփական կեանքի, ապագայի միակ Տէրը եւ անդաւաճան ընկերը:

Սուրբ Պատարագից յետոյ Տ. Յովսէփը շնորհակալութիւն յայտնեց Սրբազան Հօրը՝ Ղազանչի համայնքին եւս իր ներկայութեամբ զօրավիգ կանգնելու համար, շնորհակալութիւն յայտնեց նաեւ երեխաներին եւ նրանց ծնողներին՝ հաւատքի վկայութեան եւ հոգեւոր գիտակցութեան համար եւ հրաւիրեց աղօթել, որ մի օր գիւղը նաեւ եկեղեցի ունենայ: Ղազանչի գիւղում նոր հայ կաթողիկէ եկեղեցու հիմքերի կառուցման աշխատանքները կատարուեցին դեռեւս 2014թ., բայց չշարունակուեցին ֆինանսական դժուարութիւնների պատճառով: Առաջիկայում աշխատանքները կը շարունակուեն Աստծոյ օգնութեամբ:

Սուրբ Պատարագից յետոյ Սրբազան Հայրը ծանօթացաւ նաեւ գիւղի կրթական կենդրոնի շէնքի նորոգման աշխատանքների արդիւնքներին. Հայկական Կարիտասի ծրագրերով, Սրբազան Հօր աջակցութեամբ եւ քահանայի նախաձեռնութեամբ վերջին ամիսներին մասնակի նորոգուել են շէնքի երկրորդ հարկը, որտեղ գործում է մանկապարտէզը, ամբողջութեամբ փոխուել է շէնքի տանիքը, նորոգուել են կոյուղին եւ պարիսպները, կառուցուել է նախամուտքի ծածկը: Հայկական Կարիտասի «Ծխական խորհուրդներ» ծրագրով եւ բելգիահայ կանանց աջակցութեամբ նորոգուել են շէնքի առաջին հարկում գտնուող երկու ընդարձակ սենեակները, որոնցում սկսել են կազմակերպուել պարի եւ մարմնամարզութեան դասընթացներ մանուկների եւ երիտասարդների համար:

Տ. Յովսէփ Քինյ. Գալստեան

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՆ ՆՈՐ ՔԱՅԼԵՐ Է ՁԵՌՆԱՐԿՈՒՄ՝ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱՄԻՋՈՑՆԵՐԸ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայ Կաթողիկէ Հաղորդամիջոցների յանձնախումբի նախագահ Արհի. Տէր Ռափայէլ Արքեպս. Մինասեանի նախագահութեամբ՝ 2019 թուականի նոյեմբեր 7-8 Երեւանի մէջ տեղի ունեցաւ ընդհանուր ժողով, որի խորագիրն էր՝ «Երիտասարդները Եկեղեցին հաղորդում են աշխարհին»:

Ժողովի նպատակն էր վերաշխուժացնել Հայ Կաթողիկէ Եկեղեցու Հաղորդամիջոցների գործունէութիւնը եւ վերարժեւորել դրանց դերը եկեղեցական եւ համայնքային կեանքում՝ յստակեցնել միասնական ռազմավարութիւն, նպատակներ եւ տեսլական, ինչպէս նաեւ աշխատանքային գործնական սկզբունքներ: Ժողովականները խօսեցին ընկերային հաղորդամիջոցների գործունէութեան ներկայիս իրականութեան մասին, մատնանշեցին խնդիրները եւ մարտահրաւէրները, առաջարկեցին դրանց արձագանքելու առաւել արդիւնաւէտ միջոցները, նաեւ վերլուծեցին հաղորդակցութեան ժամանակակից հնարաւորութիւնների օգտագործման կարելիութիւնները: Իւրաքանչիւրը հանդէս եկաւ ուրոյն առաջարկութիւններով: Արհի. Տէր Ռափայէլ Արքեպս. Մինասեանը յատկապէս ընդգծեց նուիրեալ եւ անշահախնդիր աշխատանքի ու աշխատողների անհրաժեշտութիւնը: Բոլորին հրաւիրեց ջանք գործադրելու համայնքներում բարձրացնելու երիտասարդների հետաքրքրութիւնը եկեղեցական եւ համայնքային հաղորդամիջոցների գործունէութեան նկատմամբ:

Ժողովականներին ներկայացուեց երիտասարդներին ուղարկուած հաղորդամիջոցների մասին հարցարանի ուսումնասիրութեան արդիւնքները: Առաջարկուեց աւելի լայն շրջանակների համար հարցարանն ուղարկել Հայ Կաթողիկէ համայնքներին՝ աւելի ամբողջական տեսութիւն ունենալու համար: Այսպիսով հնարաւոր կը լինի առաւել ընդգրկուն եւ յստակ պատկերացում կազմել Հայ Կաթողիկէ երիտասարդների՝ եկեղեցական եւ համայնքային հաղորդակցութեան միջոցների գործունէութեամբ հետաքրքրուածութեան եւ տեղեկատուութեան հաղորդակցման գործընթացում ներգրաւուածութեան նկատմամբ: Կամաւորական աշխատանքի հնարաւորութեան վերաբերեալ մօտ ապագայում կը կազմակերպուեն պատրաստութեան տեղային եւ ընդհանուր դասընթացներ: Կազմաւորման համար առաջարկուեց նաեւ մի քանի հոգի ուղարկել Ռատիո Վատիկան՝ Վատիկան Նիւզի աշխատանքային ոճին մօտէն ծանօթանալու համար: Խօսուեց նաեւ այն մասին, որ Հայ Կաթողիկէ Հաղորդամիջոցներն ընկերանան երիտասարդներին ԵՀՕ (Երիտասարդական Համաշխարհային Օրեր) Լիզպոն 2022 եւ ՀԵՕ (Համայնքային Երիտասարդական Օրեր) հանդիպումներին եւ, հնարաւորութեան դէպքում, յատուկ հավելուած ստեղծուի, որը մատչելի կը լինի աշխարհի բոլոր Հայ Կաթողիկէ երիտասարդներին: Առաջարկուեց նաեւ մշակել միասնական ռազմավարութիւն:

Ձեւաւորուեց նոր աշխատանքային խումբ, որի անդամներն են՝ Հ. Վարդան Ծ. Վրդ. Գազանճեան, Հ. Սեպուհ Վրդ. Կարապետեան, Տէր Յովսէփ Քինյ. Գալստեան, Ռոպէր Աթթարեան եւ Հրանուշ Սարգսեան:

Որոշուեց յունուարի վերջին 10 օրերին Երեւանի մէջ գումարել յաջորդ նիստը, մինչ այդ աշխատանքային խումբի անդամները պիտի պատրաստեն յատուկ առաջարկների ցանկ եւ այն ուղարկեն բոլոր Հայ Կաթողիկէ համայնքներին:

ՍՈՒՐԲ ԱԹՈՌԻ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐՔԵՊՍ. ՓՕԼ ԳԱԼԼԱԳԵՐԸ ՆԵՐԿԱՅ ԳՏՆՈՒԵՑ ԳԻՒՄՐԻՈՒՄ ԱՌԱՋՆՈՐԴ ՀՕՐ ԶԵՌԱՄԲ ՄԱՏՈՒՑՈՒԱԾ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻՆ

«Հաւատացեալ մարդն առիւծի քաջութեամբ է դիմագրաւում խոչընդոտներով լի իրականութիւնները: Այս խօսքերը, կարծում եմ, շատ լաւ են յարմարւում հայ ժողովրդին»:

Գալլագեր

2019թ. նոյեմբերի 10-ին Գիւմրիի Սրբոց Նահատակաց Հայ Կաթողիկէ Մայր Տաճարում կիրակնօրեայ Սուրբ Պատարագը մատուցեց Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանը՝ համապատարագութեամբ Սուրբ Աթոռի Պետութիւնների հետ յարաբերութիւնների քարտուղար Արքեպիսկոպոս Փօլ Գալլագերի եւ Հայաստանում, Վրաստանում Պապական Նուիրակ Արքեպիսկոպոս Ժոզէ Բեթենկուրի, ինչպէս նաեւ Սուրբ Աթոռից ժամանած պատուիրակութեան այլ հոգեւորականների: Սուրբ Պատարագին ներկայ էին Հայաստանում ծառայող հայ կաթողիկէ հոգեւորականները իրենց համայնքների հաւատացեալների խմբերի հետ, Հայկական Կարիտասի ներկայացուցիչներ, Անարատ Յղութեան հայ քոյրեր, Սպիտակի Գթութեան միսիոներ քոյրերը, Սրբոց Հրեշտակապետաց միացեալ հոգեւոր ճեմարանի սաները եւ հաւատացեալների հոծ բազմութիւն:

Աւետարանի ընթերցումից յետոյ Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանը ողջունեց Արքեպիսկոպոս Գալլագերին եւ ասաց, որ նրա այցելութիւնը մի շնորհաբեր առիթ է, որ հայ կաթողիկէ համայնքը հաւաքուի Մայր Տաճարի կամարների ներքոյ եւ լսի նրա հայրական խօսքը: Ռափայէլ Սրբազանը ներկայացրեց, թէ ովքեր եւ ինչ համայնքների ու կազմակերպութիւնների ներկայացուցիչներ են մէկտեղուել Մայր Տաճարում, ապա խնդրեց Արքեպիսկոպոս Գալլագերին իր խօսքն ուղղել հաւատացեալներին: Արհի. Գալլագերը մեկնաբանեց օրուայ աստուածաշնչեան հատուածները եւ ասաց, որ վստահ է, թէ այդ տողերի «գլխաւոր պատգամը սա է՝ յիշել վստահութեամբ, որ մեր Աստուածը միայն Արարիչ չէ, որ երբեմն-երբեմն միջամտում է մեր կեանքում, այլ ճշմարիտ Աստուած եւ Հայր է, ով ցանկանում է տեսնել մեզ վստահասիրտ եւ կեանքով լի՝ բոլոր իրավիճակներում այն պատճառով, որ նա միշտ կենդանի Աստուած է եւ մեր կողքին է»:

Արքեպիսկոպոս Գալլագերը, խօսելով հաւատքի եւ հաստատակամութեան մասին, անդրադարձ կատարեց նաեւ հայ ժողովրդի անցած պատմական ճանապարհին.



– Վատիկանում պապական պալատների սրահներից մէկի պատին գրուած է Աստուածաշնչի Առակաց գրքից մի հատուած՝ «Հաւատքով եւ Աստծոյ հանդէպ վստահութեամբ մարդը ոչնչից չի վախենում, եւ ոչ մի բան չի խոչընդոտում իր ճանապարհին, հաւատացեալ մարդն առիւծի քաջութեամբ է դիմագրաւում խոչընդոտներով լի իրականութիւնները»: Այս խօսքերը, կարծում եմ, շատ լաւ են յարմարւում հայ ժողովրդին, որը դարերի ընթացքում քաջութեամբ ու վճռականութեամբ դիմագրաւել է բազմաթիւ տառապանքների ու փորձութիւնների»:

Իր քարոզի աւարտին Սուրբ Աթոռի բարձրաստիճան պաշտօնեան ներկաներին փոխանցեց Նորին Սրբութիւն Ֆրանցիսկոս Սրբազան Քահանայապետի հայրական ողջոյնը եւ խօսքը.

«Նա ինձ խնդրեց փոխանցել ձեզ, որ աղօթում է ձեզ համար՝ նաեւ ի յիշատակ եւ ի շարունակութիւն 2016 թուականին Հայաստան կատարած իր ճամփորդութեան եւ, յատկապէս, ի յիշատակ այն Սուրբ Պատարագի, որ նա այստեղ՝ Գիւմրիում, մատուցեց: Սրբազան Քահանայապետը, ինչպէս յաճախ կրկնում է իր առաքելական կոնդակներում, ձեզանից իւրաքանչիւրին քաջալերում է մասնակցել Աւետարանի շնորհին՝ ուրախութեամբ, բերկրանքի մէջ, սրտի մղումով եւ Տիրոջ հանդէպ վստահութեամբ: Նա ինձ խնդրել է ներկաներիդ ու ձեր սիրելիներին փոխանցել իր օրհնութիւնը՝ բոլորիդ յանձնելով Սուրբ Կոյս Մարիամի՝ մեր Մօր բարեխօսութեանը»:

Սուրբ Պատարագի աւարտին Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանը շնորհակալութիւն յայտնեց Արքեպիսկոպոս Գալլագերին՝ հայ կաթողիկէ համայնքին այցելելու համար եւ, որպէս յուշ, նուիրեց մի գեղեցիկ սկիհ:

Պատարագի աւարտից յետոյ Արքեպիսկոպոս Փօլ Գալլագերը միանգամից վերադարձաւ Սուրբ Աթոռ:

Տ. Յովսէփ Քհնյ. Գալստեան

ԿԱՐԻՏԱՍ ՎՐԱՍՏԱՆԸ ՏՕՆԵՑ ԻՐ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 25-ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԸ

«Կարիտասը մեզ շնորհում է մի բարոյական կողմնացոյց՝ գտնելու մեր ճանապարհը»:
Արհի. Տէր Ռափայէլ Արքեպս. Մինասեան

2019թ. նոյեմբերի 4-ին Թբիլիսիի կաթողիկէ համայնքը տօնեց Վրաստանի Կարիտասի հիմնադրման 25-ամեայ յոբելեանը: Տօնական միջոցառումներին մասնակցում էր նաեւ Հայկական Կարիտասի Ընդհանուր Նախագահ, Վրաստանի Կարիտասի Կառավարման խորհրդի անդամ եւ նախկին Ընդհանուր Նախագահ (2016-2018թթ.) Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանը՝ ուղեկցութեամբ Գերյ. Հ. Գառնիկ Ծ. Վրդ. Յովսէփեանի, Արժ. Տ. Գրիգոր Աւագ Քհնյ. Մկրտչեանի եւ Արժ. Տ. Անտոն Քհնյ. Անտոնեանի: Թբիլիսիի Աստուածամօր Վերափոխման Մայր Տաճարում մատուցուեց Սուրբ Պատարագ՝ ձեռամբ Վրաստանի լատինածէս կաթողիկէների առաջնորդ Եպիսկոպոս Ճուզեպպէ Բազոտտոյի, առընթերակայութեամբ Վրաստանում եւ

Հայաստանում Պապական Նուիրակ Արքեպիսկոպոս Ժոզէ Բեթենկուրի եւ Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանի: Սուրբ Պատարագին հայ կաթողիկէ հոգեւորականներից բացի ներկայ էին Վրաստանում ծառայող լատինածէս հոգեւորականներ, ինչպէս նաեւ Հայկական Կարիտասի Գործադիր տնօրէն Գագիկ Տարասեանը եւ ծրագրերի ղեկավար Անահիտ Գեւորգեանը:

Պապական Նուիրակ Բեթենկուրը, Սուրբ Պատարագի ընթացքում հայրական խօսքով դիմելով ներկաներին, ասաց.

«Եղբայրասիրութիւնը Եկեղեցու ուսմունքի սիրտն է: Դրանո՛վ է Եկեղեցին ապրող մի ուժ: Եկեղեցին կենդանի է այն սիրով, որ վառում է Քրիստոսի Հոգին: Ինչպէս աւելի վաղ՝ այս տարի, մեզ յիշեցրեց Ֆրանցիսկոս Քահանայապետը, այդ սէրը մարդկանց պարզապէս չի առաջարկում նիւթական աջակցութիւն, այլ հոգ է տանում հոգիների մասին, մի բան, որ նոյնիսկ աւելի կարեւոր է, քան նիւթական աջակցութիւնը: Մենք չենք կարող մտածել, որ մարդկութիւնը կարող է «ապրել միայն հացով»... Քրիստոնէական եղբայրասիրութիւնը անեսասէր առատաձեռնութիւն է՝ հիմնուած Յիսուս Քրիստոսի մէջ: Այստեղից են իրենց անունները վերցնում Միջազգային Կարիտասը եւ Վրաստանի Կարիտասը»:

Նոյն օրը Expo Georgia սրահում տեղի ունեցաւ յոբելեանական միջոցառումը: Բացման խօսքով հանդէս եկաւ նախ Վրաստանի Կարիտասի գործադիր տնօրէն Անահիտ Մխոյեանը, ապա հրաւիրեց խօսել Արքեպիսկոպոս Ճուզեպպէ Բազոտտոյին, ով հիմնադրել է Վրաստանի Կարիտասը: Սրբազան Բազոտտօն պատմեց Կարիտասի գործունէութեան զանազան տեսակների մասին, որ մատուցւում է Վրաստանում:

Ապա խօսք առաւ Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանը.

«Ես ուզում եմ շնորհակալութիւն յայտնել Տիրոջը Կարիտասի համար, որ մի անգին պարգեւ է, բարիք գործելու մի կարեւոր գործիք բոլոր ժամանակներում եւ բոլոր ժողովուրդների համար: Այսօր Վրաստանի Կարիտասի 25-րդ յոբելեանն է, որ անհոգ կերպով աշխատել է եւ առատաձեռնօրէն տուել ամենակարիքաւոր, արհամարուած մարդկանց՝ ապահովելու համար լաւագոյն մի կեանք նրանց համար՝ առանց որեւէ խտրականութեան կամ կանխակալութեան: Վրաստանի Կարիտասը ծառայում է բոլորին՝ սիրով եւ առաւելագոյն հոգատարութեամբ:

Ինչ՞ է Կարիտասը

Կարիտասը, ինչպէս բոլորս գիտենք, օգնում է առաջ տանել մարդկային համակողմանի զարգացումը, որպէսզի ամենազրկուած համայնքներում ապրող մարդիկ կարողանան բարգաւաճել եւ ապրել խաղաղ եւ արժանապատիւ կեանքով:

«Կարիտասը» ընտանիքի անուն է, որը ծնուել է Կաթողիկէ Եկեղեցում եւ տարածուել ամբողջ աշխարհում՝ սիրով օգնելու համար կարիքաւոր հասարակութիւններին, տարածուել է աշխարհում մէկ տիտղոսով՝ «Աստծոյ սէրը»: Այն ձեւաւորուել է եկեղեցական առաջնորդների իմաստութեամբ եւ կաթողիկէների ամենօրեայ փորձառութեամբ ամէնուրեք: Այն մեզ շնորհում է մի բարոյական կողմնացոյց՝ գտնելու մեր ճանապարհը: Կարիտասում մեր առաքելութիւնը հիմնուած է կաթողիկէ սոցիալական ուսմունքի հիմնական սկզբունքների վրայ: Վրաստանի Կարիտասը աշխարհի բազում Կարիտասի եղբայրներից մէկն է, որ կրում է ընտանեկան նոյն անունը եւ ծառայում է, խնամում է, կիսում եւ լուծում է տարբեր սոցիալական խնդիրներ առաւելագոյն սիրով:

Կարիտասը միեւնոյն ժամանակ միակ զաւակն է Կաթողիկէ՝ Տիեզերական Եկեղեցու կամ պարզապէս Աստծոյ Տիեզերական Եկեղեցու բարեգործութեան գործիքը:

Կարո՞ղ էք պատկերացնել. այս միակ զաւակը՝ իւրայատուկ նկարագրով, գալիս է աշխարհ՝ Մատթէոս աւետարանչի հետ միասին ասելու. *«Եկէ՛ք ինձ մօտ՝ բոլոր հոգանծներդ եւ բեռնաւորուածներդ, եւ ես ձեզ կը հանգստացնեմ»,* Մտթ. 11, 28:

Կարիտասն, ընդհանրապէս, եւ Վրաստանի Կարիտասը մասնաւորապէս, նման է բազմազաւակ Մօր՝ մի Մայր, որ ամէն ինչ զոհաբերում է, որպէսզի բերի առողջութիւն, ապահովութիւն եւ երջանկութիւն իր զաւակներին, մի Մայր, որ չի քնում, որովհետեւ մտածում է եւ ծրագրում՝ փնտռելով ճանապարհներ՝ իր զաւակների ապագան աւելի լաւը դարձնելու համար: Վրաստանի Կարիտասն այդ սիրասուն Մայրիկն է, որ սիրում է իր բոլոր զաւակներին հաւասարապէս եւ արդարամտութեամբ՝ հոգ տանելով նրանցից ամենախոցելիների հանդէպ, քաջալերելով նրանց՝ յաղթահարելու ամենաբարդ խոչընդոտները եւ օգնելով նրանց հասնելու իրենց նպատակներին հպարտութեամբ եւ արժանապատուութեամբ»:

Ռափայէլ Սրբազանն իր խօսքի աւարտին շնորհակալութիւն յայտնեց բոլոր բարերար

կազմակերպութիւններին, ովքեր հովանաւորում են Վրաստանի Կարիտասի ծրագրերը:

Ռափայէլ Սրբազանից յետոյ խօսք առաւ Վրաստանի Կարիտասի առաջին տնօրէն Վիթոլդ Շուլչինսկին, ով պատմեց, թէ ինչպիսի բարդութիւններ են յաղթահարել 1990-ականներին եւ կարողացել են պահել ու զարգացնել կազմակերպութիւնը: Իր փորձառութեան եւ սկզբնական օրերի դժուարութիւնների մասին պատմեցին նաեւ Վրաստանի Կարիտասի չորս աշխատակիցներ:

Պապական նուիրակն իր շնորհաւորական խօսքում ասաց հետեւեալը.

«Այսօր, երբ հաւաքուել ենք տօնելու Վրաստանի Կարիտասի 25-ամեակը, պէտք է յիշենք ծառայութեան 25-ամեայ ժառանգութիւնը: Կարիտասն այստեղ հիմնադրուեց Վրաստանի անկախացումից անմիջապէս յետոյ եւ միշտ մատուցել է իր ծառայութիւնները, որոնք առաւել հարստացել են հոգեւոր միաբանութիւնների ներկայութեան շնորհիւ: Վրաստանի Կարիտասը մի տուն է, մի աշխատավայր, հանդիպման վայր երիտասարդների եւ երեխաների համար, որոնք յաճախ յայտնւում են սոցիալական դժուարին պայմաններում: Կարիտասը իմաստ է հաղորդում նրանց կեանքին, նրանց տալիս է նոր հմտութիւններ եւ հնարաւորութիւններ»:

Յոբելեանական միջոցառման ժամանակ խօսեց նաեւ Կարիտաս Եւրոպայի Գլխաւոր քարտուղար Մարիա Նայմենը, ով խօսեց այն մասին, որ Վրաստանի Կարիտասը եւրոպական Կարիտասի անդամ է եւ ծառայում է նոյն համատեքստում, որն է մարդու արժանապատուութեան, ազատութեան, ժողովրդավարական արժէքների պաշտպանութիւնը: Այդ արժէքներն ընկած են նաեւ Եւրախորհրդի գործունէութեան հիմքում, որ այսօր մեծ ջանքեր է գործադրում Եւրոպայում մարդու իրաւունքների պաշտպանութեան ոլորտում: Այդ արժէքների պահպանութեան գործում Նայմենը կարեւորեց յատկապէս Ֆրանցիսկոս Քահանայապետի Laudato si շրջաբերական նամակը, որն առաջարկում է լուծումներ՝ յաղթահարելու սոցիալական անարդարութիւնը՝ միասին հոգ տանելով մեր ընդհանուր տան մասին:

Հանդիսութեան վերջում՝ խօսքերից յետոյ, տեղի ունեցան վրացական պարային ելոյթներ, ապա, որպէս միասնութեան խորհրդանիշ, կտրեցին մի գեղեցիկ թխուածք:

Տեղեկութիւնները ստրամադրեց՝
Գերյ. Հ. Գառնիկ Ծ. Վրդ. Յովսէփեան,
Նիւթը պատրաստեց՝
Տ. Յովսէփ Քհնյ. Գալստեան

ԱՀԱԲԵԿԻՉՆԵՐԻ ՁԵՌՔՈՎ ՍՊԱՆՆՈՒԵՑ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ, ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒ ԱՐԺ Տ. ՅՈՎՍԷՓ ՔԻՆՅ. ՊԵՏՈՅԵԱՆԸ

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի

Սրտի խոր կսկիծով եւ վշտի զգացումով գուժում ենք, որ 2019թ. նոյեմբերի 11-ի առաւօտեան ահաբեկիչների ձեռքով վայրագօրէն սպաննուեց Սիրիայի Գամիշլի բնակավայրի հայ կաթողիկէ համայնքի ժողովրդապետ, հոգեւոր հովիւ Արժ. Տ. Յովսէփ Քինյ. Պետոյեանը: Տ. Յովսէփը սպաննուել է Հասաքիէ-Տէր Զօր ճանապարհին, ըստ երեւոյթին, ահաբեկիչների կողմից արձակուած կրակոցներից: Տէր Հօր մեքենայում եղել են նաեւ նրա հայրը եւ Ֆատի Սանօ Սարկաւագը: Հայրը մահացել է տեղում, քահանան մահացել է հիւանդանոց տեղափոխուելու ճանապարհին, իսկ սարկաւագը գտնուում էր հիւանդանոցում՝ ծանր վիճակում: Յայտնի է, որ Տ. Յովսէփ Պետոյեանը գնում էր Տէր Զօրի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին: Ցաւագին զուգադիպութեամբ, ողբերգական դէպքը պատահել է Շիդդադէ կոչուող մի վայրում, որտեղ տեղի ունեցել 1915-ի հայկական ցեղասպանութեան վերջին կոտորածը:

Տ. Յովսէփ Քինյ. Պետոյեանը ունի մէկ որդի եւ երկու դուստր: Քահանայական ձեռնադրութիւնն ընդունել է 2014թ.՝ ձեռամբ Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանի, Հայաստանի Արեւիկ համայնքում: 2014-ից ծառայում էր Գամիշլիում, որտեղ եւ ապրում էր ընտանիքով: Հիմնել է Գամիշլիի Սուրբ Յովսէփի երիտասարդական միութիւնը, կազմակերպում էր նաեւ տեղում գործող այլ միութիւնների՝ Սրբուհի Ռիթայի, Սրբուհի Թերեզայի միութիւնների աշխատանքը:

Տ. Յովսէփը մի քանի ամիս ծառայել է նաեւ Հայաստանի կաթողիկէ համայնքներում, 2017-2018թթ. մասնակցել է Աղաճանեան կենդրոնում տեղի ունեցող Երիտասարդական համայնքային օրերին: Սիրում էր աշխատել երեխաների եւ երիտասարդների հետ եւ իր կենսուրախ, աշխոյժ բնաւորութեամբ սիրելի էր բոլորի համար:

Գամիշլիում վերջին հրաժեշտը տուեցին նահատակուած քահանային եւ նրա հօրը

«Նրանց արիւնը այս հողում պիտի պտղաբերի ու գեղեցիկ ծիլեր պիտի պարգեւի»:

Երեքշաբթի՝ 2019-ի նոյեմբերի 12-ին, Գամիշլիի Սուրբ Յովսէփ Հայ Կաթողիկէ առաջնորդանիստ եկեղեցում, Հայ Կաթողիկէ համայնքի եպիսկոպոսական փոխանորդ առաջնորդ Գերյ. Անդրանիկ Ծ. Վ. Այվազեանի գլխաւորութեամբ տեղի ունեցաւ Հայ Կաթողիկէ համայնքի հովիւ, երկուշաբթի՝ նոյեմբերի 11-ին վայրագօրէն սպաննուած նահատակ Տէր Յովսէփ Պետոյեանին ու նրա հօր յուղարկաւորութեան արարողութիւնը, որին իրենց մասնակցութիւնը բերեցին Հայ Առաքելական քոյր Եկեղեցու կաթողիկոսական տեղապահը եւ միւս քոյր եկեղեցիների հոգեւոր ներկայացուցիչներ, հայ համայնքի հաւատացեալները, ինչպէս նաեւ իսլամական հասարակութեան անդամներ, ի նշան զօրակցութեան եւ միութեան:

Այս տխուր առիթով արտասանած իր քարոզի մէջ Գերյ. Այվազեանը ընդգծելով հանգուցեալ քահանայի նուիրական ծառայութեան հոգին՝ շեշտեց, թէ Տ. Յովսէփը նահատակն է համայն քրիստոնէութեան, նաեւ սիրիական հայրենիքի:

Գերյ. Այվազեան մէկ յայտարարութեամբ հանդէս գալով՝ նշել էր, թէ Սիրիայում հայերը լիիրաւ

մասն են հասարակութեան ու երկրի, եւ թէ Տէր Յովսէփը նահատակուեց կատարելով իր հովուական պարտականութիւնը, այն է մօտիկ լինել իրեն յանձնուած հօտին, հոգ տանել նրանց հոգեւոր եւ նիւթական կարիքներին, յատկապէս Սիրիայի պէս երկրում, ուր տարիների պատերազմն առաջացրել է աւեր ու կործանում, իսկ բնակչութեանը մատնել է յուսահատութեան:

Գերյարգելի Այվազեանը Տէր Յովսէփին նկարագրած է որպէս վեհանձն առաքեալի, միշտ պատրաստ՝ օգնելու ուրիշին, ժպտերես եւ հպարտ իր կոչմամբ:

«Ես մեծ վստահութիւն ունէի իր վրայ եւ նրա մահը ինձ համար մեծ կորուստ է». ասել է Գերյարգելի Այվազեանը, որ շեշտել է թէ Տէր Յովսէփն ու նրա հայրը նահատակներ են, որոնք իրենց կեանքը տուեցին երկրի ազատութեան համար: Նրանց արիւնը այս հողում պիտի պտղաբերի ու գեղեցիկ ծիլեր պիտի պարգեւի». աւելացրել է Այվազեան գերյարգելին:

Ռոպէր Աթթարեան
Վատիկան Նիւզ հայկական բաժին

Ֆրանցիսկոս Քահանայապետը իր սրտակցութիւնն է յայտնել՝ Տ. Յովսէփ Պետոյեանի եւ նրա հօր մահուան կապակցութեամբ

Աղօթում եմ նրանց համար

Նորին Սրբութիւն Ֆրանցիսկոս Սրբազան Քահանայապետն իր թուիթերեան էջում գրառում է կատարել Արժ. Տ. Յովսէփ Քհնյ. Պետոյեանի սպանութեան կապակցութեամբ: Նորին Սրբութիւնը գրել է.

«Ես մօտ եմ Սիրիայի Գամիշլիի հայ կաթողիկէներին, որ այսօր հաւաքւում են՝ յուղարկաւորելու իրենց համայնքի հոգեւոր հովուին՝ Տ. Յովսէփ Պետոյեանին, ով սպաննուեց երեկ՝ իր հօր հետ միասին: Ես աղօթում եմ նրանց համար, նրանց ընտանիքների համար եւ Սիրիայի բոլոր քրիստոնեաների համար»:

Տէր Գրիգոր Աւագ Քհնյ. Մկրտչեանի ուղերձը Եկեղեցւոյ հաւատաւոր զաւակներին

Տէր Յովսէփ Քհնյ. Պետոյեանին՝ որպէս Քրիստոսի համար իր անձը զոհած հոգեւորականի, դասել մարտիրոսների շարքին

Գիւմրիի Սրբոց Նահատակաց Հայ Կաթողիկէ Աթոռանիստ Եկեղեցւոյ Ժողովրդապետ Տէր Գրիգոր Աւագ Քհնյ. Մկրտչեանն իր ֆեյսբուքէան էջի վրայ բաց նամակ հրապարակեց Արժ. Տէր Յովսէփ Քհնյ. Պետոյեանի մահուան կապակցութեամբ.

«Սիրելի՛ հաւատաւոր ժողովուրդ,

Ինչպէս գիտէք, օրեր առաջ՝ 2019 թուականի նոյեմբեր 11-ի առաւօտեան, Սուրիոյ Հասաքիէ – Տէր Զօր ճանապարհին, իրենց «Իսլամական պետութիւն» յորջորջող ահաբեկիչների ձեռամբ վայրագօրէն սպաննուեցին Գամիշլիի Հայ Կաթողիկէ համայնքի ժողովրդապետ, հոգեւոր հովիւ Արժ. Տէր Յովսէփ Քհնյ. Պետոյեանը եւ նրա հայրը:

Բարբարոսներն ուղղակիօրէն թիրախաւորել էին քրիստոնէայ հոգեւորականին, ով անձնուրաց կերպով իր առաքելութիւնն էր իրականացնում երկար տարիներ շարունակուող պատերազմի եւ ահաբեկչական գործողութիւնների բովում գտնուող Սուրիոյ Հանրապետութիւնում՝ Աստուծոյ խօսքը եւ Քրիստոսի լոյսը հաղորդելով կարօտեալ քրիստոնեաներին:

Տէր Յովսէփը նահատակուեց քրիստոնեայ լինելու եւ, յատկապէս՝ կաթողիկէ պատկանելիութիւն ունենալու պատճառով: Փաստօրէն՝ 21-րդ դարում, երբ ամէնուր քարոզւում է խղճի, մտքի եւ կրօնի ազատութիւն, մենք ականատեսն ենք լինում բոլորովին այլ իրականութեան: Այսօր մենք սգում ենք մի հոգեւորականի մահը, ով մարտիրոսուեց վասն հաւատքի: Նրա հոգին միացաւ Տէր Զօրի անապատում 1915 թուականին նահատակուած մէկ եւ կէս միլիոն հոգիներին»:

Որպէս իր խօսքի վերջաբան Տէր Գրիգոր Աւագ Քհնյ. Մկրտչեանը խնդրում եւ ակնկալում է «ողջ հոգեւոր դասի աջակցութիւնը՝ Տէր Յովսէփ Քհնյ. Պետոյեանին՝ որպէս Քրիստոսի համար իր անձը զոհած հոգեւորականի, դասել մարտիրոսների շարքին»:

Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ–ն իր խօսքն է յայտնել՝ Տ. Յովսէփ Պետոյեանի եւ նրա հօր մահուան կապակցութեամբ

Խոր ցաւով տեղեկացանք նոյեմբերի 11-ին Սիրիայի Գամիշլի բնակավայրում տեղի ունեցած ահաբեկչութեան մասին, որի հետեւանքով սպաննուել են հայ կաթողիկէ համայնքի հոգեւոր հովիւ Արժանապատիւ Տ. Յովսէփ Քհնյ. Պետոյեանը եւ նրա հայրը, ինչպէս նաեւ վիրաւորուել է նրանց ուղեկցող սարկաւագը:

Նման յանցագործութիւնը չի կարող ունենալ որեւէ արդարացում: 21-րդ դարը պիտի լինի ժամանակաշրջան, որ աշխարհի բոլոր ծագերում տարբեր ազգերի ու կրօնների խաղաղ գոյակցութիւնը այլընտրանք չունենայ, որ թէ՛ նախկին եւ թէ՛ ներկայիս կատարուած յանցագործութիւնները ստանան իրենց արդար գնահատականը՝ յանուն խաղաղ ու ստեղծագործ կեանքի հաստատման:

Խստօրէն դատապարտելով աստուածաստեղծ կեանքի դէմ յանցաւոր ցանկացած ոտնձգութիւնը՝ Մեր աղօթքն ենք մատուցում Երկնաւորին՝ Արժ. Տ. Յովսէփ Քհնյ. Պետոյեանի եւ նրա հօր հոգիների խաղաղութեան ու հանգստութեան համար եւ մեր վշակցութիւնը բերում նրանց ընտանիքի անդամներին, ինչպէս նաեւ շուտափոյթ ապաքինում մաղթում վիրաւոր սարկաւագին:

ԱՐՀԻ. Տ. ՌԱՓԱՅԷԼ ԱՐՔԵՊՍ. ՄԻՆԱՍԵԱՆԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՐԱԳԵՑ ՊԱՊԱԿԱՆ ՆՈՒԻՐԱԿԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ 25-ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԻ ԱՌԹԻՒ

Շնորհակալութիւն յայտնել Աստծուն եւ վստահել Նրա ներողամտութեանը

2019թ. նոյեմբերի 12-ին Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Արեւելեան Եւրոպայի Առաջնորդ Արհի. Տէր Ռափայէլ Արքեպս. Մինասեանը Թբիլիսիում ներկայ գտնուեց Հայաստանում եւ Վրաստանում Պապական Նուիրակի Խորհրդական Գերշ. Հայր Ճուզեպպէ Լատերցայի քահանայական ձեռնադրութեան 25-ամեայ յոբելեանի առթիւ մատուցուած Սուրբ Պատարագին: Սուրբ Զոհը մատուցուեց ձեռամբ Գերշ. Լատերցայի թեմական եպիսկոպոս Գերշ. Ջուզեպպէ եպս. Ֆավալէի եւ համապատարագութեամբ Պապական Նուիրակ Արհի. Ժոզէ Արքեպս. Բեթենկուրի, Կովկասի լատինածէս կաթողիկէների Առաջնորդ՝ Գերշ. Ջուզեպպէ Եպս. Պասսոտոյի եւ Արհի. Տէր Ռափայէլ Արքեպս. Մինասեանի: Ներկայ էին լատինածէս այլ հոգեւորականներ, Հոգշ. Հ. Նարեկ Վրդ. Մնոյեանը, Արժ. Տ. Գրիգոր Աւագ Քհնյ. Մկրտչեանը, խորհրդական Գերշ. Հայր Լատերցայի հայրը եւ քոյրը, ընտանիքի անդամները եւ ընկերները:

Պատարագիչ եպիսկոպոսն իր խօսքում նախ շնորհակալութիւն յայտնեց Պապական Նուիրակին՝ հրաւէրի համար, ասաց, որ ուրախ է այսպիսի առիթով Վրաստան այցելելու համար: Գերշ. Ճուզեպպէ Եպս. Ֆավալեն շնորհաւորեց Գերշ. Ճուզեպպէ Լատերցային եւ ասաց, որ քահանայական ծառայութիւնը մեծ կոչում է եւ նուիրում է եւ որ ինքը ուրախ է, որ ճանաչում է Գերշ. Հայր Լատերցային եւ գիտի նրա նուիրումի եւ աշխատասիրութեան մասին:

Պապական Նուիրակն իր հերթին շնորհաւորեց Գերշ. Հայր Լատերցային եւ ասաց, որ Պապական Նուիրակութիւնը Քահանայապետի տունն է, եւ բոլոր հրաւիրեալները կարող են այդտեղ իրենց զգալ ինչպէս տանը, եղբայրական մթնոլորտի մէջ: Նա ասաց, որ Գերշ. Հայր Լատերցայի հետ ծառայել է 11 տարի եւ լաւ ճանաչում է նրան, ինչի համար ուրախ է:

Պատարագիչ եպիսկոպոսը եւ Պապական Նուիրակը ցաւակցեցին Արհի. Տէր Ռափայէլ Արքեպս. Մինասեանին եւ հայ հոգեւորականներին Տ. Յովսէփ Քհնյ. Պետոյեանի ողբերգական մահուան դէպքի առթիւ եւ ասացին, որ դա մեծ ցաւ է ամբողջ Եկեղեցու համար:

Գերշ. Հայր Լատերցան վերջում շնորհակալութիւն յայտնեց Պապական Նուիրակին, որ ընձեռեց այդ գեղեցիկ առիթը՝ տօնելու իր յոբելեանը, շնորհակալութիւն յայտնեց համապատարագող եպիսկոպոսներին՝ իր համար աղօթք բարձրացնելու եւ շնորհաւորական ջերմ խօսքեր ուղղելու համար: Նա յիշեց իր քահանայական ձեռնադրութեան օրը, ապա ուսման երկար ճանապարհը՝ Սուրբ Աթոռի դիւանագիտական

ակադեմիայում, ապա ծառայութիւնը տարբեր երկրներում: Գերյ. Հայր Լատերցան ասաց, որ իր քահանայական ծառայութեան երկու կարեւոր կէտերն է համարում՝ Աստծուն շնորհակալութիւն յայտնելը եւ Աստծոյ ներողամտութիւնը:

Տ. Յովսէփ Քինյ. Գալստեան

ԱՐՀԻ. ՏԷՐ ՌԱՓԱՅԷԼ ԱՐՔԵՊՍ. ՄԻՆԱՍԵԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ՏԻԱՐ ԱՐՍԷՆ ԱՒԱԿՈՎԻ ՀԵՏ

Պատմական ժառանգութեան վերադարձի դժուարին ճանապարհը

2019թ. նոյեմբերի 14-ին Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Արեւելեան Եւրոպայի Առաջնորդ Արհի. Տէր Ռափայէլ Արքեպս. Մինասեանը հանդիպել է Ուկրաինայի Ներքին գործերի նախարար Տիար Արսէն Աւակովի հետ եւ քննարկել Ուկրաինայում Հայ Կաթողիկէ համայնքի վերակազմակերպման եւ հայ կաթողիկէ եկեղեցիների վերադարձման հետ կապուած աշխատանքային հարցեր: Առաջնորդ Հօրն ուղեկցում էր Ուկրաինայում առաքելութիւն իրականացնող Հոգշն. Հ. Նարեկ Վրդ. Մնոյեանը, ով կազմակերպել էր հանդիպումը:

Նախարար Աւակովն ասել է, որ Ներքին գործերի նախարարութեան աշխատանքային կարեւոր ուղղութիւններից մէկը կրօնական հենքով եւ դաւանանքի պատճառով կատարուող յանցագործութիւնների կանխումն է: Իր հերթին Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանը խօսել է Ուկրաինայում Հայ Կաթողիկէ Առաջնորդութեան ծրագրերի մասին եւ շնորհակալութիւն յայտնել Ներքին գործերի նախարարութեանը՝ հայ կաթողիկէ ժառանգութեան պահպանութեան ուղղութեամբ գործադրուող ջանքերի համար: Ուկրաինայի կառավարութիւնը ծրագրեր է իրականացնում Հայ Կաթողիկէ Եկեղեցուն վերադարձնելու կոմունիստական ռեժիմի կողմից խլուած ժառանգութիւնը, ուսումնասիրում է 1940-ականների Հայ Կաթողիկէ համայնքի բռնի լիքվիդացիայի պետական քաղաքականութեան հետեւանքները եւ ջանում է վերադարձնել կամ փրկել այն, ինչ հնարաւոր է:

Դեռեւս 2017թ. մայիսի 23-ին Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանի հետ հանդիպման ժամանակ Տիար Արսէն Աւակովը յայտարարեց, թէ կառավարութիւնը Հայ Կաթողիկէ Առաջնորդութեանն է վերադարձնելու Լուովում գտնուող Հայ Կաթողիկէ Սուրբ Խաչ եկեղեցին: Վերադարձի գործընթացը մօտենում է իր տրամաբանական աւարտին: Տիար Արսէն Աւակովը նշել էր, թէ «Մենք մեծ ուշադրութիւն ենք դարձնում Եկեղեցու նկատմամբ պատմական արդարութեան վերականգնմանը»: Նախքան այդ հանդիպումը՝ 2016թ. Ուկրաինայի Գերագոյն Ռադան որոշում ընդունեց 2016թ. հոկտեմբերի 25-ին յիշատակել Արեւմտեան Ուկրաինայում Հայ Կաթողիկէ Եկեղեցու լիքվիդացիայի 70-ամեայ տարելիցը:

Տ. Յովսէփ Քինյ. Գալստեան

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆՆ ԻՐ ՏԻԿՆՈՋ ՀԵՏ ԱՅՑԵԼԵՑ ՀՌՈՄԻ ՍԲ. ՆԻԿՈՂԱՅՈՍ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻ

Յանկանում եմ նաեւ շնորհակալութիւն յայտնել Ձեզ հայկական ինքնութեանն այսքան մօտիկ եւ հարազատ մնալու, այդ ինքնութիւնը ոչ միայն պահպանելու, այլեւ զարգացնելու համար».
Նիկոլ Փաշինեան

Իտալիա պաշտօնական այցի շրջանակում վարչապետ Նիկոլ Փաշինեանն հոկտեմբերի 22-ին տիկնոջ՝ Աննա Յակոբեանի հետ այցելել է Հռոմի Սուրբ Նիկողայոս Հայ Կաթողիկէ եկեղեցի եւ Քահանայապետական Լեւոնեան հայ վարժարան:

Վարչապետին եւ նրա տիկնոջը դիմաւորել են Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի եւ Արեւելեան Եւրոպայի հայ կաթողիկէների առաջնորդ Արիի. Տէր Ռափայէլ Արքեպս. Մինասեանը եւ Քահանայապետական Լեւոնեան հայ վարժարանի մեծաւոր Գերյ. Հայր Նարեկ Ծ. Վրդ. Նաամոյեանը: Նիկոլ Փաշինեանը շրջել է Հռոմի Հայ Կաթողիկէ եկեղեցում, ծանօթացել հայկական հոգեւոր, կրթական մշակոյթային կառոյցի եւ Քահանայապետական վարժարանի գործունէութեանը, հանդիպել նաեւ Քահանայապետական Լեւոնեան հայ վարժարանի սաներին, Անարատ Յղութեան հայ քոյրերի միաբանութեան քոյրերին եւ Հռոմի հայ համայնքի ներկայացուցիչներին:

Վարչապետին ողջոյնի եւ բարեգալստեան խօսք ուղղեց նախ Գերյ. Հայր Նարեկ Ծ. Վրդ. Նաամոյեանը, ով իր խօսքում պատմեց Իտալիայում հայ կաթողիկէ համայնքի հաստատման, Լեւոնեան Վարժարանի պատմութիւնը, նշանաւոր հայ կաթողիկէ հոգեւորականների մասին: Նա խօսեց հայ ժողովրդի պատմական դժուարութիւնների մասին՝ յիշելով հայ մեծ հայրապետներ Սահակ Պարթեւին, Ներսէս Շնորհալուն, ովքեր կանգնած էին հայ իշխանաւորների կողքին՝ իրենց սիրոյ եւ համերաշխութեան, միասնութեան սրտառուչ կոչերով, խրատներով: «Նրանց օրինակով մենք՝ եկեղեցականներս, Ձեզ ենք երկարում մեր համագործակցութեան ձեռքը» ասաց Գերյ. Նամոյեանը:

Ապա խօսք առաւ Արիի. Ռափայէլ Արքեպս. Մինասեանը, որ նախ Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Կաթողիկոս Պատրիարք

Ամենապատիւ եւ Գերերջանիկ Տէր Գրիգոր Պետրոս Ի անունից ողջունեց Վարչապետին՝ ասելով.

«Հայ Կաթողիկէ Եկեղեցին, շարունակելով իր գործունէութիւնը ծաւալել ինչպէս սփիւռքում, այնպէս էլ մայր հայրենիքում, հետեւում է հայրենական իշխանութեան գործունէութեանը՝ ուրախակից լինելով իւրաքանչիւր փոքր ու մեծ ձեռքբերումներին: Մենք մեր վստահ աջակցութիւնն ենք յայտնում Ձեր այն բոլոր քայլերին, որոնք միտուած են հզօրացնելու հայոց պետականութիւնը եւ բարեկեցիկ կեանք ապահովելու հայ ժողովրդին՝ իր հայրենի օրրանում: Մեծ հետաքրքրութեամբ հետեւում ենք սփիւռքի հայկական գաղթօջախներ կատարած Ձեր այցելութիւններին եւ ոգեւորւում ենք Ձեր այցելութիւններով՝ դէպի հայկական ազգային նկարագիրը պահպանող կենդրոններ, ինչպիսիք են Վենետիկի Սուրբ Ղազար կղզին՝ Մխիթարեան միաբանութիւնը եւ Հռոմի Սուրբ Նիկողայոս Հայ Կաթողիկէ եկեղեցին, որոնք, բացի կրթական եւ մշակոյթային կենդրոններ լինելուց, հայ հոգեւոր ինքնութեան պահպանման եւ հոգեւորականների պատրաստման կաճառներ են:

1970-ականներին Պօղոս Զ Քահանայապետն իր արտասանած ճառում բնութագրում է Հայ Եկեղեցին՝ իբրեւ մի իւրայատուկ տեսքով եւ բոյրով ծաղիկ՝ Արեւելեան Կաթողիկէ Եկեղեցիների շարքում եւ մատնանշում էր Հռոմի քահանայապետների առանձնայատուկ սէրն ու գուրգուրանքը՝ հայերի հանդէպ՝ յիշելով Գրիգոր ԺԶ Պապի ծրագիրը, որ ի կատար ածեց Լեւոն ԺԳ Քահանայապետը՝ հիմնելով Հռոմի Քահանայապետական վարժարանը, որտեղ այսօր գտնւում ենք: Այն հնարաւորութիւն է շնորհում հայերիս՝ կենսագործել եւ ապահովել հոգեւոր սպասաւորների շարունակականութիւնը, որ ի պատիւ Լեւոն ԺԳ Քահանայապետի, կոչուեց «Լեւոնեան հայ վարժարան»: Այն կանգուն է եւ ծաւալում է իր դարաւոր գործունէութիւնը մինչեւ այսօր: Արդիւնքը հետեւողական եւ նուիրեալ առաքելութեան ապահովումն է, որ ծաւալում է Հայ Կաթողիկէ Եկեղեցին՝ հայ ազգին տալով հոգեւոր եւ ազգային նկարագրի պահպանութիւնը՝ մինչեւ անգամ պատրաստ լինելով նահատակութեան վասն հայրենեաց: Ահաւասիկ այստեղ է ամփոփուած երանելի նահատակ Տ. Կոմիտաս քահանան, սրբազան խորաններից մէկը նուիրուած է նաեւ Երանելի Իգնատիոս Արքեպիսկոպոս Մալոյեանին, որ նահատակ է 1915-ի Ցեղասպանութեան: Այս տարուայ նոյեմբերի 11-ին դարձեալ Տէր Զօրում ծորեց արիւնը նահատակութեան Տ. Յովսէփ Քինյ. Պետոյեանի, որ միացաւ ապրիլեան բիւրաւոր նահատակներին: Հպարտութեամբ նշում ենք, որ Հայ Եկեղեցին ունակ եղաւ Կաթողիկէ Ընդհանրական Եկեղեցուն պարգեւելու երկու ռահվիրայ՝ երջանկայիշատակ Վսեմաշուք Կարդինալներ Անտոն Հասունին եւ Գրիգոր Պետրոս Աղաճանեանին, որ ամփոփուած են Սուրբ Նիկողայոսի այս եկեղեցում: Գրիգոր Պետրոս Աղաճանեանը երկար տարիներ իր նուիրեալ ծառայութիւնը մատուցեց Կաթողիկէ Եկեղեցու Հաւատքի տարածման գրասենեակի ղեկավարի պաշտօնում: Այսօր Սուրբ Աթոռը սկսել է նրա երանացման եւ սրբադասման գործընթացը, որ յուսանք շուտով կը լինի: Յանձինս նրա, մենք կ'ունենանք եւս մէկ սուրբ՝ մեր հայ սրբերի բոյլի մէջ՝ որպէս բարեխօս մեր Հայ Եկեղեցու միասնականութեան եւ երկրի խաղաղութեան համար»:

Իր խօսքի աւարտին Ռափայէլ Սրբազանը Իտալիայում բնակուող հայութեան անունից բարի գալուստ մաղթեց Վարչապետին եւ վստահեցրեց,

որ ամէն օր աղօթում են հայ ազգի բարօրութեան համար:

ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինեանն իր պատասխան շնորհակալութիւն յայտնեց խօսքերի համար եւ ասաց հետեւեալը.

«Գերապայծառ Տէր,

հոգեւոր հայրեր,

շնորհադարձ քոյրեր,

ՀՀ կառավարութեան յարգելի ներկայացուցիչներ, սիրելի ներկաներ, ես մտածում էի Իտալիայի Հանրապետութիւն մեր ընթացիկ այցի մասին, եւ տպաւորութիւնն այն է, թէ այս այցն Իտալիա, հայ-իտալական յարաբերութիւնները, յետագայ հնարաւորութիւները աւելի լաւ իմանալու, գիտենալու, ճանաչելու մասին է: Բայց իրականում գործնականում գրեթէ բոլոր այցերն ունեն շատ կարեւոր մի հատուած եւ առանձնայատկութիւն՝ մինչ այս պահին, հիմա առաւել եւս ընդգծում է: Խօսքն այն մասին է, որ տարբեր երկրներ այցելելով, տարբեր հանդիպուներ ունենալով՝ մենք ոչ միայն ճանաչում ենք եւ իմանում ենք այդ երկրների մասին, այլեւ աւելի լաւ ճանաչում ենք ինքներս մեզ, մեր պատմութիւնը, մեր ինքնութիւնը, եւ այս պաշտօնական այցերը նաեւ մեր ազգը, մեր ժողովուրդը, մեր պատմութիւնն աւելի լաւ ճանաչելու մասին են:

Ընդհանրապէս երբ խօսում ենք մեր ապագայի կերտման, մեր ինքնութեան պահպանման եւ զարգացման մասին, դրա համար եւ այդ ճանապարհին կայ շատ կարեւոր մի բանաձեւ. մենք իսկապէս որպէս ժողովուրդ պէտք է ինքներս մեզ աւելի լաւ ճանաչենք, աւելի խորը իմանանք մեր պատմութիւնը, աւելի մանրամասն գիտենանք մեր ժառանգութեան մասին, եւ մեր ապագան կառուցելու ամենակարեւոր գործողութիւններից մէկը մեր անցեալը ճանաչելու, մեր անցեալի հետ հաշտ լինելու գործընթացն է: Իտալիա կատարած այս այցը, ինչպէս նաեւ այլ երկրներ կատարած այցերը իսկապէս շատ հսկայական հայկական ենթատեքստ ունեն. մենք սկսեցինք Վենետիկից՝ այցելելով Մխիթարեան միաբանութիւն, որը մեր ինքնութեան պահպանման եւ զարգացման գործում անուրանալի եւ անգնահատելի վաստակ է ունեցել: Այսօր մենք Լեւոնեան վարժարան այցելելու առիթ ունենք, Միլանի Հայ Առաքելական եկեղեցում հանդիպում ունեցանք: Այս այցերը, անկեղծ ասած, մեծացնում են մեր ներուժի գնահատականը, անսահման յարգանքը ինքներս մեր պատմութեան, մեր ժառանգութեան նկատմամբ եւ մեր ապագայի հանդէպ հաւատը: Երբ մենք այցելում ենք հեռաւոր Սինգապուր, եւ այնտեղ այցելութեան ամենակարեւոր օճախներից մէկը հայկական եկեղեցին է, երբ այցելում ենք Ռուսաստան, Եւրոպայի երկրներ, Ֆրանսիա, ԱՄՆ, իրականում այդ բոլոր այցերի արդիւնքներից մէկը մեր ինքնութիւնն աւելի լաւ ճանաչելու պատեհութիւնն է, հնարաւորութիւնն է, եւ սա իսկապէս շատ բարձր գնահատանքի է արժանի:

Ես ուզում եմ ասել, որ իսկապէս մենք շատ բարձր ենք գնահատում Հայ Առաքելական եկեղեցու, Հայ Կաթոլիկ եկեղեցու, Հայ աւետարանական եկեղեցու դերը մեր ինքնութեան պահպանման եւ զարգացման գործում: Ցանկանում եմ նաեւ շնորհակալութիւն յայտնել Ձեզ հայկական ինքնութեանն այսքան մօտիկ եւ հարազատ մնալու, այդ ինքնութիւնը ոչ միայն պահպանելու, այլեւ զարգացնելու համար: Այնպէս ստացուեց, որ Միլանում հանգամանքների բերումով մեր ողջ հանդիպումն անցաւ Ղուկասի աւետարանի Տասը մնասի առակի համատեքստում: Ես կարծում եմ, որ այդ առակը հէնց այսօր էլ շատ հրատապ է մեզ համար, որովհետեւ հարցն այն չէ, թէ մենք ինչ հաշիւ ենք պահանջելու ինքներս մեզնից, հարցն այն է, թէ մենք ինչ հաշիւ ենք տալու մեր սերունդներին, որովհետեւ այն ժառանգութիւնը, որ մենք ունենք ՀՀ-ում, աշխարհում, պէտք է ոչ միայն ուղղակի պահպանուի, այլեւ պէտք է զարգանայ: Այդ ժառանգութիւնը պէտք է ուժեղացնի մեր ինքնութիւնը, մեր ժողովրդին, մեր պետութիւնը, մեր դիրքերը, աւելի վստահ դարձնի մեր ձայնը, աւելի մեծ պատասխանատուութեան դրդի հէնց մեզ՝ ընդ որում, ոչ միայն ինքներս մեր ճակատագրի, այլեւ աշխարհի ճակատագրի, քրիստոնէութեան, մարդկութեան առաջ մեր ունեցած պատասխանատուութիւնը: Իսկ արդեօք մենք ընդհանրապէս ունե՞նք այդպիսի պատասխանատուութիւն եւ կարող ենք ունենալ այդպիսի պատասխանատուութիւն եւ խօսել դրա մասին: Այս հարցի պատասխանը մենք կարող ենք ստանալ միայն ինքներս մեզ աւելի լաւ ճանաչելուց յետոյ: Իսկ մենք ինչքան լաւ ենք ճանաչում մեզ, հասկանում ենք, որ այսպիսի ժառանգութիւն ունեցող ժողովուրդը չի կարող ուղղակի անցորդ լինել մարդկութեան պատմութեան ճանապարհին, չի կարող ուղղակի դիտորդ լինել մարդկութեան պատմութեան թատերաբեմում: Այսպիսի ժողովուրդը պէտք է դերակատար լինի, եւ այդ դերակատար լինելու առաքելութիւնն ի կատար ածելու առաջին եւ նախնական ամենակարեւոր գործողութիւնն ինքներս մեզ ճանաչելն է,

որովհետեւ հնարաւոր չէ որեւէ նպատակի հասնել առանց սեփական ուժերը գնահատելու, առանց սեփական անցեալը ճանաչելու, առանց սեփական ժառանգութիւնը գնահատելու: Իսկ մեր ժառանգութիւնը, որն առաջին հերթին հոգեւոր է, որովհետեւ այն, ինչ այստեղ նիւթական է, որեւէ արժէք չէր ունենայ եւ չի կարող ունենալ, եթէ յենուած չլինի հոգեւոր ամուր եւ անսասան հիմքի վրայ:

Մեր ժառանգութիւնն առաջին հերթին հոգեւոր է, որովհետեւ կապ չունի՝ Հայ Առաքելական եկեղեցու, թէ Հայ Կաթոլիկ եկեղեցու մասին ենք խօսում: Կարծում եմ, որ շատերը չէ, որ սրա մասին գիտեն եւ ինձ համար նոյնպէս պէտք է խոստովանեմ՝ անակնկալի որոշակի տարրեր կային, որ յենուած են նոյն արժէքների վրայ: Սուրբ Ղազար կղզում հաճոյքով արձանագրեցի, որ տաճարի հիմնական խորանները նուիրուած են Մեսրոպ Մաշտոցին, Սահակ Պարթեւին, Գրիգոր Լուսաւորիչին, եւ սա այն հոգեւոր ամբողջութիւնն է, որ մեզ բոլորիս միացնում է: Ես ուզում եմ հաւատալ, որ մեր պատմութեան եւ ժողովրդի այս նոր ժամանակաշրջանը հէնց դրա մասին է, որ մենք ինքներս մեզ աւելի լաւ ճանաչենք, աւելի ամբողջական գնահատենք, չզլանանք դիտել մեր թերութիւնները, չվախենանք շեշտել մեր առաւելութիւնները, չվարանենք բարձրաձայնել մեր նպատակները եւ չվախենանք հաստատ քայլերով գնալ մեր նպատակների հետեւից:

Շատ ուրախ եմ այսօրուայ առիթի համար, շնորհակալ եմ ջերմ ընդունելութեան համար եւ բարձր եմ գնահատում այն ամէնը, ինչ միացրել է, միացնում է, միասնական է դարձնում մեզ բոլորիս»:

Վերջում Ռափայէլ Սրբազանը Լեւոնեան հայ վարժարանի անունից ՀՀ Վարչապետին նուիրեց հայոց պատմութեան ֆրանսերէն եռահատոր մի գիրք եւ Տիրամօր մի գեղեցիկ պատկեր:

ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ՝ ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

«Ասէք ինձ, ո՞վ է քաջը, նա՞, որ մնում է տանը, վախի մէջ եւ դռները փակած, թէ՞ նա է, ով դռները բացում է՝ հակառակ իր մօտիկների կամքին եւ ինքն իրեն նուիրում է ծառայութեանը»:

Դեկտեմբերի 8-ին Գիւմրիի Սրբոց Նահատակաց Հայ Կաթողիկէ Առաջնորդանիստ տաճարում կիրակնօրեայ Սուրբ Պատարագը նուիրուած էր Անարատ Յղութեան տօնին: Սուրբ Պատարագը մատուցեց Սրբոց Հրեշտակապետաց Միացեալ Հայ Կաթողիկէ Ճեմարանի Տեսուչ Հոգշն. Հ. Մաշտոց Վրդ. Զահթերեանը: Սուրբ Պատարագին ներկայ էին Անարատ Յղութեան Հայ քոյրերը՝ միաբանութեան Ընդհանուր Մեծաւորուհի Քրիստոսեան Սաճոնեանի գլխաւորութեամբ, Մայր Թերեզայի Գթութեան միաբան քոյրերը, մեծ թուով հավատացեալներ Գիւմրիից եւ պատանիներ հարակից հայ կաթողիկէ համայնքներից, ում հետ մշտապէս աշխատել են Անարատ Յղութեան հայ միաբան քոյրերը: Սուրբ Պատարագի երգեցողութիւնը կատարում էր «Տիրամայր Հայաստանի» երգչախումբը՝ Ռոբերտ Մլքէեանի խմբավարութեամբ:

Անարատ Յղութեան տօնը նաեւ հայ քոյրերի միաբանութեան տօնն է, որ նուիրուած է Անարատ

Յղութեանը եւ կրում է Նրա անունը: Ամէն տարի տօնը քոյրերի համար առիթ է՝ նորոգելու իրենց նուիրեալ ծառայութեան ուխտը, որ ընդունել են Աստծոյ առաջ: Այս տարի կատարուեց նաեւ Ք. Մարիամ Յարութիւնեանի մշտնջենաւոր ուխտադրութեան արարողութիւնը: Մշտնջենաւոր ուխտը վերջնական ուխտն է, որ քոյրերն ընդունում են՝ ժամանակաւոր՝ մէկամեայ ուխտադրութիւններով նախապատրաստական շրջանն անցնելուց յետոյ: Հ. Մաշտոցը, ով ներկայացնում էր Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանին, Ք. Մարիամից ընդունեց մշտնջենաւոր ուխտադրութեան խօսքերը եւ, որպէս ուխտի նշան, նրան նուիրեց մի մատանի: Ք. Մարիամն ուխտեց մշտնջենաւոր կերպով նուիրուել եւ ծառայել Աստծուն՝ աղքատութեան, հնազանդութեան եւ ողջախոհութեան կենսակերպերով, միաբան քոյրերի հետ միասին՝ հանուն Հայ Կաթողիկէ Եկեղեցու պայծառութեան եւ հայ ազգի բարօրութեան: Հ. Մաշտոցը նոր ուխտադրեալ քրոջ մասին ասաց հետեւեալը.

«Պատիւ է ներկայացնել մի աղջկայ, որը վեց տարի շարունակ վերանորոգում էր իր ուխտերը, հասնելու համար մշտնջենաւոր ուխտին: Ասէ՛ք ինձ, ո՞վ է քաջը, նա՞, որ մնում է տանը, վախի մէջ եւ դռները փակած, թե՞ նա է, ով դռները բացում է՝ հակառակ իր մօտիկների կամքին եւ ինքն իրեն նուիրում է ծառայութեանը: Այո՛, դժուար է այդ որոշումը, որ մենք կայացրինք մեր կեանքում եւ նրանք ովքեր ապրում են այդպէս, զգում են այդ կոչման կարեւորութիւնը: Եւ այսօր քոյր Մարիամը մշտնջենաւոր ուխտը պէտք է կատարի՝ ամբողջ կեանքի համար, ինքն իրեն պիտի նուիրի ձեզ, ինչպէս եւ միւս քոյրերը, ովքեր նուիրեցին իրենց կեանքը, որպէսզի ծառայեն կարիքավորներին եւ հիւանդներին»:

Հայ քոյրերը՝ որպէս իրենց ծառայութեան կատարեալ օրինակ, մշտապէս ունեն Անարատ Յղացեալին՝ Սուրբ Կոյս Մարիամին, շեշտեց Վարդապետը: Նա խօսեց նաեւ տօնի մեծ խորհրդի մասին՝ հաւատացեալների ուշադրութիւնը հրաւիրելով այն փաստի վրայ, որ Սուրբ Կոյսը պարզ, հասարակ մի աղջիկ էր, ում, սակայն, Աստուած ընտրեց՝ դառնալու Իր Որդու Մայրը եւ իւրաքանչիւր հաւատացեալի Մայրը: Հ. Մաշտոցը պատմեց նաեւ Լուրտում Պեռնատէթ անունով աղջկան Աստուածամօր երեւման մասին, երբ Սուրբ Կոյսն յայտնեց իր անունը՝ Անարատ Յղութիւն:

«1854-ին Եկեղեցին, Սուրբ Հոգուց ներշնչուած, հռչակեց Անարատ Յղութեան վարդապետութիւնը: Հասկացանք, որ Տիրամայրը աշխարհ գալով, Աստծուց ընտրուած, զերծ է մնացել սկզբնական մեղքից, Ադամի եւ Եւայի սխալից, որովհետեւ այլապէս չպէտք է կարողանար ինը ամիս իր կրծքի տակ պահել Փրկչին: Եւ դրա համար մինչեւ օրս շարականներ, տաղեր, մեղեդիներ ենք նուիրում Տիրամօրը: Մեզանից իւրաքանչիւրս հրաւիրուած ենք մեր սրտերը, հոգիները, մտքերը ձերբազատել մեղքի գերիշխանութիւնից, ձերբազատել սատանայի փորձութիւններից, եւ դա կը լինի միայն մեր հաւատքով եւ մեր կամքով». ասաց Հ. Մաշտոցը:

Հ. Մաշտոցը շնորհաւորեց հայ քոյրերին եւ բոլոր ներկաներին՝ տօնի եւ ուխտերի նորոգութեան, մշտնջենաւոր ուխտադրութեան առթիւ, նաեւ շնորհակալութիւն յայտնեց Գիւմրիի ժողովրդապետ Տ. Գրիգոր Աւագ Քհնյ. Մկրտչեանին՝ Մայր Տաճարում Սուրբ Պատարագ մատուցելու այս առիթը ընձեռելու համար:

Սուրբ Պատարագից յետոյ Տիրամայր Հայաստանի կենդրոնում տեղի ունեցաւ միասնական

ճաշ, ապա համերգային ելոյթ ունեցաւ Տիրամայր Հայաստանի երգչախումբը:

Քր. Մարիամ Յարութիւնեանի կենսագրականը

Քոյր Մարիամ (Թերմինէ Յարութիւնեան) ծնուել է 1984թ. հուլիսի 25-ին, Աշոցքում:

Մինչեւ եօթերորդ դասարան յաճախել է Աշոցքի Մ. Նալբանդեանի անուան դպրոց:

1998 թ. որպէս մայրապետցու տեղափոխուել է Տիրամայր Հայաստանի Կուսաստան: Ուսումը շարունակել է Գիւմրու Ֆոտոն վարժարանում եւ այն աւարտել է 2001թուականին:

2002-2006 թթ. սովորել է «Անանիա Շիրակացի» համալսարանի բանասիրական ֆակուլտետի Օտար լեզուների (անգլերէն) բաժնում:

2008թ. մեկնել է Հռոմ՝ Անարատ Յղութեան Հայ Քոյրերի Մայրավանք՝ շարունակելու կրօնաւորական ուսումը:

Երկու տարի նորընծայութեան շրջանը աւարտելուց յետոյ վերադարձել է Գիւմրի՝ Տիրամայր Հայաստանի Կուսաստան:

2013 թուականին Մեծաւորների հաւանութեամբ եւ իր ազատ կամքով, որպէս Միաբանութեան անդամ, կատարել է իր առաջին ուխտադրութիւնը:

2015-2018 թթ. ստանձնել է Տիրամայր Հայաստանի կենդրոնի երեխաների պատասխանատուութիւնը:

2018 թ. մեծաւորների որոշմամբ մեկնել է Հռոմ՝ մասնակցելու UISG, ANGELICUM համալսարանում “Formation for Formators” վեցամսեայ վերապատրաստման ծրագրին:

2019թ. դեկտեմբերի 8-ին ընդունել է Մշտնջենաւոր ուխտադրութիւնը, որի յետոյ անմիջապէս նշանակուել է Գիւմրիի Փոքր Ընծայարանի պատասխանատու:

Նիկոլ Մարգարեան, կամաւորական
Տ. Յովսէփ Քհնյ. Գալստեան

2019 ԹՈՒԱԿԱՆԻ ՏԱՐԵՎԵՐՋԵԱՆ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ ԳԵՐՅ. ՀԱՅՐ ՊԵՏՐՈՍ Ծ. ՎՐԴ. ԵՍԱՅԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Այս տարի Մոսկուայի Հայ Կաթողիկէ համայնքի համար եղել է ոչ արտառոց, բայց կարեւոր տարի: Նախ եւ առաջ, ամբողջ տարուայ ընթացքում ողջ մտահոգութիւնը եղել է եւ մնում է եկեղեցաշինութեան համար գումար հայթայթելու խնդիրը:

Դեռանցեալ տարի, Արիի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանի Ռուսաստան կատարած հովուական այցից յետոյ՝ յունուարի 11-ին, Մոսկուայի քաղաքային իշխանութիւնները հրապարակեցին տեղեկատուութիւն՝ այն մասին, որ Մոսկուայի քաղաքապետարանի Քաղաքաշինական-հողային հարցերի յանձնաժողովը հաւանութիւն է տուել Մոսկուայի հայ կաթողիկէ համայնքին յանձնելու հողատարածք՝ եկեղեցու կառուցման համար: Հողատարածքը Մոսկուայի Հարաւային Բուտով շրջանում է եւ կազմում է 0,7 հա:

Եկեղեցի կառուցելու համար շատ կարեւոր էր սոյն թուականի նոյեմբերի 18-ին եղած հանրային լսումները եւ քննարկումները՝ տարածք տրամադրելու համար: Եւ հիմա սպասում ենք քաղաքապետարանի եւ թաղապետարանի որոշմանը: Յոյս ունենք, որ երկու ամսուայ ընթացքում կը ստանանք դրական պատասխան:

Թէեւ քաղաքապետարանը հողը յատկացրել է, բայց ըստ Ռուսաստանի օրէնքի՝ այն թաղամասում, որտեղ որ հողը յատկացուելու է, պէտք է անպայման կազմակերպուի հանրային, հասարակական քննարկումներ եւ լսումներ, որպէսզի այդ ծրագրի մասին ժողովուրդը տեղեակ լինի եւ արտայայտի իր սեփական կարծիքը եւ խօսքը: Եւ այժմ, սպասում ենք նրանց պատասխանին: Նոր կառուցուելիք եկեղեցին կը լինի Մոսկուայի առաջին հայ կաթողիկէ եկեղեցին՝ ողջ պատմութեան ընթացքում: Այս տարուայ ընդհանուր մեր մտահոգութիւնը սա է:

2019 թուականի ընթացքում շատ կարեւոր իրադարձութիւններ տեղի ունեցան:

Առաջին անգամ Սուրբ Հաղորդութիւն ընդունեցին 27 երեխաներ եւ երիտասարդներ:

Բաւական մեծաթիւ եղան պսակները եւ մկրտութիւնները, որը ինձ մեծ ուրախութիւն է պատճառում:

Մեծ Պահքի շրջանում ուխտագնացութիւն կատարեցինք դէպի Սուրբ Երկիր Երուսաղէմ, հոգեպէս նորոգուեցինք եւ աղօթեցինք մեր հայ կաթողիկէ եկեղեցին Մոսկուայում ունենալու համար:

Անշուշտ, ինչպէս ամէն տարի, այս տարի եւս, յունուարին, Արիի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանը հովուական այցելութիւն կատարեց Ռուսաստանի հայ կաթողիկէ համայնքներ: Աստուածայայտնութեան տօնին Արիի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանն իր տօնական Սուրբ Պատարագը մատուցեց Մոսկուայի հայ կաթողիկէ համայնքի համար, Անարատ Յղութեան Կաթողիկէ Մայր Տաճարում: Սրբազան Հայրը շրջեց մեր յարակից համայնքերով:

Մոսկուայի ժողովրդապետութեան համար շատ սպասուած, սիրուած եւ կարեւոր իրադարձութիւն է՝ ամառային ճամբարը, որ ամէն տարի կազմակերպւում է Մոսկուայում:

Մենք ընդունում ենք երեխաներ՝ ոչ միայն Մոսկուայի ժողովրդապետութիւնից, այլ նաեւ յարակից կաթողիկէ ժողովրդապետութիւններից: Երեխաների համար յոյժ կարեւոր է, որ տասնչորս օր միասին են անցկացնում, սովորում են քրիստոնէական վարդապետութեան կարեւորագոյն ճշմարտութիւնները, մասնակցում ամենօրեայ

Սուրբ Պատարագին, ինչպէս նաեւ սովորում են հայերէն, պարում հայկական պարեր ու երգեր, ասմունքում, բառացիօրէն կրթւում են հայեցի ոգով:

Նախեւառաջ, որպէս ժողովրդապետութեան երեխաներ, սերտօրէն կապւում են միմեանց, ընկերանում, եւ յետոյ այս ընկերութիւնը եւ սերտ կապը պահպանւում եւ ամրապնդւում է ամբողջ տարուայ ընթացքում:

Մոսկուայի ժողովրդապետութեան մէջ Սուրբ Խորհուրդների մատակարարումից բացի, կայ նաեւ շարունակական քրիստոնէական վարդապետութեան ուսուցումը՝ պատանիների համար, որը կատարում է Մոսկուայի հայ կաթողիկէների փոխժողովրդապետ Գերշ. Հ. Յովհաննէս Վրդ. Մելիքեանը:

Ողջ տարուայ ընթացքում մշտական հանդիպումների միջոցով նաեւ աշխատում ենք երիտասարդների հետ, որոնց նախաձեռնութիւնները, գաղափարները կեանքի են կոչւում տարբեր առիթներով:

Վերջերս ամուր կապէր հաստատեցինք Ռուսաստանի Դաշնութիւնում Հայաստանի դեսպանութեան հետ, հանդիպում ունենալով Ն. Գ. Պարոն Վարդան Տողանեանի հետ:

Եւս մէկ կարեւոր իրադարձութիւն, որ տեղի ունեցաւ դա այն էր, որ Սուրբ Խաչի տօնից երկու շաբաթ առաջ երիտասարդաց միութեան անդամները աշխատանքից յետոյ գալիս էին եկեղեցի եւ պատրաստում խաչեր: Տղաները՝ կտրում եւ ձեւաւորում էին փայտերը, իսկ աղջիկները նկարում՝ փայտերի վրայ: Պատրաստուած խաչերը յետոյ բաժանուեցին հաւատաւոր ժողովրդին՝ որպէս պահապան եւ ի նշան՝ միութեան ժողովրդապետութեան մէջ:

Հիմա պատրաստում ենք Սուրբ Ծննդեան տօնավաճառին: Տօնավաճառի ողջ հասոյթը յատկացուելու է Սիրիայի Գամիշլի բնակավայրում ահաբեկիչների ձեռքով սպաննուած հայ կաթողիկէ համայնքի ժողովրդապետ, հոգեւոր հովիւ Արժ. Տ. Յովսէփ Քհնյ. Պետոյեանի ընտանիքին՝ որպէս օգնութիւն եւ ցաւակցութեան նշան:

Սրանք են անցնող տարուայ կարեւոր իրադարձութիւնները:

Աստուծոյ սէրն ու օրհնութիւնը ձեզ եւ ձեր ընտանիքներին:

ՓԱՆԻԿԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԳԵՐՅ. Հ. ԳԱՌՆԻԿ Ծ. ՎՐԴ. ՅՈՎՍԷՓԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

«Սիմո՛ն, որդի՛ Յովնանի, սիրո՞ւմ ես ինձ աւելի, քան նրանք»: Սա ասաց նրան. «Այո՛, Տէ՛ր, եւ դու գիտես, որ սիրում եմ քեզ»: Նրան ասաց. «Արածեցրո՛ւ իմ գառներին» (Յովհ. 21:15):

Սուրբ Գրային ընթերցումները մեզ վկայում են, թէ ինչպէս է Քրիստոս կարգում Պետրոս Առաքեալին որպէս գլուխ Առաքեալների խմբի, վէմ Եկեղեցու, Վարդապետ Սուրբ Հաւատքի եւ Ընդհանուր Հովիւ:

Երբ Յիսուս գտնւում էր Փիլիպպեան Կեսարիայի կողմերում՝ հարցնում է իր աշակերտներին. *«Մարդիկ իմ մասին ի՞նչ են ասում. ո՞վ է Մարդու Որդին»* (Մատթ. 16:13): Նրանք պատասխանեցին. *«Ոմանք կարծում են, թէ Յիսուսը մեռելներից յարութիւն առած Յովհաննէս Մկրտիչն է, ուրիշները կարծում են, թէ նա Հին Կտակարանի մարգարէ է՝ Եղիայի եւ Երեմիայի նման (Մարկ. 6, 14-15)»:*

«Իսկ դուք իմ մասին ի՞նչ էք ասում. ո՞վ եմ ես», եւ ահա՝ Սիմոն Պետրոսը քաջաբար պատասխանեց ու ասաց. *«Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստծոյ Որդին»* (Մատթ. 16:16): Վերջապէս աշակերտների աչքերը բացուել էին եւ ճանաչեցին Քրիստոսին՝ որպէս Փրկիչ համայն աշխարհի: Այս ճշմարիտ խոստովանութեան առջեւ Յիսուս խօսքը ուղղեց առանձնապէս Պետրոսին ասելով. *«Երանի՛ է քեզ, Սիմո՛ն, Յովնանի՛ որդի, որովհետեւ մարմինը եւ արիւնը չէ, որ յայտնեց քեզ, այլ՝ իմ Հայրը, որ երկնքում է: Եւ ես քեզ ասում եմ, որ դու վէմ ես, եւ այդ վէմի վրայ պիտի շինեմ իմ եկեղեցին, ու դժոխքի դռները այն չպիտի յաղթահարեն»* (Մատթ. 16:17-18):

Սուրբ Պետրոսի եւ բոլոր Առաքեալների պաշտօնի եւ գործի շարունակողն այսօր հոգեւոր սպասաւորներն են: Հոգեւոր սպասաւորն ի պարտականութիւնէ, նախ եւ առաջ, պէտք է մտածի իրեն յանձնուած հօտի հոգիների փրկութեան, հաւատքի անսասանութեան եւ բարի հովվութեան մասին՝ ինչպէս Քրիստոս հրահանգեց Պետրոսին ասելով. *«…որպէսզի քո հաւատը չպակասի, եւ դու, երբ վերադառնաս ինձ, հաստատես քո եղբայրներին»* (Ղուկ. 22:32) հաւատքի մէջ, այնպէս էլ այդ նոյն հրահանգը տրուել է այսօրուայ քահանային՝ հաստատել իր հօտը սրբազան հաւատի մէջ: Հոգեւոր սպասաւորը պէտք է ծառայի իր հօտին Քրիստոսի սիրով եւ գթութեամբ, սիրով սնուցանի եւ առաջնորդի իր ժողովուրդը դէպի աղբիւրը լոյսի՝ որ է Քրիստոս: Բարի հովվութիւն անել նշանակում է այցելել ընտանիքներին, հիւանդներին, աղքատներին, բանտարկեալներին՝ ինչպէս որ Տէրը ասաց. *«Ես եմ բարի հովիւը. եւ ճանաչում եմ իմ ոչխարներին ու ճանաչւում եմ նրանցից»* (Յովհ. 10:14): Ի վերջոյ, քահանան պէտք է լինի արտացոլումը Քրիստոսի կենդանի ներկայութեան իր համայնքի ժողովրդի մէջ, որպէսզի այս ներդաշնակ համագործակցութեամբ թէ՛ հոգեւոր հովիւը եւ թէ՛ նրան յանձնուած հօտը կարողանան արժանանալ Յաւիտենական Կեանքին:

Ստորեւ ձեզ ենք ներկայացնում 2019 թուականի ընթացքում Փանիկ համայնքում իրականացուած աշխատանքները.

Փանիկ համայնքի ժողովրդապետ՝ Գերյ. Հայր Գառնիկ Ծ. Վրդ. Յովսէփեանի եւ Երիտասարդաց խմբի ղեկավար՝ Ալլա Կարապետեանի նախաձեռնութեամբ 2018 թուականի մայիսի 10-ին կազմաւորուեց Փանիկի «Սուրբ Աստուածածին» Եկեղեցւոյ Հայ Կաթողիկէ Տիկնանց միութիւնը՝ բաղկացած 17 անդամներից: Տիկնանց միութիւնը Երիտասարդաց խմբի հետ համատեղ իր ակտիւ մասնակցութիւնն է ցուցաբերում Եկեղեցում կազմակերպուող միջոցառումներին, պարբերաբար իրականացուող հոգեւոր կրթութեան դասընթացներին եւ բարեգործական նախաձեռնութիւններին:

2019 թուականի յունուարի 26-ին Փանիկի Հայ Կաթողիկէ Երիտասարդաց միութիւնը ակտիւ մասնակցութիւն է ցուցաբերել Գիւմրու Սրբոց Նահատակաց Հայ Կաթողիկէ Աթոռանիստ Եկեղեցում տեղի ունեցած մէկօրեայ երիտասարդական հանդիպմանը, որի նպատակն էր մաս կազմել Պանամայում տեղի ունեցող «Համաշխարհային երիտասարդական օրեր 2019» միջոցառմանը:

Տիկնանց եւ Երիտասարդաց միութիւնների նախաձեռնութեամբ Տեառնընդառաջի տօնին նուիրուած Սուրբ եւ Անմահ Պատարագից յետոյ Եկեղեցւոյ բակում, Գերյ. Հայր Գառնիկ Ծ. Վրդ. Յովսէփեանի գլխաւորութեամբ, վառուեց տօնական խարոյկը, այնուհետեւ տեղի ունեցաւ նորապսակների օրհնութեան կարգ:

Սուրբ Սարգիս Զօրավարի տօնին նուիրուած Սուրբ եւ Անմահ Պատարագից յետոյ տեղի ունեցաւ Փանիկ համայնքի երիտասարդների օրհնութեան կարգ:

Մեծ Պահքի շրջանում Հայր Գառնիկի գլխաւորութեամբ եւ պրն. Վարդան Կարապետեանի նախաձեռնութեամբ կազմակերպուեց հերթական բարեգործական ակցիան «Մայր Թերեզայի Քոյրերի» Սպիտակի կենդրոնի սաների համար:

Ինչպէս ամէն տարի՝ այս տարի եւս, յունուար եւ յուլիս ամիսներին Հայոց բանակ զօրակոչուող երիտասարդների օրհնութեան կարգ կատարուեց:

Համայնքի Տիկնանց եւ Երիտասարդաց միութիւնների անդամների ակտիւ մասնակցութեամբ Փանիկի Սուրբ Աստուածածին Եկեղեցում մեծ շուքով նշուեց Ծաղկազարդի եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հրաշափառ Յարութեան տօնը:

Փանիկ համայնքում աւանդոյթ է դարձել մայիս եւ հոկտեմբեր ամիսներին Վարդարան աղօթելու եւ Աստուածամօրը նուիրուած միջոցառումների ու թափօրների կազմակերպումը: Այս տարի եւս՝ մայիսի 31-ին, տեղի ունեցաւ Աստուածամօրը նուիրուած թափօրը, որին, Փանիկի Տիկնանց միութեան հրաւէրով, ներկայ էր նաեւ Գիւմրու Սրբոց Նահատակաց Հայ Կաթողիկէ Աթոռանիստ Եկեղեցւոյ Տիկնանց միութիւնը:

Յունիսի 9-ին՝ Հոգեգալստեան տօնին, Փանիկի Սուրբ Աստուածածին Եկեղեցում տօնական տրամադրութիւն էր տիրում, քանզի այս տարի եւս 27 մանուկներ ստացան Առաջին

Սուրբ Հաղորդութիւն ձեռամբ՝ Արիի. Տէր Ռափայէլ Արքեպս. Մինասեանի: Միջոցառման նախապատրաստական աշխատանքները իրականացուել էին ժողովրդապետի գլխաւորութեամբ եւ Երիտասարդաց միութեան աջակցութեամբ:

Նոյն ամսին Հայր Սուրբը Երիտասարդաց միութեան նախաձեռնութեամբ կազմակերպեց Յիսուսի Սուրբ Սրտին նուիրուած թափօրը, որին իրենց ակտիւ մասնակցութիւնը ցուցաբերեցին համայնքի անդամները:

Արդէն երրորդ տարին է, ինչ Հայաստանում՝ Թորոսգիւղի «Աղաճանեան» կենդրոնում, տեղի են ունենում «Համայնքային երիտասարդական օրերը»: Այս տարի յուլիսի 19-26-ը կայացած հերթական հանդիպմանն իրենց ակտիւ մասնակցութիւնը բերեցին Փանիկ համայնքից 15 երիտասարդներ:

Տարուայ ընթացքում պարբերաբար կազմակերպուել են հոգեւոր, ճանաչողական եւ մշակոյթային էքսկուրսիաներ եւ ուխտագնացութիւններ, որոնք էլ նպաստում են Տիկնանց եւ Երիտասարդաց միութիւնների միջանձնային փոխյարաբերութիւնների ամրապնդմանը:

Դեկտեմբերի 1-ին մեկնարկեց արդէն իսկ աւանդոյթ դարձած Սուրբ Ծննդեան բարեգործական տօնավաճառը, որը կը շարունակուի մինչեւ 2020 թուականի յունուարի 12-ը: Բարեգործական տօնավաճառից ստացուած ողջ հասոյթը տրամադրուելու է անապահով ընտանիքներին:

ՏՈՒՐՑԽԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԳԵՐՅ. ՀԱՅՐ ԱՆԴՐԷԱՍ Ծ. ՎՐԴ. ԻԱՆԻՑԿԻԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Հայ կաթողիկէ համայնքները համայնավարների հալածանքների տարիներին առաւել մեծ հարուած կրեցին, քանի որ հայ կաթողիկէ հոգեւորականների գործունեութիւնը իսպառ արգելուած էր ԽՍՀՄ տարածքում: Բայց կաթողիկէ գիւղերի մեծ մասը, առաւել ընդգծուած

կերպով՝ Ջաւախքը, կարողացան ի յեճուկս արգելքների ու ճնշումների, պահել իրենց արեան հետ ժառանգած հաւատքի ջերմեռանդութիւնը՝ փոխանցելով այսօրուայ սերնդին եւ դառնալով հաւատքի յաճախ մարտիրոսական վկայութեան կենդանի օրինակներ:

Տուրցխը գտնուում է Ախալքալակից մօտ 20 կմ հեռաւորութեան վրայ, բաւական խիստ կլիմայ ունի եւ շատ աւանդապահ բնակիչներ, որոնք այդտեղ հաստատուել են 19-րդ դարի 30-ական թուականներից սկսած՝ գաղթելով Արեւմտեան Հայաստանի վիլայէթներից 1829թ. ռուս-թուրքական պայմանագրի կնքումից յետոյ, ինչպէս Հայաստանի ու Վրաստանի շատ այլ գիւղերի բնակիչներ: Գիւղում կառուցել են երեք եկեղեցի, որոնցից երկուսը աւերուել են, մնացել է 1856թ. կառուցուած Ս. Աստուածամօրը նուիրուած գեղեցիկ տաճարը, որն էլ այսօր գիւղի գործող եկեղեցին է՝ հոգեւոր զարթօնքի առհաւատչեան: Այս եկեղեցին, ի տարբերութիւն շատ այլ կաթողիկէ կամ առաքելական եկեղեցիների, պահեստի չի վերածուել ու չի պղծուել շնորհիւ տուրցխեցիների համարձակ ու անզիջում խառնուածքի, իրենց կաթողիկէ ինքնութիւնը պահելու վճռակամութեան:

Տուրցխում եկեղեցին միշտ էլ լիքն է եղել հաւատացեալներով. նրանք շարունակում են աղօթել իրենց պապերից ժառանգած աղօթքները:

Հոգեւոր կոչումները գիւղում յայտնուեցին 1990-ականներին, երբ գիւղը բռնեց հոգեւոր զարթօնքի ուղին. Տուրցխը, հոգեւորական տալուց բացի, տուեց նաեւ 5 միանձնուհիներ՝ 2-ը Անարատ Յղութեան Հայ Քոյրերի միաբանութեան անդամ են, 1-ը՝ Սուրբ Ընտանիքի միաբանութեան անդամ, իսկ 2-ը՝ Սալեզեան միաբանութեան:

Սիրելինե՛րս,

Ստորեւ ձեզ ենք ներկայացնում 2019 թուականի ընթացքում Տուրցխ համայնքում իրականացուած աշխատանքները:

Այս տարուայ ընթացքում մեր եկեղեցում կատարուել են մկրտութիւններ, պսակներ, քրիստոնէական վարդապետութիւն երեխաների ու երիտասարդների համար, պատրաստութիւն՝ Առաջին Սուրբ Հաղորդութեան:

Հէնց մեր Տուրցխ գիւղում Սալեզեան Քոյրերի կողմից կազմակերպուել է ամառային ճամբար երեխաների ու երիտասարդների համար: Միանձուհիներն աղօթական կեանքի հետ մէկտեղ իրենց տանը մանկապարտէզ են բացել. գիւղի միակ մանկապարտէզը դա է, իսկ դպրոցահասակ երեխաների համար կէսօրեայ ժամանց եւ հոգեւոր դասընթացներ են կազմակերպում:

Շարունակում է ակտիւօրէն գործել Սալեզեան Քոյրերի Դաստիարակչական կենդրոնը եւ Օրատորիոն:

Այս տարի իրականացուել է նաեւ Եկեղեցու կտուրի նորոգումը:

Տուրցխը իր կաթողիկէ քրիստոնեայ ինքնութեան մէջ է կարողացել լաւագոյնս պահպանել ազգասիրութիւնը, հայկականը, հայրենի աւանդութիւնները: Կաթողիկէ ինքնութեան՝ որպէս անխախտ կռուանի վրայ հենուելով են տուրցխեցիները դէմ կանգնել անաստուածների մամլիչին եւ անդադար աղօթքներով կառուցել իրենց ներքին մարդուն, իրենց հոգեւոր տաճարը, իրենց կրօնական ու ազգային նկարագիրը:

ԿՐԱՍՆՈԴԱՐԻ ԵՒ ԲԵԼՈՐԵՉԵՆՍԿԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԳԵՐՅ. ՀԱՅՐ ՍԵՐԳԵՅ Ծ. ՎՐԴ. ԲԱԲԱՋԱՆԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Արդէն շուրջ մէկ տասնամեակից աւելի ծառայում եմ Ռուսաստանի հարաւում, որտեղ բնակւում են մեծ թուով հայ կաթողիկէներ: Բելորեչենսկի հաւատացեալները (ծխականները) Վրաստանի Տուրցխ գիւղի ներգաղթեալներ են, ովքեր 90-ականներին աշխատանքի փնտռտուքներով տեղափոխուել են Ռուսաստան: Ներկայ դրութեամբ համայնքի կազմում կան շուրջ 100 Հայ Կաթողիկէ ընտանիքներ:

Հայ Կաթողիկէ համայնք ձեւաւորուելու առաջին իսկ օրից Բելորեչենսկի հաւատացեալ ժողովուրդը փորձեց կառուցել եկեղեցի: Եկեղեցու կառուցման աշխատանքները սկսուեցին ութ տարի առաջ՝ տեղի համայնքի նուիրեալ զաւակներ Մկրտիչ եւ Վլադ Խաչատրեանների առատաձեռն ֆինանսական հովանաւորութէամբ:

2019թ. ապրիլի 28-ին՝ Աստուածային Ողորմութեան տօնին, Ռուսաստանի Բելորեչենսկ քաղաքում օծուեց յետխորհրդային շրջանում

Ռուսաստանում կառուցուած առաջին Հայ Կաթողիկէ եկեղեցին, որ անուանուած է ի պատիւ Ծննդեան Սուրբ Կոյս Մարիամի: Եկեղեցու օծումը կատարեց Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Արեւելեան Եւրոպայի Հայ Կաթողիկէների Առաջնորդ Արհի. Տէր Ռափայէլ Արքեպս. Մինասեանը, ինչպէս նաեւ Սարատովի Սուրբ Կլիմենտի թեմի առաջնորդ եպիսկոպոս Կլեմենս Պիկկելը, Ռուսաստանի հարաւից ժամանած այլ հոգեւորականներ եւ հիւրեր: Ներկայ պահին այն հանդիսանում է Հայ Կաթողիկէ միակ եկեղեցին Ռուսաստանի տարածաշրջանում:

Բացի այդ, Արհի. Տէր Ռափայէլ Արքեպս. Մինասեանը այցելեց մեր միւս համայնքները, այդ թւում՝ Դոնի Ռոստովի, Բելորեչենսկի, Կրասնոդարի, Պոպուտնիի համայնքները:

Կրասնոդարը համարւում է այն քաղաքը, որին պատկանում են ոչ միայն Կրասնոդարի, այլ նաեւ Ռոստովի շրջանի Հայ Կաթողիկէ համայնքները:

Կրասնոդարում ընդհանուր առմամբ 6 կէտ է սպասարկւում, որոնք գտնւում են 100-360 կմ հեռաւորութեան վրայ, մշտապէս Սուրբ Պատարագ է մատուցւում Կրասնոդարում եւ Բելորեչենսկում, իսկ միւս համայնքներում, կախուած հեռաւորութիւնից, երկու շաբաթը մէկ անգամ կամ երկու ամիսը մէկ անգամ:

ՍՈՉԻԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԳԵՐՅ. ՀԱՅՐ ՌԱՖԱՅԵԼ Ծ. ՎՐԴ. ԿՐԱՒՉԻԿԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

2018 թուականի նոյեմբերին Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Արեւելեան Եւրոպայի հայ կաթողիկէների առաջնորդ Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանի

որոշմամբ նշանակուեցի ժողովրդապետ՝ Սոչիի Հայ Կաթողիկէ համայնքի ժողովրդապետ:

Սոչիի Սուրբ Խաչ Հայ կաթողիկէ ժողովրդապետութիւնը հիմնուել է 2018թ. դեկտեմբերի 2-ին: Սա առաջին, կարեւոր քայլն էր, քանի որ 33 տարի այստեղ մշտական ժողովրդապետ չէր եղել:

2019թ. յունուարի 9-ին Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Արեւելեան Եւրոպայի հայ կաթողիկէների առաջնորդ Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանը Սոչիում իր հովուական այցելութիւնն իրականացրեց՝ լինելով նոր հաստատուած Սուրբ Խաչ ժողովրդապետութեան մէջ եւ հանդիպեց տեղի հայ համայնքի հետ:

Նոր ձեւաւորուած Սուրբ Խաչ Հայ Կաթողիկէ ժողովրդապետութեան մէջ են գտնւում հետեւեալ Հայ Կաթողիկէ համայնքները՝ Սոչի, Ադլեր, Տուապսէ, Լազարէեւսկ, Գէլենջիկ եւ այլ փոքր համայնքներ:

Սոչիում կայ Լատին ծէսով եկեղեցի, որտեղ ամէն կիրակի՝ ժամը 16:30, իսկ չորեքշաբթի՝ ժամը 12:00, մատուցւում է Սուրբ Պատարագ: Բոլոր արարողութիւնները նոյնպէս այս եկեղեցում են կատարւում:

Ադլերի համայնքն ունի սեփական եկեղեցին, որտեղ հաւաքւում է արդէն Ադլերի համայնքը,

եւ այնտեղ ամէն օր՝ ժամը 9:00, մատուցում է Սուրբ եւ Անմահ Պատարագ: Միեւնոյն ժամանակ, անհրաժեշտութեան դէպքում, նաեւ կատարւում է լատին ծէսով Սուրբ Պատարագ օտարերկրացիների համար:

Սոչիում եւ Ադլերում կիրակի օրերին իրականացւում են քրիստոնէական դասեր մեծահասակների համար:

Լազարեւսկի համայնքը չունի Հայ կաթողիկէ եկեղեցի, սակայն մտադրութիւն ու ծրագիր կայ այնտեղ եկեղեցի կառուցելու: Այսինքն՝ ստացւում է, որ Սոչիի համայնքը հայկական եկեղեցի չունի, բայց գոնէ ունի եկեղեցի, տեղ, որտեղ կարող են աղօթել հայերէն կամ ռուսերէն, բայց Լազարեւսկի համայնքը չունի ոչ մի հնարաւորութիւն՝ բացի աւտոտնակում ձեւաւորուած մի փոքրիկ մատուռից, որտեղ հաւաքւում եւ աղօթում են:

Կայ նաեւ Տուապսէի համայնքը, որտեղ կայ Լատին ծէսով եկեղեցի: Այս եկեղեցին օգտագործւում է նաեւ հայ համայնքի կողմից: Տուապսէի համայնքը, համեմատած Սոչիի, Ադլերի եւ Լազարեւսկի, այս համայնքը փոքր է:

Ամենափոքր համայնքը Գէլենջիկն է, որտեղ ապրում է ընդամէնը 15-16 հայ կաթողիկէ ընտանիք: Թէեւ համայնքում չունենք Հայ Կաթողիկէ Եկեղեցի, այնուամենայնիւ, փորձում ենք այստեղ եւս իրականացնել մեր առաքելութիւնը:

Համայնքներում կատարւում են Սուրբ մկրտութեան եւ պսակի արարողութիւններ, նշւում են եկեղեցական բոլոր տօները, եւ մատուցւում հոգեհանգստեան կարգ: Սոչիում, Ադլերում եւ Լազարեւսկում կատարուել են տնօրհնէքներ: Մշտապէս տեղի են ունենում հանդիպումներ եկեղեցասէր ժողովրդի հետ:

Այս տարի սկսել ենք հիմնել երիտասարդաց միութիւններ, թէեւ երիտասարդներից շատերը դպրոցն աւարտելուց յետոյ ուսումը շարունակելու նպատակով մեկնում են Կրասնոդար կամ Մոսկուա: Այդ իսկ պատճառով դժուարանում է երիտասարդական հանդիպումների կազմակերպումը:

Բոլոր համայնքներում կազմակերպւում են քրիստոնէական դասեր հետեւեալ տարիքային խմբերի համար.

Առաջին խումբ՝ 7-16 տարեկան,

Երկրորդ խումբ՝ 14-16 տարեկան,

Երրորդ խումբ՝ 17 տարեկանից բարձր:

Որպէս տեղի ժողովրդապետ՝ իմ կարեւորագոյն առաքելութիւններից մէկն եմ համարում նպաստել համայնքներում հայկական ինքնութեան, պատկանելիութեան եւ մայրենի լեզուի պահպանմանը, քանի որ տեղաբնակ հայերը հայերէն լեզուին լաւ չտիրապետելու պատճառով նախընտրում են մասնակցել ռուսերէն լեզուով մատուցուող պատարագներին:

Այս տարի՝ ապրիլի 24-ին, Հայոց ցեղասպանութեան 104-ամեայ տարելիցի կապակցութեամբ զոհերի յիշատակին հոգեհանգստեան կարգ մատուցուեց, որին մասնակցեցին մեծ թուով հաւատացեալներ, հնչեցին հայկական երգեր, շարականներ՝ արժանին մատուցելու սրբադասուած նահատակներին:

Մեր առաջիկայ ծրագրերից մէկն է Սոչիի Սուրբ Խաչ ժողովրդապետութեան պետականօրէն գրանցումը: Այժմ պատարագները մատուցւում են Հռոմեայ-կաթողիկէ եկեղեցում:

Մօտ մէկ տարի է, ինչ որպէս ժողովրդապետ ծառայում եմ այս համայնքներում: Չնայեած նկատելի փոփոխութիւններին՝ դեռեւս բազմաթիւ աշխատանքներ ունենք իրականացնելու:

ՏԱՇԻՐԻ ԵՒ ՀԱՐԱԿԻՑ ԳԻՒՂԵՐԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԳԵՐՊ. ՀԱՅՐ ՆԵՐՍԵՍ ՎՐԴ. ԳԱԼՍՏԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

2019 թուականը, ինչպէս նաեւ իւրաքանչիւր տարեթիւ, ունի իր բացառութիւնները եւ հետաքրքրական առանձնայատկութիւնները: Վերջին տարիների ընթացքում տեւական փոփոխութիւններ են եղել Տաշիրի Հայ Կաթողիկէ համայնքներում: Հարկ է նշել Եկեղեցիների եւ Մատուռների նորոգութեան, կառուցման կարեւորութիւնը: Այս տարի, կը մեկնարկի Մեծաւանի եւ տարածաշրջանի 200-ամեակը, որն էլ ազդակ է Տաշիրում եւ սփիւռքում բնակուող

բարեպաշտ զաւակներին հաւատարիմ մնալ իրենց Հայ Կաթողիկէ ինքնութեանը եւ հովանաւոր կանգնել դեռեւս տարածաշրջանում խոնարհուած Հայ Կաթողիկէ Եկեղեցիներին:

Տաշիրի տարածաշրջանի եկեղեցասէր երիտասարդների, պատանիների եւ տիկնանց միութիւնների տեւական մասնակցութեամբ աւելի արդիւնաւէտ եւ պտղաբեր է դառնում Հայ Կաթողիկէ Եկեղեցու առաքելութիւնը:

Այս պահին տուեալ միութիւնները գործում են Տաշիրի, Մեծաւանի, Նորաշէնի համայնքներում՝ հիմք հանդիսանալով միւս համայնքների երիտասարդների եւ պատանիների քրիստոնէական հանդիպումներ կազմակերպելու համար:

Յունուար ամսուանից Տաշիրի Սուրբ Աստուածածին Վերափոխման Եկեղեցու ջեռուցման խնդիրը լուծուեց՝ բարերարութեամբ ծնունդով տաշիրցի Էդուարդ Սուքիասեանի (երկու միլիոն դրամ արժողութեամբ), ինչպէս նաեւ Տաշիր քաղաքի քաղաքապետ Էդգար Արշակեանի, Սարգիս Սողոյեանի, Վաղինակ Բաղդասարեանի, Ալիկ Բաղդասարեանի, Գրիշ Բաղդասարեանի աջակցութեամբ: Ընդհանուր գումարը կազմել է 2.500.000 դրամ:

Ուժգին քամիներից եւ կարկուտի հետեւանքով գարնանը ամբողջովին աւերուել էր Մեծաւանի Սուրբ Յովհաննէս եկեղեցու կտուրը, որն էլ վերանորոգուեց համայնքի բարեպաշտ զաւակ Տիրայր Մոսի Մարգարեանի նախաձեռնութեամբ, ընդհանուր արժէքը՝ 3.000.000 դրամ:

2019թ. նոյեմբերի 15-ին մեկնարկեց Տաշիրի տարածաշրջանի Մեծաւան գիւղի հիմնադրման եւ տարածաշրջանում Հայ Կաթողիկէ բնակչութեան հաստատման 200-ամեակին նուիրուած միջոցառումների շարքը:

Ներկայ էին միջոցառման նախաձեռնող Մեծաւանի գիւղապետ Սերեօժա Վարդանեանը, նաեւ Տաշիրի քաղաքապետ Էդգար Արշակեանը եւ այլ պաշտօնատար անձինք, հիւրեր, համայնքի հոծ բնակչութիւն:

Մեծաւանը միայն գիւղ չէ, բնակավայր չէ: Այն Հայ Կաթողիկէ ինքնութեան եւ վկայութեան մի մեծ աղբիւր է...

Տարուայ ընթացքում պարբերաբար կազմակերպուել են հոգեւոր եւ մշակոյթային ուխտագնացութիւններ Հայաստանի տարբեր պատմամշակոյթային վայրեր:

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս բաւական մեծաթիւ եղան Սուրբ Պասկները եւ մկրտութիւնները:

ՀՈՎՏՈՒՆԻ, ԱՐՓԵՆԻԻ ԵՒ ԱՇՈՑՔԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԳԵՐՊ. ՀԱՅՐ ԵՂԻԱ ՎՐԴ. ԴԵՐՁԱԿԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

ՀՈՎԱՐՓԱՇ-ի միջոցառում

2019 թուականի յունուարի 19-ին Հովտունի, Արփենիի եւ Աշոցքի երիտասարդութեան հետ, գլխաւորութեամբ հոգեւոր հովիւ Հ. Եղիա Վրդ. Դերձակեանի, հանդերձ Արթիկի «Թիկունք-Դրախտիկ» Մանկական Զարգացման կենդրոնի մանուկների, Գիւմրու Պետական Դրամատիկական Թատրոնում տեղի ունեցաւ մեծ միջոցառում: Միջոցառումը բաղկացած էր երկու մասից: Առաջին մասը նուիրուած էր 1988 թուականի Սպիտակի աղէտալի երկրաշարժի անմեղ զոհերի յիշատակին: Երիտասարդները հարիւրաւոր հանդիսատեսի առաջ մեծ համարձակութեամբ ու յաջողութեամբ ներկայացրեցին դասական երգեր ու աստունքներ: Երկրորդ մասը բեմադրութիւն էր Քրիստոսի Ծննդեան թեմայով ու առիթով:



Հասարակաց Մկրտութիւններ Արփենիում

2019 թուականի մարտի 24-ին Արփենիի Հայ Կաթողիկէ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցում յաւարտ Ս. Պատարագի, հոգեւոր հովիւի ձեռնարկութեամբ եւ Տիրամայր Նարեկի Հիւանդանոցի տնօրէն Հայր Մարիօ Կուկարելլոյի քաւորութեամբ Արփենիի եօթ բնակիչներ՝ մեծեր ու փոքրեր, մկրտուեցին ու դրոշմուեցին: Մկրտութիւնից յետոյ բոլոր ներկաները ուղղուեցին դէպի գիւղի հացատունը սիրոյ ճաշը կիսելու համար: Այստեղ հարկ է շնորհակալութիւն յայտնել Հ. Մարիոյին, որ ընդունեց Կնքահայր լինելու առաջարկը եւ նուիրեց խաչեր ու սննդամթերք:

Պատարագ Մարտիրոսների դիտաւորութեամբ

Աւագ Հինգշաբթի Արփենիի միջնակարգ դպրոցի 3-րդ եւ 4-րդ դասարանների աշակերտները ներկայացրեցին գեղեցիկ միջոցառում, որը նուիրուեց ի յիշատակ Քառօրեայ պատերազմի զոհերի: Միջոցառման կազմակերպիչը Տկն. Հռիփսիմէ Յովհաննիսեանն էր: Միջոցառման աւարտին ներկաները ուղղուեցին Եկեղեցի՝ մասնակցելու օրուայ Սուրբ Պատարագին, որ մատուցուեց յաղագս ժողովուրդի եւ զոհուածների: Պատարագից յետոյ տեղի ունեցաւ ոտնլուայի արարողութիւն, ապա՝ հսկում:

Այդ օրերին Արփենիում երիտասարդների հետ յանդիպում ունեցաւ Զմմառի Ընծայարանի սարկաւագ Կարօ Գլընճեանը:

Խաղարկութիւն Արփենիի սրահում

2019 թուականի յունուարի 19-ի միջոցառումը ֆինանսաւորելու համար հատը 500 դրամով տոմսեր վաճառուեցին, որոնք նաեւ վիճակահանութեան տոմսեր էին: Ինչպէս որ նախատեսուած էր, խաղարկութիւնը կատարուեց ապրիլի 28-ին՝ Արփենիի սրահում: Շահումները զանազան առարկաներ ու ծառայութիւններ էին: Այստեղ հարկ է շնորհակալութիւն յայտնել մրցանակներ նուիրողներին եւ տոմսեր գնողներին, որոնք իրենց առատաձեռնութեամբ մեզ քաջալերեցին:

Ուխտագնացութիւն դէպի Խոր Վիրապ եւ Երեւան

Յունիս ամսուայ վերջին կիրակի օրը Արփենիի բնակչութիւնը մէկօրեայ ուխտագնացութիւն կազմակերպեց իրենց հոգեւոր հովիւի առաջնորդութեամբ: Առաջին վայրը, որ նրանք այցելեցին, Խոր Վիրապն էր, որտեղ մասնակցեցին կիրակնօրեայ Սուրբ Պատարագին:

Առաջին Հաղորդութիւն

2019 թուականի յունիսի 17-ին Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Արեւելեան Եւրոպայի Առաջնորդ Արհի. Տէր Ռափայէլ Արքեպս. Մինասեանի մատուցած Սուրբ Պատարագի ընթացքում Արփենիի հինգ երեխաներ առաջին անգամ ուրախութեամբ ու մեծ երկիւղով ճաշակեցին ու ըմպեցին Քրիստոսի Մարմինն ու Արիւնը: Արարողութեան աւարտին հիւրասիրութիւն տեղի ունեցաւ հոգեւոր հովիւի հրաւէրով:

Բակային ճամբար

Սոյն թուականի յուլիս եւ օգոստոս ամիսներին Արփենի գիւղում կազմակերպուեց բակային ճամբար չորսից տասներեք տարեկան երեխաների համար: Երեխաների համար կազմակերպւում էին դասեր, ինչպէս նաեւ տարբեր ժամանցային եւ հետաքրքիր խաղեր:

Ռատիո Մարիամի այցելութիւնը Արփենի գիւղ

Հոկտեմբերի 6-ին՝ կիրակի օրը, Ռատիո Մարիամի անձնակազմն ու երգչախումբն այցելութիւն կատարեցին Արփենի գիւղ: Նրանք ապահովեցին Ս. Պատարագի երգեցողութիւնը: Պատարագը մատուցուեց նրանց դիտաւորութեամբ:

Ձեռնարկներ Հովտուն գիւղում

19 յունուարի միջոցառման մասնակցութիւնը

Հովտունի երիտասարդներն ու պատանիները միասին ներկայացրեցին 2019 թուականի յունուարի 19-ի միջոցառման երկրորդ մասը, որ բեմադրութիւն էր Ծննդեան մասին: Այս բեմադրութեամբ նրանք Ծննդեան պատգամը հաղորդեցին ժողովրդին եւ նրանց սիրոյ ու ներումի կոչ ուղղեցին: Այստեղ յարկ է նշել, թէ ասկից մի քանի օր յետոյ, նրանք նոյն բեմադրութիւնը ներկայացրեցին Գիւմրու ծերանոցի ծերերի առաջ՝ թողնելով նրանց սրտերում յոյսի ու ուրախութեան նշոյլներ:

Հովտունի երիտասարդութիւնը մասնակցել է նաեւ Արփենիում մատուցուած Նոր կիրակիի պատարագին եւ Զատկական միջոցառմանը, որի ընթացքում տեղի ունեցաւ խաղարկութիւն: Նրանք, ինչպէս եւ Արփենիի ու Աշոցքի բնակիչները, մասնակցութիւն ունեցան Հայ Կաթողիկէ Առաջնորդարանի կողմից կատարուած պատարագներին, արարողութիւններին, երիտասարդաց հաւաքներին եւ ճամբարներին:

Հովտունի կենդրոնի շէնքի սեփականացում

Որոշ արգելքներ վերացնելուն պէս Հայ Կաթողիկէ Եկեղեցին կարողացաւ սեփականացնել Հովտունի շէնքը, որը հետագայում նախատեսուած է լինելու Հովտունի Ցաւագին Տիրամօր Հայ Կաթողիկէ Ժողովրդապետութեան կենդրոն: Յաջորդ քայլերը լինելու են շէնքի նորոգութիւն, եկեղեցու բարձրացում: Այստեղ հարկ է յիշեցնել, թէ անցած տարի շէնքի երկու պատերի կիսափլումի պատճառով ժողովրդապետ Հ. Եղիա Վրդ. Դերձակեանը հարկադրուեց ջրերի հեռացում անել, փլուած պատերը վերաշինել եւ, յատկապէս, շէնքը ամրացնել պարտքով, ապառիկով, վարկով ու բարերարների օժանդակութեամբ: Նրան յաջողուեց կատարել այդ գործերը: Մեծ շնորհակալութիւն բոլոր անձերին, ովքեր այդ գործերի ֆինանսաւորումին մասնակից են եղել: Խորին շնորհակալութիւն Զմմառի Պատրիարքական Միաբանութեանը՝ յանձինս Պատրիարքական Փոխանորդ եւ Զմմառի Տիրամօր Վանքի Մեծաւոր Գերապայծառ Հ. Գաբրիէլ Թ. Ծ. Վ. Մուրատեանի, որ ֆինանսաւորեց շէնքի գնումն ու սեփականացումը, եւ, որ յանձն է առել կատարել նորոգման ու շինարարական մնացած գործերը:

Իսկ Աշոցքի վերաբերեալ հարկ է ասել, թէ տեղացի հաւատացեալներն էլ մասնակցեցին 19 յունուարի միջոցառմանը, Առաջնորդարանի կողմից կատարած ձեռնարկներին ու արարողութիւններին, ինչպէս նաեւ կազմակերպուած Երիտասարդական հաւաքներին եւ ամառուայ ճամբարներին:

Քոյր Նոէլի մահը

2019 թուականի յուլիսի 22-ին Ֆրանսիայում վախճանուեց բոլորիս կողմից սիրուած Քոյր Նոէլ Լոքաթելլին, ով 50 տարուայ ծառայութիւն ընծայեց հայ ժողովրդին՝ նախ Լիբանանում, ապա՝ Հայաստանում, Նարեկի Տիրամօր Հիւանդանոցում: Յուղարկաւորութիւնը տեղի է ունեցել Ֆրանսիայում՝ յուլիսի 25-ին: Նոյն օրը Սրբազան Առաջնորդը Աշոցքի հիւանդանոցում մատուցեց Ս. Պատարագ յաղագս հանգուցեալի հանգստութեան: Քառասունքի առիթով եւ դարձեալ հիւանդանոցում Ս. Պատարագ մատուցուեց օգոստոսի 31-ին, ժամը 14:30-ին: Պատարագիչը եղաւ Տէր Կոմիտաս Քահանայ Դաւէեանը, նախագահեց Հայաստանի Սուրբ Աթոռի Նուիրակ Ժոզէ Բեթենկուր Արքեպիսկոպոսը, որ պատարգից առաջ օրհնեց հիւանդանոցի բակում տեղադրուած խաչքարը՝ նուիրուած ի յիշատակ թանկագին Քոյր Նոէլի:

Ռատիո Մարիամը Նարեկի Տիրամօր հիւանդանոցում

Ռատիո Մարիամի անձնակազմն ու երգչախումբը հոկտեմբերի 11-ին մասնակցեցին Ս. Պատարագին, որ Հ. Եղիա Վրդ. Դերձակեանը մատուցեց նրանց դիտաւորութեամբ, հիւանդանոցի տնօրէն Հ. Մարիօ Կուկարելլոյի ներկայութեամբ: Երգեցողութիւնը կատարեց Ռատիոյի երգչախումբը: Պատարագի աւարտին Հ. Մարիոն հիւրերին հրաւիրեց ընթրիքի:

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԳԵՐՊ. ՀԱՅՐ ՆԱՐԵԿ ՎՐԴ. ՄՆՈՅԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

14-րդ դարում՝ Կիլիկիայի Հայկական թագաւորութեան անկումից (1375թ.) յետոյ, հայերը սկսեցին շարժուել դէպի Արեւելեան Եւրոպայի երկրներ: Ժամանակակից Ուկրաինական պետութեան տարածքում հնագոյն հայերի բնակավայրերից է եղել Ղրիմը, կենդրոնական ուկրաինական տարածք՝ Կիեւ մայրաքաղաքով, ինչպէս նաեւ մեծաքանակ հայեր կենդրոնացել են Լվով քաղաքում: Այս տարածաշրջանում հայերը ապրել են Ժեչ Պոսպոլիտա ժամանակաշրջանից առաջ եւ յետոյ 1569թ. մինչեւ 1795 թուականները:

Սովետական կարգերի ներթափանցմամբ 1917թ.-ից սկսուեցին հալածանքներ հայ կաթողիկէների հանդէպ: Սովետական իշխանութիւնները առանձնայատուկ վտանգ էին տեսնում Սուրբ Աթոռին անքակտելի միացած հայ կաթողիկէների մէջ: Հալածանքները սաստկացան 1939 թուականին, որի արդիւնքում մօտ 5000 հայեր գաղթեցին դէպի Լեհաստան, իսկ Ուկրաինայում մնացածները ստիպուած եղան ներկայանալ իբրեւ ուկրաինացի: Ներկայիս պատմութիւնը փաստում է Ուկրաինայի խորհրդարանը[1], որը 1945-1946 թուականներին տեղի ունեցածը պատմական մեծ ողբերգութիւն ընդունեց եւ պաշտօնապէս ճանաչեց իբրեւ հայ կաթողիկէ եկեղեցու լիկվիդացման տարեթիւ:

1991թ. ԽՍՀՄ-ի փլուզումից յետոյ Լատին Կաթողիկէ եկեղեցին առաջինն էր, որ մուտք գործեց նորանկախ Ուկրաինական պետութեան տարածք՝ տեղում հանդիպելով նաեւ հայ կաթողիկէների, ովքեր իրենց կաթողիկէ ինքնութիւնը չկորցնելու համար Հայ Կաթողիկէ կղերի բացակայութեան պատճառով կապուեցին Լատին կաթողիկէ համայնքին: Մինչ 1990 թուականների վերջերը Ուկրաինայում գործում էր երկու լատին թեմ:

Այսօր դրանք վեցն են՝

- *Լվովի Արքեպիսկոպոսական թեմ (էլ. հասցե՝ rka@lviv.farlep.net),*
- *Կիեւ եւ Ժիտոմեռի թեմը (էլ. հասցե՝ logos@impuls.zhitomir.ua),*
- *Օդեսա եւ Սիմֆերոպոլի թեմ (էլ. հասցէ՝ curia.odessa@gmail.com),*
- *Կամինեց-Պոդոլսկի թեմ (էլ. հասցէ՝ curiapodole@gmail.com),*
- *Լուցկի թեմ (էլ. հասցէ՝ lutskcuria@ukr.net),*
- *Խարկովի եւ Զապոռոժիեի թեմ (էլ. հասցե՝ parafia@rail.kharkov.com):*

Հայ Կաթողիկէների համար ներկայիս Ուկրաինայի արեւմտեան շրջանը՝ Լվով, Իվանո Ֆրանկովսկ, Չեռնավցի եւ Կուտի քաղաքները (ի դէպ, վերջին քաղաքը հիմնադրել են հէնց հայ կաթողիկէները), պատմական մեծ արժէք են ներկայացնում: Լվովում իր նստավայրն է ունեցել Հայ Կաթողիկէ թեմի Արքեպիսկոպոս Հայրը, ով իբրեւ հին եւ առաւել մեծ համայնքի առաջնորդ՝ նախապատուութիւն է ունեցել բոլոր հարցերում Լատին ու Յունակաթոլիկ Եպիսկոպոսներից: Ուկրաինայի արեւմտեան շրջանում կիսաւեր վիճակում կան 8 եկեղեցիներ, բայց, ցաւօք, հայ համայնքը այնտեղ փոքրաթիւ է: Ուկրաինայի ներքին գործերի նախարարութեան պաշտօնեաների հաւաստմամբ՝ արեւմտեան այս շրջանում բռնի ուկրաինացած մօտ 25 հազար հայ կաթողիկէներ կան, ովքեր մեծ մասամբ յաճախում են Յունակաթոլիկ եկեղեցի: Կենդրոնական Ուկրաինայում ներկայումս հայերը կենդրոնացած են Կիեւ քաղաքում: Կիեւում դեռ կայ 14-ից 17-րդ դարերում ներգաղթած մօտ 50 հայ կաթողիկէ ընտանիք, ովքեր ուկրաինախօս են եւ սակայն գիտակից են, որ հայ կաթողիկէ են, նրանք յաճախում են

[1] https://zakon.rada.gov.ua/laws/show/1700-19

Կիեւում Լատին Աթոռանիստ եկեղեցում գործող ժողովրդապետութիւն:

Իրավիճակը այլ է բնակչութեամբ երկրորդ՝ Խարկով քաղաքում: Այստեղ հայերը հաստատուել են, երբ 1655 թուականին կազակները հիմնել են քաղաքը: Հայ համայնքը ստուարացել է 1915 թուականի ցեղասպանութիւնից յետոյ: Մեծաքանակ որբերին խնամելու համար մինչեւ անգամ

Կովկասի Հայ Կաթողիկէ առաքելական կառավարիչ Հ. Սարգիս վարդապետը ուղարկել է Հ. Կարապետ վարդապետ Եսայեանին: Վերջինս լատին Աթոռանիստ եկեղեցու շուրջ հաւաքել է հայ որբերին եւ հայ համայնքը:

Ներկայումս էլ ինչպէս Հայաստանից, այնպէս էլ Վրաստանի տարբեր գիւղերից գաղթած հայ կաթողիկէներ են ապրում քաղաքում: Պետական այրերի պնդմամբ մօտ 3000-ից 5000-ի հասնող համայնք կայ:

Կարեւոր է նաեւ մեծութեամբ երրորդ՝ Սեւ ծովի ափին գտնուող Օդեսա քաղաքը, որ համարւում է Ուկրաինայի ամենամեծ նաւահանգիստը, հիմնադրուել է 1794 թուականին:

1630թ. Ուկրաինայում կար 15 եկեղեցի, 20 հոգեւորական ու 3500 հաւատացեալ: Երբ Սովետական իշխանութիւնները 1940 թուականին մտան Ուկրաինա, հայ կաթողիկէները հաշւում էին մօտ 5500 հաւատացեալ, ծառայում էր 20 հոգեւորական, գործում էր 15 եկեղեցի եւ 16 մատուռ: Լվովում՝ աթոռանիստ եկեղեցուն կից, գործում էր նաեւ հայ բենեդիկտեան քոյրերի միաբանութիւնը, որն իր բարձր կրթական մակարդակով յայտնի դպրոց ուներ:

1938 թուականին մահացաւ Լվովի հայ կաթողիկէ թեմի փաստացի վերջին արքեպիսկոպոս Արհի. Տէր Յովսէփ Թեոդորովիչը: Նոր սկսուող համաշխարհային երկրորդ պատերազմի պայմաններում չընտրուեց նոր արքեպիսկոպոս: Լվովի արքեպիսկոպոսական թեմի Առաքելական պատուիրակի (administratore apostolico) պարտականութիւնները դրուեց հայ կաթողիկէ հոգեւորական Հ. Դիոնիսիոս Վրդ. Կայտանովիչի վրայ:

1946 թուականի մարտ 8-ին եւ 9-ին Ուկրաինայում ԽՍՀՄ վերջնական հաստատումից յետոյ կայացաւ սովետական իշխանութիւների ռազմական դատարանի դատավարութիւն հայ կաթողիկէ կղերի եւ հաւատացեալ անդամների շուրջ: Դատապարտուած հոգեւորականներից աքսորուած մի մասը մահացան 1954 թուականին ուղղիչ աշխատանքային գաղութում (ըստ զանազան արխիւների նիւթերի՝ թունաւորուել կամ սպաննուել են այլ եղանակներով): Սովետական իշխանութեան փլուզումից յետոյ յետմահու արդարացուել են 1994 թուականի օգոստոսի 10-ին:

1946 թուականի մարտ 8-9՝ դատավարութեան ժամանակ, Հ. Դիոնիսոս Վրդ. Կայտանովիչ Առաքելական պատուիրակի հետ դատապարտուեցին հոգեւորականներ Հ. Կազեմիր Վրդ. Ռոմաշկան, Հ. Վիկտոր Վրդ. Կվապինսկին, հայ կաթողիկէ թեմի աշխատակիցներ եւ թեմական խորհրդի անդամներ Ստանիսլավ Դոնիգեվիչը, Գոհարինե Բաբաեւան, Սերգեյ Նազարեանը, Վաղարշակ Գրիգորեանը եւ այլք: Յատկանշական է, որ բռնաճնշումների ենթարկուեցին հիմնականում հայ կաթողիկէները, որոնք հրաժարուեցին խզել կապը՝ եկեղեցական հաղորդութիւնը Սուրբ Աթոռի հետ:

Այս բռնաճնշումները եւ հալածանքները Լվովի հայ կաթողիկէ թեմի հոգեւորականութեան եւ հաւատացեալների դէմ իրագործուեցին գիտութեամբ եւ վերահսկողութեամբ ԽՍՀՄ Ուկրաինայի առաջին կոմկուսի քարտուղար Նիկիտա Խրուշովի, ով յետագայում՝ Ստալինի մահից եւ Մոլոտովի հրաժարականից յետոյ, դարձաւ ԽՍՀՄ առաջին դէմքը: Հաւատացեալների եւ հոգեւորականների մի մասը փախաւ Լեհաստան, ըստ ԿԳԲ-ի տուեալների 2500 հաւատացեալ աքսորուեց Ուուսաստանի Սիբիր երկրամաս: 8 հոգեւորական եւ հայ բենեդիկտեան մայրապետներ եւ

հաւատացեալներ Լեհաստանում հաստատուեցին Գլիվիցա, Կրակով եւ Գդանսկ քաղաքներում:

Լվով՝ քաղաք Արեւմտեան Ուկրաինայի Լվովի մարզում: Այստեղ ունենք երկու եկեղեցի:

Առաջինը Աթոռանիստ Սբ. Աստուածածնի Վերափոխման հայ կաթողիկէ մայր եկեղեցին է, որը 2003 թուականից Հայ Առաքելական եկեղեցուն է տրուել գործածութեան համար:

Արեւելեան հնագոյն հատուածը կառուցուել է 1363-1370թթ. ղրիմահայ առեւտրական Շահին-շահի որդի Յակոբ Կաֆայեցու եւ Աբրահամի որդի Փանոս Հաչաթեցու միջոցներով: Եկեղեցու ճարտարապետը Ղրիմից հրաւիրուած Ճենովացի Դորինգեմն էր: Դարերի ընթացքում եկեղեցին բազմիցս վերակառուցուել եւ ընդլայնուել է: ԺԶ-րդ դարում հիւսիսային եւ հարաւային մասերում աւելացուել են սինասրահները: ԺԷ-րդ դարում Լվովի հայ կաթողիկէ եկեղեցու առաջին եպիսկոպոս Արհի. Տէր Նիկոլայ Թորոսեւիչը բարոկկո ոճով եկեղեցուն արեւմուտքից կցում է կենդրոնական միանաւ հատուածը: 1712 թուականին եկեղեցին մեծապէս տուժում է հրդեհից եւ հիմնաւորապէս վերանորոգւում 1723-1731 թթ.: Վերջին խոշոր վերանորոգումը եւ ընդլայնումը դէպի արեւմուտք իրականացնում են Ի-րդ դարի սկզբին Լվովի հայ կաթողիկէ թեմի առաջնորդ Արհի. Տէր Յովսէփ արքեպիսկոպոս Թեոդորովիչի կողմից: Նրա պատուերով ճարտարապետ Ֆրանցիսկ Մոնչինսկին մոդեռն ոճով կառուցում է եկեղեցու երրորդ՝ կենդրոնագմբեթ հատուածը, իսկ արեւմտեան մասից դէպի Կրակովեան փողոց՝ գլխաւոր շքամուտքը: Ի-րդ դարի 30-ական թուականներին Արհի. Տէր Յովսէփ արքեպիսկոպոս Թեոդորովիչի նախաձեռնութեամբ եկեղեցին յարդարում են Յան Հենրիկ Ռոզենի գեղանկարներով եւ Յուզեֆ Մեհոֆֆերի խճանկարներով:

Երկրորդ հայ կաթողիկէ եկեղեցին Սուրբ Խաչն է, որ եղել է հայ բենեդիկտեան մայրապետների վանքի համալիրի մէջ: Համալիրն իր մէջ ներառում էր դպրոց եւ մայրապետների վանատուն, վերջինս այժմ գործածւում է որպէս Ուկրաինայի ներքին գործերի նախարարութեան ենթակայ ոստիկանական ուսումնարան: Վերափոխման Մայր Եկեղեցուն կից գործել է աղջիկների դաստիարակութեան դպրոց հայածէս բենեդիկտեան կոյսերի վանքում: Այս վանքը սկիզբ է առել՝ Կամինեցի եւ Յազլովեց (ներկայիս Ուկրաինա) քաղաքների հայածէս մայրապետներին ի մի ժողովելով: 1690 թուականին Նորին Սրբութիւն Ալեքսանդր Ը Քահանայապետի կարգադրութեամբ տեղափոխուել են Լեոպոլիս, ներկայիս Լվով քաղաք՝ ընդունելով Ս. Բենետիկտոսի վանական սահմանադրութիւնը:

Սբ. Խաչ փայտաշէն եկեղեցին կառուցուել է 1611 թուականին, իսկ քարակերտ եկեղեցին՝ 1630-ական թուականներին՝ հայ վաճառական Սահակ Ագոբսովիչի միջոցներով: Բարոկկո ոճով կառուցուած միանաւ բազիլիկ շինութիւն է՝ արտաքուստ շեշտուած ուղղանկիւն խորանով եւ երկու աւանդատներով: Արեւմտեան մասում գտնուում է եռակամար զանգակատունը:

Կից կառոյցներ

1792 թուականին Լվովի մէջ, հովանաւորութեամբ Լվովի հայ կաթողիկէ արքեպիսկոպոսի եւ երեք մեծահարուստների նախաձեռնութեամբ, հիմնադրւում է «Mons Pius» հայկական առեւտրային բանկը՝ 40 հազար ոսկի կապիտալով, որում հաւաքւում է դրամագլուխ ժողովրդապետութիւններից, եւ շահը բաժանւում է ըստ յանձնուած դրամագլխի՝ սահմանուած ժամանակին, ամէն մէկ ժողովրդապետութեան աղքատներին:

ԺԷ-րդ դարից Մետրոպոլիտական Սիւնհոդոսի հովանաւորութեան տակ գործում էր հայկական դպրոց 80 աշակերտների համար եւ հայ որբերի գիշերօթիկ դպրոց, որ հաստատուել է 1863

թուականից Արհի. Տէր Յովսէփ եպս. Թորոսովիչի անուամբ եւ գործել է մինչ 1914 թուականը:

1616թ. Լվովում հիմնադրում է առաջին հայկական տպարաններից մէկը, որտեղ տպագրում են հայերէն եւ հայատառ գրքեր: Վերոնշեալ տեղեկութիւնը եւ թեմական կազմակերպութիւնը նշուած է 1884-ի վիճակագրութեան մէջ, ինչպէս նաեւ՝ ըստ 1936 թուականի եկեղեցական վիճակագրութեան (Schematismus arch. Leopolensis):

Բացի վերոյիշեալ հաստատութիւններից՝ Լվովի հայ կաթողիկէ հայոց արքեպիսկոպոսարանն ունի մի ուրիշ կարեւոր հիմնարկութիւն՝ «Հայոց թեմական ընկերութիւն» անունով, այն հիմնուել է 1930 թուականին: Այս ընկերութեան նպատակն է հոգեւոր եղբայրական կապերով միացնել եւ համախմբել այլեւայլ կողմերում ցրուած կաթողիկէ հայերին, հաստատել եւ ամրապնդել նրանց մէջ հայկական ծէսը, հոգալ նրանց եկեղեցական եւ հոգեւոր պէտքերը, ինչպէս նաեւ օգնել ընկերութեան անդամներին: Ընկերութիւնը մասնաճիւղեր է ունեցել այն բոլոր վայրերում, ուր կային հայ կաթողիկէ ծուխեր, ակումբներ կամ միութիւններ: Կենդրոնատեղին Լվովն է: Դրամական միջոցները գոյանում էին անդամակցական վճարներից, նուիրատութիւններից եւ ընկերութեան դրամագլխից գոյացած տոկոսներից: Ընկերութիւնը ունեցել է իր պարբերաթերթը՝ ամսագիրը լեհերէն լեզուով, որ կոչուել է Սբ. Գրիգոր Լուսաւորչի անունով՝ "Poslaniec Sw. Grzegorza", այսինքն՝ «Պատգամաբեր Սբ. Գրիգորի»: Ընկերութեան պաշտօնակիր անձինք են ընկերութեան պաշտպանը՝ օրուայ արքեպիսկոպոսը, վարչական խորհուրդը, որն ունի երկու նախագահ, քարտուղար, գրադարանապետ եւ տասը անդամներ: Ընկերութեան գլխաւոր գրասենեակն էլ տեղակայուած էր Լվովում՝ Հայկական կոչուող փողոցում (Armeniaska 13 cotign 1):

Հայկական կոչուած փողոցում են գտնուել նաեւ միւս հաստատութիւնները՝ արքեպիսկոպոսարանը, Մայր եկեղեցին, դպրոցն եւ այլն:

Ըստ պաշտօնական թեմացուցակի՝ Լվովի թեմի պաշտպան սուրբերն են Ամենասրբուհի Կոյս Մարիամ Անարատ Յղացեալը, Սբ. Գրիգոր Լուսաւորիչ՝ եպիսկոպոս եւ պատրիարք Հայաստանի, նաեւ՝ Սբ. Կայետանոս Թիեննոն խոստովանողը (Gaetano Thiene):

Իվանո-Ֆրանկովսկ՝ մարզկենտրոն համանուն մարզի, պահպանուած է Սբ. Աստուածածնի Անարատ Յղութեան հայ կաթողիկէ եկեղեցին (17-րդ դար), եկեղեցին գտնուում է քաղաքի կենդրոնում՝ Վիրմենսկա (հայկական) փողոցի վրայ: Այն ներկայումս գործածում են Ուկրաինայի ուղղափառ աֆտոկեֆալ եկեղեցին, որոնք, ցաւօք, ներկել են եկեղեցին եւ ներքին յարդարանքների արդիւնքում փոխել են նախնական տեսքը:

Տիսմենիցա՝ քաղաք Իվանո-Ֆրանկովսկի մարզում: Սբ. Կաետանի անուան հայ կաթողիկէ եկեղեցի (17-րդ դար): 1940-ականներին ավերուել է, որը ներկայումս, դժբախտաբար, վերածուել է աղբավայրի, կից մնացել է քահանայատունը, ուր ապրել է յայտնի հայ եկեղեցական դոմինիկեան միաբանութեան անդամ Հ. Սադոկ Վրդ. Բարոնչը: Գերեզմանատանը կայ փոքրիկ մատուռ, որը կանգուն էր մինչեւ 2011 թուականը, այն կառուցուել էր 1828 թուականին Օհանովիչ հայ կաթողիկէ ընտանիքի միջոցներով: Հայերը այստեղ հիմնել են կաշեգործութիւնը եւ մուշտակ կարելու արհեստը, ներկայումս էլ քաղաքը յայտնի է իր մուշտակներով եւ կաշեգործութեամբ:

Նկարը՝ ջրաներկ, գործ Ս. Բիսաժի, 1937թ.:

Լիսեց՝ գիւղ Խմելնիցկի մարզում: Պահպանուած է Սբ. Սիրտ Յիսուսի հայ կաթողիկէ եկեղեցին

(18-րդ դար), իսկ ներկայումս քահանայատունը ծառայում է որպէս գիւղի երաժշտական դպրոց: Եկեղեցին վերանորոգուել է եւ գործում է Լատին Կաթողիկէ եկեղեցու հովանու ներքոյ:

Սնիատին՝ քաղաք Իվանո-Ֆրանկովսկի մարզում: Կանգուն է Սբ. Մարիամ Աստուածածնի Վերափոխման հայ կաթողիկէ եկեղեցին (19-րդ դար), որի կտուրը ներկայումս անմխիթար վիճակում է, գտնուում է Ուկրաինայի մշակոյթի նախարարութեան հաշուարկի վրայ, սովետական իշխանութեան օրոք ծառայել է իբրեւ ֆիզկուլտուրայի (մարմնամարզութեան) դահլիճ, եկեղեցապատկան կից կառոյցում ներկայումս գործում է ուսումնարան:

Բերեժանի՝ քաղաք Տերնոպոլի մարզում: Կանգուն է Սբ. Մարիամ Աստուածածնի Անարատ Յղութեան հայ կաթողիկէ եկեղեցին (18-րդ դար): Եկեղեցին գտնուում է պետական հաշուարկի տակ՝ իբրեւ մշակոյթային յուշարձան: Սա համալիր է, որն իր մէջ ներառում է դպրոց եւ քահանայատուն:

Գորոդենկո՝ քաղաք Իվանո-Ֆրանկովսկի մարզում: Կանգուն է Սբ. Մարիամ Աստուածածնի Անարատ Յղութեան հայ կաթողիկէ եկեղեցին (17-րդ դար), որի կտուրը ներկայումս գտնուում է անմխիթար վիճակում, եկեղեցին պետական հաշուարկի վրայ է:

Կուտի՝ գիւղ Իվանո-Ֆրանկովսկի մարզում: Գիւղը հիմնել են հայ կաթողիկէները: Հայ կաթողիկէ պատմական կենդրոն է՝ յայտնի իր սրբապատկերով: Սբ. Մարիամ Աստուածածնի Անարատ Յղութեան հայ կաթողիկէ եկեղեցին (18-րդ դար) ներկայումս գտնուում է Ուկրաինայի ուղղափառ եկեղեցու գործածութեան ներքոյ: Ինչպէս նաեւ գերեզմանատանը կայ փոքրիկ մատուռ:

Չեռնովցի՝ քաղաք Չեռնովցի մարզում: Քաղաքում կայ մեծ եւ հրաշալի պահպանուած Սբ. Պօղոս եւ Սբ. Պետրոս հայ կաթողիկէ եկեղեցին (19-րդ դար), որ դեռ գտնուում է պետական հաշուարկի վրայ եւ գործածւում է իբրեւ ֆիլարմոնիկ համերգասրահ եւ սրա շնորհիւ է պահպանուել:

Եազլովցա կամ Եազլովեց. կանգուն է Սբ. Մարիամ Աստուածածին հայ կաթողիկէ եկեղեցին (17-րդ դար), որ գտնուում է Ուկրաինայի ուղղափառ եկեղեցու գործածութեան տակ, պահպանուել են հայերէն արձանագրութիւնները: Գիւղում կայ հայկական բերդ, գերեզմանատան մատուռ եւ ջրհոր, որ գործածել են հայերը, ուր նոյնպէս կայ հայերէն Մեսրոպատառ արձանագրութիւն:

Ժվանեց՝ գիւղ Խմելնիցկի մարզում: Պահպանուած է Սբ. Մարիամ Աստուածածնի Անարատ Յղութեան եւ Սբ. Կայետանի հայ կաթողիկէ եկեղեցին (17-րդ դար), որ ներկայումս գործածում են Լատին կաթողիկէները:

Կամենեց-Պոդոլսկ՝ քաղաք Խմելնիցկի մարզում: Կանգուն է Սբ. Նիկողայոս Հայրապետի հայ կաթողիկէ եկեղեցական համալիր (17-րդ դար): Եկեղեցին քանդուած է, պահպանուել են շքամուտքը եւ զանգակատունը:

2017 թուականից Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Արեւելեան Եւրոպայի Հայ Կաթողիկէների Առաջնորդ Արհի. Տէր Ռափայէլ Արքեպս. Մինասեանի տնօրինութեամբ Ուկրաինայում նշանակուել է այցելու վարդապետ՝ յանձին Հ. Նարեկ Վրդ. Մնոյեանի:

Այս նախաձեռնութիւնը սկիզբ է առել Սրբազան Հօր հովուական եւ հայրախնամ մտահոգութեամբ՝ ի սէր Ուկրաինայում հայ կաթողիկէների պատմական ներկայութեան եւ ի խնդիր ներկայումս այնտեղ ապրող հաւատացեալների համախմբման եւ հայ կաթողիկէ ամուր համայնք վերահաստատելու նախանձախնդրութեանը: 2017 թուականի մայիսին Սրբազան Հայրը Օդեսայի եւ Սիմֆերոպոլի լատին կաթողիկէ թեմի առաջնորդ Գերաշնորհ Տէր Բրանիսլավ եպս. Բեռնարդսկու հրաւերով այցելեց Օդեսա՝ մասնակցելու թեմի հիմնման 15-րդ ամեակին: Այնուհետեւ հանդիպումներ ունեցաւ Ուկրաինայում Պապական նուիրակ Արհի. Տէր Կլաուդիո Արքեպս. Գուջերոտիի հետ, ինչպէս նաեւ տեղի լատին կաթողիկէ թեմական առաջնորդների հետ: Ապա հովուական այցելութիւններ կատարեց պատմական շրջաններ, ուր կան հայ կաթողիկէ եկեղեցիներ եւ համայնքներ: Նոյն այցելութեան աւարտին, Կիեւում նախապէս կատարուած աշխատանքների շնորհիւ, Ուկրաինայի ներքին գործերի նախարար տիար Արսէն Ավակովը պատրաստակամութիւն յայտնեց վերադարձնել Լվովի Սբ. Խաչ հայ կաթողիկէ եկեղեցին, որը գտնուում է իր նախարարութեան հաշուարկի ներքոյ: 2018 եւ 2019 թուականներին շարունակելով գործունէութիւնը Ուկաինայում՝ Արհի. Տէր Ռափայէլ Արքեպս. Մինասեանի տնօրինութեամբ հիմնուեց Կիեւի՝ Սբ. Գրիգոր Նարեկացու, Խարկովի՝ Սուրբ Երրորդութեան եւ Օդեսայի՝ Սրբոց Թարգմանչաց հայ կաթողիկէ ժողովրդապետութիւնները: Ընթացող աշխատանքների եւ Աստուծոյ ողորմածութեամբ՝ պետութեան առաջ պաշտօնական գրանցումից յետոյ ժողովրդապետութիւնները կ'ունենան մնայուն ծառայող ժողովրդապետեր:

ՏԵՍՈՒՉ՝ ՍՐԲՈՑ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ ՄԻԱՑԵԱԼ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ, ԵՐԵՒԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ Հ.Կ. ԵԿԵՂԵՑՒՈՅ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԳԵՐՊ. ՀԱՅՐ ՄԱՇՏՈՑ ՎՐԴ. ՋԱՀԹԵՐԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

«Թէպէտ եւ եմք ածու փոքր, եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ...
սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ
ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոց յիշատակի»:
Մովսէս Խորենացի

Հայ Գիրերու գիւտէն ետք, Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետէն հասած ժառանգութեան հիման վրայ, թէ՛ բուն Հայաստանի եւ թէ՛ Յունաց բաժնին մէջ նշանաւոր դարձան Սուրբ Մեսրոպի եւ Սուրբ Սահակ Պարթեւի բացած դպրոցները, ուր՝ կը ջամբուէին հայ գիրն ու գրականութիւնը, որուն անմասն բաժինն էր հայ դպրութիւնն ու հոգեւոր կրթութիւնը: Շարունակ դարերու ընթացքին հռչակաւոր դարձան հայկական միջավայրի վանական դաստիարակութիւնը ու հիմնուեցան վարդապետանոցները...:

Դարերէն եկած այս աւանդութեան հաւատարիմ մնացած է նաեւ Հայ Կաթողիկէ Եկեղեցին: Արդարեւ, վերանորոգ Պատրիարքութեան գահակալներուն մտահոգութեան առանցքը հանդիսացած է սերունդներու դաստիարակութիւնը: Հաւատարիմ այս լոզունքին, Հայրապետներու անմիջական հսկողութեան տակ հայ կաթողիկէ ապագացու կղերը դաստիարակուած ու թրծուած է մարդկային, հոգեւոր ու ազգային հոգիով:

Ներկայ դարուս, ուր ճարտարարուեստական միջոցները նոր կեանքի կարգավիճակներ կը ստեղծեն ու կը պարտաւորեն մարդ արարածին՝ «արդի աշխարհ» մը ստեղծելու միտումով, Ընդհանրական Եկեղեցին կը շարունակէ հաւատարմօրէն կրթել նոր սերունդները մարդկային ու հասարակական օրէնքներու հիման վրայ, անոնց մէջ դրոշմելով հոգեւոր արժէքներն ու Քրիստոնեայ «Եկեղեցւոյ Վարդապետութեան» սկզբունքները: Այսպէս, Հայաստանի Վրաստանի, Ռուսիոյ, Ուքրանիոյ եւ Արեւելեան Եւրոպայի Հայ Կաթողիկէ Թեմը, համագործակցաբար Զմմառու Պատրիարքական Կղերի Միաբանութեան վերականգնեց ու վերաբացեց Հայաստանի մէջ Դպրեվանքը՝ զայն անուանակոչելով՝ «Սրբոց Հրեշտակապետաց Միացեալ Հոգեւոր Ճեմարան», իբրեւ վայր յատկացնելով Երեւանի Քանաքեռ շրջանի նստավայրի շէնքերէն հատուած մը: Պաշտօնական բացումը տեղի ունեցաւ 26 հոկտեմբեր 2018ին:

Շուրջ տարի ու կէս արդէն իսկ կը գործէ սոյն հոգեւոր ճեմարանը: Այնտեղ կ'աշխատինք դաստիարակել ու պատրաստել Հայ Կաթողիկէ ապագայ հոգեւորականը, ազգին ու եկեղեցւոյ հաւատարիմ ծառաները: Փոքր նորընծաները դպրոցական պետական համակարգին ընթացիկ կը հետեւին ներքին դասընթացքներու, օտար լեզու, ձայնամարզութիւն ու շարականագիտութիւն, գրաբար լեզու եւ քրիստոնէական վարդապետութիւն: Իսկ ժառանգաւորները որոնք կը հետեւին պատրաստողական շրջանի ծրագրին, այս բոլորին կողքին նաեւ ունին հայերէն լեզուի,

գրականութեան ու հայոց պատմութեան մասնագիտական դասընթացքներ: Բնականաբար, տարուայ ծիսական բոլոր արարողութիւններն ու աղօթքները կը կատարեն Երեւանի Ս. Գրիգոր Նարեկացի ժողովրդապետութեան յարկին ներքոյ եւ օգտակար կը դառնան Եկեղեցւոյ սուրբ Սեղանի ծառայութեանը: Գիտութիւն ամբարելու կողքին, անոնք կը ստանան հոգեւոր դաստիարակութիւն, կ'ունենան յատուկ աղօթքի պահեր, Աւետարանական երեկոներ եւ հոգեւոր ամփոփումի օրեր: Պատրաստողական տարուայ ծրագիրը աւարտած ժառանգաւորները կը մեկնին Եւրոպա հետեւելու իմաստասիրական եւ աստուածաբանական դասընթացքներու տարբեր համալսարաններէ ներս:

Մօտ ապագայի համար նախատեսուած են տարբեր ծրագիրներ, որոնց մասին հանրութեանը կը հաղորդենք մեր հաղորդամիջոցներէն:

Մեր մաղթանքն է, որ նոր կոչումներու ու հոգեւոր սպասաւորներու թիւը դրական աճ արձանագրէ եկող ժամանակաշրջանին ի սպաս եկեղեցւոյ եւ ազգի ծառայութեան: Վստահաբար այսպիսի առաքելութիւն մը չի կրնար յաջողութեան յանգիլ եթէ ոչ իւրաքանչիւր հոգեւորականի, ժողովրդապետի՝ հոգեւոր հովիւներու աջակցութեան եւ խրատներուն:

ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԳԵՐՊ. ՀԱՅՐ ՄԻՔԱՅԷԼ ՎՐԴ. ԽԱՉԿԱԼԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Քրիստոնէական կոչում

Երիտասարդները յաճախ են տալիս այսպիսի հարցեր. *«Ո՞վ եմ ես», «Ի՞նչ է իմ կեանքի նպատակը», «Ի՞նչ պէտք է անեմ»:* Այս հարցերի պատասխանները սերտորեն կապուած են մեր հաւատքի հետ:

Իւրաքանչիւր մարդու, ում Աստուած նուիրում է կեանք, ստանում է նաեւ իր յատուկ կոչումը՝ *«գործը, որն ինձ տուիր, որ անեմ»: (Յովհ. 17, 4):* Եթէ մարդ չգիտի կամ չի ընդունում իր կոչումը Աստծուց, նա կը կորցնի ուրախութիւնը, ինչպէս պատահեց հարուստ երիտասարդի հետ, ում Քրիստոս ասաց. «Արի՛ իմ հետեւից»: *«Երբ երիտասարդը այս խօսքը լսեց, տրտմած գնաց. որովհետեւ շատ հարստութիւն ունէր»* (Յովհ. 19, 21-22):

Սուրբ Օգոստինոսը աղօթում եւ խնդրում էր Աստծուց. «Տէր Յիսուս, տուր ճանաչել Քեզ եւ ճանաչել ինձ»: Պետրոս Առաքեալը խօսում է քրիստոնեայի կոչումից եւ ասում. *«Դուք ընտիր ցեղ էք, թագաւորութիւն, քահանայութիւն, սուրբ ազգ, Աստծոյ սեփական ժողովուրդ, որպէսզի ձեր առաքինութիւնները նուիրէք նրան, ով խաւարից ձեզ կանչեց իր սքանչելի լոյսին»* (1 Պետ. 2, 9): Մենք ենք «Սուրբ ազգ, ընտրեալ ժողովուրդ», եւ մենք մեզ քրիստոնեայ ենք կոչում, արդեօք գիտակցո՞ւմ ենք, թէ ինչ է նշանակում այս կոչումը՝ լինել քրիստոնեայ, եւ ինչպիսին է մեր պատասխանատուութիւնը:

Պօղոս Առաքեալն ասում է. *«Եթէ մէկը Քրիստոսի մէջ է, նա նոր արարած է»* (2 Կորնթ. 5, 17): Հետեւաբար, քրիստոնեան դա *«նոր մարդ է, որ ստեղծուած է ըստ Աստծոյ»* (Եփես. 4, 24): Նոր մարդու ծնունդը իրականացւում է մկրտութեան խորհրդի ժամանակ. *«պէտք է ձեզ վերստին ծնուել»* (Յովհ. 3, 7),– ասում է Յիսուս Քրիստոսը: *«Ձեզ վրայ սուրբ ջուր եմ ցանելու, եւ դուք մաքրուելու էք ձեր բոլոր պղծութիւններից. Նոր սիրտ եմ տալու ձեզ, նոր հոգի եմ դնելու ձեր մէջ. ձեր մարմիններից հանելու եմ քարեղէն սիրտը եւ մարմնեղէն սիրտ եմ ձեզ տալու. իմ Հոգին եմ տալու ձեզ: Եւ այնպէս եմ անելու, որ իմ արդարութեան ճանապարհով ընթանաք, օրէնքներս պահէք եւ կատարէք դրանք»* (Եզեկ. 36, 25-27):

Մկրտութիւնը նոր արարած է դարձնում մարդուն, դարձնում է Եկեղեցու անդամ եւ Աստծոյ որդի՝ որդեգրած Յիսուս Քրիստոսի միջոցով: Սակայն անհրաժեշտ է հասկանալ, գիտակցել, թէ ինչքան մեծ է այդ պարգեւը:

Մկրտութեան Խորհուրդով մարդ ստանում է *«մեղքերի թողութիւն, Սուրբ Հոգու ընդունելութիւն, երկնաւոր Հօր որդեգրութեան շնորհք»* (Մաշտոց, Կանոն սուրբ Մկրտութեան): Այսօր մկրտուած մարդկանցից շատերը չեն գիտակցում այն, թե ինչպիսի թանկարժէք պարգեւ են ստացել մկրտութեան խորհրդի ժամանակ, եւ շարունակում են ապրել ինչպէս հեթանոսներ, որ Աստծուն չեն ճանաչում: Պօղոս Առաքեալը կոչ է անում իւրաքանչիւր մկրտուածի. *«Արդ, աղաչում եմ ձեզ, ե՛ս՝ Տիրոջ համար բանտարկուածս, որ ընթանաք այնպէս, ինչպէս վայել է այն կոչմանը, որին կոչուեցիք... մեզնից իւրաքանչիւրին տրուած է շնորհ՝ ըստ Քրիստոսի պարգեւած չափի. չընթանա՛ք այնպէս, ինչպէս որ այլ հեթանոսներն են ընթանում իրենց մտքի ունայնութեամբ.»* (Եփես. 4.1, 7, 17), *«Չգիտէ՞ք, որ Աստծոյ տաճար էք դուք, եւ Աստծոյ Հոգին է բնակւում ձեր մէջ»* (1 Կորն. 3, 16):

Մեր մէջ բնակւում է Աստուած, եւ մենք դառնում ենք Աստծոյ որդիներ, որովհետեւ *«նրանք, որ առաջնորդւում են Աստծոյ Հոգով, նրանք են Աստծոյ որդիներ. քանի որ չստացաք ստրկութեան հոգին վերստին երկիւղի մէջ ընկնելու համար, այլ ստացաք որդեգրութեան հոգին, որով աղաղակում ենք՝ Աբբա Հայր: Նոյն ինքը Հոգին վկայում է մեր հոգուն, որ Աստծոյ որդիներ ենք. եւ եթէ որդիներ ենք, ապա եւ՝ ժառանգներ Աստծոյ»* (Հռ. 8, 14-16):

Եթէ մենք որդիներ ենք, չենք կարող ապրել, ինչպէս ստրուկներ: Լինելով Աստծոյ զաւակներ՝ չենք կարող ապրել մեղքի ստրկութեան մէջ: Քանզի այնտեղ՝ *«ուր որ Տիրոջ Հոգին է, այնտեղ ազատութիւն է»* (2 Կորն. 3, 17): Միանգամայն անհրաժեշտ է գիտակցել, որ դու որդի ես, դուստր ես, եւ ոչ թէ անցորդ, հանդիսատես: Չնայեած այն հանգամանքին, որ քրիստոնեայի ինքնութիւնը տրւում է Մկրտութեան խորհրդով, այն պէտք է մշտապէս ամրապնդուի մեր կրօնական գործելակերպով՝ Պատարագին մասնակցելով, անձնական աղօթքով, պէտք է ամրապնդուի Աստծոյ շնորհքով եւ առօրեայ քրիստոնէական վկայութեամբ: Քրիստոնեաները նոր կեանքի վկաներ են Քրիստոսով:

Քրիստոնեայ լինել ժամանակակից աշխարհում նշանակում է տալ հաւատքի վկայութիւն Աստծոյ հանդէպ, որդիական սիրոյ վկայութիւնը՝ Հօր նկատմամբ եւ կեանքում իրականացնել որոշակի արժէքներ: Եթէ ես չեմ գիտակցում, որ որդի կամ դուստր եմ, եթէ չեմ գիտակցում, որ Աստուած իմ Հայրն է, իսկ Եկեղեցին իմ ընտանիքը, ապա ինչպիսի՞ սիրոյ վկայութիւն կարող եմ տալ:

Քահանայապետ Յովհաննէս Պօղոս Բ իր Առաքելական ուղղերձի մէջ՝ "Ecclesia in Europa" գրում է. «Ժամանակակից մարդը աւելի մեծ ուշադրութեամբ լսում է վկաներին, քան ուսուցիչներին, եթէ նա լսում է ուսուցիչներին, միայն այն պատճառով, որ նրանք վկաներ են»: Այսօր աշխարհը եւ մեր հասարակութիւնը նոր կեանքի վկաների կարիք ունի, Հայր Աստծոյ հանդէպ որդիական սիրոյ վկաների կարիք ունի:

Բլեզ Պասկալը՝ XVII դարի ֆրանսիացի մաթեմատիկոս, փիլիսոփայ եւ գրող, ասել է. «Ես հաւատում եմ միայն այն վկաներին, ովքեր կտրել տուեցին իրենց կոկորդը», ուստի հաւատքի վկայութիւնը պահանջում է համարձակութիւն եւ անձնազոհողութիւն՝ նուիրաբերելով ամբողջ կեանքը Աստծուն: Հավատի վկայութիւնը ենթադրում է նաեւ համագործակցութիւն Եկեղեցու հետ՝ հաւատքի պաշտպանութեան հարցում:

Քրիստոնեաները պէտք է ակտիւօրեն համագործակցեն Եկեղեցու հետ, որը մշտապէս պայքարում է պաշտպանելու համար քրիստոնէութիւնը՝ կատարելով իր աւետարանչական առաքելութիւնը: Անհրաժեշտ է ընդունել ժամանակակից աշխարհի մարտահրաւէրները, որը այն գցում է Եկեղեցուն, քրիստոնէական աշխարհին, աշխարհի կրօնական տեսլականին:

Աշխարհը հրաժարւում է Հօր սիրուց. *«Եթէ մէկը սիրում է աշխարհը, Հօր սէրը նրա մէջ չէ»* (1 Հովհ. 2, 15), եւ փորձում է խաբել նաեւ Աստծոյ որդիներին, ովքեր հաւատում են Նրան, ում Հայրը *«տուեց իշխանութիւն Աստծոյ որդիներ լինելու»* (Յովհ. 1, 12):

Ստով եւ նենգութեամբ «չէք մահանայ» (Ծննդոց 3, 4), թշնամին կոչ է անում «ազատութեան» եւ առաջարկում է հրաժարուել Խաչից. *«Տէ՛ր, այդ քեզ չի պատահի»* (Մատթ. 16, 22), թշնամին փորձում է կասկած եւ վախ սերմանել, *«մռնչում է առիւծի պէս, շրջում եւ փնտրում է, թէ ում կուլ տայ»* (1 Պետ. 5, 8):

Ինչպէս անապատում թշնամին ասաց Յիսուսին՝ *«Եթէ Աստծոյ Որդի ես, այդ քարին ասա, որ հաց լինի»* (Ղուկ. 4, 4), *«Եթէ Աստծոյ Որդի ես»*, թշնամին փորձում է կասկած սերմանել, բայց Քրիստոսը չի պատրաստւում որեւէ բան ապացուցել. Նա գիտի՝ ինքն ով է, գիտի իր ինքնութիւնը:

Քրիստոսը հակադրում է սատանային Աստծոյ Խօսքի ամուր հաւատքով, որովհետեւ *«մարդն ապրում է այն ամէն խօսքով, որ ելնում է Աստծոյ բերանից»* (Օրէնք 8, 3):

«Աստուած սիրեց աշխարհը» (Յովհ. 3, 16), եւ այսօր Արարչի սէրն ու ողորմութիւնը քո հանդէպ անփոփոխ են: Մի՛ վախեցիր եւ մի՛ կասկածիր: Բոլոր քո հարցերի պատասխանները, թե «Ո՞վ ես», «Ի՞նչի համար ես ապրում», «Ի՞նչ պէտք է անես», դու կը գտնես՝ նայելով Յիսուս Քրիստոսին, որ *«Ճանապարհը, Ճշմարտութիւնը եւ Կեանքն է»* (Յովհ. 14, 6) *«ամէն մարդու, որ գալու է աշխարհ»* (Յովհ. 1, 9):

Սիրելինե՛րս, համառօտ ուզում եմ ներկայացնել 2019 թուականի ընթացքում Թբիլիսիի Հայ Կաթողիկէ համայնքի եւ «Մարիամ» մանկական-երիտասարդական կենդրոնի իրականացրած աշխատանքների մասին:

«Մարիամ» մանկական-երիտասարդական կենդրոնը, որը կազմաւորուել է Թբիլիսիում հայ-կաթողիկէ եկեղեցու հովանու ներքոյ, գործում է 2007 թուականից: Կենդրոնի նպատակը երեխաների եւ՛ ինտելեկտուալ, եւ՛ հոգեւոր-բարոյական դաստիարակութիւնն է: Կենդրոնը ամենօրեայ աշխատանք է տանում երեխաների հետ: Երեխաները ամէն օր՝ դպրոցից յետոյ, գալիս են կենդրոն եւ զբաղւում տարատեսակ գործունէութեամբ. սովորում են մաթեմատիկա, հայերէն, ռուսերէն եւ անգլերէն լեզուներ, հայկական եւ վրացական ազգային պարեր, ասեղնագործութիւն, շախմատ, կիթառ եւ դաշնամուր նուագել, հարուածային գործիքներ, ինչպէս նաեւ՝ սոլֆեջիո (խազերգութիւն) եւ երգեցողութիւն: Երգեցողութեան դասընթացները հանգեցրել են մեր եկեղեցում մանկական երգչախմբի ձեւաւորմանը, որի օգնութիւնը շատ կարեւոր է Սուրբ Պատարագի ընթացքում:

Ամէն երեքշաբթի երեխաներն ու երիտասարդները դպրոցի դասերի աւարտից յետոյ գալիս են կենդրոն՝ մասնակցելու Սուրբ Պատարագին, որից յետոյ տեղի է ունենում քրիստոնէական վարդապետութեան դասերը:

Երեխաները, ովքեր յաճախում են կենդրոն, սկսել են կիրակի օրերին գալ եկեղեցի եւ մասնակցել Սուրբ Պատարագին, որոնցից շատերը մկրտուել են, սկսել խոստովանուել եւ հաղորդուել:

ՎԵՆՅՈՎԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԳԵՐՊ. ՀԱՅՐ ՍԵԴՐԱԿ ՎՐԴ. ԽԻԹԱՐԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Հայ ազգային ինքնութեան պահպանումը, սերունդներին հայեցի կրթելու, դաստիարակելու, պատմական ակունքներին հաղորդակից լինելու ձգտումը մշտապէս եղել եւ մնում է Վենյով քաղաքի հայ ժողովրդապետութեան եւ հայ համայնքի հոգեկերտուածքի կարեւորագոյն բաղկացուցիչը:

Տարիներ շարունակ օտար երկրում գտնուելը, ազգային ինքնութեան կորստի մշտական սպառնալիքը, ձուլման վտանգը առանձնայատուկ մօտեցում ու վերաբերմունք են առաջ բերել Հայ Կաթողիկէ ժողովրդապետութեան մէջ:

Վենյով քաղաքում ապրում է Հայ Կաթողիկէ մօտ 100 ընտանիք, ովքեր հիմնականում 1990-ականների սկզբին Տուրքիից հեռացած եւ Վենյովում բնակութիւն հաստատած ընտանիքներն են: Նրանք իրենց ապրուստն ապահովում են հիմնականում շինարարութեամբ: Ունեն մատուռ, որտեղ Սբ. Պատարագ մատուցւում է ամէն օր, իսկ կիրակի օրը՝ երկու անգամ: Բացի այդ կատարում ենք նաեւ ջերմեռանդական աղօթքներ, ամէն օր երեկոյեան Սուրբ Վարդարան ենք աղօթում:

2019 թուականին Վենյովի Հայ Կաթողիկէ ժողովրդապետութեան մէջ տեղի ունեցան հետեւեալ իրադարձութիւնները:

Թուով 10 երեխաների համար անցկացուեցին Առաջին Սուրբ Հաղորդութեան պատրաստման քրիստոնէական վարդապետութեան դասընթացներ: Ինչպէս նաեւ ստեղծուեց պատանեկան նոր երգչախումբ:

Վենյով քաղաքի մի խումբ երիտասարդներ մեկնեցին Հայաստան՝ մասնակցելու Թորոսգիւղում կազմակերպուած երիտասարդական երրորդ հաւաքին, որից յետոյ կազմակերպուեցին էքսկուրսիաներ: Երիտասարդները Հայաստանում այցելեցին մի քանի պատմական տեսարժան վայրեր: Կազմակերպուեց նաեւ հանգիստ եւ ուղեւորութիւն Վրաստանի Թբիլիսի քաղաք, որտեղ եւ երիտասարդները հնարաւորութիւն ունեցան

ծանօթանալ ու տեսնել Թբիլիսի քաղաքի ամենայայտնի ու գեղեցիկ տեսարժան վայրերը: Այս տարուայ ընթացքում Հայ կաթողիկէ համայնքում կազմակերպուեցին տարբեր միջոցառումներ՝ հայկական տօների նշման վերաբերեալ: Հայ համայնքը մեծ շուքով տօնեց Քրիստոսի Սուրբ Յարութեան տօնը՝ Սուրբ Զատիկը:

2019 թուականի ապրիլի 24-ին կազմակերպուեց եւ անցկացուեց Հայոց Ցեղասպանութեան 104-րդ տարելիցին նուիրուած մեծ միջոցառում:

Մայիսի 9-ին տօնեցինք նաեւ Յաղթանակի օրը, որի ընթացքում իր մասնակցութիւնն ունեցաւ հայկական ժողովրդական պարերի անսամբլը: Ինչպէս միւս տարիներին, այս տարի եւս հայկական ժողովրդական պարերի անսամբլը բազմաթիւ հրաւէրներ ունեցաւ՝ տարբեր քաղաքներում մասնակցելու բազմաթիւ միջոցառումների:

Ունենք նաեւ երիտասարդական խումբ, որի հետ ամիսը մէկ անգամ կազմակերպում ենք հանդիպումներ, եւ որի ընթացքում տեղի են ունենում հոգեւոր վարժութիւններ, բազմապիսի թեմաների քննարկումներ եւ միջոցառումների կազմակերպում:

Դեկտեմբերի 24-ին բեմականացնելու ենք Քրիստոսի Սուրբ Ծննունդը, այդ առիթով պատրաստուել են նուէրներ երեխաների համար: Հայ Կաթողիկէ ժողովրդապետութիւնն ունի նաեւ կանանց միութիւն, որը ակտիւ մասնակցութիւն է ցուցաբերում եկեղեցական կարիքների եւ խնդիրների լուծման համար: Ստեղծուել է խմբակ, որն ամէն ամիս աղօթում է Սուրբ Վարդարանի խորհուրդները՝ Հռոմի Ֆրանցիսկոս Սրբազան Քահանայապետի դիտաւորութիւնների համար: Եւ ի վերջոյ, կազմակերպուել է բարեգործական միջոցառում՝ մանկատան երեխաներին եւ ծերանոցի ծերերին օգնելու եւ ամանօրեայ նուէրներ նուիրելու համար:

ԳԻՒՄՐԻԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԱՐԺ. ՏԷՐ ԳՐԻԳՈՐ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՄԿՐՏՉԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

2019 թուականին Գիւմրիի Հայ Կաթողիկէ համայնքում տեղի ունեցան բազմաբնոյթ եւ բազմաթիւ իրադարձութիւններ, որոնք նպաստեցին մեր Հայ Կաթողիկէ Եկեղեցու ներքին կեանքի ամրապնդմանը:

Ամփոփելով տարին՝ պիտի ասեմ, որ Գիւմրիի ժողովրդապետութեան մէջ տեղի ունեցան մի շարք առանձնայատուկ իրադարձութիւններ:

Տարին սկսուեց երիտասարդական մէկօրեայ մեծ հաւաքով, որը կազմակերպուեց Գիւմրիի Սրբոց Նահատակաց Հայ Կաթողիկէ Աթոռանիստ Եկեղեցում: Հանդիպմանը մասնակցեցին մօտ 200 երիտասարդներ Հայաստանի եւ Վրաստանի հայ կաթողիկէ համայնքներից: Հանդիպման նպատակը 34-րդ «Երիտասարդաց համաշխարհային օրեր»-ին աշխարհի հինգ մայրցամաքներից Փանամայում մէկտեղուած կաթողիկէ երիտասարդների հետ իրենց միասնութիւնն ապրելն ու արտայայտելն էր:

Այս տարի եւս Գիւմրիի Սրբոց Նահատակաց Հայ Կաթողիկէ Աթոռանիստ Եկեղեցում ընդունեցինք «Համայնքային երիտասարդական օրեր - III» հաւաքին մասնակցող թուով 294 երիտասարդների Հայաստանից, Վրաստանից, Ռուսաստանից, Իտալիայից, Լիբանանից, Սիրիայից, Իրաքից եւ Թուրքիայից: Մասնակիցները ներկայ գտնուեցին

Սուրբ եւ Անմահ Պատարագին՝ մատուցուած ձեռամբ Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանի եւ առընթերակայութեամբ Հայ կաթողիկէ երիտասարդաց խմբի նախագահ Գերյ. Հ. Գառնիկ Ծ. Վրդ. Յովսէփեանի, Իրաքի Հայ կաթողիկէների առաջնորդ, Երուսաղէմի էքզարխ Գերյ. Հ. Ներսէս Թ.Ծ.Վ. Ջապպարեանի, Գիւմրիի Հայ կաթողիկէների ժողովրդապետ Արժ. Տ. Գրիգոր Աւագ Քինյ. Մկրտչեանի, ներկայութեամբ հայ կաթողիկէ հոգեւորականների, ինչպէս նաեւ վաստակեալ առաջնորդ Արհի. Տ. Նշան Արքեպս. Գարաքէհէեանի: Սուրբ Պատարագի ընթացքում սարկաւագական ձեռնադրութիւն ստացաւ Արմէն Տոմպուրեանը:

Սրբոց Նահատակաց Աթոռանիստ Եկեղեցին ամռան ամիսներին ընդունեց նաեւ Աղաճանեան ճամբարում հանգստացող երեք հարիւրից աւելի երեխաների, ովքեր Սուրբ Պատարագին մասնակցելուց յետոյ այցելութիւններ էին կատարում նաեւ Գիւմրիի պատմամշակոյթային վայրեր:

Այս տարի առաջին անգամ կազմակերպուեց հոգեւոր կրթութիւն ընտանիքների համար, որը կրում էր «Մեր ընտանիքը» խորագիրը: Հովուական խնամքի տեսանկիւնից այս յոյժ կարեւոր ձեռնարկը իրականացաւ ժողովրդապետ հոգեւորականների համագործակցութեան արդիւնքում:

Սոյն թուականի հոկտեմբերի 7-ին, հետեւելով Նորին Սրբութիւն Ֆրանցիսկոս Սրբազան Քահանայապետի կոչին՝ աշխարհի տարբեր անկիւններում նոյն ժամին աղօթել Տիրամօր Սուրբ Վարդարանը Եկեղեցու պայծառութեան եւ Տէր Յիսուս Քրիստոսի հանդէպ սէրը նորոգելու համար, Գիւմրիի Սրբոց Նահատակաց Հայ Կաթողիկէ Աթոռանիստ Եկեղեցում տեղի ունեցաւ Վարդարանի միասնական աղօթք՝ մասնակցութեամբ Գիւմրիի, Փանիկի, Ազատանի, Լանջիկի, Հովտունի եւ Արփենիի հայ կաթողիկէ հաւատացեալների:

Հոկտեմբերի 27-ին Հայ Կաթողիկէ ժողովրդապետութիւնը կազմակերպեց Կոմիտասի ծննդեան 150-ամեայ յոբելեանին նուիրուած բարեգործական համերգային ծրագիր, որից ստացուած ողջ հասոյթը փոխանցուեց «Հայկական Կարիտասի» Տարեցների ցերեկային խնամքի կենդրոնին:

Մեծ պատիւ ու ուրախութիւն էր մեզ համար, որ սոյն թուականի նոյեմբերի 10-ին Գիւմրիի Սրբոց Նահատակաց Հայ Կաթողիկէ Աթոռանիստ Եկեղեցում կիրակնօրեայ Սուրբ Պատարագը մատուցուեց ձեռամբ Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանի եւ համապատարագութեամբ Սուրբ Աթոռի Պետութիւնների հետ յարաբերութիւնների քարտուղար Արքեպս. Փոլ Գալլագէրի, Հայաստանում եւ Վրաստանում Պապական Նուիրակ Արքեպս. Ժոզէ Բեթենկուրի, ինչպէս նաեւ Սուրբ Աթոռից ժամանած պատուիրակութեան այլ հոգեւորականների: Սուրբ Պատարագին ներկայ էին Հայաստանում ծառայող հայ կաթողիկէ հոգեւորականներ, Անարատ Յղութեան հայ քոյրեր, Սպիտակի Գթութեան միսիոներ քոյրեր, Սրբոց Հրեշտակապետաց միացեալ հոգեւոր ճեմարանի սաները, «Հայկական Կարիտասի» ներկայացուցիչներ եւ հաւատացեալների հոծ բազմութիւն:

Ինչպէս միշտ, գործում է ժրաջան ու եկեղեցասէր երիտասարդաց միութիւնը, որն ամէնուր է եւ ամէն տեղ: Երիտասարդներն իրենց անվարձահատոյց մասնակցութիւնն են բերում Եկեղեցու կեանքին, տարբեր ձեռնարկների իրականացմանը, կամաւորական աշխատանքների կատարմանը՝ մասնաւորապէս, իրենց նուիրական գործունէութիւնը ծաւալելով Աղաճանեան ճամբարում:

Գործում է նաեւ Հայ Կաթողիկէ եկեղեցասէր տիկնանց միութիւնը, որի կազմում ընդգրկուած են քսաներկու արժանավայել տիկնայք, ովքեր ողջ տարուայ ընթացքում ջանք ու եռանդ չխնայեցին ինչպէս հոգեւոր ու մշակոյթային միջոցառումների կազմակերպման, այնպէս էլ պետական տօները յաւուր պատշաճի նշելու համար: Կատարուեցին բազում ուխտագնացութիւններ Հայաստանի տարբեր պատմամշակոյթային վայրեր եւ այս ամէնն իր ազդեցութիւնն է ունենում ժողովրդապետութեան մէջ քրիստոնեայ կեանքը քարոզելու գործում:

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս Գիւմրիի Հայ Կաթողիկէ ժողովրդապետութիւնը մեծ սիրով ու ուրախութեամբ իր հարկի տակ ընդունեց մի շարք պաշտօնական այցելուների, ինչպէս նաեւ

աշխարհի տարբեր երկրներից ժամանած բազմաթիւ զբօսաշրջիկների, բայց ամենաուրախալին այն էր, որ ողջ տարուայ ընթացքում Եկեղեցի եւ ժողովրդապետութիւն այցելեցին Հայաստանի տարբեր քաղաքներից ժամանած դպրոցականներ, ովքեր մեծ հետաքրքրութիւն էին ցուցաբերում Հայ Կաթողիկէ Եկեղեցու պատմութեան եւ ժողովրդապետութեան գործունէութեան նկատմամբ:

Անցնող տարուայ ընթացքում «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպութեան աջակցութեամբ կարողացանք նաեւ նիւթական օգնութիւն տրամադրել կաթողիկէ համայնքի կարօտեալ մեր զաւակներին:

Եզրափակելով խօսքս՝ ուզում եմ ասել. «Անպիտան ծառայ ենք եւ պիտի ծառայենք ի շահ Եկեղեցու եւ համայնքի»:

ԱԽԱԼՑԻԽԷԻ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԱՐԺ. ՏԷՐ ՊՈՂՈՍ ՔԱՀԱՆԱՅ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

Ես՝ քահանայ Տէր Պօղոս Գրիգորեանս, հանդիսանալով Վրաստանի հանրապետութեան Սամցխէ – Ջաւախեթիի Ախալցիխէի շրջանի Ծինուբան, Աբաթխեւ, Ղուլալիս եւ Նաոխրեբ գիւղերի ժողովրդապետ, հակիրճ կերպով ուզում եմ ներկայացնել 2019թ. մեր համայնքում տեղի ունեցած հոգեւոր իրադարձութիւնները եւ առաքելութիւնները:

Համայնքի ներսում տարին յագեցած էր բազմաթիւ կարեւոր եւ նշանակալից իրադարձութիւններով:

Սոյն թուականի յունիս ամսին Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Արեւելեան Եւրոպայի հայ կաթողիկէների Առաջնորդ Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանի թոյլտուութեամբ ես այցելեցի Ռուսաստանի Դաշնութիւն, որտեղ հանդիպեցի հայ կաթողիկէ համայնքների հետ (Դոնի Ռոստով, Արմաւիր, Կրասնոդար, Տուապսէ, Լազարեւսկ, Սոչի): Այդ քաղաքներում իմ կողմից մատուցուեց Սուրբ եւ Անմահ Պատարագ, իսկ Սոչի քաղաքում նաեւ պսակադրութեան խորհուրդ, որը զուգորդւում էր խոստովանանքով եւ Սուրբ հաղորդութեամբ:

Այցելեցի հայկական օճախներ, կատարեցի տնօրհնէքի արարողութիւններ եւ խոստովանանք: Այցելեցի նաեւ սահմանափակ կարողութիւններ ունեցող մարդկանց, ովքեր հնարաւորութիւն ստացան խոստովանելու եւ Սուրբ Հաղորդութիւնը ճաշակելու: Ձնայեած սուղ ժամանակին՝ կարողացայ կազմակերպել եւ անցկացնել հոգեւոր դասընթացներ՝ ի պատրաստութիւն առաջին Սուրբ Հաղորդութեան:

2019թ. իմ ժողովրդապետութեան մէջ հոգեւոր նշանակութիւն ունեցող իրադարձութիւն հանդիսացաւ նաեւ Ղուլալիս գիւղում Սուրբ խաչ եկեղեցու վերօծումը՝ օրհնութեամբ եւ առաջնորդութեամբ արքեպիսկոպոս Ռափայէլ Մինասեանի: Օծման արարողութիւնը կատարուեց իմ կողմից, արարողութեանը մասնակցում էին նաեւ Հեշտիայի կաթողիկէ համայնքի ժողովրդապետ Տէր Անտոնը Քինյ. Անտոնեանը եւ Հայ Առաքելական եկեղեցւոյ Ախալցիխէի շրջանի տեսուչ Հայր Յակոբը: Մատուցուեց Սուրբ եւ Անմահ պատարագ բարերարների բարեկեցութեան համար: Սուրբ պատարագին յաջորդեց Հայ Կաթողիկէ միութեան կամաւորների կողմից կազմակերպուած միջոցառումը: Ներկայ էին ինչպէս Ղուլալիս, այնպէս էլ հարեւան գիւղերի Հայ Կաթողիկէ եւ Առաքելական թեմերի ներկայացուցիչներ:

Իսկ Ծինուբան գիւղում սոյն թուականին կատարուեց խաչքար-աղբիւրի բացում եւ օծում: Օծման արարողութեանը յաջորդեց կամաւորների կողմից կազմակերպուած միջոցառումը:

Ախալցիխէի շրջանի Հայ Կաթողիկէ համայնքներում մշտապէս կատարւում է Սուրբ Պատարագ, ժամերգութիւն, Առաջին Հաղորդութեան պատրաստութիւն, Սուրբ Պսակադրութիւն, տնօրհնէք, հիւանդների օծում, ինչպէս նաեւ խոստովանանք: Համայնքի հաւատացեալ ժողովուրդը, Աստծոյ նախախնամութեամբ եւ օրհնութեամբ, մասնակից են այս բոլոր արարողութիւններին:

Աստուած օրհնի եւ պահպանի բոլորիս, որ կարողանանք իւրաքանչիւրս իրագործել մեզ ի վերուստ տրուած առաքելութիւնը:

Ամէն:

ԱՐԵՒԻԿ, ԱԶԱՏԱՆ, ԼԱՆՋԻԿ ԵՒ ՁԻԹՀԱՆՔՈՎ ՀԱՄԱՅՆՔԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԱՐԺ. ՏԷՐ ՆԱՐԵԿ ՔԱՀԱՆԱՅ ԹԱԴԵՒՈՍԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Սիրելինե՛րս, 2019 թուականը յագեցած, բեղուն տարի էր Արեւիկ, Ազատան, Լանջիկ եւ Ձիթհանքով համայնքների համար: Ուզում եմ ամփոփ ներկայացնել անցնող տարուայ նուաճումները:

Լանջիկ համայնք

Լանջիկ գիւղի բնակչութիւնը այս գիւղում հաստատուել է հիմնականում 1828-1830թթ.՝ տեղափոխուելով Արեւմտեան Հայաստանի Ալաշկերտի, Բասենի, Մուշի շրջաններից: Համայնքի բնակչութիւնը ապրելու ու արարելու ձգտումից առաւել իր հետ պահել ու նոր բնակավայր է բերել պապերից ստացած Հայ Կաթողիկէ հաւատքն ու եկեղեցասիրութիւնը, որը, փոխանցուելով սերնդէսերունդ, մինչեւ այժմ պահպանւում է:

Լանջիկ համայնքի ջերմեռանդ հաւատացեալները ամէն շաբաթ կանոնաւոր կերպով մասնակցում են Սբ. Պատարագին:

Համայնքում գործում է Սուրբ Աստուածածին Հայ Կաթողիկէ եկեղեցու երիտասարդաց միութիւնը: Պարբերաբար կազմակերպւում են հանդիպումներ երիտասարդաց միութեան հետ: Հանդիպման ընթացքում միութեան անդամները խօսում են իրենց նոր գաղափարների մասին, կիսւում բազմաթիւ խնդիրներով ու հոգսերով:

Այս տարի Լանջիկ համայնքից «Համայնքային Երիտասարդական օրեր III» միջոցառմանը մասնակցեցին 17 երիտասարդներ:

Լանջիկ համայնքի ձեռքբերումներից մէկն էլ այն էր, որ հիմնուեց Սուրբ Աստուածածին Հայ Կաթողիկէ եկեղեցու տիկնանց միութիւնը: Տիկնանց միութեան հիմնական նպատակն է եկեղեցու մէջ լինել գործող կառոյց, որը սիրոյ եւ

նուիրումի ճանապարհով պէտք է կանգնած լինի Եկեղեցու եւ հաւաքի տարածման ակունքներում:

Լանջիկ համայնքում մեծ շուքով նշուեց Համբարձման տօնը: Տօնը իր իւրօրինակութեամբ յիշարժան դարձաւ գիւղի պատմութեան մէջ: Դա հին աւանդական ծէսերի վերականգնումն էր, որ տարիներ շարունակ իբրեւ աւանդոյթ պահել էին իրենց յիշողութեան մէջ: Տօնակատարութեանը մասնակցեցին շատ հիւրեր ինչպէս Հայաստանի տարբեր վայրերից, այնպէս էլ Սփիւռքից: Այս ամէնը իրագործուեց ԿԷԱՆ կրթամշակոյթային կենդրոնի նախաձեռնութեան, Անի համայնքապետարանի աջակցութեան եւ Լանջիկի Հայ Կաթողիկէ երիտասարդաց միութեան անդամների ջանքերի շնորհիւ:

Դեռ 2018թ. ապրիլից մեկնարկեցին եկեղեցու վերանորոգման աշխատանքները, եւ

սոյն թուականի հոկտեմբերի 27-ին Լանջիկի Սբ. Աստուածածին եկեղեցին վերաօծուեց ձեռամբ Հայաստանի, Ռուսաստանի, Վրաստանի, Ուկրաինայի եւ Արեւելեան Եւրոպայի առաջնորդ Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանի: Եկեղեցին իր աւարտուն տեսքին հասցնելու համար մնացել էր միայն վերանորոգել եկեղեցու տանիքը: Եւ սա էլ իրականութիւն դարձաւ 2019 թուականին՝ շնորհիւ Անիի համայնքապետարանի եւ «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպութեան:

Արեւիկ համայնք

Արեւիկ գիւղը հիմնադրուել է 1810-1815թթ. Արեւմտեան Հայաստանի Կարին, Մուշ, Բասեն, Ալաշկերտ գաւառներից: Չնայեած Օսմանեան Կայսրութեան կողմից բազմաթիւ հալածանքների ու դժուարութիւնների՝ քարը քարի վրայ դնելով՝ տեղի բնակիչները կառուցում են եկեղեցին:

Եւ այսօր Եկեղեցին ունի իր հաւատացեալ ժողովուրդը, ովքեր միաշունչ եւ միախորհուրդ կերպով մշտապէս մասնակցում են Սուրբ Պատարագին եւ համայնքում կատարուող բոլոր իրադարձութիւններին:

Այդ իրադարձութիւններից մէկն էլ այն էր, որ Արեւիկ համայնքում մեծ տօնախմբութեամբ նշեցինք Ծաղկազարդի տօնը: Այս ամէնը իրականութիւն դարձաւ Ախուրեանի համայնքապետարանի մշակոյթի բաժնի համատեղ աշխատանքի, Արեւիկի միջնակարգ դպրոցի, ինչպէս նաեւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ երիտասարդաց միութեան անդամների ջանքերով: Այդ օրը տեղի ունեցաւ «Քրիստոսի Յաղթական մուտքի Երուսաղէմ» խորագիրը կրող մեծ միջոցառում:

Ինչպէս նախորդ տարիներին, այս տարի եւս Արեւիկի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցում տեղի ունեցաւ Առաջին Սուրբ Հաղորդութեան հանդիսաւոր ու գեղեցիկ արարողութիւնը: Այս տարի առաջին անգամ տասնչորս երեխաներ մօտեցան Սուրբ Հաղորդութեանը: Երեխաների եւ նրանց հարազատների համար առաջին Սբ. Հաղորդութիւնը մեծ տօն էր, տօնական խորհրդին նրանք պատրաստուել էին Արեւիկի դպրոցի կրօնի ուսուցչուհի Անահիտ Կիրակոսեանի պատրաստութեամբ:

Արեւիկի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին եւս ունի երիտասարդաց միութիւն: Երիտասարդական հանդիպումներ տեղի են ունենում ամէն շաբաթ: Կազմակերպւում են քննարկումներ, սեմինարներ, ինչպէս նաեւ տարաբնոյթ միջոցառումներ: Երիտասարդները մշտապէս մասնակցում են թեմում կազմակերպուող բոլոր իրադարձութիւններին:

Ազատան համայնք

Ազատան համայնքի եկեղեցական կեանքում մշտապէս տիրում է ակտիւութիւն եւ աշխուժութիւն: Ազատան համայնքում եւս ունենք Երիտասարդաց միութիւն: Երիտասարդաց միութեան անդամներից շատերը ամէն տարի մասնակցում են Հայ Կաթողիկէ Եկեղեցու կողմից կազմակերպուող «Աղաճանեան ճամբարին»՝ որպէս ջոկատավարներ: Առաջիկայում նախատեսւում է Ազատան համայնքում եւս տիկնանց միութիւն ստեղծել:

Ձիթհանքով համայնք

Ինչպէս միւս համայնքներում, այս համայնքում եկեղեցասէր ժողովուրդը մշտապէս մասնակցում է Սուրբ Պատարագին եւ եկեղեցական բոլոր տօներին: Այս տարի Ձիթհանքով համայնքում տեղի ունեցաւ երիտասարդաց միութեան սերնդափոխութիւն:

Ամփոփելով խօսքս՝ ուզում եմ ասել, որ բոլոր իմ Հայ կաթողիկէ համայնքների հետ կատարել ենք ուխտագնացութիւններ Հայաստանի տարբեր պատմամշակոյթային վայրեր: Այս տարի շուրջ 100 երեխաներ՝ 10-ից 15 տարեկան, իրենց հանգիստը անցկացրեցին «Աղաճանեան ճամբարի» 4 հերթափոխերում:

2019թ.-ի յուլիսի 11-13-ը Հայ կաթողիկէ «Աղաճանեան կենդրոնում» կազմակերպուեց հոգեւոր կրթութիւն ընտանիքների համար՝ «Մեր ընտանիքը» խորագրով: Յատուկ ընտանիքների համար եւ ընտանիքների մասնակցութեամբ այսպիսի հոգեւոր կրթութիւն Հայ Կաթողիկէ առաջնորդութեան մէջ կազմակերպուեց առաջին անգամ: Այս հոգեւոր կրթութեանը մասնակցեցին նաեւ Լանջիկ, Արեւիկ համայնքներից ընտանիքներ:

Յուլիսի 14-16-ը «Աղաճանեան կենդրոնում» տեղի ունեցաւ եռօրեայ կրթութիւն ճեմարանականների համար եւ դասընթաց՝ Սուրբ Խորանի սպասաւորների համար, որտեղ նոյնպէս մասնակցեցին չորս համայնքից երեխաներ:

Լիայոյս եմ, որ 2020 թուականին էլ աւելի պիտի կարողանանք Աստծոյ շնորհիւ մեր համայնքներում տարածելու Քրիստոսի ճառագայթած լոյսը եւ այդ լոյսի ներքոյ կատարել Աստուածահաճոյ բազում առաքելութիւններ:

ՀԵՇՏԻԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԱՐԺ. ՏԷՐ ԱՆՏՈՆ ՔԱՀԱՆԱՅ ԱՆՏՈՆԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Հեշտիայի հայ կաթողիկէ ժողովրդապետութիւնը մէկ տարուայ ընթացքում ծաւալել է բազմաթիւ ու տարաբնոյթ գործունէութիւններ: Հոգեւոր ծառայութեան հետ մէկտեղ աշխատում ենք այլ ուղութիւններով՝ կրթական, համագործակցային, ընկերային, բարեգործական: Կողք կողքի աշխատում եւ համագործակցում ենք թէ՛ երիտասարդների եւ թէ՛ առհասարակ համայնքի բոլոր անդամների հետ: Դրա վառ ապացոյցն են մեր ծաւալած գործունէութեան խօսուն փաստերը (տեսաֆիլմեր, լուսանկարներ): Հոգեւոր ծառայութեան հետ զուգահեռ Հեշտիայի մանկական եւ երիտասարդական կենդրոնում դասաւանդելով քրիստոնէական վարդապետութիւն, այս տարի ամռանը քառասուն երեխայ ընդունեց առաջին Սուրբ Հաղորդութիւնը: Հոգեւորի հետ մէկտեղ հետեւողականօրէն իրականացնում ենք եկեղեցու բարեկարգման աշխատանքները, ինչպէս նաեւ ծաւալում բազմաթիւ այլ եկեղեցական եւ մշակոյթային գործունէութիւններ: Այս տարի Հեշտիայի մանկական եւ երիտասարդական կենդրոնի բակում կազմակերպեցինք մէկշաբաթեայ բակային ճամբար՝ առաւօտեան 9:00-ից մինչեւ երեկոյեան 18:00-ը:

Իր ակտիւ գործունէութեամբ մեր կողքին է Հեշտիայի Հայ Կաթողիկէ եկեղեցու երիտասարդաց միութիւնը, որի անդամների անմիջական մասնակցութեամբ իրականացնում ենք մեր ծրագրերն ու միջոցառումները: Ամէն ամիս տեղի են ունենում երիտասարդաց միութեան անդամների հետ հանդիպումներ, որտեղ քննարկում ենք տարաբնոյթ հարցեր, որոնք վերաբերւում են մեր համայնքի խնդիրներին: Այս տարի երիտասարդաց միութեան անդամների հետ միասին կազմակերպեցինք նաեւ բարեգործական ակցիայ Բորժումի մանկատան երեխաների համար: Այս առումով մեզ հետ սերտ համագործակցում է մեր գիւղապետարանը: Ի դէպ, երկու կողմերի ջանքերով իրականացրեցինք ամբողջ գիւղի մաքրման աշխատանքներ, միջոցառումներ եւ տօնակատարութիւններ: Այս ամէնի հետ մէկտեղ համայնքի հաւատացեալների համար կազմակերպեցինք տարբեր ուխտագնացութիւններ:

Այս պահին արդէն սկսել ենք «Ծխական հասարակական խորհուրդների զարգացում» (PSM՝ նախաձեռնող՝ Վրաստանի Կարիտաս) նախագծի երկրորդ փուլը, որը եւս համայնքի զարգացման համար է նախատեսուած (ծրագրի համակարգող՝ Ալեքսանդր Բադոյեան):

Առջեւում դեռ շատ անելիքներ ունենք:

ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈԽԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԱՐԺ. ՏԷՐ ԿՈՄԻՏԱՍ ՔԱՀԱՆԱՅ ԴԱՒԷԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Սիրելի՛ ընթերցող,

Մէկ ամսից պատմութեան գիրկն է անցնելու նաեւ 2019 թուականը: Այդ իսկ պատճառով ցանկանում եմ ամփոփ կերպով քեզ հետ կիսուել տարուայ գլխաւոր իրադարձութիւններով, որոնք նպաստել են Երեւանի Սուրբ Գրիգոր Նարեկացի հայ կաթողիկէ ժողովրդապետութեան հոգեւոր եւ նիւթական վերելքին՝ աւելի ամրապնդելով հոգեւորականներիս եւ հաւատաւոր ժողովրդի միասնական ոգին, գեղեցկացնելով ամէնօրեայ շփումներն ու հոգեւոր կերտուածքով հարստացրել հայ քրիստոնեայի ճանապարհը դէպի Քրիստոս:

Նախ ուրախութեամբ նշեմ, որ անցած տարուանից մեզ մօտ տեղափոխուեցին Գիւմրիի Սրբոց Նահատակաց Հայ Կաթողիկէ Առաջնորդանիստ Եկեղեցու սաները՝ մեր ապագայ հոգեւորականները, ովքեր իրենց տեսուչ եւ Երեւանի Սուրբ Գրիգոր Նարեկացի Հայ Կաթողիկէ Եկեղեցու ներկայիս ժողովրդապետ Գերապատիւ Հ. Մաշտոց Վրդ. Ջահթերեանի հետ միասին եւ Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Արեւելեան Եւրոպայի Հայ Կաթողիկէների Հոգեւոր Առաջնորդ Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանի որոշմամբ, օժանդակութեամբ եւ օրհնութեամբ, սկիզբ տուեցին Երեւանի Սրբոց Հրեշտակապետաց Միացեալ Հոգեւոր Ճեմարանի կազմաւորմանը:

Տարին սկսուեց երիտասարդական մէկօրեայ մեծ հաւաքով, որը տեղի ունեցաւ Գիւմրիի Սրբոց Նահատակաց Հայ Կաթողիկէ Աթոռանիստ Եկեղեցում: Մեծ հաւաքին մասնակցեցին նաեւ Երեւանի Սուրբ Գրիգոր Նարեկացի ժողովրդապետութեան երիտասարդաց միութեան անդամները:

Սոյն թուականի յունուար ամսին Հայ Կաթողիկէ Եկեղեցու Երեւանի Սուրբ Գրիգոր Նարեկացի ժողովրդապետութիւնում Պատարագի ընթացքում մեզ համար հաճելի անակնկալ տեղի ունեցաւ: Մեզ հետ Աստծուն երկրպագելու էր եկել «Աւրորայ» մրցանակաբաշխութեան 2017թ. մրցանակակիր, կաթողիկէ բժիշկ Թոմ Քաթինան իր տիկնոջ՝ Նասիմայ Քաթինայի հետ միասին: Սուրբ Պատարագից յետոյ առիթ ունեցանք

ծանօթանալու մեծ հումանիստի հետ եւ լուսանկարուելով անմահացնելու մեր հանդիպումը:

2019թ. ապրիլի 11-12-ը Երեւանի Սուրբ Գրիգոր Նարեկացի Հայ Կաթողիկէ ժողովրդապետութեան կենդրոնում կազմակերպուեց հոգեւոր կրթութիւն Հայաստանի, Վրաստանի եւ Ռուսաստանի հայ կաթողիկէ համայնքներում ծառայող հոգեւորականների համար՝ գլխաւորութեամբ Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանի՝ առ ի պատրաստութիւն Սուրբ Յարութեան տօնին: Հոգեւոր կրթութեան թեման էր՝ «Ի՞նչ է քահանայութիւնը եւ ինչպէ՞ս ապրել այն»՝ բանախօսութեամբ Արհի. Տ. Յովհաննէս Եպս. Թէյրուզեանի:

Սեպտեմբերի 15-ը՝ Սուրբ Խաչի տօնը, Երեւանի Սուրբ Գրիգոր Նարեկացի Եկեղեցու հաւատացեալների համար իւրայատուկ օր էր. տեղի ունեցաւ Սուրբ Գրիգոր Նարեկացուն ընծայուած նորակառոյց մատռան բացումն ու պատկերների օծումը: Օրը նշանաւորեցինք մատաղի յանդիսաւոր արարողութեամբ:

Սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 3-ը Երեւանի ժողովրդապետութիւնում ընդունեցինք իտալացի խոհարար Ջանֆրանկոյ Պիլիեգոյին եւ իր երեք աշակերտներին, ովքեր վերապատրաստման

դասընթացներ կազմակերպեցին «Հայկական Կարիտասի» խոհարարների, ինչպէս նաեւ Առաջնորդարանի աշխատակազմի կանանց համար:

Հոկտեմբերի 30-ին Երեւանի Հայ Կաթողիկէ առաջնորդարանում Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանն ընդունեց Ռումինիայի Արքայազն Ռադուին՝ ուղեկցութեամբ ՀՀ-ում Ռումինիայի դեսպան Կորնել Լոնեսկուի եւ Ռումինիայում ՀՀ դեսպան դոկտ. Սերգեյ Մինասեանի: Արհի. Տէր Ռափայէլ Արք. Մինասեանի հետ միասին Ռումինիայի պատուիրակութեանն ընդունեցին Գերյ. Հ. Գառնիկ Ծ. Վրդ. Յովսէփեանը, Հոգշն. Հ. Մաշտոց Վրդ. Զահթերեանը, Արժ. Տ. Կոմիտաս Քինյ. Դաւէեանը եւ Արմէն Սրկ. Տոմպուրեանը:

Նոյեմբերի 9-ին պաշտօնական այցով Հայաստան ժամանեց Հռոմի Սուրբ Աթոռի պետութիւնների հետ յարաբերութիւնների քարտուղար Արքեպիսկոպոս Փոլ Գալլագերը: Տարբեր պաշտօնական այցելութիւններից յետոյ՝ երեկոյեան, Արհի. Գալլագերը այցելեց Երեւանի Հայ Կաթողիկէ առաջնորդարան, որտեղ Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու մէջ մատուցեց Սուրբ Պատարագ՝ առընթերակայութեամբ Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանի եւ Արքեպիսկոպոս Ժոզէ Բեթենկուրի: Յաջորդ օրը՝ նոյեմբերի 10-ին՝ առաւօտեան ժամը 9:30, Արհի. Փոլ Գալլագերի նախագահութեամբ՝ Սուրբ Պատարագ մատուցուեց Գիւմրիի Սրբոց Նահատակաց Հայ Կաթողիկէ Մայր Տաճարում: Սուրբ Պատարագին մասնակցում էին նաեւ Երեւանի ժողովրդապետութեան հաւատացեալները:

Այս տարուանից Երեւանի Հայ Կաթողիկէ ժողովրդապետութեան մէջ գործում է նաեւ Թեմական ատեանը, եւ Առաջնորդարանի շէնքում տեղ ենք յատկացրել Ռատիօ Մարիամի երեւանեան մասնաճիւղի համար:

Երեւանի ժողովրդապետութեան հաւատացեալների հետ միասին կատարել ենք ուխտագնացութիւններ Հայաստանի տարբեր պատմամշակոյթային վայրեր:

Երեւանի Հայ Կաթողիկէ ժողովրդապետութիւնում գործում է երիտասարդաց միութիւնը: Երիտասարդների հետ միասին կատարում ենք բազմաթիւ կարեւոր եւ նշանակալից գործունէութիւններ:

Ամէն ուրբաթ տեղի է ունենում երիտասարդների հետ հանդիպում, որի ընթացքում ունենում ենք տարբեր տեսակի քննարկումներ, ինչպէս նաեւ խօսում ենք առաջիկայ ծրագրերի մասին:

Ի դէպ, իւրաքանչիւր քառասնորդաց շրջանում երիտասարդների հետ այցելում ենք ծերերի խնամքի կենդրոններ, մանկատներ, կազմակերպում ենք բարեգործական ակցիաներ:

Ներկայումս ընթանում են կազմակերպչական աշխատանքները՝ յաջորդ տարուայ փետրուարի 7-9-ը Երեւանի ժողովրդապետութիւնում ընդունելու Հայ Կաթողիկէ համայնքների ամուսնացած զոյգերին, ովքեր կը ցանկանան մասնակցել ընտանիքների համար նախատեսուած հոգեւոր կրթութեանը: Յաւելեմ, որ սա շարունակութիւնն է 2019 թուականի յուլիսի 11-13-ը «Կարդինալ Աղաճանեան կենդրոն»-ում տեղի ունեցած հանդիպման:

Ամփոփելով խօսքս, սիրելի՛ ընթերցող, կ'ուզենայի յիշեցնել, որ իւրաքանչիւր գեղեցիկ գաղափար պէտք է կեանքի կոչուի, հաւատքը պէտք է գործ դառնայ, որպէսզի ամէնուր տարածուի Քրիստոսի սիրառատ Աւետարանը, եւ ամէն ոք գիտակցի այս անցողիկ կեանքում Քրիստոսի սիրոյ եւ բարութեան ապացոյց լինելու իր անկրկնելի դերը:

Աստուած օրհնի բոլորիս:

ՍՈՒԽԼԻՍԻ, ԾԽԱԼԹԲԻԼԱՅԻ ԵՒ ՋՈՒԼՂԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԱՐԺ. ՏԷՐ ՍԱՀԱԿ ՔԱՀԱՆԱՅ ԱՂԵԿԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

2019 թուականի սեպտեմբերին Արհի. Տէր Ռափայէլ Արքեպս. Մինասեանի վճռով նշանակուեցի Սուխլիսի, Ծխալթբիլայի եւ Ջուլղայի համայնքների ժողովրդապետ, հոգեւոր հովիւ:

Նշանակման առաջին իսկ օրից փորձել եմ ընկալել իւրաքանչիւր գիւղի մտածելակերպը եւ ներքին ապրումները, որովհետեւ իւրաքանչիւր համայնքն ունի իր ուրոյն աւանդոյթը եւ ապրելակերպը:

Բոլոր այս համայնքներն էլ միանգամից ինձ համար դարձան հարազատ: Նպատակս մէկն է՝ եղածի վրայ աւելիով մօտեցնել նրանց Աստծուն

եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի պատգամներին: Սուխլիս եւ Ծխալթբիլա համայնքներում գործում էին թեմական խորհուրդներ, որոնք տեղի ժողովրդապետի հետ կատարում էին եկեղեցասէր բազմաթիւ գործունէութիւններ: Այս տարի, բարեբախտաբար, տեղի եւ ռուսաստանաբնակ հաւատացեալների կողմից վերանորոգուեց Սուխլիսի Փրկչի եկեղեցին:

Իւրաքանչիւր շաբաթ օր ունենում ենք եկեղեցական դասեր դպրոցահասակ երեխաների համար, որին յաջորդում է Սուրբ Պատարագը:

Գործում է նաեւ Սուրբ Երրորդութիւն Եղբայրութիւնը՝ 24 հոգուց բաղկացած անդամներով:

Առաջին անգամ կարողացանք «Կարիտաս Վրաստանի» հետ միասին Ծխական խորհուրդներ հիմնել երեք համայնքների մէջ:

Պիտի ամէն կերպ երեք համայնքներում ստեղծենք երիտասարդական եւ տիկնանց միութիւններ, որոնք մինչեւ այս դրութեամբ գործող չեն եղել:

Վստահ եմ, որ եկեղեցիները պիտի պահեմ Աստծոյ եւ Քրիստոսի կողմից տրուած պատուիրանների լոյսի ներքոյ:

ՄԵԾ ՍԵՊԱՍԱՐ, ԲԱՒՐԱ, ՂԱԶԱՆՉԻ ԵՒ ՍԻԶԱՎԷՏ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ԱՐԺ. ՏԷՐ ՅՈՎՍԷՓ ՔԱՀԱՆԱՅ ԳԱԼՍՏԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

2019-ի հովուական ծառայութեանս համառօտ ամփոփը

«Առանց ինձ ոչինչ չէք կարող անել» (Հվի. 15, 5)

Ինչպէս այս տարի ինձանից խնդրեց «Պատգամաբերի» խմբագրութիւնը, սիրով ներկայացնում եմ 2019-ի համեստ հովուական ծառայութեանս համառօտագրութիւնը, որն ինձ համար եւս մէկ առիթ է՝ վերարժեւորման, ինքնաքննադատութեան եւ նոր գաղափարների մտայղացման: Այստեղ առանձնացրել եմ ինձ համար առաւել կարեւոր փաստերը:

Ծառայութիւն Մեծ Սեպասար, Բաւրայ, Ղազանչի եւ Սիզաւէտ համայնքներում

Սուրբ Սարգսի տօնին չորս համայնքներում կազմակերպեցինք երիտասարդական միջոցառումներ՝ տօնի խորհրդի վերաբերեալ բեմադրութիւններով, հետաքրքիր մտայղացումներով, որոնց համար իւրաքանչիւր գիւղից երեքական երիտասարդներ եւ պատանիներ պարգեւատրուեցին Առաջնորդ Հօր յատուկ պատուոգրերով, որ, պէտք է ասել, առաջին անգամն էր Առաջնորդութեան մէջ:

Աւետման տօնին եւս Մեծ Սեպասարում եւ Բաւրայում տեղի ունեցան միջոցառումներ. երիտասարդները պատմեցին Լուրդում Սուրբ Կոյսի երեւումների պատմութիւնը, ինչպէս նաեւ տօնեցին Յովհաննէս Թումանեանի ծննդեան 150-ամեակը՝ արտասանելով նրա բանաստեղծութիւնները:

Այս տարի Մեծ Սեպասար եւ Բաւրայ համայնքներում առաւել կանոնաւոր եւ խիտ դարձան ընդհանուր հոգեւոր կրթութեան օրերը Մեծ Պահքի շրջանում՝ «Ինչ՞ է աղօթքը եւ ինչպէ՞ս աղօթել» թեմայի շուրջ՝ իւրաքանչիւր ուրբաթ: Հոգեւոր կրթութիւնն ուղեկցւում էր «Ճանապարհ խաչի» ջերմեռանդութեամբ: Աւագ



Ուրբաթ Բաւրայում երիտասարդական միութեան անդամների հետ միասին գիւղի փողոցներում կատարեցինք Խաչի թափօր՝ աղօթելով Խաչի ճանապարհը եւ մեր ուսերին կրելով երիտասարդների պատրաստած մեծ խաչափայտը:

Նորութիւն էր նաեւ այն, որ Բաւրայում եւ Մեծ Սեպասարում մայիս-յունիս ամիսներին իւրաքանչիւր ուրբաթ երեկոյեան՝ ժամը 17:00-ին եւ 19:00-ին, եկեղեցիներում տեղի էր ունենում Երեկոյեան ժամերգութիւն, Վարդարանի եւ Սիրտ Յիսուսի ջերմեռանդութիւնները:

Մայիսին Մեծ Սեպասարի երիտասարդական կենդրոնի բակում «Հայկական Կարիտասի» օգնութեամբ կատարեցինք ծառատունկ՝ երիտասարդների եւ բնակիչների մասնակցութեամբ:

2019թ. յունիսին Բաւրայի եւ Ղազանչիի երիտասարդների հետ միասին ուխտագնացութիւններ կատարեցինք Մեծաւանի Վերին Վանք եւ Տաշիրի եկեղեցի, որտեղ մատուցեցինք Սուրբ Պատարագ եւ կատարեցինք Յիսուսի Սուրբ Սրտի ջերմեռանդութիւն:

Նոյն ամսին Բաւրայի երիտասարդների հետ Վարդարանով եւ Յիսուսի Սուրբ Սրտի ջերմեռանդութեամբ ուխտագնացութիւն արեցինք դէպի Բաւրայի հին եկեղեցի:

Մեծ Սեպասարում 2019թ. յուլիսին առաջին անգամ հաստատուեց Սուրբ Հաղորդութեան երկրպագութեան սուրբ ժամը, որը սեպտեմբերից կանոնաւոր կերպով կատարւում է իւրաքանչիւր շաբաթ՝ ժամը 13:00-14:00-ին:

Յուլիսին իմ խնդրանքով եւ «Հայկական Կարիտասի» օգնութեամբ իրականացուեց Ղազանչիի երիտասարդական կենդրոնի տանիքի նորոգումը. հին ծածկը փոխարինուեց նորով:

2019թ. օգոստոսին Բաւրայում գործող հայ կաթողիկէ երիտասարդական եւ պատանեկան խմբերը միաւորեցինք եւ ստեղծեցինք «Բաւրայի հայ կաթողիկէ երիտասարդական միութիւնը», միասնական քննարկումների արդիւնքում գրեցի միութեան հիմնարար փաստաթուղթը, որ ներկայացնում է միութեան տեսլականը, առաքելութիւնը, կանոններն ու սկզբունքները, գործունէութեան ուղղութիւնները: Միութեան անդամների հետ կանոնաւոր կերպով հանդիպում ենք ամէն կիրակի՝ Սուրբ Պատարագից առաջ եւ 1 ժամ 30 րոպէ զրուցում ենք քրիստոնէականի թեմաների շուրջ, մշակում եւ իրականացնում բարեգործական, բնապահպանական ծրագրեր, կազմում բեմադրութիւնների, միջոցառումների սցենարներ եւ իրականացնում տօներին: Երիտասարդները մասնակցում են անգլերէնի եւ համակարգչի դասերի, որ վարում են այլ կազմակերպութիւններից հրաւիրուած կամաւորականներ եւ միութեան համակարգող Անդրանիկ Մարգարեանը: Իսկ երիտասարդներից Նիկոլ Մարգարեանը սկսեց կամաւոր սկզբունքով, որպէս լրագրող, լուսաբանել միութեան գործունէութիւնը:

Սեպտեմբերի 8-ին՝ Աստուածամօր ծննդեան տօնին, երիտասարդական միութեան հետ միասին Բաւրայում կատարեցինք թափօր, որի ընթացքում այցելում էինք բնակիչների տները եւ Սուրբ Կոյսի անունից հրաւիրում մասնակցելու Սուրբ Պատարագին:

Սուրբ Խաչի տօնին եւս Բաւրայի երիտասարդական միութեան հետ միասին կատարեցինք Խաչվերացի թափօր եւ օրհնեցինք գիւղի չորս կողմերը:

2019թ. հոկտեմբերին Սիզաւէտում աւարտեցինք դեռեւս 2018թ.-ի վերջին «Հայկական Կարիտասի» «Ծխական հասարակական խորհուրդներ» ծրագրի շրջանակներում Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու Սուրբ Խորանի նոր Սեղանի կառուցման, զարդարման, եկեղեցու բակում նոր դարպասների եւ նստարանների տեղադրման աշխատանքները: Արհի. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանն օծեց

նորակառոյց Սուրբ Սեղանը եւ Առաջին Սուրբ Հաղորդութիւնը մատուցեց սիզաւէտցի 5 երեխաների: Նոյն օրը Ռափայէլ Սրբազանը Սուրբ Պատարագ մատուցեց նաեւ Ղազանչիի մատռան մէջ, որտեղ նրա ձեռամբ Առաջին Սուրբ Հաղորդութիւնն ընդունեցին 10 մանուկներ եւ պատանիներ:

Նոյն ամսին Մեծ Սեպասարում սկսուեցին երիտասարդական կենդրոնի նորոգման աշխատանքները. տեղադրուեցին 10 նոր պատուհաններ եւ 2 նոր դռներ. ծրագիրը կազմուել էր իմ կողմից եւ հաւանութիւն ստացել 2019-ի ապրիլին:

Հոկտեմբերի 18-ին Բաւրայի երիտասարդական միութեան անդամների եւ մի քանի ծնողների հետ՝ թուով 30 հաւատացեալներ, Վարդարանով ուխտագնացութիւն կատարեցինք դէպի Լոռու մարզում գտնուող Սուրբ Յովհաննէս մատուռ: Այդպիսով Բաւրայի երիտասարդները եւ պատանիները միացան աշխարհի տարբեր կաթողիկէ համայնքներում նոյն օրը տասնեակ հազարաւոր մանուկների միասնական Վարդարանի աղօթքին, որը նախաձեռնել է «Օգնութիւն կարիքաւոր եկեղեցուն» (Aid to the Church in Need) կաթողիկէ եկեղեցական բարեգործական կազմակերպութիւնը՝ յանուն խաղաղութեան եւ միասնութեան:

Նոյն ամսուայ վերջին Մեծ Սեպասարում Վարդարանի Տիրամօր ամսուայ ջերմեռանդութիւնը պսակուեց պատանեկան խմբի ուրոյն մի բեմադրութեամբ՝ նուիրուած Լուրդում Բեռնադէտին Սուրբ Կոյսի երեւման պատմութեանը:

2019թ. նոյեմբերին Ղազանչիում «Հայկական Կարիտասի» «Ծխական հասարակական խորհուրդներ» ծրագրի շրջանակներում ձեռք բերուած մարզական գոյքով, երիտասարդական կենդրոնում՝ նորոգուած սրահում, բացեցինք մարզական սրահ եւ հիմնեցինք երիտասարդական-պատանեկան մարզական ակումբ, որտեղ մարզումները կազմակերպում են գիւղի երիտասարդները՝ կամաւոր սկզբունքով: Նոյն կենդրոնի մէկ այլ նորոգուած սրահում սեպտեմբերից գործում է նաեւ պարի խմբակ:

Պարի խմբակ հիմնուեց նաեւ Սեպասարում 2019թ. մայիսին:

2019թ. նոյեմբերի վերջին Բաւրայի երիտասարդական միութիւնը հրատարակեց իր պարբերաթերթը, որ կոչւում է «Կանթեղ»: Թերթը ներկայացնում է երիտասարդական միութեան գործունէութիւնը եւ այլ հոգեւոր նիւթեր:

Դեկտեմբերի 5-ին Բաւրայի երիտասարդական միութեան 10 անդամներ Գիւմրիում մասնակցեցին Կամաւորների միջազգային օրուան նուիրուած միջոցառմանը, որ կազմակերպել էր «Հայկական Կարիտասը»: Միջոցառման ընթացքում խօսեցի կամաւորութեան քրիստոնէական ընկալման մասին: 2019-ի սկզբից Բաւրայի երիտասարդները ակտիւօրէն ներգրաւուած են նաեւ համայնքներում «Հայկական Կարիտասի» կողմից իրականացուող աղքատախնամ ծրագրին:

Բաւրայի երիտասարդների հետ միասին պատրաստում ենք Սուրբ Ծննդեանն ընդառաջ գիւղում կազմակերպել 5-օրեայ բարեգործական ակցիայ՝ անապահով երեխաներին օգնելու նպատակով: Բաւրայում, Մեծ Սեպասարում եւ Ղազանչիում Սուրբ Ծննդեան տօնի առթիւ կը ցուցադրուեն տարաբնոյթ սցենարներով բեմադրութիւններ:

Աշխատանք «Հայկական Կարիտասի» հետ

2019թ. ապրիլից նշանակուել եմ հոգեւոր խորհրդատու «Հայկական Կարիտասի» բոլոր կենդրոնների համար, թէեւ այս աշխատանքը սկսել եմ կատարել 2016թ. մայիսից: 2019-ի ապրիլից կանոնաւոր կերպով 1 ժամ տեւողութեամբ ամսական 20-25 հանդիպումներ եմ անկացնում կազմակերպութեան անձնակազմի եւ շահառուների համար՝ առաւել յաճախ հանդիպելով Գիւմրիում տեղակայուած կենդրոններում: Անձնակազմի հետ հանդիպումների ընթացքում խօսում եմ Կաթողիկէ Եկեղեցու սոցիալական ուսմունքի թեմաների, քահանայապետական շրջաբերականների թեմաներով, աղօթքի մասին եւ այլ հոգեւոր թեմաներով, շահառուների հետ զրոյցների թեմաները տարբերւում են՝ ըստ լսարանի առանձնայատկութիւնների: «Հայկական Կարիտասի» 3 կենդրոններում կազմակերպել ենք Սուրբ Ծննդեան խորհրդին նուիրուած բեմադրութիւններ:

Աշխատանք՝ եկեղեցական հաղորդամիջոցների համար

2019թ. շարունակել եմ լուրեր, տեսանիւթեր, վերլուծական յօդուածներ պատրաստել Առաջնորդութեան պաշտօնական կայքի եւ «Ձայն խաղաղութեան» հաղորդման համար: Նոյեմբերին Երեւանում տեղի ունեցած Հաղորդամիջոցների զարգացման վերաբերեալ ժողովի ընթացքում հանդէս եկայ առաջարկութիւններով եւ ապա աշխատանքս դարձրեցի առաւել ինտենսիւ՝ միաժամանակ ջանքեր գործադրելով ներգրաւել կամաւորականների՝ հաղորդամիջոցներին նոր բովանդակութիւն հաղորդելու նպատակով: Սեպտեմբերից սկսեցի համագործակցել

Ռատիո Մարիամի հետ՝ ուղիղ եթերում խօսելով Եկեղեցու սոցիալական ուսմունքի թեմաների շուրջ՝ պատրաստելով թեմատիկ շարք: Նոյեմբերի վերջից սկսեցի կատարել նաեւ Բաւրայի երիտասարդական միութեան «Կանթեղ» պարբերաթերթի կազմութեան եւ խմբագրման աշխատանքները:

Տ. Յովսէփ Քհնյ. Գալստեան

ԱՐԺ. ՏԷՐ ՄԱՇՏՈՑ ՔԱՀԱՆԱՅ ՂԱՋԱՐԵԱՆԻ ԽՕՍՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

2019 թուականի գործունէութիւնը.

– թարգմանչական աշխատանք Հայաստանի Աստուածաշնչեան Ընկերութիւնում.

– դասաւանդում Հայաստանի Աստուածաշնչեան Ընկերութեան կողմից կազմակերպուած Կրօնի Ուսուցիչների վերապատրաստման դասընթացների շրջանակում (Երեւանի եւ Արարատի մարզի ուսուցիչների համար).

– տարբեր գրքերի թարգմանութիւն եւ խմբագրում, www.mashtoz.org կայքի, Ֆեյսբուքեան «Գիտութիւն եւ Հաւատք» եւ «Մաշտոց - mashtoz.org» էջերի խմբագրում.

– դասաւանդում մեր Հայ Կաթողիկէ Թեմի եւ Մխիթարեան Միաբանութեան ճեմարանականներին.

– ուխտագնացութիւնների կազմակերպում:

Հայ Կաթողիկէ Եկեղեցու սիրելի քոյրեր ու եղբայրներ,

նոր տարուայ շեմին կանգնած՝ մտաբերում եմ Տէր Յիսուսի կտրուկ, միանշանակ եւ տարատեսակ մեկնաբանութիւնների հնարաւորութիւն չտուող խօսքը. «Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել. կա՛մ մէկին կ'ատի եւ միւսին կը սիրի, կա՛մ մէկին կը մեծարի եւ միւսին կ'արհամարհի: Չէք կարող ծառայել Աստծուն եւ մամոնային» *(Մտթ 6, 24; Ղկս 16, 13):* Այսօր այս նոյն խօսքերը Նա ուղղում է մեզնից իւրաքանչիւրին: Սրանք ուժգին խօսքեր են, պարտաւորեցնող, պահանջկոտ խօսքեր են: Տէր Յիսուսը շատ յստակ է խօսում մեր հետ: Նա ազնիւ ու անկեղծ Ընկեր է, եւ որպէս այդպիսին՝ մեզ բացէիբաց ասում է, թէ ինչպիսին է մեր իրավիճակը: Մենք պէտք է ընտրութիւն կատարենք, պէտք է դիրքորոշում որդեգրենք: Եւ պէտք է նախեւառաջ հասկանանք, որ երկու տիրոջ ծառայելու երկերեսանի կեցուածքը խարխլում է անձամբ մեր կեանքի հիմքերը:

Որքա՜ն կ'ուզենայինք, որ Տէրը մեզ քնքշանքի ու մխիթարութեան խօսքեր ուղղեր, միայն եւ միշտ: Խօսեր միայն Իր անսահման սիրոյ մասին, որ տածում է մեր հանդէպ, Իր անսահման ողորմութեան մասին, Իր ներման մեծութեան մասին...: Կ'ուզենայինք ... մեր ծուլութիւնից դրդուած, յաւիտենական մանկամիտներ մնալու մեր ծածուկ ցանկութիւնից մղուած: Երբեմն, սակայն, Տէր Յիսուսը մեզ ուղղում է խօսքեր, որոնք քնից արթնացնող ապտակներ են կարծես, որով Նա փորձում է սթափեցնել մեզ:

Տիրոջ նպատակը մեզ սարսափեցնելը չէ: Վախի մէջ ազատութիւն չկայ, եւ հետեւաբար՝ չի կարող լինել նաեւ մի պատասխան, որ սիրուց է բխում: Անկասկած, Նրա հայեացքի մէջ չկայ բարկութիւն, չկայ արհամարհանք, չկայ հեգնանք կամ դատաստան մեր նկատմամբ. Նրա աչքերը շարունակում են լի լինել սիրով, վստահութեամբ, յոյսով, որովհետեւ Նրա ամենախիստ խօսքերն էլ ծնւում են Իր մեծապէս մարդասէր սրտից եւ նրանց միակ նպատակը մեր մնայուն ու գերագոյն բարիքն է:

Ընտրութեան այս հրաւէրին ի լուր, ուրեմն, որ Տէրն այսօր ուղղում է մեզ, ի՞նչ ենք մտադիր անել մենք, Հայ Կաթողիկէ Եկեղեցու քոյրեր եւ եղբայրներ: Եկեղեցին Քրիստոսի հարսն է, մենք բոլորս Քրիստոսի Մարմնի անդամներն ենք, որ

Իրեն միացել ենք Իր Արեամբ կնքուած դաշինքով: Ի՞նչ ենք որոշում անել: Թողնելո՞ ենք, որ մեր կեանքն ընթանայ այս աշխարհի պատրանքների ետեւից վազելով, աշխարհի տրամաբանութեամբ հմայուած, մտածելու ու դատաստան կայացնելու աշխարհի կաղապարի համաձայն ձեւաւորուած: Հանգիստ խղճով թողնելո՞ ենք, որ մեր սրտերը կառչած մնան տարատեսակ «մամոնաներին», որոնց գլխաւոր նպատակն է հանգցնել սէրը – ուստի նաեւ յոյսը – երկրի վրայ: Մենք է՞լ ենք մեզ նշանաբան դարձնելու այնպիսի արտայայտութիւններ, ինչպիսիք են «Սա բոլորն են անում» կամ «Ինչ՞ վատ բան կայ որ»:

Եթէ Տիրոջ Եկեղեցին ենք, մենք չենք կարող այսպէս մտածել, որովհետեւ Նա յստակ կերպով զգուշացրել է մեզ. «Ոչ ոք չի կարող երկու Տիրոջ ծառայել»: Անհնարին է գործերով աշխարհին ստրկանալ, իսկ յետոյ խօսքերով ասել, թէ հետեւում ենք Ազատութեան Աստծուն, Սիրոյ Աստծուն, Յարութեան Աստծուն: Բոլոր քրիստոնեաներին է սա վերաբերւում, աշխարհական թէ հոգեւորական: Եւ մենք, որպէս Եկեղեցի, պարտականութիւնն ունենք օգնելու միմեանց՝ հաւատարիմ մնալու այն խոստմանը, որ բոլորս Աստծոյ առաջ երդուել ենք մեր Մկրտութեան օրը. «Հրաժարւում եմ սատանայից եւ նրա բոլոր գործերից»:

«Աստուած կամենում է, որ բոլոր մարդիկ փրկուեն եւ հասնեն ճշմարտութեան ճանաչմանը», ասում է Պօղոս Առաքեալը: Աստծոյ այս փրկարար կամքն է, որ մենք պէտք է իրականացնենք մեր կեանքում եւ փոխանցենք բոլոր մարդկանց, որ հանդիպում ենք մեր կեանքում: Այս տարին թող այսպիսին լինի մեր ժողովրդապետութիւններում. Քրիստոսի հետ հանդիպում Սուրբ Հաղորդութեան մէջ, ապա Հաւատքի, Յոյսի ու Սիրոյ տարածում մեր կեանքի բոլոր միջավայրերում. տանը, դպրոցում, դաշտում, աշխատավայրում, համալսարանում, խոհանոցում կամ մեքենայ վարելիս, հիւանդանոցում, ընկերների մէջ, եւ մեր կեանքի բոլոր վայրերում:

Տիրոջը վստահենք մեր այս տարին, եւ մեր բոլոր տարիները: Առանց Իր օգնութեան ոչինչ անել չենք կարող: Բայց Տէրը միշտ պատրաստակամ է մեր վրայ հեղելու Իր Սուրբ Հոգին, բաշխելով Իր շնորհները մեր ժողովրդապետութիւններին, մեր ընտանիքներին, մեր վանական հասարակութիւններին, մեր ճեմարանականներին, մեր երիտասարդներին, մեր տարէցներին, մեր հիւանդներին, մեր մանուկներին, կրօնի ուսուցիչներին, մի խօսքով՝ մեզ բոլորիս, միայն թէ Ճշմարտութեան մէջ լինենք՝ յիշելով, որ չենք կարող երկու տիրոջ ծառայել:

ԱՐՀԻ. Տ. ՌԱՓԱՅԷԼ ԱՐՔԵՊՍ. ՄԻՆԱՍԵԱՆ ՏԻՏՂՈՍԱՒՈՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՊԱԴՈՎԿԵԱՆ ԿԵՍԱՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ, ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ

«Այս էլ իմացէք ներկայ ժամանակիս մասին,
որովհետեւ հիմա ճիշտ ժամն է, որ մենք քնից զարթնենք ...»
(Հռ. 13, 11):

Յո՛յժ սիրելի հոգեւոր դաս եւ աշխարհական քոյրեր եւ եղբայրներ,

Յիսուս Քրիստոսի Սբ. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան գալիք տօներին ընդառաջ ուզեցի խորհրդածել ձեզ հետ Սբ. Պօղոս առաքեալի՝ հռոմէացիներին ուղղուած նամակի՝ «... ժամն է, որ մենք քնից զարթնենք ...» յորդորի շուրջ: Ժամանակն է, որ թօթափենք քունը եւ արթնանանք, որովհետեւ փրկութեան պահը հասել է Աստուածորդու գալուստով: Յիսուս Քրիստոս Աստուած ճշմարիտ եւ մարդ ճշմարիտ ոչ թէ միայն հոգեպէս, այլեւ մարմնապէս գալիս է ի մէջ մարդկանց: Ուստի, որպէս ճշմարիտ քրիստոնեայ հաւատացեալներ, Սբ. Ծննդեան տօնի առթիւ չտրուենք սոսկ արտաքին արարողութիւններին, այլ արթնանանք մեր երեւակայական եւ երազային աշխարհից, մեր յոռի սովորութիւններից:

Այո՛, սիրելինե՛ր, ժամն է արթմնի ընդունելու մեր Փրկիչ եւ Տէր Յիսուս Քրիստոսին, որ աշխարհ գալով՝ մշտապէս մեզ հետ է Ամենասուրբ Հաղորդութեան խորհրդի մէջ:

Աստուածորդու փրկչական գալուստը մարգարէացող Եսայի մարգարէն ասում է. *«Եկէ՛ք ելնենք Տիրոջ լեռը»* (Եսայի 2, 3), այսինքն՝ ընդառաջ գնանք մարմնացեալ ու մարդացեալ Յիսուս Քրիստոսին, ինչպէս հովիւները, լսելով Սբ. Ծննդեան աւետիսը, հաւատացին եւ թողնելով իրենց ոչխարները արօտավայրերում՝ գնացին տեսնելու մանուկ Քրիստոսին: Այս է պատգամը մեր խորհրդածութեան. թողնելով աշխարհական ցանկութիւնները, մեր եսասիրութիւնը՝ արթուն մտքով եւ սրտով վազել դէպի Տիրոջ լեռը՝ Սբ. Եկեղեցին, եւ մեր օրերի քարայրում, որ է աղբիւրը Լոյսի, Տապանակը Ամենասուրբ Հաղորդութեան, Երկնաւոր Մանուկի առաջ միաբերան գոչել. «Դո՛ւ ես Որդի Աստուծոյ, փրկիչն աշխարհի»:

Եթէ պարզ հովիւները կարողացան հասկանալ եւ հաւատալ կարեւորութիւնը այս մեծ աւետիսի ու գիշերով թողեցին ամէն ինչ եւ անյապաղ վազեցին դէպի Բեթղեհէմի քարայրը՝ տեսնելու աշխարհի նորածին Փրկչին ու Թագաւորին, ինչպէս նաեւ իմաստուն Մոգերը Բեթղեհէմեան աստղի նշանով կարողացան ճանաչել մեծ եւ բացառիկ Թագաւորի ծննդեան նշանը ու թողնելով իրենց ընտանիքները, երկիրը, իրենց փառքերն ու իշխանութիւնները՝ եկան տեսնելու եւ երկրպագելու Տիեզերքի Թագաւորին՝ բերելով իրենց հետ թանկագին նուէրներ, եւս առաւել մենք՝ կարծեցեալ հաւատաւոր հետեւորդները այս Թագաւորի, ինչքանո՜վ պարտական ենք արթմնի գիտակցութեամբ անյապաղ վազելու դէպի մեր օրերի Բեթղեհէմի քարայրը, դէպի մսուրը՝ մեր Փրկչի Տապանակը Ամենասուրբ Հաղորդութեան, ուր ներկայ է Յիսուս Քրիստոս այսօր, վաղը եւ մինչեւ աշխարհի կատարածը:

Երանի չտանք միայն հովիւներին եւ Մոգերին, մենք էլ հնարաւորութիւն ունենք մեր սրտի տուրքը մատուցելու Մանուկ Յիսուսին՝ այսօր մեր գործերով արտայայտելով մեր քրիստոնէական ինքնութիւնը, հաւատքը, ներողամտութիւնը եւ, անշո՛ւշտ, եղբայրսիրութեամբ ապրելով, քանզի Փրկիչն աշխարհի մեզ սիրելով եկաւ աշխարհ:

Սիրելի՛ եղբայրներ ու քոյրեր, այս պատգամը արձագանքն է այն անկեղծ զգացումի, որով տոգորուած՝ հարկ ենք նկատում, որ պէտք է դիմաւորել Յիսուս Քրիստոսի Սբ. Ծնունդը եւ Ամանորի սեմին այս է շնորհաւորական մեր բարեմաղթանքը ամէնքիդ:

Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ:
Զեզ եւ մեզ մեծ Աւետիս:

ԱՂՕԹՔ ՎԱՍՆ ՀԻՒԱՆԴԱՑ

Ո՛վ Մարիամ, դուռ, որ մշտապէս լուսաւորուա՛ ես մեր Ճանապարհը՝
որպէս փրկութեան եւ յոյսի շող,
Քեզ ենէ վերահուա՛ մեր անչը եւ հիւանդների առողջութիւնը,
Քեզ, որ Խաչի ոտքի մօտ մնացար Յիսուսի չարչարանքներին՝
հառաջարուն ճնալով էս հաւատքի մէջ։
Դուռ, որ Փրկութիւնն ես Հռոմի ժողովուրդի՝
եւ գիրես մեր կարիքները, Վարահ ենէ, որ կօգնէս,
այնպէս, ինչպէս Գալիլիայի Կանա քաղաքուա՛,
եւ այս դժուարին փորձութիւնից յետոյ՝ կրկին կը վերադառնան
ուրախութիւնն ու պօնակամբութիւնը։
Օգնէ՛ր մեզ, Աստուածային Սիրոյ Մայր,
որպէսզի կարողանանք հնազանդուել Հօր կամքին
եւ գործել այնպէս, ինչպէս Յիսուսն է յանկանուա՛.
Նա, ով Իր վրայ վերցրեց մեր պառապանքները
եւ լուռ կրեց բոլորիս վշտերը,
որպէսզի Խաչի միջոցով մեզ առաջնորդի
դէպի Յարութեան ուրախութիւնը։ Ամէն։
Մենք ապաստան ենք փնտրուա՛ էս հովանու ներքոյ,
Սրբուհի Մարիա՛մ, Մա՛յր Աստուծոյ։
Մ՛ի անպէսիր աղերսը մեր՝
որ գտնուա՛ ենք փորձութեան մէջ,
այլ՝ փրկիր մեզ ամէն պեսակ վրանգից,
Ո՛վ փառաւորեալ եւ օրհնեալ Սուրբ Կոյս Մարիամ։

Նորին Սրբութիւն Ֆրանցիսկոս Սրբազան Քահանայապետ
11 մարտ, 2020

ՊԱՏԳԱՄԱԲԵՐ

Տարեգիրք
2019 թ.

Տեխն. խմբագիր՝ Արարատ Թովմասեան
Էջադրումը եւ կազմը՝ Արմինէ Պապանեանի

Ակնարեն

«ԱՆՏԱՐԵՍ» հրատարակչատուն
Երեւան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ +(374) 58 10 59, 56 15 26, 58 76 69
antares@antares.am
www.antares.am

ՄԻՈՒԹԵԱՆ
ՀՈԳԻՈՎ
ԾՍՈՍՅԵՄ
UNITATEM
SPIRITUS
SERVARE